1772

Zu. F.

84
F-90

1884.

Ч. 8

2011

2250
138

ՖՈՐԹԻՈՆԻ ՏԻՒ ՊՈՒԱԿՈՊԻ

ՊԱՐՈՆ ԼԸԲՈՔԻ ԾԵՐՈՒԹԻՒՆԸ

ԹԱՐԳՄԱՆԵԱՑ

Կ. Ս. ԻՒԹԻՒՃԵԱՆ

Հատոր Գ.

معارف عمومیه نظارت جلیله‌سنك رخصتیله
طبع و نشر اولنمشدر

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՅ

1884

2003

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
Ի ՅԻՇԱՏԱԿ
ՅՈՒՂԱԲԵՐ
ՍԵՐՈԲՅԱՆ-ԻՆՃԻԿՅԱՆԻ
Ի՛ 23-Ն ՀՈՒՆՎԱՐԻ 1929 Թ. ԹԻՖԼԻՍ
N128

84
Բ-90

(232)

ՖՈՐԹԻՈՆԷ ՏԻՒ ՊՈՒԱԿՈՊԷ

ՊԱՐՈՆ ԼԸԲՈՔԻ
ԾԵՐՈՒԹԻՒՆԸ

ԹԱՐԳՄԱՆԵԱՑ

Կ. Ս. ԻՒԹԻՒՃԵԱՆ

Հատոր Բ.

معارف نظارت جلیله‌سنك رخصتی ایله
طبع و نشر اولنمشدر

Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՐԵՒԵԼՔ ԼՐԱԳՐՈՅ
1884

400-42

ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
Гос. Библиотека
ՀԱՍՀ-Арм.ССР
Մշակման
Հանրապետական Գրադարան

1176-26

ԳՈՐԾԻՆՔԻ ՏԻՊ ՊՈՒԱԿՈՎԻ

ՊԱՐՈՆ ԼԸԲՈՔԻ
ԾԵՐՈՒԹԻՆԸ

ՀԱՏՈՐ Բ.

ՄԱՍՆ ԱՌԱՋԻՆ

ՊԱՐՈՆ ԼԸԲՈՔ ԻՆՔԶԻՆՔԻ ԿԱՏԱՐԱԾ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԻՐԱՎԱԿԱՆ ՄԱՍՆԱՅՈՒՂ
ՍԵՐՈՒԵՍԱՆ-ԻՆՁԻԿԵՎՆԻ
ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՀ ԱՐԴԱՐԱԴԱՏՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ
1929 ԹՎԱԿԱՆ

Է.

Ողջախոհ սիրակցութիւնք երջանիկ աղգաց կը նմանին, պատմութիւն չունին։

Ցորմէ հետէ Լուի Լբքոք կը սիրէր զԹերէզ Լբքոնթ, ոչ մի փոթորիկ վրդոված էր այդ բարեբաստիկ խօսեցելոց խաղաղաւէտ կեանքն, ոչ մի ամպ՝ և ոչ իսկ մէկ վայրկեան՝ նսեմացուցած էր դոցա անայլայլակ բարօրութիւն։

Իրենց երկինքը միշտ կապոյտ էր։

Կային իսկ օրեր, ուր մեր ժամանակի ամենէն մեծ ոստիկանին որդին

գրեթէ կը ցաւէր որ Թէրէզի հետ ամուսնանալու համար մեծագոյն խոչընդոտներ չէր ունեցած յաղթելու։

Իրարու հանդիպեր էին ընկերութեան մէջ, ոչ այնպիսի ընդունելութեան կամ խրախճանքի մ'առթիւ, ուր միլիոնատէր մը գիշերային տօնի մը կը հրաւիրէ երկու կիսագնտոց ականաւորներն, այլ երկու ընտանեաց ալ միապէս ծանօթ բարեկամներու տան մէջ, ուր երկուքն ալ հանդիստ էին և համարձակ։

Առաջին անգամ տեսնելով՝ հաւնած էին իրարու. հակապար մ'որոշած էր իրենց բաղդը։

Թէրէզ նոյն իրիկուն կը խոստովանէր իւր մօր թէ թխորակ մեծ երիտասարդն՝ որ երեք անգամ ի պար հրաւիրած էր զինք, աւելի լաւ կը յարմարէր իրեն՝ քան այն երկու երիտասարդներն, որոց արտօնութիւն տրուած էր տեսակցիլ իրեն հետ. այն էր բուա-Թուցի աղնուատոհմ շինական մ'և Սանթիէ փողոցը բնակեալ վաճառական մը։

Միւս կողմէ ալ Լուի հետեւեալ առաւօտուն կանուխ գնացեր հայրը քունէն արթնցուցեր էր՝ աղաչելու համար որ իւր առջի իրիկուան պարակցուհւոյն վրայ տեղեկութիւններ առնու, և խոստովանելու համար թէ այն սիրուն օրիորդին գեղեցիկ աչերը տիրած էին իւր սրտին։

Աւելցուց իսկ որ եթէ օրիորդը զինք ամուսին ընդունէր, ինք պատրաստ էր հրաժարիլ ամուրիութենէ։

Ծերունի Լըքոք փարիզցի ընտանեաց մեծ մասը կը ճանչէր, և պէտք չունեցաւ տեղեկութիւն ստանալու, վասն զի Լըքոնթի մեծափարթամ և պատուաւոր ընտանիքը քաջածանօթ էր իրեն։

Միւս կողմէ ուրախանալու առիթ մ'էր այս իրեն, վասն զի շատ տարիներէ ի վեր կը փափաքէր իւր որդին մոցընել միջնակարգ քաղաքացեաց հարուստ և յարգի դասուն մէջ, որ դարերէ ի վեր կը կառավարէ զՖրանսա, դանդատելով միշտ թէ ինքն է կառավարուողն։

Ուղղակի նպատակին դիմեց, այսինքն պարզապէս Տիկին Լը.քոնթի տունը գնաց ըսելու թէ Լուի կը սիրէր զԹէրէզ, և թէ Լուի վեց հարիւր հազար ֆրանքի տէր պիտի լինի հօրը մահուընէն յետոյ, թէ հայրը պատրաստ է այդ գումարին կէսն այժմէն իւր որդւոյն տալ, որպէս զի տուն մը պատրաստէ։

Օրիորդ Լը.քոնթ ալ կէս միլիոն օժիտ ունէր, և միլիոն մ'ալ յետոյ մայրենի ժառանգութենէն պիտի ըստանար։

Ուստի այս ամուսնութիւն յոյժ շահաւէտ էր Պ. Լը.քոքի որդւոյն, կամ մանաւանդ Պ. տը ժանթիլեի համար, վասն զի Լուի կամովին կը հրաժարէր իւր հայրենի անունէն։

Բայց խելքն աներկբայելի դրամագլուխ մ'է, մանաւանդ Փարիզի մէջ, և Լուի պէտք եղածէն աւելի ունէր իւր ուզածին պէս ընտիր նօտար, փոխանակիչ, գործարանատէր, և մինչև իսկ ազգային երեսփոխան մը լինելու համար։

Եւ այս ամենէն աւելի՝ անհունապէս հաճոյ եղած էր Թէրէզի։

Տիկին Լը.քոնթ ձեւի համար միայն առարկութիւններ ըրաւ. նախ հասարակ պատճառանքներ յառաջ բերաւ, այսինքն թէ իւր աղջիկը դեռ չափահաս չէր, երիտասարդը դեռ որոշ վիճակ մը չունէր։

Սակայն բարի կինը սրտոցն յոյժ ուրախ էր իւր երազածին պէս ամուսին մը Թէրէզի դէմն ելնելուն վրայ, վասն զի մայրերն ալ իրենց գաղափարականն ունին, և Լուի տը ժանթիլեի կ'իրացնէր սեղանաւորի այրւոյն գաղափարականն։

Ասկէց զատ Պ. Լը.քոք, արհեստով դիւանագէտ, կրցաւ իւր անկեղծութեամբն և ձեւացեալ պարզմտութեամբ գրաւել այդ պարկեշտ և բարեսիրտ տիկնոջ սիրտն։

Ապագայ սկեսրայր մը դիւրաւ կը համաձայնի ապագայ զոքանչի մը հետ, քան երկու ապագայ սկեսրայր ու աներ կամ մանաւանդ սկեսուր ու զոքանչ։

Ուստի ամեն բան յաջող գնաց։ Շահու վերաբերեալ գործերը փութանակի կարգադրեցան, և իրենց առաջին տեսակցութենէն երեք շաբաթ յետոյ, Թէրէզ և Լուի, այնուհետեւ խօսեցեալք, հրաման ստացան տեսակցելու, սպասելով ամուսնութեան մեծ աւուր՝ որ փետրվարի առաջին երեքշաբթին որոշուած էր։

Տեսակցելու հրամանն ընդարձակապէս գործադրեցին։

Ամեն իրիկուն սիրահարը Պուլոյն կը վազէր, ուր իւր սեղանի սպասը պատրաստ դրուած էր Տիկին Լըքոնթի սեղանին վրայ. կը ճաշէր մօրն ու աղջկան հետ, ջերմաբար կը սիրակցէր նշանածին հետ, վասն զի սաստիկ սիրահարած էր, և ժամ տասնին (կէս գիշերէն երկու ժամ առաջ) կը մեկնէր։

Այրին, իւր ամուսնոյն մահուընէն յետոյ, Փարիզի մէջ սենեակ մը միայն պահած էր, և իւր դստեր հետ Պուլոյնի գեղեցիկ ապարանքը կը բնակէր, ղոր այրը գնած էր ժամանակաւ։

Կը փափաքէր իսկ, առանց սակայն պահանջելու, որ դեռատի ամուսինք հաճէին հոն բնակիլ, վասն զի դիւղական ճաշակներ ունէր, և կ'ուզէր որ անոնք ալ ունենան։

Հայր Լըքոք ամեն կիրակի հոն կ'երթար, և երբ ներկայանար, կը թողուր որ ծառայները «Պ. Տը Ժանթիլեի եկաւ» ըսելով ծանուցանեն։

Պատրաստ էր ուրիշ զիլուռներ ալ ընել Տիկին Լըքոնթի անմեղ սնափառութեան, վասն զի այս ամուսնութիւն բոլորովին իւր սրտին ուզածն էր՝ քանի մը պատճառներով։

Հին ոստիկանն, յորմէ հետէ Աստուած որդի մը տուած էր իրեն, այն ամենասիրելի որդւոյն բնաւորութիւնը կը զննէր խնամով, վասն զի իւր միակ յոյսը, մխիթարութիւնը, կեանքն էր այդ որդին։

Եւ կը զննէր ինչպէս եղեռնական տեղեկագրերու պարութայ մը, պաղարիւնով, անկողմնակալութեամբ, և իւր բնաձիր կորովամտութեամբ։

Այս խուզարկուին կոչումն էր պաշտպանել, ինչպէս որ կ'ըսէր իւր գործունեայ ժամանակներն։

Իւր որդին ալ պարզելով, գտած էր անոր վրայ՝ ի մանկութենէ՝ եռանդուն և միանգամայն զգօն բնաւորութիւն մը։

Լուի լուրջ և խոհուն եղած էր, բայց ի ծնէ կրքոտ և բուռն էր։

Իւր բնաւորութիւնը չէր համաձայներ խելքին հետ։

Կրթութիւնը զայն զգաստ, աշխատասէր և մինչև իսկ պաղարիւն ըրած էր. գոնէ առ երեսս։ Յոյժ կանուխէն հեռացած էր հեշտին զուարճութիւններէ, և իւր ընկերներն երբէք տեսած չէին անոր սիրակցական մէկ զբօսանքն։

Այս զգաստութիւն, որ նուազ սրամիտ հօր մ'ուրախութիւն կը պատճառէր, ծանր մտահոգութիւն կուտար Պ. Լը-քոքի։

Փորձով գիտէր թէ մոխրի տակ ծածկուած կրակը վտանգաւոր հրդեհներ կը վառէ. և թէ վառօդն, ո՛րչափ սաստիկ ճնշեալ լինի, ա՛յնչափ աւելի աւերմունք կը գործէ երբոր պայթի։

Կը վախնար պայթումներէ, և իրաւունք ունէր։

Տասն և վեց տարու եղած ժամանակ, Լուի, Անգլիոյ մէջ գիշերօթիկ վարժարանի մ'աշակերտ, քիչ մնաց տասներկու տարեկան անգլիացի օրիորդ մը պիտի առեւանգէր, շրջակայ ագարակի վարձակալի մ'աղջիկ, և Պ. Լը-քոք հարկադրուեր էր այդ կարի դիւրաբորբոք դպրոցականը Գերմանիա ղրկել կրթութիւնն աւարտելու։

Հոն աւելի գէշ եղաւ։ Ազատ մնացած պարմանին իւր ուսուցնավայրն եղող համալսարանական փոքրիկ քաղաքին Կրէչէնները միոյն տարփալ սկսաւ, տարփանք մը, որ և յոյժ հեռի կրնար տանիլ զայն, եթէ հայրը չը միջամտեր։

Երբոր Ֆրանսա վերադարձաւ, Լուի հանդարտած էր։ Իւր իրաւաբանական ուսումն և փաստաբանական վեցամեայ վարժութիւնն ըրած էր առանց որ և է

սիրային զգացման, և օրինակելի վարք մ'ունէր։

Բայց հայր Լը.քոք կը վախնար որ յանկարծական փոթորիկ մը կրնար տակնուվրայ ընել այս միօրինակ կեանքը, չափազանց միօրինակ ըստ իւր կարծեաց, և ահա այժմ քաղցր զեփիւռ մը կ'ելնէր և երիտասարդն յաջողութեամբ ամուսնութեան նաւահանգիստը կը հասցնէր։

Հայր Լը.քոք այլ եւս բան մը չէր խնդրեր Աստուծմէ։

Եւ գաղջ սէր մը չէր որ Լուի կ'ըզգար Թէրէզի վրայ։

Առաջին անգամ տեսնելուն՝ ստացեր էր այն շանթի հարուածը զոր վիպագիրք յաճախ կը յիշեն, և որ յոյժ քիչ անգամ կը զարնէ այս դրական դարուս մէջ։ Անոր հետ պարելէ յետոյ տեղը վերադարձուցած ժամանակ երդուած էր արդէն թէ ամուսնութեան պիտի առնուր զայն։

Եւ պիտի առնուր՝ հակառակ ծնողաց կամքին, հակառակ պատշաճից, առանց մէկ սու օժիտի։

—Բարեբաղդ ենք որ լուացարար ծնած չէ, ըսեր էր ինքնիրեն հայր Լը.քոք երբոր սարսափելի տղան եկեր ծանուցեր էր իրեն թէ կը սիրէր զօրիորդ Լը.քոնթ։

Ամիս մը հանապազօրեայ սիրակցութիւն առաւել ևս աճեցուցեր էր այս դիւրաբորբոք տարփաւորին սէրը։

Թէրէզի համար միայն կ'ապրէր, և անկէ հեռի անցուցած ժամերն անտանելի կը թուէին իրեն։

Սակայն հարկ էր, հակառակ իւր բաղձանաց, շատանալ իրիկուններով՝ զորս թոյլ կուտային իրեն անցունել Պուլոյնի ամբարանոցին մէջ, և հարկ էր զբաղիլ նաեւ այն ամեն հոգերով, զորս մօտաւոր ամուսնութիւն մը պարտք կը դնէ նշանածի մը վրայ։

Սէրն աղատ չկեցներ հարսին համար զարդանուէր գնելէ, ոչ ալ իւր ամուրի կենաց հաշիւները կարգադրելէ։

Լուիի անցեալը դժուարին չէր կարդադրել, վասն զի ընաւ սիրային կա-

պակցութիւն մը չունէր, և իւր Անգ-
լիոյ ու Գերմանիոյ մէջ բրած խենդու-
թիւններն հին լուսիններուն գնացած
տեղը հասած էին։

Սակայն մերթ ընդ մերթ տխուր
յոյզեր կուգային վրան, որ.ք շուտով
կը փարատէին Թէրէզի ժպիտովն։ Ի-
րիկուն մը, քանի մ'օր յետոյ այն կի-
բակիէն՝ ուր հայր Լբքոնք բացորոշապէս
մերժեր էր վերսկսիլ իւր հին արհես-
տը, սիրահար երիտասարդը բաւական
սրտատանջ դէմք մը բերաւ Տիկին Լբ-
քոնթի տունը։

Բայց ճաշը վերստին զուարթացուց
զայն, և երբոր, սեղանէն ելնելով,
վառարանին առջեւ դէմ առ դէմ ե-
կաւ իւր պաշտած դեղանի օրիորդին
հետ, նշանածներուն ամենէն խանդա-
կաթն ու զուարթագինն եղաւ։

Տիկին Լբքոնթ, իւր զաւկները չը
նեղելու համար, — արդէն Լուիի հա-
մար այնպէս կը խօսէր, իբր թէ իւր
փեսայն եղած լիներ—, լրագիր մը կը
վերցնէր, և չէր ուզեր լսել անոնց սի-

բակցական խօսքերը զորս կէս ձայնիւ
կը փոխանակէին։

Պատուական այրին խառն լուրերը
կը սիրէր կարդալ, և հատ մը տեսաւ
որ բացագանչութիւն մը խլեց բերնէն։

— Ա՛հ, վերջապէս պիտի գտնեն
Արպալէթ փողոցի կրկին ոճիրներուն
հեղինակն։

— Ի՞նչ ոճիրներ, մա՛յր իմ, հար-
ցուց Թէրէզ մտաղբաղութեամբ։

Տիկին Լբքոնթ ընդմիջեց զայն եր-
բոր ցած ձայնիւ իւր մեղրալուսնի ու-
ղեւորութեան վրայ կը խօսէր, դեղե-
ցիկ ուղեւորութիւն մը Իտալիա, զոր
կարդացած էր Լուիի հետ։

Երկու խօսեցեալք Նաբոլիի ծովա-
ծոցն հասած էին, ի Սորէնթէ, ուր
մինչեւ դարուն պիտի կենային կիտրո-
նիներուն հովանւոյն տակ, և ահա Ար-
պալէթ փողոցի գործը կուգար կ'իյնար
երեսնց երջանկաւէտ երազներուն մէջ՝
ինչպէս պայթուցիկ ռումբ մը հակա-
պարի մը մէջտեղ։

— Ի՞նչ, գոչեց բարի տիկինը՝ ձեռ-

քի Թերթը սեղանին վրայ դնելով, չէ՞ս գիտեր թէ դեռատի կին մը ըս-պանած . . . արկղի մը մէջ դրած է-ին . . . և թէ զայն սպաննող սրիկայն վաճառական մ'ալ սպաննած է . . . պարոն Լէօրէօ անուն, զոր և ժամա-նակաւ տեսած լինելս լաւ կը յիշեմ. . . իւր արժէթուղթերն հօրդ յանձնած էր։

— Կրաձէէլը կարդացի՞ր, Լուի, մրմնջեց Թէրէզ։

Աւելի կը սիրէր իւր տարփաւորին հետ խօսակցիլ՝ քան թէ սրտաճմլիկ պատմութիւն մը լսել։

— Ես չեմ կարդացած, յարեց. մայրիկս չուզեց որ կարդամ։ Բայց բա-բեկամուհիներէս մին ըսաւ ինձ թէ սխրալի էր։ Այն գրքին մէջ նաւակի մը պատմութիւն կայ . . . մեք ալ նաւակ մը պիտի ունենանք, այնպէս չէ՞, Լուի . . . իրիկունները պտըտելու համար այն ծովուն վրայ, ուր երբէք փոթո-րիկ չելներ։

— Ստուգիւ, մրմռաց այրին քիչ մը գայթակղած, այս աղջիկները խելու�-

նին կը կորսնցնեն երբոր զիրենք ա-մուսնացնելու խօսք լինի։

Ուրեմն, օրիո՛րդ, քու բնաւ հոգդ չէ երբոր այնպէս անձինք կը խողխո-ղին իրենց տան մէջ, և այն ալ Փարի-զի պէս տեղ մը։ Օրին մէկն ալ կու-գան մեզ կ'սպաննեն հոս, և աւելի դիւրութեամբ, վասն զի մեր տան ետին ծառաստան է, և ձմեռը դրացիներ չունինք։

— Լուի կը պաշտպանէ մեզ, մայ-րի՛կ, ըսաւ Թէրէզ իւր սիրած գեղեցիկ ու սէգ երիտասարդին նայելով։

— Լուի քեզ հետ Նաբոլիի ծովա-ծոցին մէջ պտըտած ժամանակ հոս չէ որ պաշտպանէ զիս, պատասխանեց Տիկին Լէքոնթ ծիծաղելով։

— Կը կարծեմ, սիրելի՛ տիկին, թէ Պուլոյն բն...կիւը Տը լա Բէ փողոցը բնա-կելէ աւելի վտանգաւոր չէ, ըսաւ Ե-րիտասարդը. բայց եթէ մինակ ճամբայ չէք ուզեր, ինչո՞ւ համար մեզ հետ չուզեւորիք։

— Ո՛չ, որդեակներս, ո՛չ, նեղու-

թիւն կը պատճառեմ ձեզ։ Երբոր խեղճ սիրելի երկանս հետ ամուսնացայ, գը-նացինք տասնեհինգ օր Ֆոնթէնէպլոյ կեցանք . . . արդարեւ Ֆոնթէնէպլոյի անտառը չհասնիր ձեր Իտալիոյ նարընջենիներու անտառներուն . . . և սակայն կը յիշեմ որ սիրացած էինք հոն առանձին լինելնուս վրայ։

Թէրէզ ձայն չէր հաներ, բայց աչերուն մէջ կը կարդացուէր թէ մօրը կարծիքէն էր։

— Ասկէ զատ, յարեց պատուական կինն, ես կատակ կ'ընէի, վասն զի ես բնաւ երկիւղ չունիմ։ Գոհութիւն Աստուծոյ, լաւ սպասաւորներ ունինք, որք տասն եւ հինգ տարիէ ի վեր մեր քով կը ծառայեն, և իրենց կեանքը կուտան մեզ համար։

Բայց չէի կրնար ժխտել, սիրելի Լուիս, թէ ոստիկանութիւնը շատ մեղադարտ է այդպիսի սոսկալի ոճիրները չարգիլելուն, և մանաւանդ հեղինակները չձերբակալելուն համար։

Եթէ Տիկին Լաքոնթ գիտնար թէ

իւր փեսացուին հայրը ժամանակաւոճրագործաց խուզարկու էր արհեստիւ, անշուշտ չէր գործածեր այս լեզուն, վասն զի գիտէր այն առածն որ կ'ըսէ թէ «Կախուած մարդու մը տան մէջ չուանի խօսք պէտք չէ ընել»։

Բայց Պ. Լաքոք Տը Ժանթիլեի ըզգուշացեր էր իւր անցեալն անոր յայտնելէ։

Ինքզինք իբրեւ մէջնակարգ քաղաքացի ցոյց տուած էր, որոյ հայրն առուտուրի մէջ գեղեցիկ հարստութիւն մը վաստկած էր. և որովհետեւ ինքն ալ իւր ապրուստին համար պէտք եղածէն աւելի ժառանգութեամբ մը մնած էր աշխարհի կենաց մէջ, ուստի այսպէս ըսելով ճշմարտութիւնը չէր խեղաթիւրեր։ Միայն թէ ամբողջապէս չէր ըսեր։ Մնաց որ, սեղանաւորին այրին՝ խօսք տալէ առաջ՝ տեղեկութիւններ ստանալու մասին անփոյթ եղած չէր, և քննութիւնն հանգուցեալ Լաքոնթի պատուաւոր բարեկամներէն միոյն յանձնուելով յոյժ նը-

ՀՍՍՀ-ԱԳՍՍՀ

պաստաւոր եղած էր թէ՛ հօրն և թէ՛ որդւոյն։

Ոստիկանութեան պաշտօնատունը միայն կրնար ըսել Պ. Լէքքոքի ճշդիւ ինչ եղած լինիլը։ Բայց ոստիկանութեան պաշտօնատունը բացարձակապէս խորհրդապահ է այս նիւթոց մէջ, եթէ սակայն չար գործ մ՚արգելուլ հարկ չլինի. բայց այս պարագայից մէջ ալ մեծ խոհեմութեամբ կը վարուի։

Արդ՝ ոստիկանութեան պաշտօնատունն որ և է ընկերային շահ մը չէր տեսներ, որպէս զի լաւ ամուսնութիւն մ՚ընելէ արգելուր այնպիսի մարդու մը որդին, որ աննման հանճարով մ՚եւ պարկեշտութեամբ ծառայած էր միշտ իրեն։

Լէքքոք ոստիկանութեան խուզարկու մ՚էր աներկիւղ և անստգիտ։ Իւր արհեստին գործածութեան մէջ ըրած շահերն օրինաւոր էին։ Ինչո՞ւ համար ուրեմն իւր հին պետերը թոյլ չտային որպէս զի պատուաւոր ընտանիքի մը հետ խնամենար։ Ինչո՞ւ համար նախապաշարման մը զոհէին զայն։

Ճշմարիտ է թէ տիկին Լէքքոնթ աղատ չէր այն նախապաշարումէն, և անշուշտ պիտի զարհուրէր երբոր իմանար իւր փեսին հօր ճշմարիտ նախընթացները։

Բայց օրիորդ Լէքքոնթ ականջ չպիտի կախէր այդ նախապաշարումներուն, վասն զի կաթոգին կը սիրէր զԼուի։

Այդ կապուտակն և քաղցրաւաչ աղջիկն ալ կրքոտ բնաւորութիւն մ՚ունէր, բայց իւր նշանածէն տարբեր կերպիւ կրքոտ։

Երիտասարդը սրտի բուռն յոյզեր ունէր, իսկ աղջիկը զեղումներ։

Լուի կը բորբոքէր, Թերէզ կը խանդաղատէր։

Թերէզ ինքզինք նուիրելու, իւր անձը զոհելու համար ծնած էր։

Գեղեցկութիւն, հրապոյր, շնորհք տալով անոր Աստուած, ամուսին և մայր լինելու համար ստեղծած էր զայն։

Ուրիշ բաղձանք չունէր, բայց միայն իւր կեանքը նուիրել անոր որ զինքն ընտրած էր, և եթէ խնդրէր որ

մեռնի իրեն համար, ուրախութեամբ կը մեռնէր։

Բայց և միանգամայն չպիտի ներէր անոր որ ուրիշ մը սիրէր, և հաստատապէս կը հաւատար թէ իրմէ զատ ոչ ոք սիրած էր երբէք։

Միջնակարգ քաղաքացեաց մէջ ծնած, ուր Փարիզի միւս ընկերութեանց մէջ ծաւալած գաղափարները մուտ չունին, անծանօթ էր չարին, և մտքէն չէր անցներ թէ իւր նշանածին պատանութիւնն իրենին չափ անմեղ եղած չէր։

Միով բանիւ, Թէրէզ նախանձ լինելու հակում մ'ունէր, մինչեւ իսկ անցեալին համար։

Բայց անցեալին վրայ չէր խորհեր, վասն զի ներկային մէջ երջանիկ էր, և ապագայն ալ կը ժպտէր իրեն։

Այն սարսափելի պատմութիւններն որով լրագիրք կը խոշտանգեն իրենց բաժանորդները, մոռահոգութիւն չէին տար իրեն, ինչպէս նաեւ ոստիկանութեան պակասութիւնները։

Լուի, որ անկէց շատ աւելի չէր ըղբաղեր Խաչ ը-ջերու, ինքզինք պարտաւորուած կարծեց սակայն պատասխանել Տիկին Լը-քոնթի դիտողութեան, որ այսչափ ոճիրներու անպատիժ մնալուն վրայ կը գանգատէր։

— Քիչ մ'առաջ չէի՞ք ըսեր, սիրելի՛ տիկին, հարցուց այնպիսի փութով մը, որ կը ցուցնէր թէ հաճելի լինել կ'ուզէր իւր ապագայ ղբանչին, չէի՞ք ըսեր թէ այդ խեղճ կինն սպաննող ոճրագործին հետքը գտնուած է։

— Դեռ ոչ, պատասխանեց այրին։ Միայն կ'երեւի թէ սպանեալը զմռսել տուած և դիակնարանին մէջ ի ցոյց դրած են։ Կը յուսան որ կը ճանչուի և այն ժամանակ . . .

— Ո՜հ, մայրի՛կ, գոչեց Թէրէզ, վերջացուցէք այդ տխուր խօսակցութիւն, և ուրիշ բանի վրայ խօսինք։

Եւ Լուիի դառնալով,

— Եւ ապարանջա՞ն, ըսաւ ժըպտելով. այս իրիկուն պիտի բերէ՞ք։ աներկբայ եմ որ մոռցաք։

Մոռնա՛լ, ի՞նչ անշահ բառ. ես բան մը չեմ մոռնար, երբէք չպիտի մոռնամ, և չեմ գիտեր մոռնալ։

— Ներեցէ՛ք, օրիորդ, ըսաւ երիտասարդը շփոթելով. հոս գալէ առաջ գոհարավաճառին երթալ կ'ուզէի, արդելքի մը հանդիպեցայ։

— Ի՞նչ արդելքի, պարո՛ն, հարցուց Թէրէզ ժպտելով. իրաւունք ունիմ իմանալու։

— Գործի մը պատճառաւ ուշ մնացի... իրաւագիտական գործի մը պատճառաւ։

— Օ՜, աւասիկ ձախող չքմեղանք մը։

— Վաղն, օրիո՛րդ յապաղումը կը դարմանուի. ապարանջանը կուգայ։

— Կը յուսամ, սիրելի՛ Լուիս, ըսաւ Տիկին Լքքոնթ, որ յիմար ծախքեր չէք ըներ հարսանեկան ընծայի համար։ Դուք աշխարհ կը մտնէք գեղեցիկ հարստութեամբ մը. բայց խնայողութիւնը դէշ բան չէ։ Խեղճ այրս անդադար կը յեղյեղէր ինձ, և իրաւունք ունէր։ Ուստի կ'աղաչեմ ձեզ որ...

Այս իմաստուն խօսքն ընդմիջեցաւ ծերը սպասաւորի մը ներս մտնելովն, այն սպասաւորին, որ քանի մ'օր առաջ ներս մտցուցած էր զՊ. Թոյպիաք։

— Նախասենեկին մէջ մարդ մը կայ որ հիմա խօսիլ կ'ուզէ Պ. Տը ժանթիլեիի հետ։

— Մա՛րդ մը, կրկնեց Լուի, զարմանալով այս անսովոր եղանակաւ ծանուցման վրայ։

— Այո՛, տէր, բաւական գծուծ կերպարանքով մարդ մը։

— Մուրացիկ մ'անշուշտ. բայց չեմ հաւկնար թէ ինչո՛ւ հոս կուգայ կը փնտռէ զիս։

— Հոգ չէ, պարո՛ն, ըսաւ Թէրէզ քիչ մը խոժոռելով, որ առաւել կրգեղեցկացնէր զայն, պէտք է երթալ ողորմութիւն մը տալ։ Կը կարծէք թերևս թէ կը ձանձրանա՞մ ձեր բացակայութեան միջոցին։ Է՛հ, ամենևին ոչ. գեղեցիկ գիրք մ'ունիմ, զոր մայրիկս կարդալու թոյլտուութիւն ըրաւ ինձ՝ յոյժ բարոյալից լինելուն պատճառաւ...

Ալպերիք Սըքոնտի յորինած Օրէ՞ՐԴ+ Ռ.Ն.Էյչ անուն վէպն։ Հիմա նորէն ձեռ-քըս պիտի առնում և կ'աղաչեմ ձեզ որ երկար մնաք... յոյժ երկար... վասն զի շատ հետաքրքիր եմ իմանալու թէ այդ երկու քոյրերը պիտի ամուսնանա՞ն... խե՜ղճ աղջիկներ... նշանած չունին։

— Մուրացիկ չէ, տէ՛ր, ըսաւ սպասաւորը։ Կ'ըսէ թէ յոյժ կարևոր գործի մը համար եկած է։

— Արդեօք այն զարմանալի մա՞րդն է որ անցեալ օր զիս տեսնել կ'ուզէր, և իմ տեղս Գ. Տը Ժանթիլեի ընդունեց զայն։

— Օ՛, ոչ, տիկին։ Այս եկողն աղքատիկ կերպարանք ունի և դէմքը...

Սպասաւորը պէտք չունեցաւ մարդուն դէմքը նկարագրելու, վասն զի անոր խօսած միջոցին մարդն երևցաւ դահլճին դրան երկու փեղկերուն մէջտեղէն, որ կէս մը բացուած էին անքաղաքավար այցելուին ձեռօք։

Նախ Թէրէզ տեսաւ այն դէմքն,

լուսաւորեալ երկու մանր գորշ աչերով, որք երկիւղալի կերպիւ մ'իրեն կը նայէին անթարթ։

Շարժում մ'ըրաւ որ իւր մօր ուշադրութիւնն արթնցուց, և Տիկին Էրքոնթ տեսնելով յանդուգն ինքնամուտն, զարհուրանաց ճիչ մ'արձակեց։

Սպանութեանց պատմութիւններով խճողեալ լրագրի մ'ընթերցումը քիչ մը վրդոված էր զայն։ Մտաց այնպիսի տրամադրութեան մը մէջ էր, յորում ամենէն քաջասիրտներն ալ երբեմն կը գտնուին խոլականներու պատմութիւն լսելով, և ընտանեկան փոքր դահլճին մէջ անծանօթի մ'երևումը նոյն ազդեցութիւնը կ'ընէր, ինչ որ աւազակներու արշաւանք մը կրնար ընել։

Լուի, առաւել բարկանալով քան վախնալով, մէկէն ոտքի վրայ ելաւ ըսելով.

— Դուրս ըրէք այդ մարդ։

Սպասաւորն իսկոյն ետ դարձաւ իւր ապագայ տիրոջ հրամանը կատարելու, բայց շատ ուշ էր։

Անքաղաքավար մարդն, որ կը համարձակէր այս կերպիւ ներկայանալ, արդէն դահլիճէն ներս մտած և դուռն իւր ետևէն գոցած էր։

Զգուշացաւ սպասաւորին պատահելէ, որուն դիմադրելու կարող էր, և վեղոյրն ի ձեռին յառաջացաւ՝ շուրջանակի ողջունելով։

Աղնուական պարոնի մ'և մանաւանդ միլիոնատէրի մը կերպարանք չունէր, վասն զի տօնական նոր լաթերն հագնող գործաւորի մը կը նմանէր. սրիկայի դէմք ալ չունէր, ոչ ալ մուրացկանի, որովհետեւ հանդերձները մաքուր էին։

Այրին, քիչ մը քաջալերուելով, մարդուն դէմքը կը դիտէր՝ որոյ վրայ պարկեշտութիւն կը փայլէր, և արդէն տրամադրութիւն կ'զգար օգնութիւն մ'անոր ընելու։

Թէրէզ քիչ մ'աւելի յուզեալ կ'երեւէր, իսկ նշանածը սաստիկ զայրացած էր։

— Ո՞վ թոյլ տուաւ ձեզ մտնել հոս,

հարցուց ուղղակի մարդուն վրայ երթալով. ի՞նչ կ'ուզէք, ո՞վ էք։

— Ներեցէք ինձ, պարո՞ն... տիկի՛ն և համայն ընկերութիւն, պատասխանեց խոնարհութեամբ տարօրինակ այցելուն։ Արդեօք Պ. Տը ժանթիյեիի և Տիկին Լը.քոնթի հե՞տ խօսելու պատիւն ունիմ։

— Այո՛, ըսաւ այրին, որ զգուշանալ կ'ուզէր կռիւէ։

Ի՞նչ պիտի ըսէք։

— Ներեցէք, ըսաւ անծանօթն աչքին ծայրով սպասաւորին նայելով, ըսելիքս յոյժ խորհրդաբար է, և կը փափաքիմ...

— Զափազանց յանդգնութիւն է այս, գոչեց Լուի։

Եւ քայլ մ'առաջ գնաց, որպէս զի ժպիրհին օձիքէն բռնելով դուրս նետէ։

Տիկին Լը.քոնթ դարձեալ միջամտեց։

— Լուի, կ'աղաչեմ, ըսաւ։

Եւ սպասաւորին դառնալով.

— Դուրս ելիք, Անթուա՛ն, բայց մի՛ հեռանաք։

Անծանօթը չէր ընկրկած երբոր Պ. Տը Ժանթիյեի անոր վրայ քալեր էր. ընդհակառակն, երեք քայլ յառաջ եկեր էր և ուշադրութեամբ անոր դէմքը կը դիտէր, զոր սեղանին վրայ դրուած երկու մոմեր լիովին կը լուսաւորէին երբոր յառաջ քալեր էր։

Ջննութիւնն երեք կամ չորս երկվայրկեան չտեւեց, բայց սատանորդի մարդն այնպիսի աչեր ունէր, որք կարծես թէ մինչեւ Պ. Լէքոքի հոգւոյն խորերը կը կարդային։

Թէրէզ զարմանալով այս խուզարկու նայուածքին վրայ, այլազունեցաւ, իբր թէ վտանգ մ'սպառնար իւր նշանածին։

— Ահա մինակ ենք, ըսաւ մայրը. կ'սպասեմ, պարո՛ն, որ ձեր այցելութեան նպատակն իմացնէք մեզ։

— Շատ պարզ է, տիկի՛ն, պատասխանեց անծանօթն առանց վարանման։

Պահ մ'առաջ թղթապանակ մը գըտայ, որոյ մէջ դրամ կայ... մեծագումար դրամ...

— Է՛յ։

— Ես հարուստ չեմ, ճշմարիտ է, բայց պարկեշտ եմ... և որովհետեւ թղթապանակին մէջ թուղթի մը վրայ Տիկին Լէքոնթի անունն ու հասցէն գրուած էր, ըսի ես ինձ թէ փոխանակ թաղիս ոստիկանապետին տանելու, երթամ ու ղղակի այդ տիկնոջ յանձնեմ, որով թերեւս պանքոտմանները կորսնցնողն հանդիստ ննջէ այս գիշեր...

— Բարի, շատ բարի գործ մ'է այդ ձեր ըրածը, պարո՛ն, գոչեց բարեսիրտ տիկինը։ Միայն թէ կը սխալիք։ Ո՛չ ես, ո՛չ աղջիկս դուրս չելանք այսօր. հետեւարար ստակ կորուսած չենք։

— Ուրեմն Պ Տը Ժանթիյեի կը վերաբերի թերեւս... որովհետեւ այդ անունն ալ կայ թուղթին վրայ։

— Ոչ... ոչ, ես բան մը կորուսած չեմ, ըսաւ երիտասարդը կակաղելով։

— Զարմանալի բան է այս, մրմնջեց Թէրէզ, որ քալ կը նշմարէր իւր նշանածին շփոթումը։

Եւ գտնողին դառնալով՝ ըսաւ.

— Կը հաճի՞ք ցուցնել մեզ թղթապանակը։

— Ներեցէք, օրիո՛րդ, պատասխանեց այցելուն չափազանց աչքի զարնող վարանմամբ, արդարեւ կասկած չունիմ առտ գտնուող անձանց վրայ . . . բայց . . . կը հասկնաք . . . չեմ ուզեր սխալիլ . . . և տիրոջմէն զատ ուրիշի յանձնել թղթապանակն . . . ո՛ գիտէ ի՞նչ կը պատահի . . .

— Տիկի՛ն, գոչեց Լուի Լը-քոք, այս ծաղրաշարժ տեսարան շատ երկար տևեց, և ներեցէք ինձ որ սա թշուառականին լրբութիւնն այլեւս չներեմ, և . . .

— Պարո՛ն, ընդմիջեց Թերէզ, թղթապանակը ռուսական սեկէ՞ է։

— Ճշմարիտն ըսելով՝ չեմ գիտեր, պատասխանեց մարդը, բայց եթէ գոյնը ըսէք ինձ . . .

— Խոր կարմիր . . . ոսկեզօծ ճարմանդով . . . և երկու սկզբնատառերով . . . Լ և Ժ։

— Ճշդիւ այդպէս։ Եւ մէջը քանի՞ գրպան կայ։

— Երեք։

— Ճիշդ։ Դրամոց գումա՞րն։

Այս վերջին հարցման չպատասխանեց Թերէզ, և ոչ առանց պատճառի։

Մէկէն դարձաւ նշանածին ըսաւ.

— Բայց այդ թղթապանակը ձերն է, Լուի։ Մոռցա՞ք ուրեմն թէ ես տուի ձեզ։

Այսօր ձեր յիշողութիւնք տկարացած կ'երեւի, աւելցուց սրտայուզութեամբ մը, զոր ի զուր ծածկելու կ'աշխատէր։

— Ներեցէք ինձ, պատասխանեց Պ. Լը-քոք խեղդուկ ձայնիւ։ Չէի կարծեր, չէի կրնար կարծել թէ այս մարդ ճշդիւ կը բերէր ինձ . . .

— Սակայն գիտէիք որ կորուսած էիք, վասն զի . . . ես բան մը չեմ մոռնար . . . յոյժ տխուր Ցիք այս իրիկուն երբոր եկաք . . . և կ'ուզէ՞ք որ մէջը գտնուածն ալ ըսեմ ձեզ, հինգ հազար ֆրանք, ապարանջանիս գինը։

Մի՛ շառագնիք . . . այժմ կը ներեմ ձեզ ապարանջանս գնած չլինելնիդ . . .

բայց ինչո՞ւ կը ծածկէիք ինձմէ ճըշ-
մարտութիւնը. կը վախնայիք որ կըշ-
տամբա՞նք պիտի լսէիք, աւելցուց
աղջիկը ծիծաղելով։

Թէրէզ գտած էր վերստին իւր զը-
ւարթութիւնն յորմէ հետէ կը խորհէր
որ իւր տարփաւորին վրդովման պատ-
ճառը գուշակած էր։

— Հինգ հազար ֆրա՛նք, գոչեց
Տիկին Լը-քոնթ։ Բայց մեծ գումար մ'է
այդ, և եթէ այս պարոնը չլինէր, որ
կը յուսամ թէ պիտի հաճի արժանա-
ւոր վարձ մ'ընդունիլ...

— Ե՞ս, տիկի՛ն, ըսաւ մարդն, օ՜,
ո՛չ... ես բան մը չեմ ուզեր. պար-
կեշտութիւնն արժանիք չունենար եթէ
վարձք ընդունի... ես բաւական լաւ
վարձատրուած եմ, երբ կը մտածեմ
որ պարոնին կորսնցնել չտուի հինգ
հատ գեղեցիկ հազարնոց պանքտոմս,
և այսպիսի գեղեցիկ օրիորդի մ'իրեն
տուած յիշատակն. այս կը բաւէ ինձ,
ազնի՛ւ տիկին։

Ի՞նչ ըսեմ. իմ ալ խելքիս փչեց եր-

թալ պատոյտ մ'ընել դիակնարանին մէջ։

— Դիակնարանին մէ՛ջ, գոչեց Թէ-
րէզ։ Դիակնարանէ՞ն գտաք այդ թըղ-
թապանակ։

— Այո՛... ապակափեղկին առջե-
ւէն... և հրաշք է որ ուրիշ մէկը չը
վերցուց զայն, վասն զի անթիւ բազ-
մութիւն կար սպանեալ կինը տեսնե-
լու համար։

— Դո՞ւք ալ գնացիք, Լուի՛, հար-
ցուց մանկամարդուհին, աչերը գրեթէ
լցուած։

— Այո՛, կակազեց նշանածը...
դիպուածն այնպէս բերաւ որ առջևէն
անցայ... և ներս մտայ...։

— Շնորհակալ եմ որ չբսիք ինձ
զայդ... և կ'ուզէի որ չգիտնայի։

— Այժմ, պարո՛ն, ըսաւ անծա-
նօթը, գործը կարգադրուած է։ Նկա-
րագրութիւնը ճիշդ է։ Դուք ալ պահ
մ'առաջ գնացիք տեսաք Մաչայի աղ-
ջիկով կինը... կ'երևի որ այսպէս կը
կոչուի լրագրաց մէջ... ինչե՛ր կը հը-
նարեն այդ խմբագիրք...

— Համառօտենք, կ'աղաչեմ։

— Օ՛, հիմա կը լմննայ. ուրիշ բան չմնար ինձ՝ բայց միայն ձեզ յանձնել հազար ֆրանքնոց քուրչերն և զանոնք պարունակող տփիկն։

Աւասիկ նախ թղթապանակը. ձե՞ռքն է։

— Այո՛... կը ճանչեմ... տուէք, մրմնջեց Լուի ձեռքն երկնցնելով։

— Վայրկեան մը. պէտք է որ նախ պանքտոմներն համրեմ ձեր առջև, որպէս զի ցուցնեմ ձեզ թէ ամբողջ են։

— Աւելորդ է, ես կը հաւատամ ձեզ։

— Ոչ, ոչ. կանոնաւորութիւնը լաւ բան է։

Աւասիկ մէկ, երկու, երեք, չորս, հինգ... ամբո՞ղջ են։

— Ես չէի կասկածեր, և որովհետեւ դուք ստուգեցիք...

— Այժմն ասոնք չեն. տակաւին թուղթ մ'ալ կայ, որոյ վրայ ձեր... և տիկնոջ անունը գրած է... բարեբաղդաբար... վասն զի առանց ադոր չպիտի կրնայի գտնել ձեզ։

Երիտասարդը շարժում մ'ըրաւ թղթապանակն առնլու համար, զոր անծանօթը չէր փութար յանձնել իրեն։

— Այս անգամ թղթապանակին պարունակութեան ցանկն աւարտեցաւ, յարեց խղճամիտ անծանօթն։

Ցետոյ աւելցուց.

— Բայց ոչ, Ռոպէր Հուտէնի փեղջրն է այս թղթապանակ. լուսանկար մ'ալ կը գտնեմ մէջը... կնոջ լուսանկար մը...

Անշուշտ օրիորդինն է, յարեց թէրեզի ցուցնելով զայն։

Թէրեզ աչքն անդին դարձուց։

Իւր կնոջական բնազդում կ'աղդարարեր իրեն թէ պէտք չէր նայիլ այն պատկերին։

Նախ, աներկբայ էր որ իրենը չէր, վասն զի իւր լուսանկարն հանել տուած չէր երբէք։

Չէր ուզեր իւր գեղեցիկ դէմքը լուսանկարչի մը յանձնել, որ կրնայ ուզածին չափ ընդօրինակել և ուզողին վաճառել։

Իւր դէմքը մի միայն զինքը սիրողներուն պահել կ'ուզէր։

Ասկէ զատ՝ իւր նախանձութիւնը կ'արթննար արդէն։

Անծանօթը կ'ըսէր իրեն թէ լուսանկարը կնոջ մը պատկերն էր, և այդ կին գեղեցիկ պարտէր լինել, որովհետեւ մարդը կը սխալէր և Թէրէզի պատկերը կը կարծէր։

Ինչո՞ւ համար Լուի խնամով կը պահէր այդ պատկեր։ Եւ Թղթապանակին իւրը լինելը խոստովանելու համար ցոյց տուած վարանումն՝ արդեօք անհաւատարմութիւն մը, դաւաճանութիւն մը ծածկելու համար չէ՞ր։

Դեռատի աղջկանց երեւակայութիւնը շուտ կը քալէ. Թէրէզինն ալ արդէն դժնդակ ենթադրութիւններ կը դարբնէր։

Տիկին Լը.քոնթ բոլորովին նոյն պատճառները չունէր վրդովելու, և սակայն այս տեսարան կը խռովէր զայն և սիրտն անհանգիստ կ'ընէր։

Աղօտաբար կ'զգար թէ տխուր

գաղտնիք մը կար այս քիչ շատ ակամայ վրիպանաց ներքեւ, և թէ պանքտոմմները գտնող պարկեշտ մարդը կատակերգութիւն մը կը խաղար, որոյ նպատակը չէր կրնար տակաւին հասկընալ։

Գալով Պ. Լը.քոքի որդւոյն, իւր դէմքն ըստ բաւականի կը ծանուցանէր թէ չարաշուք լուսանկարին յանկարծ երեւան հանուիլը սարսափելի հարուած մը տուեր էր իրեն։

Երեսին դոյնը մոխիր կտրած էր, և կծկեալ ձեռքը թիկնաթոռի մը յենարանը բռնած էր։

Կարծես թէ մահուան վճիռը լսող դատապարտելոյ մը մեքենական շարժումն էր։

Իրենց նստարանին կը փաթթուին, ինչպէս ոգեվարք իրենց անկողնին վերմակներուն։

Կը թուէր թէ Լուի Տը ժանթիլեի ինքզինք կը պաշտպանէր աներեւոյթ դահճաց դէմ, որք զինք քաշելով կառափնարան տանելու կ'աշխատէին։

Այս թատերական տեսարանին հեղինակն հանդարտութեամբ կը դիտեր այն տարօրինակ պատկերը զոր Տիկին Լէքոնթի քիչ մ'առաջ խաղաղ դահլիճը կը ներկայէր, և չնչմարել կը ձեւանար այն յուզումը՝ զոր կ'արտադրէր թղթապանակին պարունակութեանց ցանկն, որոյ մանրամասնութիւնները ցոյց տուած ժամանակ հաճոյք կ'զգար կարծես՝ ինչպէս դերասանք հաճոյք կ'զգան իրենց երած ճարտար ազդեցութեան վրայ։

Սակայն աչքին ծայրով Պ. Տը ժանթիյեի կը նայէր։

— Կ'երեւի թէ սխալած էի, ըսաւ ետ քաշելով լուսանկարը՝ զոր թէրէզի աչքին առջեւ դրած էր. ներեցէք, օրիո՛րդ. կը կարծէի թէ ձեր պատկերն էր, ապա թէ ոչ՝ չէի համարձակեր...

— Տուէք, ըսաւ երիտասարդն ընդմիջելով. այդ պատկերն իմն է։

— Պանքտոմներն ալ... թղթապանակն ալ... դիտեմ, և ամենն ալ ձեզ պիտի տամ, սիրելի՛ պարոնս...։

և առանց վարձուց, ինչպէս որ արդէն ըսի ձեզ... մեք հարուստ չենք, բայց պարկեշտ ենք։

— Ադոր տարակոյս չունիմ, ըսաւ Լուի խեղդուկ ձայնիւ, և կ'աղաչեմ որ ինձ յանձնէք այդ...

— Երբոր առանց վարձուց կ'ըսեմ, անձնադոլութիւն կ'ընեմ, յարեց անծանօթը։ Բայց կը խնդրեմ վարձք մը... որ սուղ չէ ձեզ համար... այսինքն թոյլ տաք ինձ որ լուսանկարը դիտեմ... գեղեցիկ անձի մը դէմքը... զոր հաճոյք կ'զգայ մարդ տեսնելով։

— Կ'արդելում ձեզ զայդ, գոչեց Պ. Տը ժանթիյեի մարդուն վրայ վաղելով՝ որպէս զի խլէ ձեռքէն այն չարաշուք պատկերն։

Անծանօթը խլել չտուաւ զայն. իսկոյն ետ քաշուելով՝ սեղանին միւս կողմն անցաւ։

Յետոյ պատկերը կանդեղի մը լուսոյն բռնելով՝ ծռեցաւ որպէս զի մոտէն դիտէ։

Սակայն Թէրէզ, սիրտն ելած և աչքը լցուած, յամրաբար նշանածին մօտեցաւ և մի՛մնջեց անոր ականջ ի վար.

— Ինչո՞ւ կը պնդէք որ մարդ չը տեսնէ այդ լուսանկար։

Եւ տեսնելով որ լուռ կը կենար,

— Պատասխան տուէք ինձ, Լուի՛, ըսաւ օրիորդն ստիպմամբ... պատասխան տուէք... դթալով ինձ... սիրտս կը տրորի...

— Աւասիկ նոր... և հետաքրքրաշարժ բան մ'ալ, գոչեց յանկարծ այցելուն։ Զարմանալի՛ բան, բնաւ մտքէս չէր անցներ։

— Ի՞նչ կայ, պարո՛ն, հարցուց Տիկին Լը-քոնթ դողալով։

— Այս դէմքը ճշդիւ սպանեալ կընոջ դէմքն է։

— Ի՞նչ կ'ըսէք... կարելի բան չէ, Թոթովեց այրին։

— Օ՛, չեմ կրնար սխալիլ, բարի՛ տիկին։ Ես պահ մ'առաջ տեսայ զայն դիակնարանին մէջ, և կը թուի ինձ թէ տակաւին աչքիս առջեւն է։ Այնպիսի

գլուխ մը չմոռցուիր. ուրիշ մ'ալ չկայ անոր նման։ Ճշդիւ նա է։

Թէրէզ նուաղելով ինկաւ Թիկնաթոռի մը վրայ։

— Եւ լուսանկարն ալ լաւ յաջողեր է, շարունակեց մարդն, ամեն ինչ ճըշդիւ նկարուած է... մինչեւ իսկ այն սեւ նիշը՝ զոր ունէր ձախ այտին տակով...։ Պարոնն, որ ինձ պէս կը ճանչէ զայն, անշուշտ պարտի յիշել... հագուստն ալ նոյն է... ժանեկաղարդ շրջազգեստ մը...։ Կարծես թէ ըսպաննուելէն մէկ ժամ առաջ հանուած է այս լուսանկար։ Եւ կուրծքին վրայ դամուած խաղի թուղթը... Մաչայի աղջիկը... պատկերին մէջ ձեռքը բռնած է...։

— Ալ չափն անցաւ, ըսաւ Պ. տը ժանթիյեի անծանօթին վրայ քալելով բռնափակ. ալ չպիտի թողում որ շարունակէք այդ անպատեհ շաղակրատութիւններ։

Տուէք ինձ սա թղթապանակ, և անմիջապէս դուրս ելէք. ապա թէ ոչ...

— Ապա թէ ոչ, ի՞նչ, հարցուց տարօրինակ անծանօթը՝ պատկերը թղթաթաղանակին և թղթաթաղանակն ալ իւր գրպանին մէջ դնելով։

— Հիմա մէկը կը կոչեմ որ կ'օգնէ ինձ բռնութեամբ ձեր վրայէն առնլու և ձեզ ալ դռնէն դուրս նետելու։

— Լուի՛, կ'աղաչե՛մ, գոչեց Տիկին Լը.քոնթ։

— Ես խորհուրդ չեմ տար ձեզ այդպիսի փորձ մ'ընելու, ըսաւ մարդը պաղութեամբ. նախ՝ վասն զի ուժեղ ձեռ.ք ունիմ, և չէ.ք կրնար զիս վախցընել՝ թէև զիս հոս առաջնորդող ծերուկն ալ օգնական ունենա.ք ձեզ։ Երկրորդ՝ կրնա.ք զղջալ յետոյ, վասն զի ուղղակի թաղիս ոստիկանապետին կ'երթամ։

Գ. Տը Ժանթիլեի բարկութենէն գունաթափ եղած էր. այս խօսքին վրայ դէմքը կապարի գոյն առաւ և հեղձամղձուկ ձայնիւ մ'ըսաւ.

— Եթէ համարձակի.ք հոն երթալ, կ'ըսեմ ոստիկանապետին թէ գող է.ք...

և կ'ապացուցանեմ, կը հասկնա՞.ք. վասն զի այդ թղթաթաղանակն իմ վրայէս գողցուած է՝ զգեստիս գրպանը կըտրելով, զոր կրնամ ցուցնել։ Ձեր բացած ճեղքը կեցած է տակաւին... այո՛, գողութիւնն ասկից քանի մը ժամ առաջ եղած է, և գողնը ձեր ձեռ.քն է։ Շատ պարզ է այս, կարծեմ. ուստի կը զարմանամ ձեր լրբութեան վրայ, և ես աւելի շուտ վերջ կուտայի այդ կատակերգին՝ զոր քսան վայրկենէ ի վեր կը խաղա.ք, եթէ տիկինն ու օրիորդը չենայէի անհաճոյ տեսարանի մը ներկայ գտնուելէ։

— Օ՛, եթէ գործն ինձմէ միայն կախում ունենար, ամեն ինչ քաղցրութեամբ կը կատարուէր, ըսաւ այցելուն կատարեալ հանդարտութեամբ։ Ես կը յարգեմ տիկնայ.քն, և չեմ սիրեր աղմուկ հանել։ Դուք է.ք, սիրելի՛ պարոնս, որ կաթնապուրի պէս կը փբրփբրի.ք։

— Բա՛ւ է, գոչեց երիտասարդն ևս առաւել զայրանալով անծանօթին

ընտանեկան ձևերէն։ Ցանձնեցէք ինձ դա թղթապանակը, կամ պահեցէք, հոգս չէ. բայց դուրս ելէք։ Ուզելի կ'ընտրեմ ձեզ թողուլ այդ դրամը զոր գողցած էք ինձմէ, քան գողութեան գործի մը խառնուիլ, թէև իբր դանդատող. և կը կարծեմ որ այժմ ոչ ևս կը յօժարիք դիմել ոստիկանապետին։

Անծանօթը չպատասխանեց, բայց մեկնելու երևոյթ ալ չունէր։

Թղթապանակը գրպանելէն յետոյ՝ իւր երկայն զգեստը կոճկեց վրայէն, և սկսաւ ձեռքը բռնած փեղոյրը դարձուցնել վարանեալ դէմքով մը, որ ներս մտնելէն ի վեր ցոյց տուած համարձակութեան հետ հակապատկեր մը կը ձևացնէր։

Տիկին Լը.քոնթ, որոյ սիրտը կը տրոփէր այս տեսարանին ազդած վրդովումէն, քիչ քիչ հանդարտիլ սկսաւ, և կը խորհէր որ անծանօթին բռնած ընթացքը չարագործութիւն ընող մարդու ընթացք չէր։

Թէրէզ, սրտաբեկ, գլուխը կախած, կը կրկնէր ցած ձայնիւ.

— Այդ կնոջ պատկերն իւր սրտին վրայ դրած էր, ուրեմն կը սիրէր զայն։

— Է՛, ի՞նչ բանի կ'սպասէք մեզ աղատելու համար ձեր ներկայութենէն, ըսաւ Պ. Տը Ժանթիյեի սպառնալից դէմքով։

— Պիտի ըսեմ ձեզ, սիրելի՛ պարոնս, պատասխանեց մարդը։ Նախ, համոզուեցէք թէ բան մը չունիմ խըզճիս վրայ։ Կը հաւատամ որ թղթապանակը ձեր վրայէն գողցուած է, բայց յայնժամ հարկ կը լինի որ գողը կորուսած լինի զայն, վասն զի հաւատացէք որ ես գտայ զայն։

— Եթէ այս պարոնը գողցած լինէր, չէր բերեր ձեզ, սիրելի՛ Լուիս, ըսաւ Տիկին Լը.քոնթ, որ գործն անուշ տեղը կապել կ'ուզէր։

— Շնորհակալ եմ, տիկի՛ն, ըսաւ այցելուն քաղաքավարութեամբ. դուք ձեր մատը բուն ճշմարտութեան վրայ դրիք, և կը յուսամ որ այդ կը բաւէ պարոնին։ Պիտի հասկնայ որ եթէ թղթապանակն իրեն չեմ յանձներ,

պատճառն այս է որ ես յանցաւոր կը լինիմ եթէ թաղիս ոստիկանապետին չյանձնեմ այս թղթապանակն, որոյ մէջ սպանեալ կնոջ պատկերը կայ։ Խորհեցէք անգամ մը. ոստիկանութիւնն ութ օրէ ի վեր կ'որոնէ և բան մը չը գտներ... այս պիտի օգնէ թերևս...։ Ես ամեն առաւօտ սու մը կուտամ, լրագիր մը կը գնեմ իմ կարողութեանը համեմատ...։ Դեռ այսօր կարդացի անոր մէջ թէ ամեն բարի քաղաքացւոյ պարտքն էր լուսաւորել դատական իշխանութիւնն... և ես ալ, պարծանք չլինի, բարի քաղաքացի մը կը ճանչեմ զիս...։

— Ուրեմն, հարցուց Պ. Տը Ժանթիյեի այլայլեալ ձայնիւ, մտադիր էք երթալ...

— Ոստիկանապետին, այո՛, և անյապաղ։ Մինչեւ իսկ հոնկէ պարտէի սկսիլ՝ եթէ հոս գալէս առաջ լուսանկարը տեսած լինէի. բայց ես պանքտոմսերուն և ձեր անունը կրող թղթին միայն ուշադրութիւն ըրած էի նախ։

Օ՛, մի՛ վախնաք, աւելցուց մարդը թէրէզի նշանածին նայելով անքթիթ, թղթապանակն և պանքտոմսները ձեզ կը տրուին։

Եւ աւելի շուտով ստանալու համար լաւ կ'ընէք հետս գալ։

Այս առաջարկին վրայ, զոր դռնէն դուրս ընել ուզած այցելուն սիրալիր դէմքով մը կ'ընէր, Պ. Տը Ժանթիյեի չկրցաւ ջղային ցնցում մը ծածկել։

— Ի՞նչ պէտք, պատասխանեց խըստիւ, ես բան մը չեմ ուզեր ոստիկանապետէն։ Միւս կողմէ, այդ դրամը ձերն է, որովհետեւ դուք գտած էք, ուստի ձեզ կուտամ։

— Օ՛, ոչ, իմս չէ, գոչեց անծանօթն ուրախ դէմքով։ Ես չեմ թքներ դրամներուն վրայ երբոր ես շահած լինիմ. բայց այս քուրչերն իմս չեն, և դուք չարաչար կը սխալիք կառավարութեան պարգեւելով զանոնք։

Դուք շատ հարուստ պարտիք լինիլ որ այդ գումարը բանի տեղ չէք դներ... բայց փոյթ չէ... կը յու-

սամ որ պիտի հաճի.ք հետս գալ ոստիկանապետին պաշտօնատունը։

— Կը կրկնեմ ձեզ թէ պէտք չկայ։

— Ձեր գաղափա՞րն է այդ։ Արդարեւ, ինչպէս որ կ'ուզէք։ Բայց վերջապէս ամեն ժամանակ կրնաք պահանջել ձեր պանդտոմներն, և կը կարծեմ որ յետոյ չէք սպասեր։

Ուրեմն ես միայնակ երթամ խօսիմ թաղիս ոստիկանապետին հետ, ըսաւ մարդն հրաժեշտի ողջոյն տալու պատրաստուելով։

Տիկին Լը.քոնթ սփոփանաց հառաչ մ'արձակեց։

Բարի կինը կը փափաքէր այս տեսարանին շուտով վերջանալը տեսնել, որ վերջին աստիճան կը վրդովէր զինք։

Լուի կը ջանար ինքզինք անխռով ցուցնել, և չէր յաջողեր։

Թէրեզ անոր կը նայէր ա՛յնպիսի աչերով, որոց մէջ սրտատանջութիւն կը կարդացուէր, և ուրիշ աւելի խորին և աւելի դժնդակ զգացում մը։

—Ա՜, չար սատանա՛յ, գոչեց յան-

կարծ այցելուն, կը խորհիմ որ այսչափով չկրնար վերջանալ այս գործ։

—Ի՞նչ ըսել կ'ուզէք, հարցուց խակոյն Պ. Տը ժանթիլեի։

— Ըսել կ'ուզեմ թէ ոստիկանապետը շատ մը տեղեկութիւններ պիտի ուզէ ինձմէ ձեր վրայ։ Բարի մարդ մ'է . . . կը ճանչեմ. տասն տարի կայ որ անոր թաղին մէջ կը բնակիմ . . . բայց իւր պաշտօնն է հետաքրքիր լինիլ . . . ասկէց զատ, այս Մաչայի աղջկան գործէն ի վեր բովանդակ ոստիկանութիւնն յուզման մէջ է . . . և բնական է . . . ուստի տարակոյս չկայ որ եթէ ոստիկանապետն խմանայ թէ սպանեալ կնոջ պատկերը կար ձեր քով, պիտի ուզէ հարցաքննել ձեզ խմանալու համար թէ նա՞ տուած է ձեզ։

Յետոյ նշմարելով որ երիտասարդին գոյնը կը նեղէր,

— Սակայն, յարեց, յայտնի է թէ դուք լուսանկարչէ մը գնած էք . . . շատ պարզ է այս, ճշմարիտ չէ՞. բայց ի՞նչ պիտի ընէք, ոստիկանապետներուն ա-

մենն ալ այսպէս են . . . և մերինը թէև բարի մարդ է, դրաւ կը դնեմ որ ձեզ պիտի կոչէ, և այս իրիկուն։

Երիտասարդն յայտնապէս ցնցուեցաւ։

— Եւ գիտէք թէ մեծ տուներու նշանաղդեստով սպասաւոր մը չպիտի լինի ձեզ առնող տանողն։

— Ոստիկանութեան զինուորնե՞ր պիտի գան տունս, գոչեց այրին սարսափահար։

— Ո՛չ, բայց գրեթէ նոյնն ըսել է։ Երկու գործակալ պիտի գրկէ . . . քաղաքացիի կերպարանքով. բայց տեսնողը կը ճանչէ զանոնք իրենց ձևերէն, և տուն մը մտած ժամանակնին, մէջինները շուտով կը հասկնան անոնց ո՛վ լինիլն և բնականաբար դող կ'ելնեն . . . մանաւանդ որ այդ մարդիկ շատ անգամ փափուկ զգուշաւորութեամբ չեն վարուիր ամենուն հետ։

Ո՛չ, պատուոյս վրայ կ'երդնում, որ եթէ ես լինէի պարոնին տեղ, ադոնց դալուն չէի սպասեր, և ես կ'ելնէի

համարձակ ոստիկանատունը կ'երթայի։ Մէկ ժամու գործ է ասկէց հոն երթալը . . . քսան վայրկենի մէջ կը լմննայ խօսակցութիւնն, և կրնաք երկու ժամէն վերադառնալ և այս տիկիններուն սիրտն անդորրել, ձեր պանքոտմաններն ալ հետերնիդ բերելով։ Միայն լուսանկարը կը պահեն։

Գ. Տը Ժանթիլեի լուռ կը կենար, բայց սիրտը տակնուվրայ ընող զգացումները դէմքին վրայ կը ցոլային։

— Կը կարծեմ թէ, սիրելի՛ Լուիս, այս պարոնն իրաւունք ունի, քսաւ Տիկին Լը-քոնթ։ Լաւագոյն է շուտով լմընցընել այս անհաճոյ գործ։ Աղջիկս և ես հանգիստ չպիտի լինինք մինչև որ չիմացնես մեզ թէ վերջացած է։

Գնացէք ուրեմն։ Մեր կ'սպասենք ձեզ, և կը յուսամ որ երկար չենք սպասեր, վասն զի պիտի հրամայեմ որ մեր ախոռին երկու լաւագոյն ձիերը լծեն մեր փոքր կառքին։

— Պէտք չկայ ադոր, տիկի՛ն, քսաւ մարդն։ Ես կառք մը բռնած եմ

ժամով, և բարեբաղդաբար այնպիսի կառք մը հանդիպեցաւ ինձ, որ սատանայի պէս կ'երթայ։ Ներեցէք ինձ յայտնել ձեզ, տիկին, թէ ժամանակ կը կորսնցնենք հոս մինչև որ ձեր կառքը լծուի... ասկէց զատ պէտք չէ որ տան կառքմը տեսնուի սոտիկանատան դուռը։ Գործակալները խօսեցնել կուտան ձեր կառավարն, և բերնէն բան կը քաղեն։

Այս խորհրդածութիւն լաւ թուեցաւ Տիկին Լէքոնթի, և չպնդեց։

Լուի Ֆէ ժանթիլեի Թէրէզի կը նայէր, և այնպէս թուեցաւ իրեն անոր դէմքէն թէ մօրը կարծիքէն էր։

Միւս կողմէ, քիչ մը մտածելով՝ գրեթէ հանդարտած կ'երևէր։

— Լաւ, ձեր հետ կուգամ, պարո՛ն, քսաւ պարզապէս։

Եւ սեղմելով իւր ապագայ զոքանչին ձեռքը՝ զոր իրեն կ'երկնցներ, յառաջացաւ որպէս զի հրաժեշտ առնու իւր նշանածէն, որ իրմէ շատ աւելի յուզեալ էր։

— Պիտի ներէ՞ք ինձ, մրմնջեց ա՛յնչափ ցած ձայնիւ որ նա միայն կրցաւ լսել, պիտի ներէ՞ք ինձ որ վիշտ պատճառեցի ձեզ։

— Այո՛, պատասխանեց Թէրէզ նոյնպէս ցած ձայնիւ, վասն զի կը յուսամ որ պիտի կրնաք արդարացնել զձեզ։

— Կը կասկածի՞ք։ Կը կարծէք ուրեմն թէ ե՞ս սպաննած եմ այն կին։

— Այն ոճրին համար չէ որ կ'ամբաստանեմ ձեզ, ընդմիջեց աղջիկը ժպտելով իւր արտասուաց մէջէն։ Երբոր վերադառնաք, իմ առջևս պիտի արդարացնէք զձեզ... մոռցած լինելնուդ համար թէ ես իմ պատկերս խոստացած էի ձեզ... և ուրիշի մը պատկերը ձեր վրայ կրելնուդ համար։

— Կ'երդնում ձեզ թէ շատ դիւրին է, քսաւ սիրահարը ջերմութեամբ։

Եւ ողջունելով զՏիկին Լէքոնթ, դուռը ցուցուց մարդուն, որ քաղաքավարութեամբ մէկ կողմ քաշուած էր նշանածներուն հրաժեշտին ժամանակ, և չուզեց առաջ դուրս ելնել։

Սպասաւորին քունը տարեր էր նախասենեկին մէջ, վասն զի անծանօթին այցելութիւնն երկար տեւեր էր, և ընդոստմամբ արթնցաւ երբոր Պ. Տը Ժանթիյեի ձայնը լսեց։

Վազեց փութանակի փեղջրն ու կրկնոցը տուաւ. բայց մեծ եղաւ զարմանքն երբ տեսաւ որ իւր ապագայ տէրը կ'երթար այնպիսի մարդու մը հետ, որ ընկերային մարդու մը դէմք չունէր բնաւ։

Ծերունի ծառայն, լաւ կրթուած լինելով, չէր համարձակեր դիտողութիւն ընել. միայն, երբոր վանդակաղուռը բանալով կառք մը տեսաւ դեռատիին վրայ, սա խօսքն համարձակեցաւ ըսել աղդարարութեան ձեւով.

— Լաւ կ'ընէք, կարծեմ, տէ՛ր իմ, եթէ Բուան—տիւ—ժուրի կողմէն երթաք։ Ձմեռն ամայի է ծառաստանն։

Երիտասարդը պատասխան չտուաւ և արագապէս դէպի կառքը դիմեց, անծանօթն ալ ետեւէն, որ միշտ անոր ետեւէն կ'երթար՝ փոխանակ առջեւէն երթալու։

Հակառակ իւր նմաններուն սովորութեան, կառավարը պատշաճ դատած չէր կառքին մէջ պառկիլ՝ փոխանակ իւր ձին պահպանելու, և թէպէտ շատ ցուրտ էր, իւր նստարանին վրայ կ'սպասէր երասանակները մէկ ձեռքն և խարազանը միւս ձեռքը, մեծ տան մը կառավարի նման։

Այցելուն վազեց կառքին դռնակին քով, ընկերը մէջը նստուց, և ինքը գնաց կառավարին երկու խօսք ըսաւ, զորս Պ. Տը Ժանթիյեի չլսեց և չուզեց լսել։

Ի՛նչ փոյթ կանխաւ գիտնալու անծանօթին տուած հասցէն, քանի որ տարակոյս չկար թէ ոստիկանութեան պետին հասցէն միայն կրնար լինիլ, ուր որոշուած էր երթալ։

Ձին նետի պէս երթալ սկսաւ երբոր երկու ուղեւորք նստան կառքին մէջ, և շատ չանցած Պուլոյնի գիւղին խճուղիներուն մէջէն անցաւ։

— Ցիրաւի, ըսաւ անծանօթը, շատ գոհ եմ որ անտառին մէջէն չէ մեր

երթալու ճանբան։ Ձեր սպասաւորն իրաւունք ունի։ Ձմեռն, և գիշեր ժամանակ լաւ չէ... մանաւանդ երբ խոշոր գումար մ'ունենայ մէկն իւր գրպանին մէջ։

— Մի վախնաք, ես ատրճանակ մը ունիմ վրաս, ըսաւ Պ. Տը ժանթիլեի։

Եւ այսպէս կ'իմացնէր իւր ուղեկցին թէ զինեալ էր։

— Լաւ է այդ նախազգուշութիւն մինչեւ իսկ եթէ տիկնանց քով երթայ ոք, գոչեց ուղեկիցն։ Ես իմ մորթս միայն ունիմ պաշտպանելիք, այս պատճառաւ երկու բռունցքէս զատ ուրիշ զէնք չեմ կրեր վրաս։ Սակայն, այս իրիկուն, մորթէս աւելին ունիմ, որովհետև հինգ հազար ֆրանք կայ վրաս, որ իմս չէ արդարեւ։ Ես կենացս մէջ տեսած չէի այսչափ դրամ։

— Այժմ որ համամիտ ենք, ըսաւ Լուի, կը յուսամ որ ոստիկանապետին հետ տեսակցելնէս յետոյ կը հաճիք ընդունիլ պանքտոմներէն մին, զոր կորուսած չլինելս ձեզ կը պարտիմ։

— Ո՛չ յառաջ, ո՛չ յետոյ։ Ժան Բիէտուշ՝ իւր պարտականութիւնը կատարելու համար՝ պէտք չունի իւր թաթը իւղոտելու։

— Բիէտո՛ւշ, կրկնեց երիտասարդը զարմանալով այս անհեթեթ անուան վրայ։

— Այո՛, այսպէս կը կոչուիմ։ Ի՞նչ կրնանք ընել, մարդ մը չկրնար կատարեալ լինիլ։ Ես հանրակառաց ընկերութեան գործարաններուն մէջ իւղ քսող եմ։ Փայլուն գործ մը չէ արդարեւ, բայց կ'ապրեցնէ զիս և ստակ ալ կ'աւելցնեմ խնայութիւն ընելով։

Թերեւս վաղը հազար ֆրանք պիտի դնեմ խնայութեան գանձարանն իմ լաճերուս համար... որ երեք են, ըսեմ ձեզ։

— Ընդունեցէք իմ ընծայս, և փոխանակ հազարի՝ երկու հազար դրէք։

— Վտանգ չկայ։ այս թղթապանակ նուիրական է, ըսաւ Բիէտուշ իւր ղեստին գրպանին զարնելով։ Ես չեմ կրնար ձեռք դպցընել ասոր, անհոգ եղիք։

Օրինակի համար, աւելցուց, չեմ արգելուր ձեզ այս կառքին վարձքը վճարելէ։ Առ նուազն չորս ժամ պիտի ունենանք, երկուքն ամրութիւններէն դուրս։ Վասն զի իմ թաղիս ոստիկանապետը քաղաքաղրան մօտ չբնակիր։

— Ո՞ւր կը բնակի։

— Սիթէի մէջ... Նօթր-Տամի մօտ։

— Ուրեմն դուք ալ Սիթէի մէ՞ջ կը բնակիք, հարցուց Պ. Տը Ժանթիլեի։

— Տասն տարիէ ի վեր, պատասխանեց Բիէտուշ։ Պահ մ'առաջ ըսի ձեզ, դահլճին մէջ... բայց դուք շատ ականջ չէիք կախեր իմ խօսքերուս... արդարե՛ւ, կը հասկցուի... օրիորդը շատ գեղեցիկ է։

— Բայց քիչ մ'առաջ չըսի՞ք ինձ թէ հանրակառաց ընկերութեան գործարաններուն մէջ կ'աշխատիք։

— Այո՛, քիչ մը հեռի է բնակարանէս, բայց ես չեմ ուզեր մեկնիլ թաղէս... և բարեբաղդ կը համարիմ զիս, վասն զի հոն բնակելուս առթիւ է որ դիակնարանը մտայ և ձեր թղթապանակը գտայ, որով ձեր հինգ հազար ֆրանքն ալ գտնուեցաւ։

Դուք ժամը քանի՞ն գնացիք դիակնարանը։

— Ժամն երեքին միջոցները, պատասխանեց երիտասարդն։

— Օ՛, ինձ պէս։ Ըսել է թէ կըրնայինք իրարու հանդիպիլ ապակափեղկին առջև։ Սակայն, եթէ ձեզ տեսած իսկ լինէի, պիտի չկրնայի պահ մ'առաջ ճանաչել... ի հարկէ ձեր հագուստները փոխած և զձեզ գեղեցկացուցած էիք այդ տիկիններն երթալ տեսնելու համար...։

— Այո՛, տունս վերադարձայ հանդերձներս փոխելու համար... և յայնժամ նշմարեցի թղթապանակիս գողցուած լինիլն։

— Անշուշտ մեծ ցաւ տուաւ ձեզ։ Եթէ ես լինէի ձեր տեղ, իսկոյն կը վազէի ոստիկանութեան կ'իմացնէի։

— Ժամանակ չունէի... Պուլոյն կ'սպասէին զիս։

— Իրաւունք ունիք։ Երբոր մարդ

սիրահարեալ լինի... և միանգամայն հարուստ... առաւել փոյթ կ'ունենայ իւր սիրուհին տեսնելու՝ քան թէ իւր դրամին ետևէն վազելու։

Գ. Տը Ժանթիյեի, փոխանակ այս դիտողութեան պատասխանելու, որ մարդկային սրտի ծանօթութեան վրայ հիմնեալ էր, կառքին անկեանը կը-թնեցաւ՝ խօսակցութեան վերջ տալ ուզելու կերպիւ։

Այս բան չէր յարմարեր Բիէտուշի դործին, որ գոչեց յանկարծ.

— Օ՛ն, աղէկ միտքս եկաւ... դուք ուրիշ պատճառ մ'ալ ունէիք հանդարտ կենալու... վասն զի պարտէիք կասկածիլ թէ ձեզ պիտի նեղէին լուսանկարին պատճառաւ...։

— Զի՞ս, ամենևին, պատասխանեց կիրքով Թէրէզի նշանածը։ Լուսանկար պատկեր մը կրելն արդիլուած չէ։

— Եթէ հասարակ պատկեր մը լինէր, ոչ ոք իրաւունք կ'ունենար խառնուելու... բայց դաշունահար սպանուած և արկղի մը մէջ դրուած ան-

ծանօթ կնոջ մը պատկերը... տարբեր բան է։

Օ՛, դիտեմ, աւելցուց Բիէտուշ ծիծաղելով, որ արկղը տանողը դուք չէիք, որովհետև կ'ըսուի թէ համր մ'էր... իսկ դուք լաւ կախուած լեզու մ'ունիք։

Բայց միշտ ճանձրալի բան է պատասխանել ոստիկանութեան հարցաքննութիւններուն, մանաւանդ ձեր դիրքն ունեցող մարդոց համար։ Ասկէ զատ, ոստիկանութեան դործակալք կասկածոտ են։ Ի զուր պիտի յայտարարէք թէ այդ լուսանկարը դտած էք կամ տուած են ձեզ. դոհ չպիտի լինին։

Երբոր ուղեկիցն այս քիչ մխիթարական խորհրդածութիւնները կը քշէր, Լուի Տը Ժանթիյեի թողած էր իւր անհոդ դիրքն։

Սկսած էր հարցնել ինքնիրեն թէ մարդուն այս խօսքերն իրեն հետ յարմարելու անուղղակի առաջարկութիւնք չէի՞ն։

Այն խղճմտութիւն, զոր Բիէտուշ

պարծանօք ցոյց կուտար Ցիկին Լը.քոն-
թի և անոր աղջկան առջև, նախազգու-
շութիւն միայն էր թերևս հնարաւոր
անխորհրդապահութեան մը դէմ, և
թերևս իւր լռութիւնը վաճառել կ'ու-
զէր, առանց ո և է մէկու ներկայու-
թեան։

— Այդպէս է, պատասխանեց Պ.
Լը.քոքի որդին, առանց անոր ըսածին
կարևորութիւն տալու երևութի։ այս
գործ յոյժ դժպհի է ինձ համար։ Գի-
տէք որ քիչ օրէն պիտի ամուսնանամ
օրիորդ Լը.քոնթի հետ, և եթէ այս
պատմութիւն հետևանք ունենայ,
կրնայ վրիպման վտանգի մէջ ձգել ա-
մուսնութիւնս, որոյ կատարման կը
փափաքիմ անհամբեր։

— Անխոհեմութեան մը համա՛ր,
ոչինչ բանի մը համա՛ր, գոչեց Բիէ-
տուշ համոզմամբ։

— Արդ, ձեզնէ կախեալ է գործն
յառաջ չմղել։ Արդէն աղաչեցի ձեզ
որ այդ թղթապանակը ձեզ համար պա-
հէք մէջը գտնուածներով հանդերձ։

— Լուսանկարէն զատ, կարծեմ,
ընդմիջեց Բիէտուշ բարեմտաբար ժըպ-
տելով։

— Անշուշտ, բայց մնացեալը ձեզ
կը թողում. մինչեւ իսկ . . . հինգ հա-
զար ֆրանքը քիչ է։ Ես հարուստ եմ
և առաւել պիտի հարստանամ, վասն
զի օրիորդ Լը.քոնթ մեծահարուստ օժիտ
կը բերէ ինձ։ Դուք, սիրելի՛ պարոն, ապ-
րելու համար աշխատելու հարկադրեալ
էք դժբաղդաբար, և երբէք զաւակ ու-
նիք։ Անոնց ապագայն ապահովելու
համար կը յօժարիմ եռապատկել այդ
գումար, եթէ հաճիք ինձ դարձուցանել
այդ լուսանկար։

— Տասնեւհինգ հազար ֆրանք
յիրաւի պատուական գումար մ'է։

— Այժմ քովս չունիմ այդչափ դը-
րամ, բայց հասցէս կուտամ ձեզ, և
եթէ վաղը ժամ չորսին լուսանկարը բե-
րէք ինձ, ամբողջապէս կուտամ ձեզ։

— Այսինքն տասն հազար ֆրանք
պիտի տաք ինձ, որովհետեւ արդէն
հինգ հազարը քովս է։

— Կ'ուզէ՞ք որ քսան հազար լինի գումարն։

Այս հրապուրիչ առաջարկին դեռ Բիէտուշ պատասխան չտուած, կառքին դռնակը բացուեցաւ և բաժապետութեան պաշտօնեայ մը գլուխը կառքին մէջ խոթեց՝ իրենց սովորական խօսքը մրմնջելով.

— Այս պարոններըք բան մը չունի՞ն յայտնելու։

— Ո՛չ, մրմռաց երիտասարդը կատղելով այս անհաճոյ հանդիպման վրայ, որ իւր խօսքն այսպէս անճահաբար կ'ընդմիջէր։

— Օ՜, քաղաքադուռն հասեր ենք, գոչեց Բիէտուշ։ Ո՜րչափ շուտ կ'անցնի ժամանակը խօսակցութեամբ։ Մեզ տակաւին Պուլոյն կը կարծէի։

Բաժապետական պաշտօնէին այցելութիւնը ձեւի համար միայն լինելով, կառքին դադարն երկար չտեւեց։

Կառավարը մտրակեց և ձին սկսաւ նորէն սրարշաւ ընթանալ այն երկար ու լայն արահետէն, որ Սէն—Քլուի

դուռը կը յանգի և Բասիլի գետափին շարունակութիւնն է։

Ժամանակը շատ ուշ չէր։ խանութներն և մանաւանդ գինետունները դեռ բաց էին։

Պուլոյնի ճանբուն ամայութեան կը յաջորդէր բազմամարդ թաղի մ'ոգեւորութիւնն։

Եթէ պանքտոմնաւոր մարդն երկիւղ զգացած էր գրպանին մէջ ունեցած դրամին համար, այժմ փարատած պէտք էր լինէր այն երկիւղ։

— Է՜, ըսաւ անոր Պ. Տը Ժանթիլեի, կ'ընդունի՞ք առաջարկս, այնպէս չէ՞։ Վաղը պիտի փոխանակէ՞ք այդ լուսանկարը կլորիկ գումարի մը հետ, որ ձեր զաւակաց ապագայն կ'ապահովէ . . . և այս իրիկուն, փոխանակ ոստիկանապետին տունն երթալու, մեր տունը պիտի երթանք, որով պիտի տեսնէ՞ք բնակած տեղս, և . . .

— Այո՛, ընդմիջեց Բիէտուշ, յոյժ լաւ գործիս կուգար այդ առաջարկ . . . եթէ վտանգի մէջ իյնալէ չվախնայի։

— Ի՞նչպէս կրնաք վտանգի մէջ ի՛նալ, քանի որ մարդ չպիտի գիտնայ...

— Բե՜հ, կ'իմացուի։ Այս չարաճճի լուսանկարն է որ զիս կը տագնապեցընէ։ Եթէ հաստատուի թէ իմ ձեռքիս անցած է և ես ալ ձեզ տուած եմ, գործս բուրդ կը լինի։

— Պատուոյս վրայ խօսք կուտամ որ այրեմ ձեր աչքին առջեւ։ Հաւատացէք որ պահելու տենչ չունիմ։ Արդէն բաւական սուղ կը նստի ինձ։

— Չեմ ըսեր... չեմ ըսեր... բայց կրակէ վախնալու պէս կը վախնամ ոստիկանութենէն... և եթէ միլիոն մ'ալ տրուի՝ չեմ ուզեր վտանգաւոր գործի մը մէջ մտնել... հետևաբար... կը յայտարարեմ...

— Ի՞նչ։

— Կը յայտարարեմ թէ չեմ կրնար ընդունիլ, թէև լաճերուս ապագայն կորնչի։

— Չէք ընդունի՞ր։

— Այո՛, չեմ ընդունիր. բայց և այնպէս դարձեալ բարեկամ կը մնանք, և այսպէս աւելի լաւ կը լինի։

Բիէտուշ կը խօսէր տակաւին, երբ կառքը կազի լապտերի մ'առջևէն անցած վայրկենին ատրճանակի մը փողին փայլումը տեսաւ, զոր երիտասարդն իւր քթին տակ դրաւ գոչելով.

— Ետ տուէք լուսանկարս, կամ մեռած էք։

— Զգուշացիք, երիտասա՛րդ, ըսաւ Բիէտուշ առանց յուզուելու, պիտի աւրէք ձեր գործն։

Այս խօսք վերէն ինկած պաղ ջուր մ'եղաւ Պ. Ծը Ժանթիլեի բարկութեան վրայ, որ ատրճանակն ետ քաշեց։

— Խորհեցէք միանգամ որ մեք աստամայի ճանբու մը վրայ չենք, յարեց սրամիտ պահակը խրոխտ պաղարիւնութեամբ։ Ենթադրենք թէ զարկիք սպաննեցիք զիս. հարուածին ձայնը պիտի լսուի. կառքը պիտի կենայ... կառավարը կը ճանչէ զիս... իմ թաղիս մէջ կը կենայ... մարդիկ պիտի կուտուին... ոստիկան զինուորք պիտի հասնին... ձեզ բռնեն բանտը տանին,

եայլն եայլն ... ։ Կը տեսնէք որ բա-
պանեալ կնոջ պատկերը մեծ ազդաս պի-
տի հասցնէ ձեզ։

— Իմ նպատակս ձեզ վախցնել էր,
կակաղեց Պ. Լըքոքի որդին. լաւ չը-
ըի ... բայց դուք զայրացուցիք զիս ..։

— Ոստիկանապետին քով կը հան-
դարտիք։ Պիտի տեսնէք թէ ի՞նչպէս
շուտով մեր գործը պիտի կարգադրէ։
Անկեղծ մարդ մ'է, շատ չյոգնեցներ
ձեզ։ Հարցաքննութեանց վրայ ընդ-
հանրապէս անհաճոյ դաղափարներ
կան. բայց երբոր մէկը փորձով տես-
նէ, կը հասկնայ որ ծովուն ջուրը չպի-
տի խմէ։

Այս յորդորական խօսքերուն, զորս
Բիէտուշ կ'արտասանէր այն յանկուցիչ
լեզուաւ, որով տղայ մը կը համոզեն
ատամնաբոյժին երթալու, երիտասար-
դը պատասխան չտուաւ։

Ատրճանակը նորէն գրպանը դրաւ,
կրնակն իւր ընկերին դարձուց և տը-
խուր լռութեան մը մէջ փակուեցաւ
այնուհետև։

Կ'երևէր որ ոստիկանապետի մ'առ-
ջեւ բացատրութիւն տալու անհաճոյ
հարկը ճանչելով՝ ինքզինք չքմեղացը-
նելու փաստեր կը պատրաստէր, զորս
անշուշտ չպիտի դիւրացնէին իւր ըրած
բռնական փորձերը։

Կառքը քաշող երիվարն, որոյ նմանը
դուն ուրեք կը գործածուի հրապա-
րակի կառքերու, սրարշաւ քակեց
գետափանց անվախճան գիծն, Բոն-
նէօֆէն անցաւ, Օրլոժի գետափին
ծայրն հասնելով աջ կողմ դարձաւ, և
մեծ դռնէ մը ներս մտնելով կեցաւ
Ներբանցքի մ'առջև, որոյ մուտքն եր-
կու ոստիկան զինուորք կը պահպանէին։

Ը.

—Ահա եկանք, սիրելի՛ պարոն, ըսաւ
Բիէտուշ կառքին դռնակը բանալով և
և դուրս ցատկելով։

— Դուք ըսիք ինձ թէ ոստի-
կանապետին տունը կ'երթայինք, գո-
չեց Պ. Տը Ժանթիլեի, որ իւր մտածու-

թեանց մէջ ընկղմած, ուշադրութիւն չէր ըրած կառքին բռնած ճանբուն։

— Մի և նոյն բանն է, սիրելի՛ պարոն, պատասխանեց Բիէտուշ քաղցրութեամբ. ոստիկանութեան պաշտօնատունն է այս։

Երիտասարդը կառքէն դուրս նայելով՝ տեսաւ ոստիկան զինուորները, մթին նրբանցքը, ցայն պատող բարձր շէնքերն, և յետոյ ընկրկեցաւ ուժգնապէս։

Կը հասկնար վերջապէս։

Բնաղդաբար՝ կառքին միւս դռնակէն դուրս նետուիլ ուզեց փախչելու համար։

Բայց հուժկու չարաճճի մը կար իւր դէմ, որ նոյն ինքն Բիկաշէր, կառավարի կերպարանք մտած։

— Կ՚ուզէ՞ք որ օգնեմ ձեզ վար իջնելու, ըսաւ սիրուն Բիէտուշ։

Փախուստ անհնարին էր, իսկ այն ահարկու անցքին ծայրն անպատուութիւն կ՚սպասէր։

Փոխանակ իւր ուղեկցին բարեկամական հրաւէրն ընդունելու, Թէրէզի նշանածն իւր գրպանը խուզեց։

— Աւելորդ աշխատութիւն է, ըսաւ պահակն հասկնալով երիտասարդին դիտաւորութիւնն, ատրճանակն հոն չէ. ես առի զայն ձեր վրայէն՝ երբոր Կրընէլի և Իէնայի կամուրջներուն միջեւ հասած էինք։

Կը հասկնաք անշուշտ... կը տեսնէի որ խենդութիւն մ՚ընել կ՚ուզէիք այդ խաղալիկով, կամացուկ մ՚առի ձեր գրպանէն։ Եթէ ձեր քով թողած լինէի, այժմ դուք խլուրդներուն աշխարհը գնացած էիք, ես ալ տաշտին մէջ։

— Զիս մեռցնելու միջոց ալ չո՛ւնիմ, մրմռաց Լուի Ֆը Ժանթիլեի։

— Օ՛ն, սիրելի՛ պարոն, ձեզ կ՚ըսպասենք, յարեց Բիէտուշ իւր ամենաքաղցր ձայնիւ։

— Ո՞ւր կը տանիք զիս։

— Վարպետիս քով, որ ոստիկանապետ է... բայց ոչ իմ թաղիս, ճըշմարիտ է... բայց հոգ չէ։

— Ուրեմն դուք . . .

— Ոստիկանութեան գործակալ եմ, ձեզ ծառայելու համար, եթէ կրնամ։

— Թշուառակա՛ն։

— Իրաւունք չունիք զիս նախատելու, նկատելով որ մեծ քաղաքավարութեամբ վարուեցայ։ Կրնայի ձեզ ձերբակալել ձեր նշանածին առջեւ, բայց չըրի։

Բիէտուշ կը մնապարծէր քիչ մը. վասն զի թէեւ Բիկաշ ներկայ էր, զոր իրեն օգնելու համար հետ տարած էր, կրնար մեծ դժուարութիւն կրել ձերբակալելու համար Պ. Ֆը ժանթիլեի այնպիսի տան մը մէջ, ուր բազմաթիւ սպասաւորք կային։

Այս պատճառաւ էր անշուշտ որ դաւ գործածելու պարտաւորուեր էր։

Պորմի ոճրագործին ձերբակալումը նոյն բանն էր Բիէտուշի համար, ինչ որ էր Աւսթէրլիցի յաղթութիւնը Նաբոլէոն առաջնոյ համար. ուստի ո՛չ անոր փառքը կ'ուզէր ուրիշի հետ բաժնել, ո՛չ ալ իրեն գալիք շահը։

Հետեւաբար կ'զգուշանար աղմուկէ, որպէս զի իւր Բիկաշ բարեկամին օգնութեամբ միայն տանէր ոճրագործն ոստիկանութեան պաշտօնատունը։

Այս փափաքին հասած էր և կը լողար ուրախութեան մէջ։

Լուի իջաւ վերջապէս կառքէն, և հոն գտնուող պահակներն, որոց Բիէտուշ բան մը յայտնած չէր, զարմացան տեսնելով գեղեցիկ և սէգ երիտասարդ մը, որ երկու ոստիկանաց հետ կը բռնէր այն ուղին, որ պատժական դատարան, եղեռնադատ ատեան, կեդրոնական բանտ, Նոր-Քալէտոնիա կամ Ռոքէթի հրապարակը կը հասնէր։

Դժբաղդ երիտասարդը զսպեց այն սրտայուզութիւնն՝ որ ի սկզբան պակուցած էր զինք, և բարձր գլխով և վստահ նայուածքով անցաւ անոնց մէջէն։

Բիէտուշ և Բիկաշ ալ հետն ի վեր կ'երթային։

Կառքը, զոր բարեկամ կառարանապետէ մը վարձած էին, պահակի

մը պահպանութեան յանձնած էին։

Նրբանցքն և զայն շրջապատող յարկերը վերջին ժամանակաց շինութիւնք են։

Գիտեն ընթերցողք թէ ոստիկանութեան հին պաշտօնատունն ասկէց քանի մը տարի առաջ նորոգուած էր։

Այն սոսկալի աւերակաց տեղ, որոց մէջ զետեղեալ էին դրասենեակներն, հոյակապ տեսքով շէնքեր կառուցուած էին։

Ապահովութեան պետին սենեակը տանող սանդուղը ձախ կողմն է, նրբանցքի մը ծայրն, որոյ երկու կողմը դէտերու կայաններ կային. շրջուն սանդուղ մը, որուն աստիճանները դեռ մաշած չեն ամեն կարգի ոճրագործաց անգուլ երթեւեկէն։

—Ո՞ր կողմ պիտի երթանք, հարցուց Պ. Տը Ժանթիյեի։

—Անցէ՛ք, երիտասարդ, ըսաւ Բիէտուշ, ուղղակի ձեր առջեւ, միջնայարկին մէջ։

Լուի անցաւ։ Այժմ կը հասկնար

թէ ինչո՛ւ իւր ուղեկիցն իւր եռեւէն կ'երթար։

Ոստիկանութեան գործակալք իրենց ձերբակալած մարդոց եռեւէն կ'երթան որպէս զի լաւագոյն հսկեն անոնց վրայ։

Իրենց քաղաքավարութիւնք պարզապէս խոհեմութիւն է։

Միջնայարկին մէջ Լուի մեծ նախասենեակ մը գտաւ, ուր դրասենեկի պաշտօնեայք կային, երկուքը ծեր և մին երիտասարդ. կարասին, որ յոյժ հակիրճ էր, կը բաղկանար մէկ վառարանէ, մէկ սեղանէ և երկու հին թիկնաթոռէ։

Բիէտուշ այն աթոռներէն մին մատոյց իւր ձերբակալին, որ առանց բառ մ'արտասանելու նստաւ։

Երիտասարդը կ'զգար որ այնպիսի թակարդի մը մէջ բռնուած էր, որոյ դէմ մաքառիլ անօգուտ էր. ուստի միայն ինքզինք պաշտպանելու միջոցները կը մտածէր։

Բիկաշ նստաւ միւս աթոռին վրայ,

այլ սանդուղին վրայ բացուող դրան առջեւ կեցաւ, որպէս զի, եթէ Պ. Տը Ժանթիյեի, ընդդէմ ամենայն հաւանականութեան, փախչելու քմահաճոյք մ'ունենայ, արգելու զայն։

Գրասենեկին պաշտօնեայներն, առանց իրենց տեղէն շարժելու, անտարբեր աչք կը նայէին վայելչադէմ երիտասարդին, զոր պահակներն հոն բերած էին։

Ուրիշ շատեր տեսած էին։

Բիէտուշ հարցուց անոնց թէ պետը մինա՞կ էր, և երբոր ստորասաբար պատասխանեցին, երկրորդ նախասենեակ մը մտաւ, որ ապահովութեան պետին սենեակը կը բաժնէ սպասման սրահէն, սենեկին դուռը կէս բացաւ, և պետին ակնարկին վրայ կամացուկ մը ներս մտաւ։

—Նոր բան մը կա՞յ, հարցուց ապահովութեան պետն, որ թուղթեր աչքէ անցուներլու զբաղած էր։

—Ներեցէք ինձ, տէ՛ր, շատ կայ։

—Ուրեմն, շուտ խօսէ. ժամանակ չունիմ կորսուցնելու։

Բիէտուշ հանեց գրպանէն հռչակաւոր թղթապանակն և գրասեղանին վրայ դրաւ ըսելով.

—Աւասիկ նոր, և առաջին կարգի նոր, կամ ես կը սխալիմ։

—Ի՞նչ է այդ, հարցուց ապահովութեան պետը բանալով զայն։ Պանքտոմնե՛ր։ Իմ սենեակս կորուսեալ նիւթոց գրասենեա՞կ կը կարծես։

—Շարունակեցէք նայիլ, տէ՛ր իմ։

—Երկու անուն նամակի պատեանի մը վրայ գրուած... «Պ. Տը Ժանթիյեի, Տիկին Լէքոնթի տունը, Պուլվար տիւ Քաթր-Սէբթանպր ի Պուլոյն։» Ես կը ճանչեմ Ժանթիյեի մը, կամ ինքզինք այնպէս կոչող մը... բայց այն մարդը չխառնուեցաւ Արպալէթ փողոցի գործին... վասն զի չուզեց խառնուիլ...։ Բացատրէ ինձ գործը՝ փոխանակ բառեղծուած տալու ինձ, որպէս զի գուշակեմ։

—Լուսանկարը նայեցէք, տէ՛ր իմ... լուսանկարն...

—Ի՞նչ լուսանկար է... Ա՛, չար

սատանայ, սպանեալ կնոջ պատկե՛ր է։

—Իսկ և իսկ, տէ՛ր իմ։

—Եւ այս թղթապանակը գտար...

—Անգլիացւոյ մը գրպանէն, որ դիակնարանին մէջ գրպաններ խուզած ժամանակ բռնուեցաւ այսօր ժամ ե-րեքին։

—Եւ ա՛յժմ կուգաս տեղեկութիւն տալ ինձ, գոչեց պետը խստիւ ոտքի վրայ ելնելով, և մարդը չե՛ս բերեր ինձ առանց վայրկեան մը կորսուսնցնելու։

—Մարդը Կեդրոնական բանտը պէտք է լինի։

—Հոս պէտք էր բերէիք, և ես պիտի...

—Ներեցէք ինձ, տէ՛ր իմ, կը կարծեմ որ զայն հարցաքննելով չէք կըրնար օգուտ մը քաղել։

—Խե՛նդ ես թէ իմ վրայ կը ծիծաղիս։

—Հասկցնեմ ձեզ, տէ՛ր իմ։ Գիրպանախոյզ գող մ'այս թղթապանակ ամբարձեր էր մարդու մը գրպանէն,

զոր և գաղտնաբար կը դիտէի դիակնարանի ապակորմին առջեւ...

—Եւ թող տուիր որ փախա՛ւ։ Այս անգամ, տղա՛ս, չափը լցուած է, և ահա կը յայտարարեմ քեզ թէ այլ ևս գործ չունիս հոս։

—Փախուցի, ճշմարիտ է, բայց յետոյ գտայ... և առանց դժուարութեան... անունը սա Թուղթի կտորին վրայ է։

—Ուրեմն, սա Պ. Տը Ժանթիլեի՞ն է։

—Այո՛, տէ՛ր իմ։ Եւ թղթապանակին իրենը լինելը խոստովանեցաւ... և երբոր լուսանկարը ցոյց տուի իրեն՝ ցնցուեցաւ, և ի՛նչպէս ցնցուիլ...

—Վերջապէս մեր ձե՛ռքն է այժմ. վասն զի կը յուսամ որ տանը դրանն առջև հսկողութիւն հաստատած էք։

—Ադկէց աւելին ըրի, տէ՛ր իմ։ Համոզեցի զինք որ հետս գայ ձեզ տեսնէ։

—Ի՞նչ կ'ըսես. ա՞սա է։

—Ձեր նախասենեկին մէջ, տէ՛ր իմ, Բիկաշի հսկողութեան յանձնած եմ։

—Պատուական բան է այդ, տղա՛ս. միայնա՞կ գործեցիր։

—Միայնակ, տէ՛ր իմ, առանց Պ. Թոլպիաքի՝ որ բնաւ տեղեկութիւն չունի այս գործէն, և ես պէտք չունեցայ անոր։

—Ի՞նչպէս ըրիր։

—Օ՛, քայլրութեամբ։ Մարդը Տիկին Լը-քոնթի տան մէջ գտայ։ Անոր աղջիկը պիտի առնու։ Հարուստ ընտանիք մ'է։ Ներս ընդունուելու համար ըսի թէ թղթապանակ մը գտած էի պանքտոմներով լի և կը բերէի յանձնելու։ Իմ հին հնարքն է այս, և կը յաջողի միշտ։ Բայց այս անգամ պատմութիւնս ճշմարիտ էր։

Ասկէ զատ՝ լուսանկարին պատճառաւ ինս վտանգի մէջ ձգելու երկիւղ կեղծեցի։ Ըսի թէ ոստիկանապետին առջևը միայն կրնայի յանձնել իրեն։ Երիտասարդը շատ դժկամակեցաւ, բայց ի վերջոյ յանձն առաւ գալ։ Նը-շանածն իրեն կ'սպասէ այս իրիկուն։ Խեղճ աղջիկ. ուրիշ ամուսին մը թող փնտռէ։

—Զարմանալի է որ այդ երիտասարդ յանձն առեր է հետդ գալ, եթէ յանցաւոր է։

—Եթէ յանցաւո՞ր է, տէր իմ. օ՛, այդ մասին բնաւ տարակոյս չունիմ։ Մօրուքն, յօնքը, կրկնոցը, դորշ կըղբենի ձեռնոցն և ձայնը ճանչեցի։ Ճըշդիւ այն սրիկայն է, որ խաղ ըրաւ ինձ Արպալէթ փողոցին մէջ։

—Ուրեմն ինքն ալ քեզ ճանչեց։

—Բնաւ։ Այն գիշերը գռեհիկ տըղու կերպարանք մտած էի, այսօր միջնակարգ քաղաքացիի կերպարանք մըտած եմ, և դէմքս ալ փոխած։

—Ճշմարիտ է. ամեն ինչ լաւ խորհուած է։ Գնա՛ ինձ բեր այդ երիտասարդը, Բիէտուշ, և վստահ եղիր որ լաւ պարգեւ մը պիտի ստանաս։ Լաւ գործ մը կատարած ես այսօր և ինձ ալ կատարել կուտաս։

—Պարգե՛ւ, չեմ մերժեր, տէ՛ր իմ, ըսաւ Բիէտուշ, թէեւ . . . պարտիմ ըսել ձեզ . . . Պ. Թոլպիաք ալ խոստացած է ինձ . . . գեղեցիկ պարգեւ

մը . . . հաղարնոց պանքտոմն մը . . . :

—Ուրեմն երկուք պիտի ստանաս, պատասխանեց ապահովութեան պետը: Դու արժանապէս չահեցար այդ պարգևներ . . . մինչ Թոլպիաք չկրցաւ շահիլ իրեն խոստացուածը, վասն զի մասն չունի այդ բանի մէջ: Եթէ հայը Լբքոք իւր վրայ առած լիներ գործը, քեզ պէս դիպուածի պետք չէինք ունենար ոճրագործը ձեռք անցուցանելու համար:

—Այդ ճշմարիտ է, տէ՛ր իմ: Պ. Լբքոք ամենուս վարպետն է, և երբոր մէկն անոր հրամանին տակ ծառայէ, ինքզինք կրակին մէջ կը նետէ որպէս զի գոհ ընէ զայն:

—Աչերը խոշոր պիտի բանայ երբոր երթամ վաղը պատմեմ այս ձերբակալութիւն: Գալով Թոլպիաքի, կրնայ տակաւին ծառայութիւններ ընել մեզ, վասն զի անտարակոյս եմ որ այդ ժանթիւրի պիտի պաշտպանէ ինքզինք և յանցանքն իւր վրայ չպիտի առնու: Քննութիւնը միայնակ չպիտի քալէ:

Հարկ պիտի լինի այդ երիտասարդին բոլոր կեանքը քննել, վասն զի երիտասարդ մ'է, այնպէս չէ՞:

—Քսան և հինգ, քսան և ութ տարեկան, ոչ աւելի:

—Լա՛ւ. հարստութիւն ունի. անշուշտ կը յաճախէր նորելուկ հաւիկներու քով . . . տարփուհիներ ունէր . . . ինչպէս նաև սպանեալ կինը . . . : Թոլպիաք շատ ճարտար է այդ միջավայրերուն մէջ խուզարկութիւններ ընելու . . . ուստի անոր պետք պիտի ունենանք, եթէ չը կրնամ խոստովանցնել այդ երիտասարդ:

Այս առաջին անգամ չէ որ առաջին հարցաքննութեան մէջ խոստովանութիւններ ձեռք բերեմ: Ամեն բան հարցաքննելու ձեւէն կախեալ է, վերջապէս տեսնենք:

— Հարցաքննութեան միջոցին ես պիտի կենա՞մ ձեր սենեկին մէջ, տէ՛ր իմ:

—Ոչ, հարկ չկայ. բայց նախասենեկին մէջ սպասէ: Ասկէ զատ, այս իրիկուն առանին խուզարկութիւն պի-

տի ընեն.ք։ Քննութիւնը փութապէս յառաջ մղել կ'ուզեմ։ Քեզ և Բիկաշ հետս պիտի տանիմ։

— Հասկցայ, տէ՛ր իմ։ Պէտք է սակայն երե.ք բան ըսեմ ձեզ, որպէս զի որոշ գաղափար մ'ունենաք այդ անձին վրայ։

Նախ, մինչեւ քսան և հինգ հազար ֆրանք առաջարկեց ինձ՝ լուսանկարն իրեն տալու համար։

Յետոյ, երբոր տեսաւ որ խայծին չէի բռնուիր, ատրճանակ մը դրաւ քթիս տակ. յայնժամ ըսի իրեն թէ իւր գործը պիտի գէշցնէր, և ասով հանդարտեցաւ։ Կ'երեւի որ շատ պարզամիտ է, և սակայն գիտէ թէ զինքն երկու անգամ չպիտի գլխատեն։

Վերջապէս, երբոր հոս հասնելով տեսաւ որ զինք ոստիկանութեան պաշտօնատունը բերած էի՝ առանց իրեն իմացնելու, գրպանը խառնեց ատրճանակն հանելու համար ... որպէս զի իւր ուղեղն այրէ ... բայց չկրցաւ. խաղալիկն ամբարձած էի գրպանէն,

և աւասիկ, եզրակացուց Բիէտուշ՝ զէնքը գրասեղանին վրայ դնելով։

—Օ՛, ըսաւ պետը բաւական յուզուելով այս պատմութեան պարզութենէն, դու բարի և քաջ տղայ մ'ես. քեզ համար պիտի խօսիմ Պ. Վերատեսչին։

Յետոյ, ձերբակալման պատմութիւնը ընել տուաւ՝ դիակնարանէն սկսեալ մինչեւ Օրլոժի գետափը, Պուլոյնէն անցնելով, և շատ մը հարցումներ ըրաւ, որոց իւր ստորադասը մի առ մի պատասխանեց այն կերպիւ, որ գործին մանրամասնութեանց վրայ կատարեալ տեղեկութիւն տուաւ իրեն։ Ապա ղրկեց բերել զՊ. Տը Ժանթիյեի։

Բիէտուշի դուրս ելնելուն և յանցաւորին–Թէրէզի նշանածն արդէն յանցաւոր մ'էր–ներս մտնելուն միջեւ անցած կարճ ժամանակին մէջ, ապահովութեան պետը բացուելիք մենամարտին պատրաստուեցաւ։

Վասն զի առաջին հարցաքննութիւնը ճշմարիտ մենամարտ մ'է, ուր ամեն

առաւելութիւնք հարցաքննիչին կողմն են։

Ցարձակողական միջոցներուն ընտրութիւնն անոր ձեռքն է. իսկ հարցաքննեալը չկրնար գուշակել իւր կըրելիք հարուածները։

Մին պաղարիւնութիւն ունի, միւսը խորապէս յուզեալ է։ Ուստի կռիւն հաւասար չէ։

Բայց սկսելու եղանակները տարբեր են։ Հարցաքննիչը կրնայ ուղղակի հարուածներով սկսիլ, անակնկալ և խիստ հարցումներով վախցնել, կամ՝ ընդհակառակն՝ քաղցրութեամբ, յարգանօք և համբերութեամբ վարուիլ, թշնամին իւր խօսքերէն բռնել, և մատակարարած փաստերուն ցանցին մէջ փակելով, յամրաբար՝ բայց թերեւս աւելի ապահովութեամբ՝ յանցանքն ուրանալու անհնարութեան մէջ ձգել։

Ապահովութեան պետն՝ ինքնիրեն խորհրդածելով՝ այս վերջի դրութիւնն ընտրեց, ամեն պէտք եղած նախազգուշութիւններն ընելով։

Իւր դրասեղանը լուսաւորող կանդեղին տեղը փոխեց և անոր լուսամփոփն այն կերպիւ տրամադրեց որ լոյսը լիապէս այն աթոռին վրայ իյնայ, ուր պիտի նստէր Պ. Տը Ժանթիյեի։

Լուսանկարը թուղթերու ծանրոցի մը տակ պահեց և ատրճանակը դարակի մը մէջ դրաւ։

Դուռը բացուեցաւ, և երիտասարդը ներս մտաւ առաջնորդութեամբ Բիէտուշի, որ իսկոյն դուրս ելաւ։

—Նստէք, պարո՛ն, ըսաւ ապահովութեան պետը քաղաքավարութեամբ։

Պ. Տը Ժանթիյեի ողջունեց պաղութեամբ, նստաւ, և լռութեամբ սպասեց որ հարցում ընեն իրեն։

Ապահովութեան պետը զայն դիտելով՝ տարօրէն տպաւորութիւն մը կը կրէր։ Տեսած դէմքերը միտքը պահելու մասին յոյժ կորովի յիշողութիւն ունէր, և կը թուէր իրեն թէ ձերբակալին դէմքն անծանօթ չէր իրեն։

Անշուշտ առկայծեալ ճրագի մը կե-

ղակարծ լուսով վաղանցուկ երևոյթէ մը չէր կրնար այնչափ յստակ և որոշ յիշատակ պահուիլ։

Պ. Տը Ժանթիլեի յոյժ սև մօրուք մ'ունէր, ինչպէս այն մարդն որ կէս գիշերին գնացեր պորմին ներքնասենեկին մէջ Մարի վնտռեր էր։

Բայց բաղդատութեան ուրիշ կէտեր պէտք էին նմանութիւնը վճռելու համար, և ապահովութեան պետն այն այցելուին մօրուքը միայն տեսած էր։

—Գիտէ՞ք ինչո՛ւ համար իմ դորձակալներէս մին ձեզ հոս բերաւ, հարցուց։

—Այո՛, պարոն, պատասխանեց կրքով Լուի Լըքոք, և կը զարմանամ որ պատուաւոր մարդ մը կը ձերբակալի այնպիսի տարտամ նշանակի մը վրայ։

—Ճշդիւ նոյն ճանբան է, խորհեցաւ ինքնիրեն ապահովութեան պետն, և երկրորդ խորհրդածութիւնն եղաւ.

Բարձրէն կը բռնէ. անձի վրայ սխալում պիտի փաստաբանէ. ուստի

սեղմ և կուռ պէտք է բռնեմ դործը։

Ցետոյ սկսաւ.

—Ներեցէք ինձ ըսել ձեզ, պարո՛ն, թէ այսպիսի ծանր դործի մը մէջ բնաւ զանցառութիւն չեմ կրնար ընել. պարտականութիւնս է։

Կ'աւելցնեմ թէ դուք ձերբակալ չէք։ Ձեզ բերել տուի որ հարցաքննեմ. և եթէ կրնաք դոհացուցիչ կերպիւ բացատրել ինձ ձեր թղթապանակին մէջ դտնուած լուսանկարին ի՛նչպէս ձեր ձեռքն անցնիլը, կատարելապէս ազատ էք ձեր տունը վերադառնալու կամ երթալ անդորրելու այն անձին.քն՝ որոց քովէն եկած է.ք։

Պետն այս խօսքերն ըսած միջոցին երիտասարդին դէմքը կը դիտէր սուր աչօք, և տեսաւ որ կը զուարթանար ուրախութեամբ։

—Կը տեսնեմ, չարաճճի՛ս, ըսաւ մտքէն, որ այս գիշեր քու անկողնիդ մէջ ննջելու յոյս չունէիր։ Աւասիկ նշանակ մը, և լաւ նշանակ։ Եթէ անմեղ լինէիր, բնական պիտի թուէր քեզ այս։

—Շնորհակալ եմ, պարո՛ն, որ այս գործն իւր ճշմարիտ գոյնովը կը տեսնէք, ըսաւ Պ. Տը Ժանթիլեի՝ ինքզինք անդորրամիտ երևցնել ջանալով։

—Շատ պարզ է։ Գիտէք, գոնէ լրագրերէն, թէ մինչև ցայսօր չկրցինք համայն Փարիզի ուշադրութիւնն զբաղեցնող սպանութեան մը զոհին անձնաւորութիւնն ստուգել։

Այն տարաբաղդ կնոջ լուսանկարը գտնուեցաւ ձեր վրայ։ Ուստի բնական է որ հարցնեմ ձեզ թէ ի՛նչպէս անցած է ձեր ձեռքը. և եթէ նոյն իսկ կինը տուած է, ինչպէս որ չեմ երկբայիր, տարակոյս չմնար որ կրնաք անոր վերայ տեղեկութիւն տալ ինձ։

—Կը սխալիք, պարո՛ն, ես չեմ ճանչեր այն կին։

—Զգոյշ կեցի՛ք, պարո՛ն, հաւանական չէ որ ձեր երբէք չտեսած անձի մը լուսանկարը ձեր թղթապանակին մէջ պահէք։

Կարելի է սակայն որ ձեր բարեկամներէն մին տուած լինի ձեզ։ Եթէ

այնպէս է, կրնաք ցոյց տալ մեզ այն բարեկամն, և մեք ալ անկէ տեղեկութիւն կ՚ստանանք։

—Ոչ ոք տուած է ինձ այն լուսանկար։

—Ուրեմն ի՞նչպէս կը լինի որ...

—Ներեցէք, պարո՛ն, ձեր գործակալն անշուշտ պատմեց ձեզ այդ թղթապանակին ի՛նչպէս իւր ձեռքն իյնալն։

—Անշուշտ։ Գրպանախոյզի մը գրպանէն գտած է, զոր նա ալ ձեր գրպանէն գողցած էր... երբ դուք ի ցոյց դրուած դիակը կը դիտէիք։

—Ուրեմն, պարո՛ն, անշուշտ այն գողը դրած է այդ լուսանկար իմ թղթապանակիս մէջ, վասն զի տունէս դուրս ելած ժամանակս մի միայն հինգ հազար ֆրանքի պանքտոմս կար մէջն, և նամակի պատեան մը, որոյ վրայ իմ և Տիկին Լոքոնթի անունները գրուած էին։ Այս մասին կատարելապէս աներկբայ եմ։

Ապահովութեան պետը լռութեամբ մտիկ կ՚ընէր այս արդարացում։

Կ'ըսէր մտովին.

—Բերնովդ կը բռնուիս, տղա՛ս, այժմ չես կրնար ազատիլ ձեռքէս։

Եւ ըսաւ բարձր ձայնիւ.

—Խոստովանեցէք, պարո՛ն, թէ, յոյժ անհաւանական է որ այդ գողն աշխատութիւն յանձն առած լինի թղթապանակի մը մէջ դնելու զայդ լուսանկար, զոր իւր շահը կը պահանջէր անհետ ընել՝ մէջի պանքտոմսերն առնելով։ Գրպանախոյզները սովոր չեն գողութեան ապացոյցներ պահել իրենց վրայ։

Ասկէ զատ, քիչ մը խորհելով, բացարձակապէս անընդունելի կը դանեմ ձեր տուած բացատրութիւնն։ Անգլիացին դիակնարանէն դուրս եկած վայրկենին բռնուած է, և այդ գողութիւնն ապակափեղկին առջև ըրած էր։ Անշուշտ ժամանակ չէր կրնար ունենալ թղթապանակին պարունակութիւնը զննելու, զոր շտապով իւր տափատին ծածուկ գրպաններէն միոյն մէջ պահած էր։

—Ինձմէ չէք սպասեր, կարծեմ, բացատրել թէ այդ գողն ի՞նչպէս դըրած է զայդ լուսանկար իմ թղթապանակիս մէջ, պատասխանեց չորութեամբ Պ. Տը Ժանթիլեի։ Ես չեմ ուսումնասիրած այդ մարդոց գործողութիւնները։

Վայրկեան մը լռութիւն տիրեց։

Ապահովութեան պետն աչերը կէս կը փակէր՝ միտքն իւր վրայ ամփոփելուզող մարդու մը պէս, և մատները մտազբաղութեամբ կը խաղային լուսանկար–այցետոմսին հետ, զոր իւր դրասեղանին վրայի թուղթերուն ծանրոցին տակէն առած էր։

Ցանկարծ գլուխը վեր առաւ, և երիտասարդին երեսը նայելով ըսաւ.

—Անգլիերէն գիտէ՞ք։

—Այո՛, պարոն, պատասխանեց Պ. Տը Ժանթիլեի քիչ մը վարանելով, գիտեմ։ Ինչո՞ւ կը հարցնէք։

—Վասն զի կ'ուզեմ աղաչել ձեզ որ հաճի՛ք մեկնել ինձ այս տոմսին եռանը գրուած երեք բառերուն նշանա-

կութիւնն, ըսաւ ապահովութեան պետն։

Աւասիկ, կարդացէք. Ֆորկէր դ Նոր։

Զայս ըսելով՝ լուսանկարը ցոյց տըուաւ երիտասարդին, որ ակներև կը տժգունէր։

—Օ՛ն, պարո՛ն, թարգմանութիւնը շատ դժուարին պէտք չէ լինի, յարեց՝ առանց լուսանկարը ձեռքէն թողտալու. ես որ անգլիերէն ուսած չեմ, կը թուի ինձ թէ կը գուշակեմ իմասաը։

Ֆորկէր դ Նոր... պարտի նշանակել...

—Մէ մոռնաւ ղէ... կակաղեց թէրեզի նշանածն։

—Ես ալ այդպէս կը կարծէի. և այս քաղցրիկ պատուէրն ստորագրուած է փոքրիկ սիրուն անունով մը... Մաբէ... որ սպանեալ կնոջ անունն է, և ինքն ալ անգլիացի է, գիտենք։

—Գրպանախոյզն ալ անգլիացի է։

—Այո՛, ճշմարիտ է։ Ադկէց եզրակացնել կ՚ուզէք թէ այդ կնոջ տարփածո՞ն էր։

—Զեմ եզրակացներ, իրողութիւնը կը ցուցնեմ։

—Լաւ. բայց մարդու չէք կրնար հաւատացնել որ այսպիսի գեղեցիկ և սիրուն արարած մը սիրոյ յիշատակ մը ձօնած լինի ամենացած տեսակէ սրիկայի մը... վասն զի այս կենդանագիրը սիրոյ յիշատակ մ՚է... և տարփաւորի մը տրուած պէտք է լինի բաժանման մ՚առթիւ... և այդ տարփաւորն, որ անշուշտ երկար ուղևորութիւն մը պիտի ընէր, գեղեցիկ... նշանաւոր... հարուստ երիտասարդ մը պարտէր լինիլ ձեզ պէս, պարո՛ն։

—Պարզ ենթադրութիւն մ՚է այդ... և կրկին կ՚ըսեմ ձեզ թէ այսօր առաջին անգամ է՝ որ կը տեսնեմ այդ պատկեր... և դորա ներկայած անձը...։

—Շատ լաւ. ձեր դրութիւնն է այդ, որ ձախող կ՚երևի ինձ, բայց անցնինք։ Անշուշտ հետաքրքրութիւնը քաշեր էր ձեզ ի դիակնարան։

—Այո՛, պարոն, ցաւելով կը խոստովանիմ, վասն զի կը գարշիմ անդ

տեսնուած սոսկալի տեսարաններէն։

—Արդարև ձեր դասուն վերաբերեալ անձինք չեն ախորժիր այդպիսի տեսարաններէ։

—Երբէք մտած չէի այդ նողկալի սրահը։ Բայց լրագիրք ա՛յնչափ խօսեցան այդ տարօրինակ գործին վրայ, որ դիակը տեսնելու իղձ եկաւ ինձ։

—Շատ բնական էր։ Համայն Փարիզ ունեցաւ այդ իղձ։ Հետեւաբար, ձեր տունէն դուրս ելաք . . .

—Այո՛, պարոն, և որովհետեւ դիակնարանին առջեւէն կ՚անցնէի . . .

—Հինգ հազար ֆրանք ունենալով ձեր գրպանին մէջ։

—Դոհարավաճառի մը պիտի տանէի, որ ապարանքյան մը վաճառած էր ինձ։

—Զոր ձեր նշանածին պիտի նուիրէիք։ Գործակալս հասկցուց ինձ։ Այդ դոհարավաճառն անշուշտ Բալէ-Ռուայալի հրապարակը կը բնակի։

—Ոչ, Տը լա Բէ փողոցը։

—Եւ դուք, պարոն, ո՞ւր կը բնակիք։

Երիտասարդը ցնցուեցաւ, և պատասխանեց շփոթութեամբ.

—Մոն-Թապոր փողոցը։

—Դիակնարանը ձեր ճանբուն վրայ չէր, դիտել տուաւ քաղցրութեամբ ապահովութեան պետը։ Բայց Մաչայի աղջիկով տիկինը տեսնելու համար կ՚արժէր շրջան մ՚ընել։

Ուստի, դիակնարանին առջեւէն անցնելով . . . ներս մտնել ուզող բազմութեան հետեւեցաք . . . ։

—Այո՛, պարոն . . . և շատ զղջացի այդ անխոստովանելի քմահաճոյքին անսալուս վրայ . . . Դիակին տեսքը . . . սոսկալի էր . . . ։ Հազիւ քաջութիւն ունեցայ նայելու . . .

—Անշուշտ այդ պատճառաւ էր որ ձեր թաշկինակը ձեր աչաց վրայ կը բռնէիք։

—Ո՞վ ըսաւ ձեզ . . .

—Օ՛, ես շատ բան գիտեմ . . . պաշտօնիս բնութեամբ։ Կը հասկնամ որ ձեր սիրտն յուզուած լինի։ Ասկէ զատ, ձեր թղթապանակին կորուստն ալ ան-

շուշտ դառնապէս վշտացուցած էր ձեզ։

Ե՞րբ նշմարեցիք։

—Երբոր տունս վերադարձայ։

—Ձեր զգեստները փոխած ժամանակ, այնպէս չէ՞։

—Այո՛, պարոն, ճաշի պիտի երթայի Պուլոյն, Տիկին Լէքոնթի տունն։

—Որում փեսայ պիտի լինիք ընդհուպ։ Արդարեւ չէիք կրնար հոն երթալ այն կերպարանքով զոր ունէիք դիակնարանն այցելած ժամանակնիդ։ Քառակուսեակ գունով կրկնոց, բուրդէ փողպատ և կակուղ փեղոյր ունէիք, որ վայելչութեամբ և նշանաւորութեամբ փայլիլ ուզող երիտասարդի մը համար տարօրինակ կերպարանք մ'է։

—Չէի ուզեր իմ սովորական կերպարանքով երեւնալ այնպիսի տեղ մը, կակազեց Պ. Տը Ժանթիլեի, որ շփոթիլ սկսած էր։ Դիտմամբ հին զգեստներ հագայ . . .։

—Քիչ մ'առաջ ըսիք ինձ թէ ձեր գոհարավաճառին կ'երթայիք։ Կ'երեւի թէ անոր վստահութիւն ազդելու պէտք

չունէիք, ըսաւ պաղութեամբ ապահովութեան պետն։

Որովհետեւ կանխիկ պիտի վճարէիք, և անշուշտ կը ճանչէ ձեզ։

Պ. Տը Ժանթիլեի չպատասխանեց այս հեգնական դիտողութեանց, որոց նպատակը քաջ կը գուշակէր։ Կ'զգար որ հակասութեան մէջ կ'ինար իւր խօսքերով, և քանի՛ կ'ինար, ա՛յնչափ կը կորսնցնէր այն պաղարիւնութիւն՝ զոր ցոյց տուած էր հարցաքննութեան ընթացքին։

Այն կէտն հասած էր, ուր բերել կ'ուզէր հակառակորդն, որ յարեց գբրեթէ հայրական ձայնիւ.

—Տեսէք, պարո՛ն, կը կարծեմ որ դուք սխալ ճանբու մէջ կ'ինաք, և իմ պարտքս է ազդարարել ձեզ զայդ։ Դուք ունայն ճիգեր կ'ընէք ուրանալու համար ակներեւ իրողութիւն մը։ Այս պատկերը ձերն է, և ես ոչ եւս կրբնամ երկբայիլ այն հակասութիւններէն և անհաւանականութիւններէն յետոյ, որոց մէջ ինկաք։

Թոյլ տուէք ինձ ըսել ձեզ թէ դուք այս պահուս այն մարդոց պէս կը վարուիք, որք դիակնարանին մէջ իրենց բարեկամին մարմինը ճանչել չեն ուզեր, վախնալով որ կասկածելի կը լինին։

Եւ ես մինչեւ մէկ աստիճան կը հասկնամ ձեր խղճմտութիւն։ Դուք յոյժ լաւ դրից մէջ էք. պիտի ամուսնանաք, և չէք ուզեր խառնուած լինիլ եղեռնական գործի մը մէջ։ Այս պատճառաւ է որ անտեղի պատճառանքներ կը հնարէք, փոխանակ խոստովանելու պարզաբար թէ երբեմն յարաբերութիւն ունեցած էք Արպալէթ փողոցի տիկնոջ հետ։

Ի՞նչպէս չէք հասկնար թէ անոր պատկերն ունենալն ոճիր չէ, և թէ յոյժ բնական կերպիւ կրնայ մեկնուիլ։

Կ'աւելցնեմ թէ ամեն պարկեշտ մարդոց համար պարտականութիւն մ'է լուսաւորել դատական արդարութիւնն, և թէ վատ գործ մ'ըրած կը լինիք ձեր գիտցածը ծածկելով մեզնէ։

Օ՛ն, պարոն, մի՛ յամառիք ճշմարտութիւնը ծածկելու։ Այդ ողբալի դրութիւն ծանր կը նստի ձեզ, և... ներեցէք ինձ արտասանել աստ անուն մը, որ սիրելի է ձեզ... եթէ օրիորդ Լը.քոնթ, ձեր նշանածը, ներկայ դըտնուէր այս հարցաքննութեան, թախանձանօք պիտի աղաչէր ձեզ որ խօսիք։

Պ. Տը ժանթիյեի, ակներև յուզեալ, բայց ինքզինք բռնել ջանալով, աչերը կը խոնարհեցնէր և պատասխան չէր տար։

—Խորհեցէք թէ օրիորդը ձեզ կ'սպասէ անձկութեամբ, և կը բաւէ ձեզ ընդունելի բացատրութիւն մը տալ ինձ, որպէս զի ձեր ազատութիւնը վերադարձնեմ ձեզ... այս իրիկուն... այս վայրկենիս...։ Իսկ երբ շարունակէք ամեն բան ժխտել, պիտի հարկադրիմ, ձեզ յանցաւոր նկատելով, յուղարկել անդ... ուր մարդասպանութեամբ ամբաստանեալները կը դրուին։

Երիտասարդը սոսկալի կերպով տրժ-

գունեցաւ, երեսին գիծերը կծկեցան, բերանը կէս մը բացուեցաւ խօսելու համար, և բաւական անյողդողդ ձայնիւ մ'ըսաւ.

—Ուրիշ պատասխան մը չունիմ ձեզ տալու. ես անմեղ եմ. ինչ որ կ'ուզէք՝ ըրէք ինձ։

Ապահովութեան պետը չէր սպասեր այս յամառ ընդդիմութեան, բայց աւելի ապացոյց մը համարեցաւ զայս Պ. Տը Ժանթիլեի յանցաւորութեան, և յուսահատելով ի խոստովանութիւն բերելէ զայն, իսկոյն փոխեց իւր բերանն ու ձեւ։

—Ի՞նչ է ձեր անունն, հարցուց չոր կերպիւ. ո՞ւր կը բնակիք. ի՞նչ է ձեր արհեստն։

—Անունս Լուի Տը Ժանթիլեի է, Մոն—Թապոր փողոց թիւ 72 կը բնակիմ. իրաւագիտութեան տոքթէօր եմ և Պ. Լապուրոյ նօտարին քով առաջին դպիր։

—Հարստութիւն ունի՞ք։

—Հայրս ունի։

—Ի՞նչ կ'ընէ ձեր հայրն։

—Հասութառու է։

—Դուք անոր տունը չէ՞ք բնակիր։

—Ո՛չ։

Ապահովութեան պետը գրեթէ ըզբաղեաւ դէմքով մ'ըրաւ այս ամեն հարցումներ, ձեւի համար միայն լսեց պատասխաններն, յետոյ, ծանօթութիւններ առնելէ կամ այնպէս կեղծելէ զկնի.

—Կը ճանչէ՞ք զՊ. Լէօրէօ, հարցուց յանկարծ երիտասարդին երեսը նայելով։

Փոխանակ ցնցուելու այս անունէն, որ Արպալէթ փողոցի տան մէջ սպանեալ վաճառականին անունն էր, Պ. Տը Ժանթիլեի պատասխանեց անխռով.

—Բնաւ։

—Զայլայլեցաւ, զարմանալի բան, ըսաւ ինքնիրեն ապահովութեան պետն։

Եւ իսկոյն խօսքը փոխելով, յարեց.

—Ի՞նչ ըրիք յունուար 13 ի շաբաթ իրիկունն։

Եւ սպասեց՝ յուսալով որ ամբաստանեալը պիտի բռնուէր ծուղակին մէջ։

Ցանցաւորք կանխաւ պատրաստած պատմութիւն մը կ'ունենան միշտ՝ երբոր ոճրին գործուած օրն իրենց ժամանակն ի՛նչպէս անցուցած լինելնին հարցուի իրենց։

Լուի Տը Ժանթիլեի պատասխանեց հանդարտութեամբ.

—Ձեմ կրնար ճշդիւ ըսել ձեզ. այն իրիկունէն մասնաւոր բան մը չէ մնացած յիշողութեանս մէջ։ Անշուշտ Տիկին Լը-քոնթի տունն անցուցած եմ ուրիշ իրիկուններու պէս։

— Եւ յունվար 14ի կիրակի՞ իրիկունն։

—Նոյն կերպիւ անցուցի։ Միայն թէ այն օր հայրս ինձ հետ ճաշեց Տիկին Լը-քոնթի տունը։

—Ձեր այդ ըսածները պիտի ըստուգուին։ Առ այժմ ուրիշ բան մը չունիմ ձեզ հարցնելու։

—Ուրեմն՝ կրնամ մեկնիլ։

Ապահովութեան պետն ուսերը ցընցելով՝ զանգակը քաշեց, և ըսաւ Բիէտուշի, որ ներս մտած էր.

—Կառք մը, շուտով։

—Մեզ բերող կառքը բակին մէջ կեցած է, պատասխանեց Բիէտուշ։

Տո՜ւֆն ու ձին ծանօթ կառապետէ մը վարձած եմ, և Բիկաշ կը վարէ, վասն զի ժամանակաւ թնդանօթավար եղած լինելով, կառք վարել գիտէ։

—Լա՛ւ, դնա վարն սպասէ ինձ նը-բանցքին ծայրն, ըսաւ ապահովութեան պետը։

Պահակն աներեւոյթ եղաւ։

—Ո՞ւր պիտի երթանք, պարո՛ն, հարցուց Լուի Տը Ժանթիլեի խեղդուկ ձայնիւ։

—Ձեր տունն։

—Իմ տո՛ւնս, ի՞նչ կը նշանակէ...

—Կը նշանակէ թէ ձեր բնակարանն աչքէ պիտի անցունեմ, և որովհետեւ ձեր ներկայութեամբ պիտի ընեմ այս այցելութիւն, պարտաւորուած եմ ինձ հետ տանիլ ձեզ։

Օ՜, անհոգ եղիք, այն կերպիւ պիտի կատարուի որ բնաւ չդպչի ձեզ երբոր կարենաք զձեզ արդարացնել

այն ծանր ամբաստանութենէն՝ որ կը ծանրանայ ձեր վրայ։

Լսեցիք որ պահակին հրամայեցի երթալ սպասել ինձ։ Ձեզ հետ ի միասին պիտի դուրս ելնենք... այնպէս ցոյց տալով որ իբր թէ դանգատող մ'էք դուք՝ և ոչ ամբաստանեալ։ Եւ երբ ձեր տունն երթանք, այնպէս պիտի ընեմ որ ձեր դռնապանը չկրնայ բան մը կռահել։

—Շատ շնորհակալ եմ ձեզ արդարեւ այդ նախազգուշութեանց համար, ըսաւ երիտասարդը դառնութեամբ, բայց բոլորովին աւելորդ կը թուին ինձ, եթէ, ինչպէս կ'ենթադրեմ, իմ կարասիներս խուզարկելու... թուղթերս քննելու պիտի ելնէք...։

—Անհրաժեշտ է։

—Եւ մանաւանդ եթէ ձերբակալէք զիս յետոյ։

—Եթէ ձեզ ձերբակալեմ, դուք ուշած պիտի լինիք։ Տակաւին ժամանակ կայ զիս չհարկադրելու որ խիստ միջոցներու դիմեմ։ Արդարացուցէք

զձեզ, ապացուցէք ձեր անմեղութիւնն։ Ես պատրաստ եմ լսել ձեզ, և երբոր ստուգեմ ձեր յայտարարութեանց ճշգրտութիւնն, ազատ կը թողում ձեզ։

—Ապացուցանել անմեղութի՛ւնս։ Բայց ձեզ կ'ինայ ապացուցանել թէ յանցաւոր եմ ես։

—Շատ իրաւացի է ձեր այդ խօսքը, և ճշդիւ այդ ապացուցութեան համար է որ ձեր բնակարանը պիտի խուզարկեմ։

Եկէք, պարո՛ն։

Այս յոյժ տրամաբանական եզրակացութեան վրայ, ապահովութեան պետն իւր դրպանը դրաւ բուսանկարայցետոմն,—պանքտոմներն ու ատրճանակը դարակի մը մէջ պահած էր—, նշանացի դուռը ցոյց տուաւ Պ. Տը Ժանթիլեիի, և դուրս ելաւ անոր ետևէն։

Գրասենեկին պաշտօնեայներն անոնց անցած ժամանակ նայեցան նոյն անաարբերութեամբ որով վարժուած էին մերթ ընդ մերթ պատուաւոր մարդոց

անկից անցնիլը տեսնել, ինչպէս արհեստով չարագործներուն։

Անոնցմէ մին հոն էր այն ժամանակէն ի վեր, յորում Քոսիտիէր (1848) ոստիկանութեան վերատեսուչ էր։

Գետնայարկն սպասող տեսուչները չշարժեցան իրենց տեղէն, նմանապէս պահակները։

Պաշտօնատան սովորոյթներուն անտեղեակ անցորդ մը կրնար կարծել թէ Պ. Տը Ժանթիլեի և անոր ընկերակցող անձը զուարճական պտոյտի մ'ելած էին։

Բիկաշ նստած էր կառքին վրայ և Բիէտուշ արդէն գնացած էր դռնակն։

Երիտասարդը նախ ներս մտնելով՝ նստաւ ետևի բազմոցին վրայ. ապահովութեան պետն ալ անոր քով. իսկ Բիէտուշ իր մեծին դիմացն, որ երիտասարդին տան հասցէն տուած էր առժամեայ կառավարին։

Կառքը մեկնեցաւ, և ճանբան երկար չտևեց, վասն զի ձին հանդչելու ժամանակ ունեցած էր։

Պ. Տը Ժանթիլեի՝ կառքին անկեանը կրթնած, ամենևին բերանը չբացաւ այս արագ ուղևորութեան միջոցին։

Ջատագովութեան միջոցնե՞ր կը պատրաստէր թէ իր նշանածին վրայ կը խորհէր, որ անհամբերութեամբ իրեն կ'սպասէր։

Ինչ որ և էր, ապահովութեան պետը չուզեց վրդովել անոր մտածութիւններն, և առանց բառ մ'արտասանուելու հասան Մոն-Թաբոր փողոցը։

Լուի, միջնակարգ քաղաքացւոյ դեղեցիկ տան մ'առաջին դոտիկոնին մէջ ճաշակով կահաւորեալ և վայելչապէս բաժանեալ բնակարան մ'ունէր, որ չորս սենեակէ կը բաղկանար, դահլիճէ մը, աշխատութեան սենեկէ մը, որք բաւական լայն սրահի մը վրայ կը բացուէին՝ առանց մէկէն միւսին մէջ մտնել հարկ լինելու։

Երիտասարդը, դուրսը ճաշելուն պատճառաւ, տանը մէջ ճաշասրահի պէտք չունէր, ոչ ալ սենեկապան ծառայի։

Սպասուհին բացակայ լինելով, Պ. Տը Ժանթիյեի անձամբ բացաւ իւր դուռը երկու այցելուներուն, զորս ակամայ կը մտցներ յիւր տուն։

Իւր ձեռնաշտանակը դռնապանին օթեակէն առած ժամանակ՝ դռնապանը չէր զարմացեր տեսնելով որ իւր վարձակալաց վերհանձնագոյնն երկու պարոններու հետ կուգար։

—Երեք այժմ ինչ որ կ'ուզէք, ըսաւ իւր աշխատութեան սենեակը ցուցնելով անոնց։

Ապահովութեան պետն արագ նայուած մը ձգեց դրադարանին վրայ, ուր իրաւաբանական մեծահատոր գրքեր կը տեսնուէին նուազ լուրջ և աւելի վայելչապէս կազմուած գրոց հետ։

Հին կաղնիէ որմադրուագներու վրայ հին փորագրութիւնք կային և երկու երեք ալ արդի նկարներ, բաւական մեծագին։

Գրասեղանին վրայ բազմաթիւ պարութայներ կային, որոց մի քանին նոր աչքէ անցած կը թուէին։

Լուրջ երիտասարդի մը սենեակ էր, զոր իւր արհեստական աշխատութիւնը չէր արգելուր գեղարուեստից և գրականութեան ալ զբաղելէ։

Ապահովութեան պետն այսպէս դատեց զայն, և միայն ձեւի համար թղթատեց գրասեղանին վրայ կեցած նախագիծերն և քաշեց բացադարակներն, ուր աննշան թուղթեր միայն տեսաւ։

Պ. Տը Ժանթիյեի սպասեց, բաւական խրոխտ դիրքով մը, մինչև որ պետն աւարտեց իւր խուզարկութիւններն, և յետոյ դահլիճը տարաւ զայն։

Հոն բազմոցներ, թրքական ծխափողեր և որմին վրայ կախուած զէնքեր միայն կային։

Բանալիով կղպուող կահ բնաւ չըկար, ոչ ալ սեղաններ, բաց ի քանի մը նկարէն փայտեայ պատուանդաններէ, որոց վրայ ծխախոտի ամաններ և սուրճի ամենամանր գաւաթներ դրուած էին։

Երիտասարդին դահլիճը բոլորովին արևելեան ձեւով կահաւորուած էր։

Բիէտուշ հիանալով այս նորութեանց վրայ, ոտքին ծայրովը կը քալէր, որպէս զի չաղտոտէ զմիւռնական դորգերն։

Ապահովութեան պետն, առաւել անվնհեր, առաջին նայուածքով անօգուտ դատեց խուզարկել անդ և մնաց ննջասենեակն, ուր իւր աչքին հանդիպեցաւ նախ՝ ոչ թէ սիւնազարդ անկողինը Լուի ԺԴ. ի գեղեցիկ ոճով, այլ վարդենիէ փոքրիկ դրասեղան մը որ սենեկին մէկ անկիւնը ծածկուած էր։

—Հաճեցէք տալ ինձ սա դրասեղանի բանալին, ըսաւ առանց վարանելու։

Կը դուշակէր թէ երիտասարդին գաղտնիքն անոր մէջ պահուած էր։

—Ա.ասիկ, պարո՛ն, ըսաւ պաղութեամբ Պ. Տը Ժանթիլեի։ Քննեցէք այդ դրասեղան, չեմ կրնար արգելուլ ձեզ. բայց կ'իմացնեմ ձեզ թէ ընտանեկան թուղթեր և մտերմական նամակներ միայն կը պարունակէ։ Երբոր ստուգէք թէ ձեզ հոս բերող գործին հետ բնաւ յարաբերութիւն չունին, կը

յուսամ որ կը հաճիք նորէն ինձ յանձնել։

—Ձեր պարութային պիտի կցին։ Քննութեան պէտքն այնպէս կը պահանջէ, ըսաւ ապահովութեան պետը, բայց յետոյ . . . կրնան նորէն ձեզ յանձնուիլ։

Մնաց որ՝ ես այժմ չպիտի քննեմ զանոնք։ Շարունակենք, եթէ կը հաճիք։

Հագուելու խուցը սրահակ դրունակով մը միայն բաժնուած էր ննջասենեկէն։

Բիէտուշ վեր առաւ սրահակն՝ որպէս զի իւր պետը ներս մտնէ, և ելյս տալու համար երկու մոմով աշտանակ մը բռնեց ձեռքը, զոր երիտասարդին աշխատութեան սեղանին վրայէն առած էր։

—Ա՞յս է ձեր բոլոր բնակարան, հարցուց ապահովութեան պետն՝ յետ աչքէ անցունելու մէկ նայուածքով՝ ճերմակ մարմարէ սեղանը, մեծամեծ լամպանները, անգլիական յախճապակէ

խոշոր կուժերը, քանդակեալ բիւրեղէ շիշերը, փղոսկրեայ խոշանակներն և այլ հաղարաւոր մանրամասնութիւնք՝ որք վայելչասէր երիտասարդի մ'արդուզարդին կը ծառայեն։

—Բացարձակապէս այս է, պատասխանեց չորութեամբ Պ. Տը Ժանթիլեի, եթէ չէք ուզեր աչքէ անցունել խոհարանը, փայտանոցը, լաթերուս որմադարանը . . .

—Այս չափը բաւ է, պարո՛ն։ Իմ պաշտօնս աւարտած է հոս։ Այժմ պիտի առնում և ձեր աչաց առջեւ կընքեմ ձեր թուղթերը, նամակներն և . . .

Պետը կանգ առաւ՝ Բիէտուշի ձեռքըն զգալով մեղմաբար իւր թեւին վրայ։

Ետին դարձաւ և տեսաւ որ Բիէտուշ՝ առանց բան մ'ըսելու՝ տախտակորմին մէկ կողմը պարսկական գորգով ծածկուած կէտ մը կ'ակնարկէր ընդ մէջ արդուզարդի սեղանին և պատուհանին։

Արհեստէն եղող անձանց միջեւ այս մունջ լեզուն յոյժ գործածական է և յոյժ հասկնալի։

Պետը կոպերու կափմամբ մը պատասխանեց, որ կը նշանակէր թէ այն կէտն ալ պիտի քննուէր,

Պ. Տը Ժանթիլեի տժգոյն, բայց ինքզինք բռնած, ներկայ կը գտնուէր այս ակնարկութեանց՝ առանց նշանակութիւնը գուշակելու։

Բայց շուտով հասկցաւ։

Բիէտուշ, որ կարդասէր մարդ մ'էր, նախ արդուզարդի հայելիին քով կեցած չորս մոմերը վառեց, որպէս զի լաւ լուսաւորուի խուցը, մինչդեռ ինքն ալ ձեռքի ճրագը կը գործածէր։

—Հաճեցէք մտնել, ըսաւ պետը մէկ կողմ քաշուելով, որպէս զի ներս մտնէ Պ. Տը Ժանթիլեի։

Բնակարանին դուռը կղպուած չը լինելով, երիտասարդը կրնար փախչելու փորձ մ'ընել։

Թէեւ այնպիսի բան մ'ընելու փափաք չունէր, բայց իրեն եղած հրաւէրն յայտնապէս վրդովեց զինք։

—Աւելորդ է, իմ արդուզարդի սեղանս ծածուկ դարակներ չունի, ըսաւ կատակ կեղծելով։

Սակայն վերջապէս յառաջ անցաւ և ապահովութեան պետն ալ անմիջապէս անոր ետին կ'ելաւ։

Բիէտուշ արդէն գործի սկսած էր։

Սրահակներուն ծալերէն բաւական լաւ ծածկուած պղնձէ կոճակի մը վրայ ձեռքը կոխելով՝ տախտակէ դռնակ մը բացաւ։

—Թաքստո՛ց մը, գոչեց, ի՞նչ կըրնայ լինիլ մէջը։

Երանի թէ երրորդ դիակ մ'ալ ասա չգտնուէր, աւելցուց ինքնիրեն։

—Ի՞նչ ունիք, պարո՛ն, հարցուց պետը Պ. Տը Ժանթիլեիի նայելով։

Երիտասարդը ճիգ մ'ըրաւ պատասխանելու, բայց ձայնը կոկորդին մէջ մնաց։

Սակայն Բիէտուշ գլուխն ու ձեռքը թաքստոցին մէջ երկնցնելով՝ ձեռքի ճրագովն սկսաւ զննել հետաքրքրաբար։

—Զարմանալի՛ բան, ըսաւ ետ քաշուելով, տարօրինակ, անակնկալ բան, որ դիւրաւ չկրնար մեկնուիլ։

Պետն առաւ ճրագն անոր ձեռքէն, աչք ըրաւ որ հսկէ ձերբակալին վրայ, և ինք գլուխը դռնակէն ներս խօթեց հասկնալու համար թէ ի՞նչ էր որ այնչափ զարմանք կը պատճառէր իւր գործակալին, որ յոյժ տարօրէն գիւտերու վարժուած էր։

Գաղտնի դուռը կը բացուէր տեսակ մը ներքանցքի վրայ, որ ձեւացած էր պարսկական գորգով ծածկուած տախտակորմին և քովի տունը Պ. Տը Ժանթիլեիի բնակարանէն բաժնող պատին միջև։

Այս մենարան, աւելի երկայն քան թէ լայն, լուսամուտ բնաւ չունէր, և ֆլանտրական հին գորգերով պատած էր. տախտակամածը ծածկեալ էր բընձի յարդէ բարակ փսիաթով մը, որոյ գործածութիւնն ընդհանրացած է տաք երկիրներու մէջ։

Կահ բնաւ չկար՝ բայց ի քառակուսի սեղանէ մը, որ խաղի սեղանի կը նմա-

նէր, և որոյ վրայ խաղի թուղթեր շարուած էին մասնաւոր կարգաւ։

Կարմիր արքայները (ՌՈՀԼԷ) սեւ աղջիկներուն հետ դրուած էին, սեւ միաւորները (պէյ) կարմիր սպասաւորաց (պոՀատ) հետ, և այսպէս միւսներն ալ։

Այս գիւտ՝ ուրիշ ամեն տեղ որ և է կասկած չէր կրնար հրաւիրել բնակչին վրայ, վասն զի սենեկի մը մէջ փակուելով բաւական (համբերութիւն) բանալու գործն եղեռնական բան մը չունի։ Նմանապէս յանցանք մը չէ այդ բաւականն ընդհատել և թուղթերը սեղանին վրայ մոռնալ։

Բայց ապահովութեան պետն սքանչելապէս կը յիշէր այն ներքնասենեկին մէջի խաղի սեղանն, որոյ մօտ յոյժ անախորժ ժամեր անցուցած էր ժամացուցի մը պահարանին մէջ. ասկէ զատ իւր գրպանին մէջ էր սպանեալ կնոջ պատկերն, որ իւր լուսանկարն հանել տուած էր՝ Մաշայի աղջիկ մը մէկ ձեռքն և կամելիա մը միւս ձեռքը բռնած։

Ծաղիկն ու թուղթը դիակնարանը կեցած էին կնոջ դիակին վրայ։

Թաքստոցին մէջի սեղանին վրայ ալ, չափակցաբար շարուած խաղի թուղթերուն քով, չորցած ծաղիկ մը կար՝ որոյ ձևէն կը ճանչուէր տակաւին։

Կամելիա մ'էր։

Այս տարօրինակ զուգադիպութիւնք բաւականապէս կ'ամբաստանէին զՊ. Տը Ժանթիլեի, և հանճարեղ ոստիկանապետն՝ իւր երկար ասպարիզին մէջ՝ ըրած չէր այսպիսի նախախնամական գիւտ մը։

Կը հարցնէր ինքնիրեն թէ ի՞նչպէս այս երիտասարդ կրցած էր այսպիսի անխոհեմութիւն մ'ընել այս սարսափելի ապացոյցները պահելով՝ իրրև ճարտարարուեստ նիւթ մը թանգարանի մը մէջ։

Թաքստոցը գրեթէ աղօթարանի մ'երևոյթ ունէր, և տեսնելով այն երկիւղած խնամքն՝ որով Պ. Լրքոքի որդին այնպէս յարդարած էր զայն, կըրնար կարծել ոք թէ մերթ ընդ մերթ

կ'երթար ծունը կը դներ թռեալ երջանկութեան մ'այդ նշխարներուն առջեւ։

—Անլո՛ւր բան, կ'ըսեր ինքնիրեն ապահովութեան պետն։ Այս երիտասարդ պաշտած պէտք էր լինէր զայն կին... խաղի թուղթերը... ծաղիկն... և այս ամենայն յայտնապէս կապակցութիւն ունին տարփական տեսարանի մը յիշատակին հետ... և սակայն սպաննած է զայն... այո՛, սպաննած է... արևու լուսոյն պէս յայտնի է... և սպաննած է այն վայրկենին որ բ-ռ-է-ն կը բանար... ինչպէս որ կը տեսնուի լուսանկարին վրայ...։

Այս մարդ խելագա՞ր է արդեօք։ Չեմ գիտեր, բայց գրաւ կը դնեմ որ իւր փաստաբանը խելագարութիւն պիտի պաշտպանէ, և ես, եթէ երդուեալ դատաւոր լինէի, պիտի հաւատայի թերևս։

Այո՛... բայց երդուեալ դատաւոր չեմ ես, և ամեն խորհրդածութիւն ընելով կը կարծեմ թէ Պ. Տը ժանթիյ-

եի զգայուն մարդասպան մ'է պարզապէս։ Քանիներ տեսած եմ արդէն։

Եւ քիչ մ'երևակայութեամբ իւր առջև կը կերպարանէ ոք այն ամեն տեսարաններն՝ որոց հետքը կը գըտնեմ ասա։

Տիկինը թուղթ բանալու մոլեգնութիւնն ունէր... թերևս հասկնալու համար թէ իւր տարփածուն պիտի ամուսնանա՞ր իւր հետ... երբոր իրարմէ պիտի բաժնուէին ուղևորութեան մ'առթիւ...։ Կ'ենթադրեմ թէ այս ժանթիյեի Անգլիոյ մէջ ճանչած է զայն, և օր մը Ֆրանսա կոչուեր է...։ Այն օր կինը բ-ռ-է-ն բացած և ռ-է-ռ-է-ն (յաղողութիւն) մ'ըրած է, որ յաղողած պէտք է լինի... տարփածուն խոստացեր է պահել այն թուղթերն որք իրենց երջանկութիւնը գուշակած էին...։

Աւասիկ այն թուղթերն են այս սեղանին վրայ շարուածներն... և կը զարմանամ որ ապակիի մը տակ դրած չէ...։

Ա՛մանակէ յետոյ կինը Փարիզ ե-

կեր է, և երիտասարդին յիշողութիւնն արթնցնելու համար՝ իւր լուսանկարը շինել տուեր է հանդերձ այն պարագայիւք, որք անոր խանդակաթ հրաժեշտը պիտի յիշեցնէին իրեն. լուսանկար տոմսին ետին Մ՝ ՄՈՆԱԼԻՍ ԳԸՐԵՐ է... անդլիերէն... և ասոր ղբրկեր է։

Ճշդիւ այսպէս եղած է։ Բիէտուշ, Պուլոյն դիմելէ առաջ՝ լուսանկարչին գնացած էր, որ ըսեր էր իրեն թէ տիկինը միայնակ եկած էր, և թէ մէկ օրինակ միայն խնդրած էր՝ պահանջելով որ կաղապարը ջնջուի։

Աւասիկ վիպասանութեանս երեք չորրորդը շինուած... այո՛, բայց կընճռոին լուծո՛ւմը...։ Այն ալ գտնըւած է։

Ժանթիլեի, տիկինը վերստին տեսնելէ յետոյ կ'իմանայ թէ կը խաբէր զինքն, և կ'ուզէ վրէժ առնուլ...։ Իւր ընելիքը կը պատրաստէ... իրիկուն մը յանկարծ կ'երթայ, և հակատռփող հոմանին սեղանի վրայ գտնելով՝ կ'ըս-

պաննէ...։ Անկից կ'անցնի ներքնասենեակն, ուր գեղուհին... ուրիշի մը համար... յաղթանակ բանալու զբաղած էր... կը զարնէ, զայն ալ կ'ըսպաննէ և Սլաքի տիկինը (*) (Մաչայի աղջիկը) սրտին վրայ կը դամէ... թուղթ մը, որ իրենց առաջին տարփանաց ժամանակ յատուկ նշանակութիւն մ'ունէր...։ Իրենց երջանկութեան թուղթն էր...։

Եւ յանկարծ միտքը բան մ'ընկնէ.

(*) Ըստ խնդրոյ բանասիրաց ոմանց, որոշեցինք խաղի թուղթերուն անունն հայերէնի վերածել՝ Ֆրանսերէնին հետեւելով, որ յարմարագոյնն երևցաւ մեզ։

Սլաք (ՓՈՇ)
Տերև (ՍՊԱԹ)
Քառակ (ԹՐԷՖ) փոխանակ քառակուսեակի
Սիրտ (ԽՈՐԷՄ)
Աղքայ (ՊԱՀԼԸ)
Տիկին (ԽԸՂ)
Ծառայ (ՊԱՏԱՆ)
Մէկ (ՊԷՏ)
Երկու (ԷՏԷԼԷ)
Երեք, չորս, հինգ... մինչև տասն։

Ծ. Թ.

լով, ապահովութեան պետը սեղանին վրայ ծռեցաւ, և շարուած թուղթերը քննեց ուշադրութեամբ։

Սլաքի տիկին մը պակաս էր։

Ապահովութեան պետը ժամանակաւ համբերութիւն բացած լինելով, կը յիշեր որ, քսան կանոնաց այդ խաղին, Սլաքի տիկինն ամուսնացած պարտ էր լինիլ Քառակի արքային (Օրէյտ Քոհլբէր) հետ։ Արդ՝ Քառակի արքայն այրի էր։

Ա.յսչափս բաւական էր։ Պետն հագուելու սենեակը վերադարձաւ, ծածուկ փեղկին իւր տեղը դրաւ, և ճրագը Բ.ի.էտուշի տալով՝ ըսաւ.

—Տեսայ ինչ որ տեսնել կ'ուզէի։ Զուենք։

—Եւ ձեր տեսածներէն չպիտի եզրակացնէք թէ ես յանցաւոր եմ, գոչեց Լուի Տը Ժանթիյեի. կը յուսամ որ կարեւորութիւն չպիտի ընծայէք այն կարծեցեալ նշաններուն, որոց ոչ ոք լուրջ նշանակութիւն մը կրնայ տալ։

—Անոնց արժէքը քննելու ժամանակն եկած չէ։ Քննիչ դատաւորին գործն է այդ, պատասխանեց ապահովութեան պետն։

—Ըսել է թէ զիս ձերբակալելու, անպատուելու պատասխանատուութիւնը կ'ստանձնէք... վասն զի իմ վիճակս ունեցող մարդու մը ձերբակալումը, թէեւ վաղը թող տրուիմ, անպատուութիւն է... և դուք ուրիշ ապացոյց չունիք ինձ դէմ՝ բայց եթէ իմ վրայ դտնուած լուսանկար մ'և չեմ գիտեր ինչ մերձեցում մը, զոր հաճոյ կը թուի ձեզ հաստատել ընդ մէջ...

—Կը մոռնաք թէ ձեզ ոստիկանութեան պաշտօնատունը տանող գործակալին քսան հազար ֆրանք առաջարկեցիք որպէս զի թոյլ տայ ձեզ փախչիլ։ Նմանապէս կը մոռնաք թէ յետոյ ուզեցիք զայն սպաննել, և ապա զձեզ։ Կարծեմ թէ անմեղ մարդ մ'այդպէս չվարուիր։

—Գլուխս կորուսած էի։

—Աւելորդ խօսքեր են ադոնք։ Դուք երկու ժամէ ի վեր ձերբակալման վիճակի մէջ էք. չուզեցի ըսել ձեզ

զայս՝ յուսալով որ խոստովանութիւններ կ'ընէ.ք։ Այժմ ո՛չ ես բան մ'ունիմ ձեզ հարցնելու, ո՛չ ալ դուք ինձ քսելու։ Դատական արդարութեան կը վերաբերիք։ Քալեցէ.ք երթանք։

Պ. Տը Ժանթիյեի բաւական անխնդրութեամբ կրեց այս սարսափելի հարուած։

Առանց բառ մ'արտասանելու նքնչարանը մտաւ և առանց վրդովելու դիտեց ապահովութեան պետին դորձողութիւններն, որ դրասեղանը բացաւ, թուղթերուն խուրձերն առաւ, մեծկակ ծրար մ'ըրաւ և կնքեց մոմով։

—Ո՞ւր պիտի ղրկէ.ք զիս, հարցուց երիտասարդը պաղութեամբ, երբոր կնքման գործն աւարտեցաւ։

—Ոստիկանութեան արգելարանը։ Վաղը պիտի հարցաքննուի.ք քննիչ դատաւորէն, և յետոյ հաւանաբար Մաղասի բանտը պիտի փոխադրի.ք։

—Կրնա՞մ մէկու մ'իմացնել իմ ձերբակալումս։

—Եթէ կ'ուզէ.ք իմացնել այն անձանց, որոց հետ անցուցի.ք ելեկոյթը, չեմ կրնար ես ինձմէ թոյլ տալ որ գիր գրէ.ք անոնց։

—Ո՛չ, անոնց չպիտի գրեմ. կ'ուզեմ որ հայրս իմանայ։

—Ես կ'իմացնեմ անոր վաղ առաւօտ։ Ըսէ.ք ինձ, ո՛ւր կը բնակի։

—Քանթի գետափ, 49։

—Քանթի գետափ, 49՝, կրկնեց ապահովութեան պետը զարմացման ակներեւ նշաններով։ Եւ Պ. Տը Ժանթիյեի՞ կը կոչուի։

—Լը-քոք Տը Ժանթիյեի։

Այս պատասխանէն ո՛չ միայն պետն ապշեցաւ, այլ և Բիչատուշ վեր ցատկեց դէմքը ծամածռելով։

—Ի՞նչ կ'ըսէ.ք, դուք վաղեմի վաճառական Պ. Լը-քոքի որդի՞ն է.ք, ըսաւ պետը, Պ. Լը-քոք Տը Ժանթիյեեի, որ տասն տարիէ ի վեր այդ ձեր ըսածտունը կը բնակի։

—Այո՛, պարոն։

—Ձեր հայրն արդարապէս յարգի մարդ մ'է, յարեց ապահովութեան

պետք վայրկեան մը լռութենէ յետոյ։ Կը ճանչեմ զայն և կը խոստանամ ձեզ որ վաղ առաւօտ ես անձամբ երթամ իմացնեմ անոր այս իրողութիւն։

Դժբաղդաբար ասկէց աւելի բան մը չեմ կրնար ընել ձեզ համար, աւելցուց՝ բնակարանին դուռը ցուցնելով երիտասարդին։

Լուի Լըքոք դուրս ելաւ նախ, և սանդուղքէն վար իջած ժամանակ, պետն՝ անկեղծապէս յուզեալ՝ ըսաւ իւր գործակալին ականջն ի վար.

— Զարաբաղդութիւն մ'է այս։ Խե՜ղճ հայը Լըքոք, պիտի մեռնի սըրտին ցաւէն։ Ես ալ կ'առաջարկէի իրեն որ այս գործն իւր վրայ առնու, և համրին դուրս ելած օրը Բոն-Նէօֆի վրայ պատահեցաւ ինձ իւր որդւոյն հետ։ Երբոր այս չարաճճի որդին սենեակէս ներս մտաւ, կ'ըսէի ես ինձ թէ ո՞ւր տեսած եմ այս դէմքը։ Եւ երբ իւր Տը Ժանթիլեի անունը լսեցի, պէտք էր արթնայի։ Բայց բոլորովին հեռի էի մտածելէ թէ այդ բարի մարդուն

մերձաւորն էր։ Զա՜ր սատանայ. աւասիկ վերջին յայտնութիւն մը, որ ուրախութիւնս բոլորովին խանգարեց։

—Եւ ես, տէ՜ր իմ, հարուստ չեմ, բայց երբ կը խորհիմ թէ ես պատճառ եղայ որ Պ. Լըքոք պիտի մեռնի սըրտին ցաւէն, յօժարակամ կը հրաժարէի պարգևներէ, յառաջացումէ, և այլ ամէն բանէ, որպէս զի այսօր դիակնարանը գնացած չլինէի։

—Ի՞նչ պիտի ընես, արհեստդ է։ Վաղը, թերևս, հարկ պիտի լինի համրը դէմ առ դէմ բերել այս երիտասարդի հետ, և տարակոյս չունիմ որ այդ երեսումը կառափնարան պիտի ղրկէ իմ վաղեմի բարեկամին որդին։

Թ.

Առաւօտը նոր ծագած էր, ձմրան դեղեցիկ առաւօտ մը, զոր մերթ ընդ մերթ Աստուած կուտայ փարիզցւոց՝ յունվար ամսոյ մէջ։

Այնպիսի օրեր, փողոցները տօնական աւուրց երևոյթ ունին։

Փողոցները պտըտելու պարտաւորեալ խեղճ մարդիկ կը զուարճանան եղկ օդ մը շնչելով և ցեխի մէջ քալելէ զերծ մնալով։

Հարուստք, վառարանին անկիւնը թողով՝ դէպ ի Շանզ–Էլիզէ կ'ուղեւորին գարնան մօտենալը տեսնելու և մանաւանդ ախորժակ շահելու համար։

Վայելչասէր կանայք, իրենց բարձր կրուկներով կը կռանեն չոր սալարկներն, և խանութներու ապակափեղկերուն առջեւ կը դեգերին։

Ուրախութիւն կայ օդին մէջ։

Այս ուրախութենէ հայր Էքքոք ալ բաժին մ'ունէր։

Ըստ սովորութեան, արշալուսին հետ ելած էր, և ածլուելէ ու լուացուելէ յետոյ հագուեր էր։ Այս գործողութիւնք մէկ ժամէն աւելի կը տեւէին, վասն զի ծերուկը մեծ խնամ կը տանէր իւր անձին։

Պատուհանը բացաւ և հաղարերորդ անգամ ի զնին կեցաւ այն ոքանչելի համատեսիլ պատկերին, որ կը տեսնուի Քոնթի դետափէն։

Դիմացը Սէն գետն էր, ոգեւորեալ շոգենաւուց երթեւեկով, և Լուվր՝ ոսկեղեալ լուսով։

Ձախակողմը գետեզերեայ դարատափին յաղթ մաշկամրդիներն էին՝ շառագնեալ արեւուն առաջին ճառագայթներէն։

Աջակողմն հին Փարիզ քաղաքը՝ նորոգեալ յորմնադրաց, իւր նորակառոյց շէնքերով, ոսկեզօծ սրածայր գմբեթով որ երկինք կը բարձրանայ ուղղաբերձ, և Նօթր–Ցամի երկու հսկայակերտ աշտարակներն, որք ոսոիկանական պաշտօնատան տանիքներուն վրայէն նայելու երեւոյթ մ'ունին։

Այս այլազան պատկերին մէկ կողմն անցեալը կը յիշեցնէր Պ. Էքքոքի, յոդնավաստակ, մրրկալից և արկածաւոր անցեալ մը։

Միւս կողմն ապագային վրայ կը խօսէր, անմակ ապագայի մը վրայ, այն աշխատասէր մարդու ապագային վրայ, որ վերջապէս իւր պատշաճ տեղը գըտաւած է աշխարհի մէջ, որ փարթամ

և յարգի ծերութեան մը հասած է, որ կը հանդչի մոամիրով և որ կը յուսայ երկար ապրիլ իւր սերնդեան մէջ։

Տարիէ մ'ի վեր ամեն բան յաջող կ'երթար այս բարի ծերուկին։

Այն սրտատանջութիւնք, զորս որդին ժամանակաւ կուտար, փարատած էին, և այդ պաշտեցեալ որդւոյն մերձակայ ամուսնութիւնն իւր ամեն բաղձանքը կը լցնէր։

Լուի հարուստ և դեղեցիկ աղջկան մը հետ պիտի ամուսնանար, զոր կաթոդին կը սիրէր։

Հայրն, որ անոր բնաւորութիւնն հիմնովին կը ճանչէր, ուրախ կը լինէր այս քաջայարմար հանդիպման վրայ, վասն զի գիտէր որ այդ զարմանալի տղան սէրը չէր զոհեր դրամի, և կը բնար անյարմար մէկու մը տալ զիւր սէր։

Պ. Լըքոք չէր մոռցած Լուիի ըրած խենդութիւններն Անգլիոյ և Գերմանիոյ մէջ, բայց ոչ եւս կը վախնար թէ Ֆրանսայի մէջ ալ կրնային վերսկսիլ։

Սիրտը բռնուած էր, ամուսնութեան օրն որոշուած էր, հարսանեկան ընծայն կը գնուէր։

Մինչեւ իսկ շատ սուղ կը նստէր ծերուկին այդ ընծայն։ Դեռ նախորդ օրն հինգ հազար ֆրանք տուած էր ապարանջանի մը համար, և տակաւին վերջն եկած չէր։

Բայց չէր կսկծար իւր դրամներն, և երբէք այն առաւօտեան չափ զուարթ եղած չէր, երբոր իւր պատշգամին կրթնած էր արմուկովը։

Կը խորհէր երթալ գտնել իւր որդին անկողնին մէջ և առաջարկել որ ի միասին պտոյտ մ'ընեն այլեւայլ նիւթեղինաց վաճառատունները։

Քանի մ'օրէ ի վեր Լուի՝ աղատ ժամանակ ունէր. հրաժեշտ առած էր իւր նոտարական դրասենեկէն, և ստոյգ չէր թէ վերստին հոն պիտի վերադառնար երբէք, վասն զի հարսանեկան ուղեւորութիւնն որոշուած էր, և օրիորդ Լըքոնթ չէր ախորժեր նոտարութենէ։

Հայր Լըքոք կը հարցնէր ինքնիրեն

թէ իւր ժառանգը, փոխանակ ինքզինք պայմանագրոց խմբագրութեան և մշաբնչենաւոր սպիտակ վզկապի նուիրելու, աւելի լաւ չըներ մեծ ագարակ մը գնել գաւառի մը մէջ և շահագործել։

Իւր անձնական հաշուին համար, վաղեմի խուզարկուն ուրիշ բան մը չէր խնդրեր, բայց միայն իւր կեանքը գիւղի մէջ անցունել, և ժամ մ'առաջ թօթափել իւր կօշկաց փոշին այս ապիրատ քաղքին վրայ, որոյ սալարկներն յաճախ իւր ոտքին տակ ծեծած էր մարդիկ որոնելով։

— Եւ ըսել թէ ոստիկանութեան պաշտօնատան մէջ կը կարծէին թէ իրենց հաճոյ լինելու համար նորէն ձեռք պիտի առնուի այդ արհեստ, մրմռաց՝ արհամարհանօք նայելով ոստիկանութեան պաշտօնատան շէնքին, որ Օրֆէվրի գետափը կը պատէ։

Կը տեսնուի որ հայրութեան . . . և կարթով որսալու քաղցրութիւններուն անդէտ են։ Ես, որ Լուին պիտի ամուսնացնեմ և կալուածատէր պիտի լինիմ, եթէ սիրտս ուզէ, նորէն այդ ժխորին մէջ մտնե՞մ . . . օ՜, ո՛չ, ո՛չ. անցած է այն ժամանակ, ուր զիս հայը դարձեալ կը կոչէին, և ուր անունս չէի գողցած։ Այժմ այդ արհեստ բնաւ չզուարճացներ զիս։ Ես Պէրանժէի երդին յիսնապետը չեմ. . . ծեր նժոյգն ոչ ևս կ'զգայ խթանը։ Պարոն սրիկայները կրնան ուզածնուն չափ կանայք սպաննել, և մինչեւ իսկ խաղի թուղթ դամել անոնց կուրծին վրայ։ Ես ոչ ևս պիտի վաղեմ անոնց ետեւէն։

Հայր Լեքոք թերեւս քիչ մը չափազանց կը գովէր զինք՝ հաստատելով թէ դատական խնդիրները բնաւ չէին գրաւեր զիւր ուշադրութիւն, վասն զի պահ մը յետոյ յարեց, ինքնիրեն խօսելով.

— Եւ սակայն ուշադրութեան արժանի է այդ գործ։ Եթէ երիտասարդ լինէի և Լուին չունենայի, կրնար զիս գրգռել, մանաւանդ այն սատանայ հարն . . . որ առեղծուածին լու-

ծումը գիտէ, բայց չկրնար ըսել։

Ի՞նչ բրին արդեօք պանը դէջ (ոստիկանութեան պաշտօնատան մէջ)։ Մինչեւ ցարդ անմոութիւններ։ Ապահովութեան պետը, զոր երէկ տեսայ Թիւյլրիի պարտէզին մէջ, խոստովանեցաւ ինձ թէ առաջին օրէն աւելի բան մը չեն գիտեր։ Թոլպիաքէն կը գանգատի, որ անհոգ կը ննջէ իւր պաշտօնին վրայ։ Կը զղջամ յանձնարարելուս վրայ։ Այդ մարդ սնապարծ մ'է որ գործէ աւելի աղմուկ կ'ընէ։ Ասկէ զատ շատ վստահելի չեմ կարծեր։ Տունէն դուրս գործեր կը նիւթէ։ Անգլիոյ մէջ կրնայ լաւ լինիլ այդ բան, բայց Ֆրանսայի մէջ շատ գէշ է։

Բարեբաղդաբար Բիէտուշն օժանդակ տուած են անոր։ Այդ տղան պարկեշտ է. լաւ հայեացք և մինչեւ իսկ դատողութիւն ունի... բայց քիչ մը դիւրաւ կը խաբուի։

Պ. Լաքոք այս խորհրդածութիւնը կ'ընէր և պատուհանէն մեկնելու վրայ էր, լաւ լծեալ միանստարան կառք

մ'եկաւ կեցաւ տանը դրան առջեւ։

Առաւօտեան այն ժամուն, Քոնթի գետափին վրայ այնպիսի կառքի մ'երեւումն արտասովոր դէպք մ'էր, և վաղեմի ոստիկանն՝ ըստ սովորութեան՝ կը սիրէր իմանալ ամեն բան։

Վար ծռեցաւ տեսնելու համար թէ ո՞վ էր որ այնպիսի գեղեցիկ կառքով մ'այցելութեան կուգար համեստ քաղաքացիներէ բնակեալ տան մը վարձակալներէն մէկուն։

Երկու տիկնայք ինքն կառքէն և շտապով տանը ծառուղւոյն մէջ մտան։

— Զարմանալի՛ բան, մրմռաց ծերուկը, կրնայ երդնուլ մարդ թէ Տիկին Լաքոնթ և աղջիկն են... բայց կը սխալիմ անշուշտ... առաւօտեան ժամ ութին հոս հասնելու համար հարկ է որ լուսնալէն առաջ ելած լինին... և սակայն կառքն անոնցն է... աւասիկ կառավարն ալ կը ճանչեմ։

Արդեօք դժուարութի՞ւնք ծագած են, աւելցուց փակելով պատուհանն։

Արդեօք Տիկին Լըքոնթ՝ տուած խօս-
քըն ետ առնլո՞ւ կուգայ։

Բայց ոչ, անհնարին է այդ... եթէ
այնպիսի միտք մ'ունենար, աղջիկն հե-
տը չէր բերեր։

Զանգակն հնչեց, և տիկնանց գա-
լուն պատճառը շուտով հասկնալու հե-
տաքրքրութեամբ՝ Պ. Լըքոք անձամբ
գնաց դուռը բացաւ։

Օրիորդ Լըքոնթ անմիջապէս հար-
ցուց.

—Լուի հոս է, այնպէս չէ՞, պարո՞ն։

—Լուի՛, ո՛չ, օրիո՛րդ, երէկ առա-
ւօտէն ի վեր տեսած չեմ։

Հաճեցէք ներս մտնել, տիկի՛ն։

—Զտեսա՞ք զայն, կրկնեց Թէրէզ։
Ա՜հ, մեռնիլ միայն կը մնայ ինձ։

—Մեռնի՛լ, ի՞նչ կը նշանակէ...
ի՞նչ ունիք, օրիո՛րդ, կը զարհուրեցը-
նէք զիս։

—Ա՜հ, պարոն, ըսաւ Տիկին Լը-
քոնթ, եթէ գիտնայիք...

—Ներս եկէք, տիկնա՛յք, կ'աղա-
չեմ, ըսաւ հայր Լըքոք դուռը փակե-

լով և այցելուհիները մեղմով փոքր
դահլիճ մը մղելով, ուր արդէն կրակ
վառուած էր։

Նստելու ժամանակ չառին։

—Պարո՛ն, սկսաւ այրին, պատմեմ
ձեզ եղելութիւնը։ Ձեր որդին, ըստ
սովորութեան, ճաշելու եկաւ երէկ ի
Պուլոյն։ Իրիկուան, ժամ իններին միջոց-
ները, կարծեմ, անծանօթ մարդ մ'ե-
կաւ իրեն հետ խօսիլ ուզեց, ըսելով
թէ Պ. Տը Ժանթիլեիի կորուսած թղ-
թապանակ մը բերած էր։ Հրամայեցի
որ ներս մտցնեն։ Եւ արդարեւ ցոյց
տուաւ մեզ թղթապանակն, որոյ մէջ
հինգ հազար ֆրանք կար...

—Զոր ես տուած էի Լուիի երէկ
առաւօտ գոհարավաճառին տալու հա-
մար։ Որդիս ծանծաղամտութիւն ըրած
է կորընցնելով այն պանքտոմսերն, և
արժանի չէր որ պարկեշտ մարդ մը զայն
գտնելով իրեն բերէր յանձնէր։ Եթէ
այդ դժբաղդութեան վրայ է գործը,
դարմանուած է, և...

—Ա՜ւա՜ղ, պարո՛ն, տասն անգամ

կուտայի այդ գումարն, որպէս զի աղ-
ջիկս չտեսներ այն տխուր տեսարանն
որ յետոյ երեւան եկաւ։ Թղթապանակը
լուսանկար մ'ալ կը պարունակէր . . .
լուսանկարն այդ դժբաղդ կնոջ որ ըս-
պաննուեր է . . . Արպալէթ փողոցին
մէջ, կարծեմ . . .

— Ի՜նչ . . . բայց Լուի չճանչեր
զայն . . . անհնարին է։

—Ճանչելը չուրացաւ, մրմնջեց Թէ-
ոէզ որ ջերմ արտասուք կը թափէր։

—Զերկնցնեմ, պարո՛ն, ըսաւ այ-
ոին, ոչ պակաս դառնութեամբ քան
զխեղճ նշանածը։ Թղթապանակը բե-
ոող մարդն ըսաւ թէ չէր կրնար յանձ-
նել զայն մինչեւ որ լուսանկարը ցոյց
չտայ ոստիկանապետին, և աղաչեց զՊ.
Ցը ժանթիլեի որ իրեն ընկերանայ . . .

—Եւ որդիս անմտութեամբ հաճե-
ցա՛ւ, գոչեց Պ. Լըքոք յօնքը պռս-
տելով։ Ստուգիւ անհաւատալի բան է։
Ի՞նչ դէմքով մարդ էր այդ պատ-
ոուռակաւ եկողը . . . վասն զի պատ-
ոուակ մ'էր այդ, աներկբայ եղիք . . .

—Հասարակ դէմքով, աղքատիկ
կերպարանքով։

—Հասկցայ։ Շարունակեցէք, տի-
կին, կ'աղաչեմ. Լուի գնա՞ց անոր հետ։

—Այո՛, խոստացաւ մեզ որ նոյն
երիկունը պիտի վերադառնար մեր
սիրան անդորրելու համար։ Գիշերն ի
բուն սպասեցինք, բայց չեկաւ։ Դա-
տեցէք մեր սրտատանջութիւնն և . . .

Սոյն միջոցին Պ. Լըքոքի տնկալուչը
ներս մտնելով բան մ'ըսաւ անոր ա-
կանջն ի վար։

—Ներեցէք ինձ, տիկին, ըսաւ մէ-
կէն ոտքի վրայ ելնելով։ Այցելութիւն
մը կը ծանուցուի ինձ, որ գուցէ որդ-
ւոյս անհասկանալի բացակայութեան
հետ առնչութիւն ունի։ Քանի մը
վայրկենէն կը յուսամ ծանուցանել ձեզ
թէ ձեր երկիւղը չափազանց է։

Այս քաջալերական յայտարարու-
թենէն յետոյ, զոր իւր յուզեալ դէմ-
քը սուտ կը հանէր, Պ. Լըքոք դուրս
ելաւ դահլիճէն և իւր սենեակը դիմեց։

Ապահովութեան պետն անդ կ'ըս-

պասէր։ Իւր վաղեմի գործակցին տունը լուելեայն մտնելու եղանակը գիտնալով, փոխանակ դրան զանգակը քաշելու՝ ելեկտրական կոճակը կոխած էր, որ հնչիւն կ'ազդարարէր տնկալչին։

Ազահովութեան պետը տխուր և չփոթեալ էր, վասն զի անկեղծ բարեկամութիւն մ'ունէր Պ. Լբքոքի վրայ, և յոյժ դժնդակ տեղեկութիւն մ'առնոր տալու եկած էր։

Սենեկին մէջ կը ճեմէր, հնար մը խորհելով որպէս զի մեղմով իմացնէ ողբալի լուրն այս տարաբաղդ հօր. յանկարծ ծերուկը ներս մտնելով՝ հարցուց առանց նախաբանի.

—Որդիս ձերբակալուա՞ծ է։

—Իմացե՞ր էք, գոչեց ապահովութեան պետն։ Աւելի լաւ, սիրելի բարեկամս, վասն զի կը դժկամակէի այդ գոյժը տալ ձեզ։

—Այո՛, իմացած եմ։ Տիկին Լբքոնթ, որուն աղջիկն ամուսնութեան պիտի առնու, յատկապէս հոս վազեց և իմացուց ինձ։

—Արդարև անոր տան մէջ...

—Բայց չեմ գիտեր պատճառն։

Ապահովութեան պետին դէմքը տխրեցաւ։

Վայրկեան մը յուսացեր էր թէ գործին ծանր մասը կատարուած էր և առաջին տպաւորութիւնն եղած լըմընցած, բայց այժմ ինքզինք դառն հարկին առջև կը տեսնէր անձամբ հարուածը տալու իւր վաղեմի ընկերին, և ի՜նչ հարուած։

—Տիկին Լբքոնթ, յարեց Լբքոք, լուսանկարի մը պատմութիւն ըրաւ ինձ, որում բնաւ կարևորութիւն չընծայեցի ես։ Լուի չկրնար, ո՛չ մօտէն, ո՛չ հեռուէն, խառնուած լինիլ այն գործին զոր դուք առաջարկած էիք ինձ հետազօտել։

Բայց երբոր նկարագրեց բերող մարդն և անոր ի գործ դրած հնարքն որպէս զի ոստիկանապետին երթալու համոզէ զայն, իսկոյն հասկցայ որ չարաճճին ձեր գործակալներէն մին էր։

Չիս մի՛ տանջէք, կ'աղաչեմ։ Ես

աներկրայ եմ որ գործը ծանր բան մը չէ։ բայց հայր եմ... ասկէ զատ, տը-ղուս գտնուած վիճակը... տասնև հինգ օրէն պիտի ամուսնանայ... ամենա-փոքր վատ համբաւ մը մեծ վնաս կը-նայ տալ իրեն։

Ի՞նչ է գործն։

Ապահովութեան պետն առջին կը նայէր, և չէր փութար պատասխանել։

—Կնոջական արկած մը, այնպէս չէ՞, շարունակեց ծերուկը։ Բայց շատ կը զարմանիմ դիս, վասն զի Ֆրանսա վերադառնալէն ի վեր Լուի օրինակելի դգաստութիւն մ'ունի։ միւս կողմէ սաստիկ սիրահարեալ է օրիորդ Լը-քոնթի։ Բայց վերջապէս տարիքին պա-հանջումն է, և ծանր բան մը չէ։ կը մնայ միայն գայթակղութեան առաջն առնուլ, և կը խոստովանիմ որ գործը խեղդելու համար ինձ օգնելու մասին յոյսս ձեր վրայ է։ մանաւանդ որ նշա-նածն յոյժ նախանձոտ է։

Պատասխան չէ՛ք տար, կը սխալի՞մ արդեօք։ Լուի վստահութեան դեղ-

ծո՞ւմ մ'ըրած է... ո՜հ, ո՛չ, անհնա-ելին է... քանի անգամ մեծամեծ դու-մարներ յանձնուած է իրեն, և երբէ՛ք... ասկէ զատ ես հարուստ եմ... ինքն ալ պիտի լինի... իր խնդրածէն ա-ւելի դրամ տուած եմ իրեն միշտ։

—Դրամը գործ չունի, կարծեմ, այս տխուր պատմութեան մէջ, մրմնջեց ապահովութեան պետը։

—Խօսեցէ՛ք ուրեմն, չէ՞ք տեսներ որ դիս խանձատելով կը մեռցնէ՛ք։

—Քաջասիրտ եղի՛ք, վաղեմի՛ բա-րեկամս։ Ձեզ իմացնելիքս պիտի կե-ղեցէ ձեր սիրտը։ Սակայն աւելի լաւ է որ ես իմացնեմ ձեզ։

Ձեր որդին ամբաստանեալ է իր հեղինակ Արպալէթ փողոցի ոճիրներուն։

Պ. Լը-քոք կուրծքէն զարնուած մար-դու մը պես ընկրկեցաւ, և այլայլեալ ձայնիւ մրմնջեց.

—Որդի՛ս... Արպալէթ փողոցի ոճիրները... խելքի՞ս կո՞ղայ արդ-եօք... կամ գուք փորձեալ կ'ուզէ՛ք դիս... բայց ո՛չ, չափազանց անդը-

թութիւն կը լինի այնպիսի բան մը...

—Ճշմարտութիւնը կ'ըսեմ ձեզ, աւա՛ղ. և եթէ ձերբակալեցի ձեր որդին, հարկադրեալ էի. Դուք ալ, եթէ իմ տեղս լինէիք, ինձ պէս պիտի ընէիք։

—Ապացոյցնե՞ր ունիք ուրեմն։

—Պէտք եղած էն աւելի։ Ձեր որդին դիակնարանն եկաւ ծպտեալ։ Անդ թղթապանակ մը գողցուցեր է անգլիացի գրպանախոյզի մը, որ վայրկեան մը յետոյ բռնուելով, ուրիշ գողոններու հետ թղթապանակն ալ վրայէն ելաւ, որոյ մէջ կային սպանեալ կնոջ լուսանկարը, Պ. Տը Ժանթիյեի անունն և Տիկին Լը-քոնթի անունն ու հասցէն։

Կրնաք գուշակել մնացեալը։ Մեր գործակալը Պուլոյն գնաց և երիտասարդն ինձ բերաւ, զոր անմիջապէս հարցաքննեցի։ Չէի գիտեր թէ ձեր որդին էր... և չէի յիշեր Ժանթիյեի անունն։

—Եւ խոստովանեցա՞ւ, հարցուց Պ. Լը-քոք տագնապալից։

—Ոչ, ընդհակառակն ամեն բան

ուրացաւ, մինչեւ իսկ զանժխտելին։ Կը պնդէ թէ չճանչեր այն կին, և այս առաւօտ իւր գիրը տեսանք նամակի պատեանի մը վրայ, զոր Արպալէթ փողոցի պորտին մէջ գտած էինք։

—Առ առաւելն նշան մ'է այդ։

—Աւելի ծանր նշաններ ալ գտայ իւր Մօն-Թապոր փողոցի բնակարանին մէջ։ Բայց յոյժ դժնդակ է ինձ, սիրելի Լը-քոք, այս մանրամասնութեանց մէջ մտնել ձեզ հետ։ Բաւական լինի ձեզ գիտնալ թէ զինքը ոստիկանութեան պաշտօնատուն բերող կառքին մէջ, ձեր որդին նախ կաշառել ուզեց գործակալն և ապա սպաննել փորձեց. յետոյ ինքզինք սպաննել ուզեց։

—Տարաբաղդ տղան ոչ եւս գիտեր ըրածն... ինքզինք խայտառակեալ տեսնելով... և իւր պաշտած խոսեցեալին դառն կսկիծք մոռածելով... ինքզինք կորսնցուց, վասն զի անմեղ է... կը հաստատեմ զայս... և պիտի ապացուցանեմ։

—Բոլոր սրտէ կը փափաքիմ որ

այդպէս լինի, բարեկա՛մ, բայց չեմ կրնար քսել թէ կը յուսամ, .. վասն զի աներկբայ եմ որ ոճրին յաջորդող գիշերն իրն էր Արպալէթ փոդոցի առանց եկողը։

Բիէտ՛ուշ որ նոյն գիշերը խօսած էր անոր հետ և փախուցած, կատարելապէս ճանչից զայն երէկ իրիկուն։

Բիէտ՛ուշ, որ երկար ժամանակ ծառայած է իմ ձեռքիս տակ, և շատ բարիք տեսած է ինձմէ, նա՛ ձերբակալած է զԼուի։

Ա.յո՛, անշուշտ հարկադրեալ էր իւր պարտքը կատարել. միւս կողմէ չէր ճանչեր իւր ձերբակալած մարդն, և եթէ գիտնար որ ձեր որդին էր, թերևս չպիտի համարձակէր ոստիկանութեան պաշտօնատունը բերել։ Ա.յժմ իմանալով՝ ... բաւական եղած է։

—Կ՚ուզեմ զայն ... կը խօսիմ անոր հետ ... և կ՚օգնէ ինձ իմ ընելիք խուզարկութեանց մէջ ... վասն զի ես անոյշ չեմ Լուիի չքմեղութենէն ... քննութիւնը չէ աւարտած ...։

—Հաղիւ սկսած է։ Ձեր որդին երէկ իրիկուն ժամը տասնեմէկին մնաւ արդելարանն, և այս առաւօտ չհարցաքննեցաւ։ Քննիչ դատաւորը դեռ եկած չէր դատական պաշտօնատուն։ Բայց կը կարծեմ թէ դործը փութապէս առաջ պիտի տանի։ Կէս գիշերին լուր տուուեցաւ ոստիկանութեան վերատեսչին և ընդհանուր դատախազին։

—Եւ այս իրիկուն համայն Փարիզ պիտի գիտնայ թէ որդիս մարդասպա՞ն մ՚է, ըսաւ ծերունին սրտակէզ։ Եւ քանի մը վայրկենէն դժբաղդ աղջիկն որ ներսն է իւր մօր հետ, պիտի իմանա՛յ թէ իւր նշանածը թիակնարանի մէջ կամ կառափնարանին վրայ պիտի վերջացնէ իւր կեանք ... վասն զի պիտի դատապարտեն զայն, կ՚զգամ ... երեւոյթներն անոր դէմ են ... հանրային կարծիքը գրգռեալ է ... չպիտի կըրնայ ինքզինք պաշտպանել ... և ես կ՚երդնում թէ մեղապարտ չէ ...

Պ. Լըքոք արտասուք կը թափէր, և իւր այս դառն կսկիծ շարժեց ապա-

հովութեան պետին սիրան, որ կարեկցութեամբ ծերունւոյն ձեռքը սեղմելով ըսաւ.

—Սիրելի՛ բարեկամ, պէտք չէ խսպառ յուսահատիլ։ Դուք ինձմէ լաւ գիտէք թէ ամենագէշ կերպիւ սկսուած գործ մ'երբեմն կերպարանափոխ կը լինի քննութեան միջոցին։ Ձեր որդին, անկեղծաբար պատասխանելով, կը յաջողի թերեւս հաստատել թէ ինք անուղղապէս և մինչեւ իսկ ակամայ խառնուած է ոճրին։ Կրնան զինքը չքմեղացնելիք իրողութիւններ երեւան հանել։ Եթէ ոճրին կատարուած գիշերն ուրիշ տեղ գտնուիլը կարենայ հաստատել... Եթէ համին անոր հետ երեսուած ժամանակ չճանչէ զայն...

—Ճշմարիտ է. համիը կայ... որ միայն կրնայ լուսաւորել այդ ոսկալի դաղտնիք... Նա միայն կրնայ ապահովապէս ցուցնել ոճրագործն... և չճանչեր որդիս, տարակոյս չունիմ... ուր տեսած կրնայ լինիլ զայն...։ Այդ մարդ Փարիզի մէջ չբնակիր, ինչպէս որ հասկցաք այն փորձէն ի վեր զոր Թելադրեցի ձեզ... և Լուի Փարիզ կը բնակի քանի տարիներէ ի վեր...։ Թող այդ փորձն ընեն, և ամեն բան կը լմննայ։

—Պիտի ընեն, անկասկած եղիք, սիրելի՛դ իմ, և ի սրտէ կ'ըղձամ որ ձեր որդւոյն դէմ չդառնայ։

—Այդ կողմէ երկիւղ չունիմ։ Թոյլ կը տրուի՞ ինձ տեսնել որդիս։

—Այո՛, բաւական դժուարութեամբ հաճեցուցի որ այդ շնորհն չզլացուի այնպիսի մարդու մը, որ բացառիկ ծառայութիւններ ըրած է մեզ։ Միայն թէ դուք միայնակ չպիտի տեսնէք զայն, մինչեւ ցնոր տնօրինութիւն։ Ես ներկայ պիտի գտնուիմ ձեր տեսակցութեան, և՝ եթէ կ'ուզէք՝ առաջինն այս առաւօտ կատարուի։

—Շնորհակալ եմ, վաղեմի՛ բարեկամ։ Մէկ ժամէն ձեր սենեակը կուգամ։

Տակաւին խօսք մ'ալ։ Թոլպիաք գործակցեցա՞ւ այդ ձերբակալման։

—Բնաւին։ Մինչև իսկ ըսեմ ձեզ թէ շատ չզբաղեցաւ այս գործին և մեք ալ շատ գոհ չենք անկէ։ Սակայն հաւանելի է որ գործը չառնուի անոր վրայէն, վասն զի դեռ գործը պարզուած չէ և մեք մեկը չունինք անոր տեղ դնելու։

—Զայդ կ'ուզէի դիտնալ, ըսաւ Պ. Լը.քոք մինչև դուռն երթալով ապահովութեան պետին հետ։

Երբոր այցելուն դուրս ելաւ, Պ. Լը.քոք բնակարանին դուռը փակեց, և իւր աչերը սրբելով և դէմքն յարդարելով դահլիճը վերադարձաւ, ուր Տիկին Լը.քոնթ և աղջիկն իրեն կ'սպասէին սրտատանջ։

—Անհոգ եղիք, ըսաւ անոնց զբաւարթ դէմքով։ Լուի սխալման մը զոհ եղած է։ Իմ անունս տուեր է, և որովհետև պատուաւորապէս ճանչուած եմ, ոստիկանութեան պետերէն մին անձամբ եկաւ պատմեց ինձ իրողութիւնն։ Այժմ ոստիկանութեան պաշտօնատունը պիտի երթամ և յոյս ունիմ

որ ընդհուպ... թերևս այս իրիկուն կը բերեմ ձեզ Լուին։

Թէրէզ ցատկեց Պ. Լը.քոքի պարանոցին փաթթուեցաւ, և մրմնջեց ականջն ի վար.

—Ըսէք իրեն թէ կը ներեմ ինձ պատճառած վիշտը... կը ներեմ պայմանաւ որ իմինէս դատ ուրիշ պատկեր չբերէ ինձ։

Տիկին Լը.քոնթ կուլար ուրախութենէն։

Ծերունին հաստատապէս կը հաւատար իւր որդւոյն անմեղութեան, բայց երևնալ ուզածին չափ քաջայոյս չէր. վասն զի կը հասկնար որ իւր պաշտած որդւոյն գլուխն էր դրաւ այն սարսափելի խաղին, որ պիտի մղուէր ոստիկանութեան գործակալաց թշնամութեան և դատաւորաց նախապաշարման դէմ։

Սակայն, Տիկին և օրիորդ Լը.քոնթ մինչև բնակարանին դուռն յուզարկելէ յետոյ, ո՛չ հառաչ մ'արձակեց, ո՛չ արտասուք մը թափեց։

Ապահովութեան պետին առջև ինքզինք բռնած էր, վասն զի չէր ուզեր կարևորութիւն տալ Լուիի վրայ եղած ամբաստանութեան։

Կանանց առջև ալ ինքզինք բռնած և մինչև իսկ անհոգութիւն կեղծած էր, վասն զի անպատճառ քաջալերել կ'ուզէր զանոնք։

Մինակ մնացած ժամանակն ալ կը բռնէր ինքզինք, վասն զի կ'զգար թէ գործել պետք էր և ոչ լալ։

Սիրտը կը ճմլուէր, բայց ինքզինք կը պնդէր, և փոխանակ կողկողելու, այրաբար իւր որդին պաշտպանելու կը պատրաստուէր։

Միւս կողմէ, անմեղ կը համարէր զայն, և կը յուսար առանց մեծ դժուարութեան ապացուցանել ամբաստանութեան անտեղութիւնը։

Փորձով գիտէր թէ շատ անգամ, եղեռնական քննութեան մ'սկիզբը սբխալ քայլեր կ'առնուին։

Զօրեղապէս համոզուած էր թէ սխալմունք եղած էր, թէ իւր վաղեմի

օժանդակը, Բիէտուշ, տխմարաբար խաբուած էր զուդադիպութիւններէ, և յափշտակուած իւր եռանդէն. թէ երիտասարդը՝ խելայեղեալ՝ չէր կըրցած պէտք եղածին պէս բացատրութիւններ տալ, կամ, որ աւելի դէշ է, ձախող պատասխաններ տուած էր։

Արդ, ինքն Լեքրոք, մականուանեալն պուրէէ, կնճռոտ կամ մթին գործերը պարզելու, մոլար վարկածներն ու դատողութիւններն ուղղելու և սբխալ դիտուած իրողութիւններն իրենց բուն վիճակին մէջ ներկայելու արուեստին մէջ վարպետ ճանչուած էր։

Ուստի անտարակոյս էր որ անկեղծ խոստովանութիւն մը պիտի ձեռք բերէր իւր որդիէն. խոստովանութիւն, որ զայն պիտի արդարացնէր կատարելապէս, և ապացուցանէր թէ պարզ նշաններու վրայ զայն ձերբակալելով ու բանտարկելով մոլորած էին։

Սակայն վիճակին ծանրութիւնն ալ կը հասկնար։

Ոճիրը մեծ ձայն հանած էր։ Լրա-

գիրք միմիայն Աբպալէթ փողոցի դաղտ-
նեաց վրայ կը խօսէին. հանրային կար-
ծիքն յուզեալ էր։ Կը զարմանային որ
մարդասպանը չէր կրցած գտնուիլ, և
կը պարսաւէին ոստիկանութեան դոր-
ծակալներն որք տակաւին չէին կրցած
գտնել զայն։

Ապահովութեան պետն և դատա-
կան պաշտօնեայք, բնականաբար ըզ-
գածուելով, մեծ կարեւորութիւն պի-
տի տային հաստատելու թէ առաջին
բռնուած մարդն ստուգիւ մարդասպա-
նը էր. հետեւաբար վաւերականու-
թիւն պիտի ընծայէին Լուիի վրայ
ծանրցած ամբաստանութեանց, և մեծ
եռանդով պիտի հետախուզէին անոր
գործն։

Ամենէն արդարակորով և ամենէն
լուսամիտ դատաւորք կրնան ուրիշ որ
և է մարդոց պէս զգածուիլ այն խնդ-
րոց մէջ, որք իրենց արհեստական ինք-
նասիրութիւնը կը շօշափեն, և կը դժ-
կամակին ճանչել իրենց սխալմունքն։

Հայր Լբքոք քաջ գիտէր թէ իւր

մղելիք անհաւասար զէնքով մենամար-
տին մէջ երեք ահաւոր հակառակոր-
դաց պիտի հանդիպէր. դատական
պաշտօնատան, ոստիկանութեան և ժո-
ղովրդային զգացման, որ հակամէտ
է միշտ առանց քննութեան դատա-
պարտել ամբաստանեալ մը որ երե-
ւոյթներն իրեն դէմ ունի։

Գիտէր նաեւ որ իւր որդին, եթէ
աղատ իսկ թողուէր ապացոյց չգտնուե-
լուն պատճառաւ, ծանրապէս վիրա-
ւորեալ դուրս պիտի ելնէր այս մարտէն։

Իրաւամբ կամ յանիրաւի, հանրա-
յին կարծիքը շատ չհաւատար թող
տրուած կամ անպարտ արձակուած
մարդոց անմեղութեան, և դատուած
կամ միայն բանտարկուած լինելու ի-
րողութիւնն այնպիսի արատ մը կը թո-
ղու անոնց համբաւին վրայ, զոր յոյժ
դժուարին է սրբել։

Բայց ծերունին կը յուսար տակա-
ւին թէ բաւական էր Լուիի անկեղծ
յայտարարութիւններ ընել, որպէս զի
առօրին իսկ արձակման հրաման մ'ըս-
տացուէր անոր համար։

Եթէ այս ցաւալի արկած այսպէս վերջանար, ոչ ոք կ'իմանար բացի Տիկին և օրիորդ Լէքոնթէ, որք անշուշտ առաւել տրամադիր էին արդահատելու զերիտասարդը, քան անոր անխոհեմութիւնները կշտամբելու։

Այս համոզմամբ զօրացեալ, և վստահ իւր ճարտարմտութեան վրայ, Պ. Լէքոք չուզեց յատակագիծներ յօրինելով ժամանակ անցունել։

Հաղուեցաւ, քանի մը պատուէրներ տուաւ իւր տնկալին, և տունէն դուրս ելաւ ոստիկանութեան արդելանոցն երթալու համար։

Քալ գիտէր այն բանտին ճանբան, ուր ի պահ կը դնեն գողերը, մարդասպանները, մուրացիկներն և մոլորեալ տղայքը։

Փարիզի սալարկին վրայէն ժողովուած մարդկային ամեն բեկորները նախ հոն կ'երթան կը խրին։

Զեն մնար անդ, այլ առժամապէս հոն կը ղրկուին երբոր ինչեւիցէ պատճառաւ կը ձերբակալուին։

Ոճրի և թշուառութեան այս աւանդատունը բաւական նոր ժամանակի շէնք մ'է, և դատական պաշտօնատան ստորին կողմը գրաւած է։

Դուրսէն չտեսնուիր, վասն զի բարձր շէնքերէ շրջապատեալ է, որք կը ծածկեն զայն անցորդաց աչքէն, և քանի մը կողմէ մուտք ունի։

Փարիզի այլեւայլ պահականոցներէն եկող արդելափակ կառքերն Օրլոժի դետափէն կը մտնեն իրենց պարունակութիւնն յանձնելու համար. բայց Սէնթ-Շարէլի բակէն անցնելով ալ կարելի է մտնել հոն։ Պ. Լէքոք անկից անցաւ, վասն զի չէր ուզեր հանդիպիլ ոստիկանութեան դէտերուն և գործակալաց, որք ապահովութեան դիւանին շուրջը կ'երթեւեկեն։

Անոնցմէ ոմանք իւր ժամանակէն ի վեր կը ծառայէին, և կրնային զարմանալ տեսնելով զինքն այնպիսի տեղ մը, ուր քանի տարիներէ ի վեր երեւցած չէր։

Խեղճ մարդը կը կարծէր տակաւին

թէ իւր անունը չպիտի խառնուէր այն գործին, որ կ'զբաղեցնէր զողոյն Փարիզ, և՝ աւելի մեծ իրաւամբ՝ ոստիկանութեան ամբողջ պաշտօնատունը։

Կը յուսար արդեւարանին դիւանատունը գտնել ապահովութեան պետն, որ իր ծածուկ տեսակցութիւն մ'ունենալ պիտի տար բանտարկելոյն հետ, և որ անշուշտ ինքզինք պարտաւորեալ չպիտի համարէր իւր Լեքոք բարեկամին կրած տաղնապն յայտնել իւր ատորագասելոյ։

Անդ տեսաւ զԲիէտուշ, բանտին դրան առջև կեցած, այնպիսի մարդու մը դիրքով, որ ծանուցեալ այցելութեան մը կ'սպասէ։

Ծերունին չէր կրնար ներկրութեամբ տեսնել իւր որդին ձերբակալող գործակալն, և սակայն ինքզինք բռնեց՝ դժգոհ դէմք մը չցուցնելու համար, և ուղղակի անոր քով գնաց։

Բիէտուշ Պ. Լեքոքէն աւելի շուարեալ դէմք մ'ունէր, վասն զի անկեղծաբար կը ցաւէր, որ իւր պարտականութիւնը կատարած ժամանակ մեծ վիշտ պատճառած էր իւր վաղեմի պետին։

Փեղոյրը վար առաւ գլխէն և չբնմեղանաց խօսք մը կը փնտռէր, երբոր Պ. Լեքոք ըսաւ անոր քաղցրութեամբ.

—Է՛, տղա՛ս, երէկ իրիկուն ցոփութիւն մ'բրիր, այնպէս չէ՞։ Բայց չեմ սրդողիր քեզ. քու տեղդ ուրիշներն ալ լինէին, պիտի սխալէին։ Քու պետդ ամեն բան պատմեց ինձ այս առաւօտ, և չեմ զարմանար քու խաբուելուդ վրայ։ Թղթապանակին խաղն աքանչելապէս գործադրուած է, և չընորհակալ եմ իմ մասիս, որ քաղցրութեամբ կատարած ես։ Որդիս պիտի ամուսնանայ, և իւր զոքանչին տան մէջ յարուցուած դայթակղութիւն մը կրնար վնասել իրեն։

Բիէտուշ չէր հաւատար իւր ականջներուն, և կը հարցնէր ինքնիրեն թէ ծերուկին խելքի՞ն եկած էր արդեօք։

—Կարծես կ'երևակայէ թէ տակաւին հարանիք պիտի լինի, կ'ըսէր ինքնիրեն։

—Ամեն բան կը կարգադրի այս առաւօտ, յարեց Պ. Լը-քոք։ Քու պետդ ինձ կ'սպասէ տեսակցիլ տալու համար այդ թեթեւամտին հետ, որ խելք չբրաւ երէկ երիկուն իմ որդիս լինիլն հասկցնել, որպէս զի բաւտը չպառկէր։ Հինգ վայրկենի խօսակցութիւն բաւական է գործը կարգադրելու, վասն զի հարկ է որ պարոն որդիս հշմարտութիւնն ըսէ ինձ։ Պէտք էր որ սկիզբէն այնպէս ընէր, բայց այդ չարաճճիներն իսկոյն կը խելայեղին երբոր ոստիկանութեան գործակալի մը քթին ծայրը տեսնեն։

Կ'ուզեմ որ դու ալ ներկայ գտնուիս, որպէս զի լսես թէ ի՞նչպէս պիտի ցընցեմ զայն։

Բախէ դուռը, ծերունի՛ Բիէտուշ, աստ խօսքի բռնուելով հարբուխ կը լինիմ։

—Ներեցէք, պարոն Լը-քոք, կաղեց գործակալը, ձեր տղան այս պահուս չէք կրնար գտնել իւր խցիկին մէջ... և պետս զիս աստ դրաւ ըսելու համար ձեզ թէ կ'աղաչէ որ սպասէք իրեն։

—Ո՞ւր է Լուի։ Մաղասի բաներ փոխադրուեցաւ։ Բայց ոչ, անհնարին է։

—Ինչիչ դատաւորն սենեակը կրնուեցաւ։

—Արդէ՞ն։

—Այո՛, դատաւորն յանկարծակի եկած է... սովորական ժամէն առաջ... բայց առաջին հարցաքննութիւնն երկար չտևեր երբէք... մանաւանդ որ մեր պետը դեռ ժամանակ չունեցաւ հաւքելու պէտք եղած տեղեկութիւններն, որք անհրաժեշտ են քննութեան համար։ Ուստի տասն վայրկենէն աստ կը վերադառնայ ձեր որդին։

Պ. Լը-քոք տժգունեցաւ։ Գործակալին տուած լուրը վերիվայր կը տապալէր իւր հաշիւներն։ Իւր ամենամեծ փափաքն էր տեսնել զԼուի՝ հարցաքննութեան ներկայանալէն առաջ, որպէս զի հշմարտութիւնը քաղէ անոր բերնէն, և ըստ այնմ պաշտպանողական ընդունելի դրութիւն մը սովրե-

ՊԵՏԿ. ԲԷՐ
ՍԵՐՈԲԵԱՆ - ԻՆՃԻԿԵԱՆԻ
23 ՍԵՊՏԵՄԲԵՐԻ 1929 ԹՎԻՆ

ցընել, զգուշացնել իրեն ուղղուելիք հարցմանց դէմ, և շատ խօսք ընելու, ինչպէս նաև բոլորովին լուռ կենալու վտանգները ցուցնել։

Ոչ թէ հայր Լ.քոք կը հաւատար իւր որդւոյն յանցաւորութեան, այլ կը վախնար որ անխոհեմութիւններ կ'ընէր. միւս կողմէ փորձառութեամբ գիտէր թէ ինքզինք դիւրաւ արդարացնելու համար անմեղ լինիլը բաւական չէ միշտ։

Այժմ շատ ուշ էր։ Դիւանագիրը մ'արձանագրած էր ամբաստանելոյն առաջին պատասխանները, զորս անակնկալ բանտարկման մը շփոթիչ ազդեցութեան ներքեւ ըրած էր, և որք մահապարտական ամբաստանութեան մը հիմ լինելու պիտի ծառայէին։

—Ի՞նչ ըսաւ որդեօք, կը հարցնէր ինքնիրեն Պ. Լ.քոք անձկութեամբ։

Այս անստուգութիւն երկար չտեւեց։

Նրբանց.քին խորէն տեսաւ նախ ապահովութեան պետն, որ կուգար դէտի մը հետ խօսակցելով, յետոյ երկու պահակներու միջեւ, որոց մին դաստակն անցուցած շղթայի մը ծայրէն բռնած էր, կուգար Լուի, այլագունեալ, շուարեալ, գլխակոր, կառափնարան տարուող դատապարտելոյ մը դողդոջ քայլերով։

Նոյն միջոցին հայր Լ.քոք տեսիլ մ'ունեցաւ։

Թուեցաւ իրեն թէ Սէնթ-Շարէլի բարձր պատերուն ձգած ստուերին մէջ կառավնագործիին թեւերը, Ռոքէթի չարագոյժ դուռը, խուժանը, պահակներն և ողորմաբաշխ քահանային կառքը կը նշմարէր, գլխատման այն ամեն սոսկալի և ցած հանդերձանքը, զորս երբեմն յաճախ դիտած էր հանդարտաչօք։

Այս անգամ իւր որդին էր մահապարտն, և վաղեմի ոստիկանը կը դողար խորհելով թէ արդարութեան մատնած եղեռնաւորաց մէջ թերեւս անմեղ մ'ալ կար։

Ապահովութեան պետն հասկնալով

հայր Լը.քոքի զգացած դառն ցաւն, իսկոյն յառաջ քալելով կեցաւ այն կերպիւ որ երիտասարդն, որ աչերը խոնարհած կը քալէր, կարենար անցնիլ առանց իւր հայրը տեսնելու։

Ամբաստանեալն անցաւ արդարեւ առանց գլուխը վեր առնլու, և զայն տանող պահակները բանտէն ներս մղեցուցին զայն։

Ապահովութեան պետն ալ ներս մտաւ անոնց հետ, և Բիէտուշ խոհեմաբար մէկ կողմ քաշուեցաւ։

—Է՛յ, ըսէ.ք նայիմ, հարցուց Գ. Լը.քոք։

—Ի՞նչ ըսեմ, վաղեմի՛ ընկերս, պատասխանեց տխրութեամբ ապահովութեան պետն, բարի բան մը չունիմ ձեզ իմացնելի.ք։ Ձեր որդին հարցաքննեցաւ. կը յուսայի որ կէս օրին միջոցները պիտի կոչուէր ի հարցաքննութիւն, բայց գործն ա՛յն աստիճան ծանր է որ դատաւորը կանխեց ժամը...

—Դժբաղդաբար, վասն զի եթէ յառաջուց տեսած լինէի զԼուի, ամեն բան կը բացատրուէր... իսկ այժմ խեղճ տղան սրտադողէն չփոթելով վըտանգաւոր պատասխաններ տուած կըլնայ լինիլ։

—Ո՛չ, վասն զի դրեթէ բան մը չըսաւ։ Կը պնդէ միշտ թէ սպանեալ կընոջ պատկերը դրպանախոյզը դրած է թղթապանակին մէջ։

—Ինչո՞ւ չէ։

—Անհնարին է, բարեկա՛մ, և ասով ձախող ճանբու մը մէջ կը ձգէ ինքզինք։ Զինքն երեսեցին դրպանախոյզին հետ, որ պնդեց իւր ժխտման վըրայ, և այնպիսի մանրամասնութիւններ տուաւ որք լռեցուցին ձեր որդին։

Եւ այսպիսի պարագայից մէջ լռութիւնը դրեթէ հաւասար է խոստովանութեան։

Միւս կողմէ, մեք ալ արդէն տեղեկութիւններ ստացած ենք Անգլիացոյն վրայ, և հաւաստի ենք թէ երէկ առաւօտ հասած է Փարիզ, հիւսիսային երկաթուղիով։

—Ըսել է թէ Լուիի դրութիւնն է

պնդել թէ չէր ճանչեր սպանեալ կինն։

—Այո՛, բարեկամ, և խօսքը մէջերնիս, այդ դրութիւն անպաշտպանելի է։ Արդէն ըսի ձեզ պատճառն։ Առանց Սըտէ Պէկնոզ խօսքն ընելու, որ իւր տունը գտնուած խաղի թուղթերուն մէջ կը պակսի, անժխտելի է թէ ձեր որդին, կիրակիէն երկուշաբթի լուսցած գիշերն, այն է ոճրին հետևեալ գիշերը, Արպալէթ փողոցի պորմը մտաւ։ Ես հոն էի, և քիչ մ'առաջ ճանչեցի ձայնը։ Բիէտուշ, որ նոյն գիշերը փողոցին մէջ խօսակցեցաւ անոր հետ, ճանչեց զայն յօնքէն, մօրուքէն և դորշ կղբենի ձեռնոցներէն։ Վերջապէս, իւր զգեստուց պահարանէն գտնուեցաւ այն կրկնոցն ու փողպատ, զորս կը կրէր Արպալէթ փողոցն եկած գիշերը։

—Կէս գիշերի՛ն։

—Այո՛, իրիկունն անոր հետ անցուցած էիք, բայց անշուշտ կէս գիշերէն առաջ մեկնեցաք քովէն։

Կը տեսնէք որ ապացոյցներն առատ են, և անշուշտ ուրիշներ ալ պիտի գտնեն։

Այս պատճառաւ է որ, բարեկա՛մ, ձեր ընելիք ամենէն մեծ ծառայութիւնն է՝ յորդորել զինքն որ ակներեւ ճշմարտութիւնն ուրանալու դրութենէն հրաժարի։

—Ուրեմն թոյլ կուտաք ինձ տեսնել զայն։

—Խոստացայ ձեզ, և կ'ուզեմ բրռնել խոստումս, սիրելի՛ Լը.քոք։ Քննիչ դատաւորին ալ յայտնելով՝ հաւանութիւնն ստացայ որպէս զի տեսակցիք ձեր որդւոյն հետ... մէկ անգամ միայն, և իմ ներկայութեամբ։

Կ'ըղձամ որ յաջողիք համոզել ձեր որդին անկեղծ խոստովանութիւններ ընելու, վասն զի, թերևս իւր լռութեամբ կարծեցնել տուածէն նուազ յանցաւոր է։ Ջանացէք որ իւր փաստաբանը կարենայ գոնէ մեղմացուցիչ պարագայներ պաշտպանել։

Ծերունին ցնցուեցաւ այս խօսքը լսելով, որ ոճրագործ ատենին պատկերը կը ներկայէր։

Իւր յոյսերը կը ցնդէին մի առ մի։

Եւ սակայն բռնեց ինքզինք, և անյողդողդ ձայնիւ մ'ըսաւ ապահովութեան պետին.

—Շնորհակալ եմ, սիրելի՛ բարեկամ, ասկէց պակաս չէի սպասեր ձեզնէ. բայց առաջարկ մը պիտի ընեմ, զոր կ'ընդունի՛ք անշուշտ։

Կ'ուզէ՛ք ներկայ դտնուիլ Լուսի հետ ընելիք խօսակցութեանս։ Կը հասկընամ զայս, և չեմ հակառակիր։ Կը փափաքիմ իսկ որ լինելի՛ք խօսքերէն ոչ մին կորսնցնէ՛ք։ Միայն թէ, կը բաղձամ որ Լուսի չգիտնայ թէ դուք կը լսէ՛ք իւր խօսքերը։

Խցիկ մ'ունի՛ք աստ, որոյ տախտակորմին մէջ բացուած ծակերէն կըրնայ խցիկը կեցող մարդ մ'ամեն բան տեսնել և ամեն բան լսել։

—Թիւ 10 խցիկն, որոյ մէջ դրուած է ձեր որդին, դուրսէն հսկողութեան ծառայելու կերպիւ տրամադրեալ է։ Բայց չեմ հասկնար թէ ի՛նչ նպատակաւ կ'ուզէ՛ք որ պահուըտիմ...

—Հասկցնեմ ձեզ, պատասխանեց Ֆերունին տնկուելով։

Ձեր ինձ յայտնած պատճառաբանութիւնք չկրցին համոզել զիս։ Կը կարծեմ, որ այսպիսի նիւթոց մէջ ունեցած հմտութիւնս ու փորձառութիւնս կը ճանչէ՛ք։ Արդ, ես կարծիքէ դատ ուրիշ բան չեմ տեսներ այս գործին մէջ, և ի հարկին կրնամ ապացուցանել թէ լուրջ չեն։ Բայց չպիտի հարկադրիմ մինչեւ հոն հասնիլ. վասն զի բացարձակապէս վստահ եմ թէ Լուսի անմեղ է, և թէ բաւական պիտի լինի ինձ խոստովանցնել զայն, որպէս զի իւր անմեղութիւնն ամենէն աւելի նախապաշարելոց իսկ աչքին ցայտէ։

Ձեր առջև, երեկուան ըրածը կընէ, քիչ մ'առաջ քննիչ դատաւորին առջեւ ըրածը կ'ընէ։ Զխօսիր։

Բայց ինձմէ բան մը չծածկեր, և որովհետեւ ինձ ըսելիքներուն ամենն ալ պիտի կրնաք լսել, հետեւաբար ճշմարտութիւնը կատարելապէս պիտի իմանա՛ք։

Կ'ընդունի՛ք, այնպէս չէ՞։

—Չեմ կրնար մերժել, վասն զի

այնպիսի առաւելութիւն մը կուտաք ինձ, զոր չպիտի համարձակէի խնդրել ձեզնէ։

Բայց զգուշացիք, սիրելի՛ Լը.քոք։ Այդ միջոց վտանգաւոր է։ Ենթադրենք թէ ձեր որդին յանցաւոր է և խոստովանի ձեզ . . . ոչ ևս ազատում կ'ունենայ, վասն զի իմ պարտականութիւնս պիտի հարկադրէ զիս կրկնել ամեն լսածս, և յայնժամ . . .

—Գիտեմ վտանգին մեծութիւնը, բայց կըպնդեմ դիտաւորութեանս վրայ։ Դուք ալ իրաւունք պիտի տայիք պնդելուս եթէ ինձ չափ ճանչէիք որդիս։ Թերութիւններ ունի, բայց բարեսիրտ է, ուղղամիտ է և մանաւանդ անկարող է վատութիւն ընելու։

Եւ գիտէք, վաղեմի բարեկամ, թէ մարդ յստակ կը տեսնէ երբոր մարդիկ ուսումնասիրելու արհեստին կը ծառայէ, ինչպէս որ ես կ'ուսումնասիրեմ երսուն տարիէ ի վեր։ Այս տղան ծնանելէն ի վեր ուսումնասիրած եմ և բերնուց գիտեմ։

Արդ, պիտի ըսէք ինձ թէ ձեր որդին մարդ մ'սպաննած է բարկութեան մը միջոցին։ Կը պատասխանեմ ձեզ թէ կարելի է։ Բայց երբոր ըսէք ինձ թէ սոսկալի մարդասպանութիւն մ'ընել մտածեր էր կանխաւ, և դիակն անհետացնելու միջոցներ հնարած էր, կը պատասխանեմ ձեզ վստահութեամբ թէ ո՛չ, ըրած չէ։

—Կրնայ մէկը բռնութեամբ սկսիլ և հնարիմացութեամբ վերջացնել, ըսաւ ապահովութեան պետը կէս ձայնիւ։

Ցետոյ բարձրաձայն.

—Ոչ ևս առարկութիւն ունիմ, սիրելի՛ Լը.քոք, և եթէ կ'ուզէք արգելարանը մտնել ինձ հետ, ձեզ թիւ 10 խցիկը տանիմ։

—Խօսք մ'ալ ըսեմ, յարեց ծերունին։ Հաւանական չէ որ ամեն ինչ Լուիի դէմ լինի։ Ծանր նշաններ կ'ամբաստանեն զայն, կը խոստովանիմ ես ալ . . . բայց ամբաստանութեան մէջ տկար կէտեր պէտք է լինին։ Կրնա՞ք ցուցնել ինձ՝ առանց դատական քննութեան վնասելու։

—Տկար կէտեր . . . չեմ տեսներ . . . ի մեծ ցաւ սրտիս . առ առաւելն քանի մը պարագ կէտեր կը մնան քննութեան մէջ։ Օրինակի համար, գիշերն Արպալէթ փողոցի պորմն եկող մարդն ըսած էր Բիէտուշի թէ ոստիկանութեան մարդ էր ինք , և մինչև իսկ գործակալի տոմնակ ցոյց տուած էր անոր , և այն տոմնակ չդտնուեցաւ ձեր որդւոյն բնակարանին մէջ։ Ճշմարիտ է թէ տակաւին մանրամասնօրէն խուզարկուած չէ բնակարանն ։

—Ուստի՞ց կրնայ ձեռք բերած լինիլ։ Ոստիկանութեան պաշտօնատան մէջ մարդ չճանչեր , և բացարձակապէս անգէտ է ժամանակաւ ձեր օժանդակներէ մին լինելուս ։

—Ասկէ զատ , ըսաւ ապահովութեան պետն առանց պատասխանելու Պ. Լեքոքի փաստին , տակաւին չերեսուեցաւ արկղը տանող համրին հետ ։ Եթէ , ինչպէս որ կը վախնամ , համրը ճանչէ զայն , ձեր որդւոյն կորուստը վճռեալ է ։ Մինչև այն ժամանակ կը-

նայ ինքզինք պաշտպանելու փորձ ընել։

—Եթէն աւելի լաւ կը պաշտպանէ ինքզինք , ըսաւ Պ. Լեքոք վստահութեամբ , վասն զի պիտի ապացուցուի թէ համրն երբէք տեսած չէ զայն , և ես կը խնդրեմ որ հնար եղածին չափ շուտով երեսուին ։

—Այսօր կամ վաղիւ ։ Խնդիրն է գիտնալ թէ քննիչ դատաւորին գրասենեկին մէջ թէ այլուր պիտի երեսուին ։ Այս մասին կարծիքները տարբեր են ։

—Ո՞ւր է համրը ։

—Մաղասի բանտն է , և ձեր որդին ալ հոն պիտի փոխադրի քառասուն և ութ ժամէն ։ Ես բացարձակ իշխանութիւն ունիմ երեսուելու գործը կարգադրելու և տեղն ալ որոշելու ։ Այս մասին պիտի խորհրդակցիմ Թոլպիաքի հետ ։

—Թոլպիաքի՞ ։ Կ'ուզէի տեսնել զայն։

—Ժամէ մը պիտի գայ , և դոհ պիտի լինի խօսակցելով ձեզ հետ . ի սրտէ կը ցաւի ձեր վրայ , և տարակոյս

չունիմ որ շատ ուրախ կը լինի եթէ գործը ձեր որդւոյն նպաստաւոր ելք մ'ունենայ։

Կը տեսնէք, սիրելի Լը.քոք, ո՛ր-չափ անկեղծութեամբ կը վարուիմ ձեզ հետ։ Ձեզ ըստ բաւականի ճանչելով, աներկմիտ եմ թէ դուք ալ ձեր կողմանէ չպիտի վրիպիք մեր պայմանադրութենէն։ Դուք միայնակ պիտի տեսակցիք ձեր որդւոյն հետ կէս ժամ, և տարակոյս չունիմ թէ ո՛չ բանիւ, ո՛չ ալ նշանացի չպիտի իմացնէք անոր թէ ես մոիկ կ'ընեմ ձեր խօսակցութիւնը։

— Պատուոյս վրայ խօսք կուտամ։

— Եկէք ուրեմն։ Մի՛ մոռնաք թէ դուք ուղեցիք ձեր որդին անցունել այդ փորձէն։

Ասուած տայ որ նպաստաւոր լինի իրեն։

Ապահովութեան պետն երկու հարուած տուաւ արգելարանի դրան, որ անմիջապէս բացուեցաւ։

Բանտերուն դռները միշտ դիւրաւ կը բացուին մտնել ուզողներուն։

Պ. Լը.քոք ներս մտաւ ապահովութեան պետին ետեւէն, Բիէտուշ ալ իրրեւ տողապակ։

Արգելարանի պաշտօնեայք փոխուած էին այն ժամանակէն ի վեր, ուր վաղեմի հետախոյզը կը յաճախէր ոստիկանութեան պաշտօնատունն, և միայն դիւանագիտն ու պահնորդ մը ճանչեցին զայն։

Պետին հետ կարճ խօսակցութենէ մը յետոյ, յիշեալ պահնորդին յանձնուեցաւ տանիլ զՊ. Լը.քոք թիւ 10 խցիկն, որ սալարկեալ և ապակեպատ մեծ սրահի մը ձախակողմն էր։

Կարծես թէ Ատլանտեան Ովկիանոսի մէջ բանող շոգենաւի մը սրահն էր՝ օթեակներով շրջապատեալ։

Միայն թէ այս օթեակները բնակող ուղեւորք երբէք դուրս չեն ելներ տախտակամածին վրայ օդ առնելու։

Արգելարանին մէջ հասարակաց սրահ մ'ալ կայ, ուր կը շեղջակուտեն մշնայարկի ուղեւորներն, այսինքն այն թշուառներն որք զատ օթեակի մէջ դըր-

ուելու արժանի չեն դատուիր, ստորին դասու խառնաղանճն, որք հանապազորեայ ցանցին մէջ բռնուելով կը հաւաքուին։

Այս վերջիններուն առջեւ իրիկունները մաղաւոց անկողիններ կը նետուին, որոց վրայ խառնիխուռն կը պառկին. ցերեկներն ալ թոյլ կը տրուի անոնց խօսակցիլ և երգել։

Քանզի այդ դժոխոց մէջ շատ կ'երգեն, և բանաստեղծ մը, որ Խղճէ Խոյրէ օրէ՝՝՝ն կոչէ զայն, կեղծիքը քիչ մը հեռի կը մղէ։

Խցիկներու բնակիչք նուազ զուարթ են։

Ասոնց մէջ փակուած անձինք ընկերային աւելի բարձր դասերէ են, կամ ծանր ոճիրներով ամբաստանեալ, որոց առանձնութիւնն հարկաւոր կը դատուի։

Պ. Լուի Տը Ժանթիյեի այդ տխուր շնորհին արժանի լինելու ամէն իրաւունքն ունէր։ Այս պատճառաւ, բանտը մտնելէն ի վեր՝ միայն ապահովութեան պետն և պահնորդները տեսած էր, որք

գնացեր զինքն առեր էին հարցաքննիչ դատաւորին քով տանելու համար։

Իւր զարմանքն և սրտայուզութիւնն յոյժ մեծ եղան, երբոր իւր վրայ փակուած դրան նիգերուն ճռընչիւնը լսելէ յետոյ իւր հօրն առջեւ տեսաւ ինքզինք։

Ծերունին թեւերը բանալով՝ սրտին վրայ սեղմեց զայն, մինչ բանտապանը կը մեկնէր։

Այս սրտաշեղու�երկար չտեւեց։

Պ. Լբքոք գիտէր որ կորսնցնելու ժամանակ չունէր, ուստի զօրութիւն ունեցաւ համառօտելու իւր հայրական գգուանքն, որպէս զի շուտով սկսի այն խօսակցութիւնն որ իւր որդւոյն բաղդը պիտի որոշէր։

Թեթեւ շունչ մ'իմացուց իրեն թէ ապահովութեան պետն ուկնդրութեան մտած էր քովի խցիկը։

— Սիրելի՛ Լուիս, ըսաւ Պ. Լբքոք անյողդողդ ձայնիւ, ոստիկանութեան գործակալներու առջեւ չես այժմ, ոչ ալ դատաւորի. ինձ հետ ես, միայն

ինձ հետ։ Ես, պէտք չունիմ քեզ ըսելու, համոզուած եմ որ դու սխալման մը զոհ եղած ես։ Բացատրէ ինձ, խոսէ առանց շփոթելու, և բան մի՛ պահեր ինձմէ։

Երիտասարդը տժգունեցաւ, դէմքին գիծերը կծկեցան։ Ցայտնի կը տեսնուէր թէ սրտին մէջ հակառակ զգացմանց բուռն պայքար մը կար, և հարկ եղաւ զօրեղ ճիգ մ'ընել իւր վրայ որպէս զի պատասխանէր։

— Բան մը չունիմ քեզ հասկցնելու, հա՛յր իմ. դու գիտես ի՛նչ բանի համար կ'ամբաստանեն զիս։ Պարտիս գիտնալ ի՛նչպէս պաշտպանած եմ զիս, որովհետեւ տեսած ես զիս ամբաստանողներն։

Ապշելով այս յայտարարութենէն, Պ. Լէքոք երկու քայլ ընկրկեցաւ և գոչեց.

—Լաւ լսեցի՞։ Խելքի՞ս եկած է արդեօք։ Ո՛րդեակ, այնպիսի ամբաստանութեան մ'ենթարկեալ ես, որ կրնայ քեզ ի կառափնարան տանիլ. ամբաստանութիւն մը, որ քու մէկ խօսքովդ կրնայ ցրիլ... և այն խօսքը չե՞ս ուզեր արտասանել... երբոր մեք միանակ ենք... երբոր ոչ ես երկիւղ ունիս թէ անխորհուրդ պատասխան մը կրնայ չարաչար մեկնուիլ։

—Զիս արդարացնել փորձեցի և չը յաջողեցայ. ուստի ոչ ես պիտի փորձեմ։

—Բայց ինքզինքդ կորսնցնե՞լ կ'ուզես ուրեմն։ Զիս մեռցնե՞լ կ'ուզես սրտիս ցաւէն ու ամօթէս։ Ո՞վ կը մղէ զքեզ ինքնասպան լինելու, խեղճ հայրը մեռցնելու։ Մի թէ երջանիկ չե՞ս, սիրելի չե՞ս։

—Էի, ըսաւ Լուի խուլ ձայնիւ։

—Կը կարծես ուրեմն թէ ոչ եւ՞ս ես։ Մոռցա՞ր որ ես քեզ համար միայն կ'ապրիմ... մոռցա՞ր որ նշանած մ'ունիս...։

—Թէրէ՛զ... տեսա՛ք զայն։

—Այո՛, տեսայ։ Այս առաւօտ իմ տունս դիմեր էր մօրը հետ։ Խեղճ կանայք սարսափելի գիշեր մ'անցուցեր

են։ Բայց ես խրախուսեցի զանոնք, և դժուարին ալ չէր. վասն զի չեն հաւատար և երբէք չպիտի հաւատան թէ դու մարդասպան մ'ես..., և ես խօսք տուի անոնց թէ այս իրիկուն քեզ Պուլոյն պիտի տանիմ... ուր քեզ կ'սպասեն...։

Լուի ցնցուելով խոնարհեցուց գլուխն, որպէս զի ծածկէ իւր արտասուքը։

—Տե՛ս, յարեց եռանդեամբ ծերունին, որ կ'ղդար թէ ճիշդ զարկած էր։ Օրիորդ Լէքոնթ այնչափ յուսալից է քու ազատմանդ վրայ, որ ըսաւ ինձ ծիծաղելով.

«Այնչափ ուրախ պիտի լինիմ զայն վերստին տեսնելով, որ քաջութիւն չը պիտի ունենամ կշտամբելու. բայց պէտք է որ հասկցնէ ինձ թէ ինչո՞ւ համար կնոջ մը պատկերը կը կրէր իւր սրտին վրայ։»

—Այդպէ՞ս ըսաւ ձեզ. պատկերին խօսքն ըրաւ ձեզ։

—Այո՛, և աներկբայ եմ որ դու

դժուարութիւն չպիտի կրես անոր նախանձութիւնն անդորրելու, վասն զի դու չես ճանչեր այն Անգլիուհին՝ զոր սրիկայ մ'սպաննած է դաշոյնով, ինչպէս նաեւ չես ճանչեր այն մարդը՝ զոր թոպամահ սպաննած են Արպալէթի փողոցի պորմին մէջ։ Միթէ դու կը յաճախե՞ս տարիամոլ կանանց և խառնակեաց վաճառականներու քով, դու որ անարատ մանկամարդուհի մը կը պաշտես, և երբէք ամէն ի վեր կեանքդ անոր մօրը տունը կ'անցունես, յոյժ հեռի Մուֆթար թաղի այդ Նէլի աշտարակէն։ Միթէ գիտե՞ս Արպալէթի փողոցին ո՛ւր լինիլը։

—Թէրէզ չպիտի ներէ ինձ երբէք, մրմնջեց Լուի՝ փոխանակ հօրը սրտայոյզ բացադարձութեան պատասխանելու։

—Լո՛ւռ կը կենաս, գոչեց տարաբաղդ հայրը. չե՛ս գթար ուրեմն իմ վրայ, նշանածի՛դ վրայ. չե՛ս տեսներ ուրեմն թէ կը յուսահատեցնես զիս։

—Աստուած կը կարդայ սիրտերուն

մէջ։ Աստուած պիտի դատէ զիս. ես արդէն ըսածէս աւելի բան մը չունիմ ըսելիք զիս արդարացնելու համար։

—Ուրեմն կը հաստատես միշտ թէ այն լուսանկար քուկդ չէր ... թէ առանց քու գիտութեանդ թղթապանակիդ մէջ դրած են։

—Այո՛։

—Ուրեմն ինչո՞ւ դիակնարանը գընացիր ... ծպտեալ։

—Անմիտ հետաքրքրութիւն մը զիս հոն մղեց։ Եւ որովհետեւ չէի ուզեր որ ամբոխին մէջ տեսնեն, հին զգեստներ հագայ հոն երթալու համար։

—Այդ ըսածդ կրնայ պաշտպանուիլ, ըսաւ Պ. Լը.քոք, տեսնելով այն վստահութիւնն որով խօսիլ սկսած էր որդին։ Բայց ... այն խազի թուղթերը՝ն որ գտնուեցան բնակարանիդ մէջ... սեղանի մը վրայ շարուած ... թաքստոցի մը մէջ ...։

—Ցիշատակ մ'է, պատասխանեց երիտասարդը քիչ մը վարանելէ յետոյ։

—Ցիշատա՛կ, ի՞նչ կը նշանակէ ...։

—Այո՛, Գերմանիոյ յիշատակ մ'է։ Հայտէլպէրկի մէջ ուսում առած ժամանակս, ինչպէս որ գիտես, սիրահարած էի աստուածաբանութեան տօքթէօրի մ'աղջկան։ Երկար ժամանակ կ'անցուցինք ի միասին։ Աղջիկը կը սիրէր հոմբէրուն բանալ, հասկնալու համար թէ պիտի ամուսնանայինք արդեօք։ Այն օր յորում պարտաւորեցայ ծանուցանել իրենց թէ Ֆրանսա կը վերադառնայի, տեսայ որ թուղթերուն վրայ ծռած էր, որք կ'ըսէին իրեն թէ իմ կինս պիտի լինէր ... հոմբէրուն յաջողած էր ...։ Պահանջեց որ իւր երջանկութեան այդ տարօրէն գրաւականն հետս տանիմ, և երդում առաւ ինձմէ որ թուղթերը նոյն կարգաւ շարեմ սեղանի մը վրայ Փարիզ, տանս մէջ, և այնպէս թողում մինչեւ որ հայրս հաւանութիւն տայ մեր միութեան։

Տակաւին տարփացած էի այն աղջկան, երբոր դու զիս առիր Փարիզ բերիր, հակառակ իմ բաղձանաց, ինչպէս որ կը յիշես. և ես ալ կատարեցի

այդ տղայական առաջարկ։ Վեց կամ եօթն տարիէ ի վեր խաղի թուղթերը շարուած կը կենան նրբանցքի մը մէջ, ուր չեմ մտներ երբէք։

—Այդ իրողութիւն չպատմեցի՞ր քննիչ դատաւորին։

—Ի՞նչ օգուտ ունի, պիտի կարծէր թէ սուտ մը կը հնարէի։ Միւս կողմէ գիտեմ որ աննշան զուգադիպութիւն մը չկրնար հիմ լինիլ լուրջ ամբաստանութեան։

—Արդարեւ ոչ ոք կրնայ համաձակիլ մարդու մը գլխատութիւնը խնդրել երդուեալ դատաւորներէ, առարկելով թէ այդ մարդ թղթախաղ մ'ունի, որոյ մէջ Սը+է դէկէն մը կը պակսի։

Բայց ... նամակի պատեանն որ գտնուած է սպանեալ կնոջ բնակարանին մէջ ... կը պնդեն թէ հասցէն քու գիրդ է։

—Կը սխալին։

—Եւ ապահովութեան պետն որ ճանչեր է քու ձայնդ։ Եւ գործակալն որ ճանչեր է քու դէմքդ ու կերպարանքդ։

—Կը սխալին։

Լուի յստակ կը խօսէր այժմ, տրուած պատասխանները վարանոտ չէին ինչպէս տեսակցութեան սկիզբը։

Դիտող մը —և յոյժ խորամանդ մը կար տախտակոմին ետին— դիտող մը կրնար անշուշտ նշմարել թէ երիտասարդն՝ իւր հօր յորդորանքէն զգաստուելով՝ խոստովանութեանց ճանբուն մէջ մտնելու կէտին հասնելէ յետոյ, յանկարծ որոշեր էր վերջնապէս մատնել բացարձակ ուրացմանց դրութեան մէջ, զոր ընդունած էր ի սկզբան։

Թերեւս այն դիտող պիտի նշանակէր նաեւ թէ այդ դրից և լեզուի փոփոխում կ'սկսէր այն վայրկենէն, ուր Պ. Լը.քոք օրիորդ Լը.քոնթի նախանձոտ սրտատանջութեանց խօսքն ըրած էր։

Հայրը կարծելով միշտ թէ որդին դատական սխալման մը զոհ եղած էր, ըսաւ անոր.

—Սիրելի՛ որդեակ, երեւոյթ կ'ամբաստանեն քեզ, և ժամանակ պէտք պիտի լինի որպէս զի ճշմարտութիւնն

երեւան ելնէ։ Դու մինակ պիտի մնաս, վասն զի չեմ յուսար որ նորէն քեզ տեսնելու շնորհը կարենամ ձեռք բերել։ Շարունակէ պաշտպանել քեզ և մի՛ վհատիր։ Քու վրայ տեղեկութիւններ պիտի առնուի։ Ես ալ պիտի առնում, և պիտի ապացուցանեմ որ անմեղ ես։

Կը կասկածի՞ս յաջողելուս վրայ, աւելցուց ծերունին որ Լուսիի երեսին վրայ կը կարդար։ Դու չես գիտեր որ գաղտնիք պարզելն իմ արհեստս է։ Մինչեւ ցայսօր ծածկեցի քեզնէ թէ ժամանակաւ ես դատական հետախուզութեամբ կ'զբաղէի։ Կ'ուզէի յաւիտեան ծածկել զայս քեզնէ, բայց քեզ սրտապնդելու համար . . .

—Ես գիտէի, մրմնջեց երիտասարդը։

—Գիտէի՞ր, ի՞նչպէս, գոչեց Պ. Լը.քոք անխոհեմաբար։

—Օր մը . . . Թուղթերուդ մէջէն . . . ոստիկանութեան գործակալի տոմսակ մը գտայ . . . որոյ մէջ քու անունդ գրուած էր։

Եթէ կայծակ ընկներ Պ. Լը.քոքի ոտքին տակ, չէր կրնար այնչափ սարսափահար ընել զՊ. Լը.քոք, որչափ այս պատասխանն ըրաւ։

Որդին կը խոստովանէր թէ ոստիկանութեան լրտեսի տոմսակ մ'անցուցեր էր իւր ձեռք, և ապահովութեան պետն, որ տախտակորմին ետեւէն մը-տիկ կ'ընէր, լսած էր այս խոստովանութիւն։

Հեգ տղան, մէկ խօսքով ցրեր էր այն բովանդակ տպաւորութիւն, զոր իւր ժխտական յայտարարութիւնք ը-րած էին այնպիսի մարդու մը վրայ, որոյ վկայութիւն յոյժ ծանրակշիռ էր։

Կարելի՞ էր չկարծել թէ այն տոմսակ ճշդիւ նոյնն էր, զոր մարդասպանը ցոյց տուած էր Բիէտուշի՝ Արպալէթ փողոցի տան վանդակորմին առջև։

Սակայն վշտաբեկ հայրը կը յուսար տակաւին թէ բացատրութիւն մը կրնար դարմանել չարիքը կամ գոնէ թեթեւցնել։

—Դու երբէք խօսք ըրած չես ինձ այդ գիւտիդ վրայ, ըսաւ Պ. Լէքոք անձկութեամբ։

—Ոչ, կը վախնայի որ կը վշտացնեմ քեզ, պատասխանեց Լուի՝ խոնարհեցընելով աչերն։

Յետոյ գլուխը վեր առնլով.

—Պէտք ունի՞մ ըսելու թէ առաջուանէն ոչ նուազ կը սիրեմ քեզ, յաւրեց խանդաղատանօք։

—Շատ ժամանակ կա՞յ որ գիտես զայդ, հարցուց Պ. Լէքոք դողալով։

—Քանի մ'օր միայն։ Բայց պէտք է որ խոստովանութիւն մ'ընեմ քեզ։ Այն տոմսին վրայ ձեր անունը տեսնելուս վրայ դժգոհելով՝ այրեցի զայն։

—Անմիջապէ՞ս։

—Այո՛. սենեկիդ վառարանին մէջ կրակ կար, հոն նետեցի։ Դէ՞շ ըրի։

—Ո՛չ... ո՛հ, ո՛չ... գոչեց ծերունին քիչ մ'սփոփանք զգալով այս վերջին յայտարարութենէ։ Ես շատ տաւրինեցի ի վեր հրաժարած եմ այն պաշտօնէն՝ զոր ճաշակիս յարմար դատելով ընտրած էի և միշտ պարկեշտօրէն վարած եմ։ Կ'ուզէի ջնջել անոր յիշատակը... քու պատճառաւդ... այն ընտանեաց պատճառաւ, որուն հետ պիտի կապուիս։

Եւ սակայն ոստիկանութեան ապահովական ճիւղի պատուական պետին հետ ունեցած հին յարաբերութեանցս շնորհիւն է որ այս միջոցիս կրնամ խօսակցիլ քեզ հետ։

Մի՛ կարծեր թէ թշնամի է քեզ. կը ցաւի վրադ և ի բոլոր սրտէ կ'ըղձայ որ անմեղութիւնդ ապացուցուի... վասն զի աստ ամէն մարդ կը սիրէ զիս...։ Նոյն իսկ քեզ ձերբակալող գործակալը ժամանակաւ իմ օժանդակներէս մին էր, և քեզ համար ինձ խօսած ժամանակ աչքը լի էր արտասուօք։

Այս ամենը կ'ըսեմ քեզ որպէս զի չվհատիս, սիրելի՛ զաւակս։ Խորհէ որ ես միակ մտածութիւն մ'ունիմ... ապացուցանել թէ դու յանցաւոր չես...։ Եւ շուտով կը հասնիմ բաղձանքիս։ Ես քու գործդ շատ աւելի կնճռոտ գործեր պարզած եմ։

Կ'ուզե՞ս գիտնալ թէ ո՛ւրկէ պիտի սկսիմ։ Արկղի մը մէջէ դիակ մը գըտնուած լինելուն պատմութիւնը կարդացած ես լրագրաց մէջ... գիտես նաև թէ արկղը տանողն համր մ'էր, որ չէր կրցած կամ չէր ուզած որ և է բացատրութիւն տալ։ Այն համրին անշուշտ կը ճանչէ մարդասպանն, որ քանի մը քայլ առջևէն կ'երթար համրին բըռնուած փողոցին մէջ...

—Լա՛ւ, լնդմիջեց Լուի, թող երեսեն զիս այդ համրին հետ։

—Ուրեմն, հարցուց հայրն ուրախութեամբ, կը փափաքիս որ երեսեն քեզ անոր հետ։

—Անշուշտ։ եթէ չառաջարկեցի արդէն քննիչ դատաւորին, այն պատճառաւ էր որ վաղ կամ անագան պիտի կատարուի այդ գործ։

—Ա՛, գոչեց Պ. Էրքոք, եթէ կրնայի երբէք կասկածիլ քու վրադ, այժմ ոչ եւս կարելի է։

Բարեկամս, ապահովութեան պատը, խոստացաւ ինձ որ այսօր կամ վաղը տեսնես համրն։

Երբոր հաստատուի թէ չճանչեր քեզ, մեացեալն ինքնին կը քալէ. ես կ'ստանձնեմ ամբաստանութեան ամեն կէտերը մի առ մի ցրել։ Եւ դժուարին չէ, վասն զի չեն բռներ զիրար։

Պիտի ջանամ նեղը լծել այն անդլիացի դրպանախոյզն, որ այսպէս իւր վրայէն նետել կ'ուզէ այդ վատնդաւոր լուսանկար։ Մուդիւ շատ հետաքրքրաշարժ բան կը լինի հաստատել այնպիսի անդդամի մը խօսքին։

Բայց կը շատախօսեմ, և վայրկեանք թանկագին են։ Համբուրէ զիս, սիրելի որդեա՛կ, և համբերէ։ Երթամ տեսնեմ բարեկամս... համրին հետ երեսուելու գործը կարգադրեմ անոր հետ, և յետոյ ելնեմ Պուլոյն երթալով քոջալերեմ զՏիկին Էրքոքթ...։ Պիտի ըսեմ աղջկանը թէ երեք շաբաթէն պիտի ամուսնանաք և Իտալիա պիտի ուղեւորիք։

—Ըսէ անոր թէ կը սիրեմ զինքն և թէ իրմէ զատ ոչ ոք սիրած եմ երբէք, մրմնջեց Լուի իւր հօր թեւերուն մէջ ընկնելով։

Իրենց հրաժեշտի ողջոյնը կարճ եղաւ, վասն զի Գ. Լըքոք կ'աճապարէր երթալ խոսիլ ապահովութեան պետին հետ, և չէր երկբայեր թէ նպաստաւոր տրամադրութեան մէջ պիտի գըտնէր զայն։

Բայց իւր այս վստահութիւնը զեղչել հարկ եղաւ իրեն՝ երբոր տեսակցեցաւ անոր հետ դիւանատան ետևը գտնուած սենեկի մը մէջ։

—Սիրելի՛ բարեկամ, ըսաւ մէկէն ապահովապետը, կը խոստովանիմ ձեզ թէ ձեր որդւոյն հետ ըրած խօսակցութիւններդ լսելէս յետոյ ալ առաջուանէն աւելի լուսաւորեալ չեմ։

Բռնած դիրքն և տուած բացատրութիւններն առաւել ևս չեն բեռնաւորեր զայն, կը ճանչեմ զայս, բայց չեն ալ չքմեղացներ։

Մինչև իսկ յոյժ ծանր խոստովանութիւն մ'ալ ըրաւ յակամայից։

—Սենեկէս գտած ոստիկանութեան գործակալի տոմսա՞կն ըսել կ'ուզէք. բայց չէ կրցած գործածել զայն, որովհետև անմիջապէս կրակը նետած է։

—Այնպէս կ'ըսէ։ Բայց դատաստանն հարկադրեալ չէ հաւատալու։ Եւ նկատեցէք սա ցաւալի պարագայն ալ։ Ձեր տոմսակը քսան տարուան էր, և Բիէտուշ լաւ կը յիշէ թէ փողպատաւոր մարդն հին ձևով տոմսակ մը ցոյց տուած էր իրեն։

—Բիէտուշ քաջ տղայ մ'է, բայց դուք ալ գիտէք ինձ չափ թէ քիչ մը դիւրահաւան է, և դիւրահաւան մարդը կը սխալի։

—Օ՛, ես չեմ քններ, այլ միայն բարի և յոռի հաւանականութիւնները կը նկատեմ։

Ձեր որդւոյն պատմած տարփական պատմութիւնն հաւանական է, բայց դիւրաւ չկրնար ստուգուիլ։

—Ի՞նչ պատճառաւ։ Բաւական է գրել ի Հայտէլպէրկ և տեղեկութիւն ստանալ։

—Լա՛ւ, բայց չեմ յուսար որ իւր եօթն տարի առաջուան տարփուհին յօժարի այժմ խոստովանիլ թէ պատե-

բաղմէն առաջ յոլովութիւններ բացած էր Ֆրանսացւոյ մը հետ։

Ասկէց զատ, լուսանկարն, որոյ մէջ սպանեալ կինը թուղթեր շարելու զբաղած կ'երևի, կրնայ տպաւորութիւն ընել երդուեալ դատաւորաց վրայ... ընդհանուր դատախազը դիտել պիտի տայ անշուշտ թէ ամբաստանեալն Անգլիա բնակած է և թէ կինն անգլիացի է։

—Դրպանախոյզն ալ անգլիացի է։

—Կը պատասխանեմ ձեզ թէ այդ ալ պիտի քննուի թէ՛ աստ և թէ՛ ի Լոնտրա։ Դրպանախոյզն արդէն աներկբայ է իւր վեցամեայ բանտարկութեան վրայ։ Եթէ այն կողմէ տեղեկութիւնք կան սպասելիք, պիտի ըստացուին. կը վախնամ միայն որ ձեր որդին չբմեղացնելու չծառայէն։

—Պիտի տեսնենք։ Ես կը կարծեմ որ բովանդակ գործն ադոր մէջ է։ Բայց առ այժմ ուրիշ բան մ'ալ կայ փորձելու։

—Անշուշտ։ Պիտի ստուգենք նախ թէ ամբաստանելոյն քայլերը կը յարմարի՞ն այն քայլերուն, զորս ոճրագործը թողած է ձիւնին մէջ։ Դիտէք որ կաղապարել տուած եմ այն ոտքի նշանները։ Ասկէց զատ, երեսելու գործը կայ դրացիներուն հետ, ածխավաճառին, ածխավաճառուհւոյն, և այլոց հետ...։

—Կը յուսամ որ համբէն պիտի սկսիք։

—Արդէն միաքս դրած էի, բայց ձեր որդին լսելէս ի վեր կ'ուզեմ շուտով կատարել զայդ։

Ուստի անմիջապէս կարգադրեցին զայդ գործ և... ահա Թոլպիաք կուգայ ճիշդ յարմար պահուն՝ իւր կարծիքը մեզ տալու։

Գոնէը լուելեայն ներս մտեր էր։ Յարգական քաղաքավարութեամբ մոռնչունեց զՊ Լրքոք, և ըսաւ.

—Իմացայ, պարո՞ն, ձեր գլխուն եկած փորձութիւնն, և կ'աղաչեմ զձեզ հաւատալ թէ մեծ ցաւ կ'զգամ այդ բանի վրայ։

Եթէ ոստիկանական վարչութիւնն ինձ

յանձնէ հետախուզել այդ ողբալի գործ, աներկմիտ եղիք թէ ամեն ճիգ կը թափեմ . . . առանց պարտականութենէս վրիպելու . . . հաստատել ձեր որդւոյն անմեղութիւնը։

Ծերունին շնորհակալ եղաւ յուզեալ սրտիւ։

—Իրաւունք ունէիք ըսելու ձեր որդւոյն թէ աստ ամեն մարդ ձեր կողմն է, յարեց ապահովութեան պետն։

Ա.յս օրէն պիտի ձեռնարկենք մեծ գործին։

Ըսէք ինձ, Թոլպիա՛ք, ամբաստանեալն համրին հետ պիտի երեսենք։ Դուք կ'զգաք այս փորձի կարեւորութիւնն։ Ա՞ստ կատարենք թէ Մաղասի բանտին մէջ, ի՞նչ կ'ըսէք։

—Որովհետեւ իմ կարծիքս հարցընել կ'ուզէք, պատասխանեց Թոլպիաք վայրկեան մը խորհելէ յետոյ, դիտողութիւն մը պիտի ընեմ որ, կարծեմ, անկարեւոր չէ։

Փորձը վճռական լինելու համար պէտք է որ ինչ ինչ պայմաններու մէջ

կատարուի։ Համրն ուշիմ մարդ է . . . դունէ այսպէս ըսին ինձ . . . վասն զի տեսած չեմ զայն . . . պատճառներ ունէի, և, փակագծի մէջ, իմացած եմ թէ պաշտօնատան մէջ զարմացողներ կան եղեր զայն տեսնել չուզելուս վրայ, և քիչ մնացեր է որ զիս իբրեւ անոր մեղսակից ամբաստանեն, աւելցուց Թոլպիաք ծիծաղելով։

—Ա.յդպէս չէ. միայն թէ կը տեսնէի որ փոյթ չունէիք։

—Եթէ խօսակցած լինէի անոր հետ, չէի կրնար սա առաջարկն ընել ձեզ. համրն . . . որ զիս չճանչեր, լաւ ուշ դրէք այս կէտի . . . ես տանիմ Պ. Լուի Լը.քո.քի բնակարանն։

—Ինչո՞ւ հոս չկատարուի։

—Վասն զի, եթէ այդ մարդ ծառայած է ամբաստանելոյն,—ներեցէք ենթադրութեանս, սիրելի՛դ իմ Պ. Լը.քո.ք,—տարակոյս չմնար թէ, իւր տէրը Մաղասի կամ արգելարանի խցիկներէն միոյն մէջ տեսնելով, դիւրաւ կը հասկնայ թէ նա ալ իրեն պէս բռնուած ու

բանտարկուած է, և կատակերգութիւն կը խաղայ, ինչպէս որ խաղցած է այլուր։

Բայց եթէ ա՛յն կերպիւ կատարուի այդ գործ, որ կարծէ թէ զինքն ազատ կը թողուն, դիւրաւ կուգայ ինձ հետ Մոն-Թապոր փողոց, ուր Պ. Լուի պիտի սպասէ անոր... ձեր հսկողութեան ներքեւ անշուշտ։

—Լաւ չեմ հասկնար։

—Ի՞նչպէս չէք հասկնար թէ, ամբաստանելոյն յանցաւորութեան համոզուելու համար, բաւական պիտի լինի ձեզ ներկայ գտնուիլ այդ երեսման, առանց համբին գիտնալուն թէ դուք անդ էք։

Երկուքէն մին. կա՛մ համբը մեղսակից է Պ. Լուի Լբքոքի, և այն ժամանակ, երբոր զայն տեսնէ, կարծելով թէ միայնակ է անոր հետ, նշանացի կամ կամ ուրիշ կերպիւ գոհութիւն պիտի յայտնէ այդ անակնկալ տեսակցութեան համար. կա՛մ, ընդհակառակն, երբէք տեսած չէ զՊ.

Լուի, և յայնժամ, ինչպէս որ աւելի հաւանական է, բնաւ ցոյց չըներ, և Պ. Լուիի անմեղութիւնը լիապէս կը հաստատուի։

Մեք առաջին կը լինինք, դուք և ես, վկայելու թէ փորձը վճռական եղաւ. ակներև տեսնուեցաւ թէ ամբաստանեալն երբէք յարաբերութիւն ունեցած չէ արկղի մէջ գրուած դիակը տանող մարդուն հետ, և թէ, հետեւաբար, մարդասպանը չէ և չկրնար լինիլ։

Համոզուած եմ թէ մեր տեղեկագրին վրայ քննիչ դատաւորը կը պարտաւորի անմեղութեան հրամանագիր մը տալ և արձակել զամբաստանեալն։

Իսկ իւր գրասենեկին, կամ Մազասի և կամ արգելարանի մէջ երեսում մը՝ երկբայութեան մէջ կը թողու զայն, վասն զի պիտի կասկածի միշտ թէ համբրն զՊ. Լբքոք չճանչելը կը կեղծէ։

—Ա՛յո՛, բաւ ապահովութեան պետը, ձեր առաջարկած միջոցը վճռական ապացոյց մը կ՚ընձեռէ մեզ։

Իմ մասիս ես չեմ դժկամակիր գործադրել զայդ և ինձմէ կախեալ է, վասն զի դրեթէ լիազօր իշխանութիւն տրուած է ինձ։

Սակայն բոլորովին հակառակ լինելով դատական սովորութեանց, պարտ կը համարիմ նախ իմացնել քննիչ դատաւորին։

—Նա չընդդիմանար այս կերպիւ կատարուելիք տեսակցութեան մը, եթէ առաջարկէք որ ինքն ալ ներկայ գըտնուի ձեզ հետ։

—Ներկայ գտնուի՛ . . . պահուըտա՞ծ։

—Անշուշտ։ Ես Մոն-Թապոր փողոցի տունը չեմ գիտեր, բայց անշուշտ քանի մը սենեակներէ կը բաղկանայ։ Դուք այն սենեակներէն միոյն մէջ կը կենաք, Պ. Լուի Լըքոք միւսին մէջ։ Հաղորդակցութեան դուռը կիսաբաց կը մնայ. ձեր կեցած սենեկին մէջ լոյս չդրուիր, իսկ երեսման սենեկին մէջ շատ լոյս կը վառի, որով դուք ամեն բան կը տեսնէք, տեսարանի մը ներ-

կայ գտնուածի պէս. իսկ անոնք չեն կրնար ձեզ տեսնել։

—Արդարև դէշ խորհուրդ չէ։

Կը մնայ գիտնալ թէ հաճոյ կը լինի՞ վաղեմի բարեկամիս, աւելցուց գործակալապետն։

—Ո՛չ միայն հաճոյ է ինձ, գոչեց Պ. Լըքոք, այլ ամենամեծ շնորհ մ'ըրած կը լինիք ինձ՝ եթէ այսօր իսկ գործադրէք։

—Լաւ խորհեցա՞ք այսպիսի երեսման մը հնարաւոր հետեւանաց վրայ։ Քաջ կը հասկնա՞ք թէ համրին մէկ շարժումը, դէմքին մէկ խաղը կրնայ ձեր որդւոյն դատապարտութեան պատճառ լինիլ։ Եթէ մատնէ ինքզինք, —և պիտի մատնէ երբոր ճանչէ զամբաստանեալը՝ չգիտնալով որ զինքը կը դիտեն— եթէ մատնէ ինքզինք, ոչինչ կրնայ հակակշռել այդ առաջին տեսարանին աղետաբեր ազդեցութիւնն, ո՛չ ձեր որդւոյն ցոյց տալիք անզգածութիւնն, ո՛չ համրին ձեւափոխութիւնն երբոր իւր մեղսակցին յօնքերուն պռստումէն ազդարարուի։

—Այդ ամենն ալ գիտնալով կը պնդեմ, վասն զի անկասկած եմ Լուսի համար։

Եթէ ասա լինէր, նա ալ ինձ հետ պիտի աղաչէր ձեզ որ անյապաղ կատարէք այդ փորձ, որ յստակապէս պիտի ապացուցանէ ամբաստանութեան անտեղութիւնն։

Եւ շնորհակալութիւն կը յայտնեմ Պ. Թոլպիաքի՝ թէ՛ որդւոյս և թէ՛ իմ կողմէ։

—Տեսակցութեան կատարումէն յետոյ կրնաք յայտնել այդ շնորհակալութիւն, ըսաւ Թոլպիաք ժպտելով։ Ես կ'ըղձամ որ գոհացուցիչ արդիւնք մ'ունենայ ձեզ համար, և անկեղծօրէն խոսելով, իմ այս ըղձանքս բաւական արժէք ունի, վասն զի իմ շահս կը պահանջէ որ յանցաւորը գտնուի, և կը խոստովանիմ թէ արդէն ձեռք անցուցած կը կարծէի։

—Ի՞նչպէս պիտի ընենք, աւելցուց ապահովութեան պեսը՝ կարճ կտրելու համար Պ. Թոլպիաքի քաղաքավարութիւնները։

—Կարծեմ թէ շատ պարզ է մեր ընելիքն։ Այս իրիկուն, օրինակի համար ժամ ութին միջոցները, կուգաք կ'առնուք ասա Պ. Լուսի Լբքոք, և կը տանիք իւր բնակարանը, ծանուցանելով իրեն թէ նոր քննութիւնք պիտի լինին իւր տան մէջ, և ինքն ալ ներկայ պիտի գտնուի։

Վասն զի, ես կը կարծեմ, և անշուշտ քննիչ դատաւորն ալ ինձ պէս պիտի խորհի՝ թէ պէտք չէ խմացնել ամբաստանելոյն թէ զինք պիտի երեսն հարին հետ։

—Փորձն այդ պայմանաւ միայն կրնայ զօրութիւն ունենալ, ըսաւ հայր Լբքոք առանց վարանելու։

—Շատ ուրախ եմ տեսնելով որ համամիտ է ինձ այս կէտի վրայ, սիրելի՛ պարոն։

Արդ կ'ըսենք թէ կ'առնուք կը տանիք զԼուսի Լբքոք Մոն-Թապոր փողոց. ժամ ութ ու կէսին միջոցներն հոն կը հասնիք. վեր կ'ելնէք, զգուշանալով անշուշտ որ դռնապանը չկրնայ նշմա-

րել թէ իւր վարձակալը ձերբակալ ե-
ղած է։

Պահակները փողոցը կը թողուք, բացի մէկէն, որ ամենէն ուշիմը պարտի լինիլ և որ ձեզ հետ բնակարանը մտնելով՝ նախասենեկին մէջ պիտի կենայ։

Ամբաստանեալը դահլճին մէջ կը նստեցնէք և քովի սենեկին մէջ խուզարկութիւններ ընել կը կեղծէք։

Տասը վայրկեան կամ քառորդ մը յետոյ դրան զանգակը կը հնչէ։ Համին է եկողը։ Պահակը կը բանայ դուռը։ Համրը զայն սպասաւոր կը կարծէ, և դահլիճը տանել կուտայ զինք։

Մնացեալը ձեզ կը պատկանի, սիրելի՛ վարպետ։

—Ցոյժ լաւ։ Բայց ո՞վ պիտի երթայ հանէ Համրը Մաղասէն և հոն տանի։

—Ես ինքն, եթէ անպատեհութիւն մը չէք տեսներ։ Զիս չճանչեր, և թոյլ տուէք ինձ նշմարել տալ ձեզ անցողակի թէ օ՛րչափ իրաւունք ունէի զայն մինչև այսօր տեսնել չուզելու, վասն զի, եթէ զիս ճանչէր, կը կը կասկածէր իմ վրայ, և պէտք է բացարձակապէս որ իւր յոժար կամօք գայ իմ հետ։

—Ի՞նչպէս պիտի ընէք որ իւր յոժար կամօք գայ ձեր հետ։

—Նախ՝ կ՛աղաչեմ ձեզ հրահանգտալ, որպէս զի Մաղասի դիւանատան մէջ այնպէս ընեն, որ մեր մարդը կարենայ հաւատալ թէ այս անգամ վերջնապէս կ՛արձակեն զինք։

Ուստի արձակման համար պէտք եղած օրինական գործողութեանց ամենն ալ պէտք է կատարուին։

Բաւական խելք ունի անշուշտ հասկընալու համար որ եթէ արձակման հրամանը լուրջ չլինէր, այսպէս չէին վարուեր։

—Ձեր կարծածէն աւելի ուշիմ է, և գէշն այն է որ արդէն խաղցած ենք այդ կատակերգն՝ արդելարանէն դուրս հանելու համար զայն։ Բայց, վերջապէս, կ՛ընդունիմ որ բանտէն ելնելու

համար դժկամակութիւն չցուցներ։

Ի՞նչ պատրուակաւ պիտի մնտենաք իրեն երբոր Մագասի դռնէն դուրս ելնէ։

—Զեմ մնտենար իրեն. հեռվէն նը-ման կ'ընեմ։

—Բացատրեցէք յստակօրէն, սի-րելի՛ բարեկամ։

—Իմ գաղափարս այս է։ Կը յի-շէք անշուշտ թէ երկու պահակներն յայտնեցին թէ արկղաբարձ մարդը ձեր-բակալած ժամանակին կառքի մը հե-ռանալուն ձայնը լսած էին։

Ամենուս ալ կարծիքն է թէ այն կառք համրէն առաջ գնացող քաղա-քացիին կ'սպասէր, որ երբ իւր մեղ-սակցին բռնուիլը տեսաւ, իսկոյն կառ-քը մտաւ ու հեռացաւ։

—Կատարելապէս։

—Արդ, ես կ'եզրակացնեմ այդ ի-րողութենէ թէ համրը կառք ունեցող մարդու մը կը ծառայէր, վասն զի դիակ փոխադրելու համար հրապարակի կառք չկրնար գործածուիլ։ Ուստի, եթէ

համրը, դուրս ելած ժամանակ, տը-նական կառք մը կեցած տեսնէ բան-տին դրան առջեւ և կառքին քով վա-յելչագեստ պարոն մը որ քաղցրու-թեամբ զինքը կոչէ, ներելի է ենթադ-րել թէ չփախչիր. հաւանական իսկ է թէ կը մնտենայ տեսնելու համար թէ որո՞ւ հետ է գործը։

—Կարելի է, բայց շուտով կը տես-նէ թէ սխալած է։

—Ինչէ՞ն. երկու պահակներուն տե-սած քաղաքացին միջահասակ էր... ինձ պէս... կրկնոցին օձիքը մինչեւ ականջներուն վրայ քաշած էր... ես ալ այնպէս պիտի ընեմ...։

—Եւ կը կարծէք թէ մեր մարդը կը հաճի ձեր կառքը մտնել։

—Տարակոյս չունիմ, և անգամ մը որ հոն մտնէ, մնացեալն ինքնին կը քալէ։

Խօսակցութեան մասին հոգ չունիմ, վասն զի հնարին չէ խուլ—համրի մը հետ։

Եթէ նշանական շարժումներ ընէ,

ես ալ կ'ընեմ, և առանց դժուարութեան կ'անդորրեմ զայն, վասն զի կը հաւատացնեմ թէ զինքն այնպիսի տուն մը կը տանիմ, ուր կրնայ կատարելապէս ապահով լինիլ։

Խորհեցէք անգամ մը. Մաղասի բանտէն դուրս կ'ելնէ, տնական կառք մը կը տեսնէ որ իրեն կ'սպասէ։ Բնականաբար կը խորհի թէ իր քաղաքացին բաւական ազդեցիկ մարդ մ'է որ զինքն արձակել կուտայ բանտէն և անձամբ կուգայ զինքն առնուլ տանիլ։

Եւ երբ նշմարէ թէ ես այն ոգաքացին չեմ, անոր բարեկամներէն մին կը համարի՝ անոր կողմէ ղրկուած։

—Բայց երբոր Պ. Լէքրոքի տան առջեւ հասնի։

—Եթէ արդէն գնացած է հոն առանց վարանելու ներս կը մտնէ։ Եթէ, ընդհակառակն, դժկամակութիւն ցուցնէ, ես կը հաճեցնեմ զայն։

Արդ, սիրելի՛ վարպետս, համաձա՞յն ենք։

—Այդ միջոց քիչ մը կնճռոտ է,

ըսաւ ապահովութեան պետը քիչ մը խորհելէ յետոյ, բայց ուրիշ որ և է միջոց ալ նոյնչափ կնճռոտ կրնայ լինիլ։ Միայն թէ, դուք չէք կրնար միայնակ ստանձնել այդչափ կարևոր գործողութեան մը պատասխանատուութիւնն։

—Հաւատացէք որ ես ալ չեմ ուզեր։ Եթէ համրն՝ առանց ուշադրութիւն ընելու ինձ՝ մեկնի երթայ, դըժուարութեան մէջ կ'ինամ, վասն զի չեմ կրնար ետեւէն հսկողութիւն ընել կառքով։

Ուստի կը խնդրեմ որ գոնէ երկու գործակալ հսկողութեան դնէք Մաղասի դրան առջեւ, և երկու գործակալ ալ արդէն տեսած լինին մեր մարդը։

—Բիէտուշ և Բիկաշ յոյժ լաւ կը կատարեն ձեր գործն։

—Այո՛, բայց ծպտեալ, վասն զի պէտք չէ որ համրը ճանչէ զանոնք։

—Տարակոյս չկայ։ Կէս աւուր մօտ դրասենեակս եկէք։ Մինչեւ այն ժամանակ ես խորհրդակցած կը լինիմ քննիչ դատաւորին հետ, և կ'որոշենք մեր ը-

նելի.քն երկու գործակալաց հետ։ Գործը փափուկ է, ամեն բան նախատեսել, ամեն բան ճշդել պէտք է, ժամը, ձեր կառքին կենալու տեղը, բբռնուելի.ք ընթացքն երբոր մեր մարդը փախչի։

—Ադոնք ի միասին կը կարգադրեն.ք, սիրելի՛ վարպետ, և ես աներկրայ եմ որ ամեն ինչ լաւ կը կատարուի։

—Կը ներէ՞.ք ինձ որ այս իրիկուն ձեր տունն սպասեմ ձեզ, տեսակցութենէն յետոյ, հարցուց Պ. Լը.քո.ք ապահովութեան պետին։

—Այո՛, վաղեմի՛ բարեկամ, պատասխանեց պետը սեղմելով ծերունւոյն ձեռքն, և շատ ուրախ պիտի լինիմ եթէ բարի լուր մ'ունենամ ձեզ տալու։

Թոլպիա.ք վերստին եռանդուն բարեկամութեան յայտարարութիւններ ըրաւ, և հայր Լը.քո.ք՝ զգածեալ իրեն ցոյց տրուած համակրութիւններէն՝ մեկնեցաւ լի յուսով և շնորհակալութեամբ։

Ժ.

Գիշերը բաւական յառաջացած էր արդէն, երբոր Մաղասի ծառուղւոյն մէջէն սեւաթոյր և միաձի գեղեցիկ կառք մ'երեւցաւ, զոր մուշտակներով ծածկեալ կառապան մը կը վարէր։

Այս գեղատեսիլ կառք թեթեւապէս ձախ կողմ դարձաւ և բանտին պատին առջեւ կեցաւ տասն քայլ հեռի կամարակապ մեծ դռնէն, որ ձերբակալ բերող ոստիկանական կառքերու միայն կը բացուէր։

Երկու մարդ վար իջան և ուղղուեցան դէպ այն զառիվերն որ Լիոնի երկաթուղւոյն կայարանը կ'ելնէ, և որ նոյն միջոցին դրեթէ ամայի էր, որովհետեւ իրիկուան կառախմբոց ժամը չէր տակաւին։

Մէկը փնտռել կը թուէին, և մին ըսաւ միւսին ցած ձայնիւ.

—Պարտէին արդէն իրենց տեղը գտնուիլ։ Արհեստ մ'այսպէս չկատարուիր՝ եթէ լաւ կատարել ուզուի։

—Քիչ մը ներողամիտ պէտք է դէտ-

նուիլ այդ մարդոց, սիրելի՛ վարպետ, պատասխանեց միւսն։ Այդ մարդիկ երկաթէ չեն, և եթէ դաւաթ մը դինի խմելու համար դինեատուն հանդիպին, ես չեմ սրդողիր։

Մնաց որ, աւելցուց ժամացոյցը նայելով, ուշ մնացած չեն, մեք կանուխ եկած ենք։

—Երկար ժամանակ չունինք մեր հրահանգները տալու, և եթէ տակաւին հինգ վայրկեան ուշանան, ամիս մը պիտի զրկեմ թոշակէ։

Զիս խիստ կը գտնէք։ Բայց դիտէ՞ք, Թոլպիաք, որ եթէ այդ գործակալը զինուորական հնազանդութեամբ ծառայելու չհարկադրին, անհնարին է լաւ գործ տեսնել։

Անգլիոյ մէջ չենք, ուր վարդեղրով ոստիկանութիւն կ'ընեն։

Ասկէ զատ, մեր այս գիշերուան գործն հասարակ գործ չէ. ծանր պատասխանատուութիւն մ'ստանձնած ենք, դուք և ես, և սխալ գործ մը բաւական է մեզ ամենաձախող վիճակի մը մէջ դնելու։

Բաւական դժուարութիւն կրեցի ձեր առաջարկած խաղն այս իրիկուն խաղալու համար. Ջանանք որ չկորսընցընենք։

—Ձենք կորսնցներ, սիրելի՛ վարպետ, մեր նախազգուշութիւնք լաւ կարգադրեալ են։

—Հոգ չէ. բայց ես կ'ուզեմ բացարձակապէս որ գործողութիւնը կրրկնել տանք մեր աչաց առջեւ։ Նախ ձեր կառքը պարտի կենալ ճշդիւ այն տեղն՝ ուր կեցած է այս միջոցիս։

—Անհոգ եղիք. իմ հայեացքս անվրիպելի է, և ես հոս եմ պէտք եղած հրամանները կառապանիս տալու համար։

—Վստահելի՞ է այդ կառապան։

—Վստահելի է և խորհրդապահ։ Վեց ամսէ ի վեր քովս է, բնաւ շատախօսութիւն ըրած չէ միւս ծառայներուս, ո՛չ ալ դռնապանիս հետ։ Եթէ ընէր, կ'իմանայի, կ'ըսէին ինձ։

—Եւ չի՞ զարմանար երբոր մէկ գիշերուան մէջ երկիցս կ'սպասեցնես զայն Մաղասի պատին առջեւ։

—Կը կարծէ թէ Լիոնի կառախմբով գայիք մէկու մը կ'սպասեմ։

—Լաւ, ուրեմն որոշուած է։ Երբոր մեր երկու թիւերուն հետ խօսինք, դիս ոստիկանութեան պաշտօնատունը կը տանիք, և դուք հոս կը վերադառնաք, այն կերպիւ որ ժամ ճիշդ ութին աստ գտնուիք։ Համրին դուրս հանուելուն համար այդ ժամը նշանակած եմ անօրէնին։

—Օ՛, ես չեմ վրիպիր։ բայց բոլորովին անօգուտ է աւելի կանուխ գալը։ վասն զի դուք կէս ժամէ առաջ չէք կրնար Մոն-Թապոր փողոցն հասնիլ։ իսկ իմ ձիուս համար քսան և հինգ րոպէ բաւական է աստի հոն երթալու։

Լաւ միտքս եկաւ։ Երեսուն մէն յետոյ համրը կառքով աստ պիտի վերադարձնէք, այնպէս չէ՞։ Ես անձամբ պիտի բանտարկեմ զայն։

—Գործակալներուն պիտի յանձնեմ... դեռ չեկան անիրաւները։ Բայց ի՞նչ կը դուշակէք տեսակցութեան արդիւնքէն։

—Իրաւ որ, կը խոստովանիմ ձեզ թէ տակաւին որոշ կարծիք մը չունիմ։ Պահ մ'առաջ ըսի թէ արդիւնքը նըպաստաւոր պիտի լինի Պ. Լաբոք Տը ժանթիլեիի, բայց հայրն հոն էր, և ես չէի ուզեր վշտացնել զայն։

—Ես համոզուած եմ, սիրելի՛ս, թէ Լաբոք բարի մարդ մ'է, զոր ի սրտէ կը սիրեմ. բայց որդին ժանտաժուտ տեսակէն սրիկայ մ'է և ես գրեթէ աներկբայ եմ թէ գլխատման պիտի դատապարտուի։

—Տարակոյս չկայ որ եթէ համրը զայն ճանչէ, գործը լմնցած է։

Ասկէ զատ, ես գրած եմ Անդլիա, ուր քանի մը տարի կեցած է իւր պատանեկութեան ժամանակ, և կը կասկածիմ որ անդ ճանչած լինի Արպալէթ փողոցի կինն։ Եթէ Անդլիայէն սպասած տեղեկութիւններս քանի մ'օրէն հասնին, ինչպէս որ կը յուսամ, թերեւս նոր բաներ պիտի իմացնեմ ձեզ։

—Կ'ըղձամ... բայց աւասիկ, եթէ

չեմ սխալիր, մեր մարդիկը մեզ կը փնտռեն։

Արդարև կայարանին շրջակայները լուսաւորող կաղերուն լուսով բեռնակիր մ'և երկաթուղւոյ սպասաւոր մը կը տեսնուէին, որք դէպի կայարանը կուգային։

Բեռնակիրը Բիկաշ էր. սպասաւորն ալ, որ Բ. Լ. Մ. սկզբնատառերով դրէլխարկ մը դրած էր, Բիէտուշ էր։

Ապահովութեան պետն առաջին նայուածքով ճանչած էր զանոնք։

Երկաթուղւոյ գործաւորի կերպարանքով մարդու մը հետ կը խօսակցէին։

—Ի՞նչ կ'ընեն այդ չարաճճիները, մրմռաց ապահովութեան պետը. պէտք է որ քիչ մը թոթվեմ ադոնք։ Ի՞նչ բոսել է անծանօթ մարդու մը հետ խօսակցիլ պաշտօնավարութեան ժամանակ, երբոր զիրենք իբրեւ Լիոնի երկաթուղւոյն կայարանի պաշտօնեայ կարծեցնել կ'ուզուի... պատուոյս վրայ կ'երդնում թէ չեմ հասկնար զայս։

Բիէտուշ նշմարած էր անշուշտ իւր պետը, վասն զի իսկոյն բաժնուեցաւ իւր դէմն եկող ընկերէն, որ ծանրաքայլ դէպի զառիվերն երթալ սկսաւ։

—Կուգա՞ք վերջապէս, գէշ չէ, ըսաւ զօրավարն իւր յամեցեալ զօրականաց։ Արդէն Մազասի դրան առջև պահպանութեան կեցած պարտէիք լինիլ, և փողոցին մէջ կը դեգերիք։

—Ներեցէք, տէ՛ր իմ, պատասխանեց 29 թիւը. մեր հսկողութեան ժամանակ նշանակուած է ժամ ութ, մինչդեռ հիմա ժամ վեցը քառասուն անցած է։

—Ո՞վ է այն մարդ, որ կը շաղակրատէր ձեզ հետ։

—Օրլէանի երկաթուղւոյն ընկերութեան աքծանող մը, որ ժամանակաւ իրեն ծանօթն եղող և այժմ Լիոնի գծին վրայ աշխատող գործաւորի մը վրայ տեղեկութիւն կը հարցնէր ինձ։ Եթէ ամպերէն վար ընկածի պէս դէմք մը ցուցնէի, կը հասկնար իմ կեղծ լինիլս. ուստի սուտ մը յերիւրեցի։ Մարդ

մ'իւր դերը լաւ պարտի կատարել, տէ՛ր իմ։ Ցայնժամ ընդանոր (գաւաթ մը գինի) մ'առաջարկեց ինձ դիմացի գինետունէն, և չկրցի մերժել... խաղցած դերիս պատճառաւ։

—Բաւ է։ Փոխանակ դէմդ ելնող ո և իցէ մարդոց հետ երթալ գինի խմելու, պաշտօնդ պարտէիր կատարել։ Եթէ այդպէս շարունակես, կը ճանրեմ քեզ։

—Բայց, տէ՛ր իմ, ըսաւ Բիէտուշ վեհերոտ կերպիւ, երէկ գոհութիւն յայտնեցիք ինձ, և աներկբայ եմ որ Պ. Թոլպիաք դժգոհ չէ ինձմէ։ Մինչև իսկ կը կարծեմ թէ շահեցայ ինձ խոստացած պարգեւը...։

—Մինչեւ որ համրը չերեսուի, չը պիտի տամ քեզ այն պարգեւն, ըսաւ Թոլպիաք։ վասն զի, վերջապէս, եթէ սխալած լինիս, եթէ երիտասարդը չէ մեր փնտռած ոճրագործը, տարակոյս չկայ որ բան մը չեմ պարտիր քեզ։

—Ճշմարիտ է, պատասխանեց Բիէտուշ քիչ մը շփոթելով։ Մինչև իսկ...

հաւատացէք ինձ եթէ կ'ուզէք... բայց, այս պարագայի մէջ, կը մնի-թարուիմ եթէ չստանամ։ հայր Լըքո՝ պատուական մարդ մ'է։ իւր որդւոյն վրայ հոգի կուտայ...

—Լաւ՝ և մտիկ ըրէ, ընդմիջեց ապահովութեան պետը։ Կը տեսնե՞ս սա կեցած կառքն։

—Այո՛, տէ՛ր իմ, անցած ժամանակս դիտեցի։ սեւ ձի, մուշտակ հագած կառավար, Թուխ-կապոյտ սընտուկ։ Սխալելու երկիւղ չունիմ։

—Լաւ, այդ կառքով պիտի երթանք։ ժամ ութէն հինգ վայրկեան առաջ պիտի դայ կենայ ճշդիւ այդ տեղ ուր հիմա կը գտնուի։

—Օ՛, կը ճանչեմ։ և որովհետև արդէն հասկցուցած էք ինձ մեր ընելիքը...

—Պիտի կրկնեմ քեզ տրուած հրահանգը։ Դու և Բիկաշ Մաղասի դրան մուս կողմը պիտի կենաք, պատին մօտ, և իրարու հետ խօսակցիլ պիտի ձեւացընէք...։ Դրան քով կեցող պահա-

կին պատուէր պիտի տրուի որ բան մը չըսէ ձեզ։

—Հազիւ կրնայ տեսնել մեզ, տէ՛ր իմ. մեք գիտենք կենալու կերպը։

—Ծամ ճիշդ ուրիշ, կը հասկնա՞ս, համրը դուրս պիտի ելնէ ալ կողմի փոքր դռնէն։ Նոյն վայրկենին Պ. Թոլպիաք դուրս պիտի ելնէ կառքէն և նշանացի առ ինքն պիտի կոչէ համրն։

Ահա այդ միջոցին չորս պիտի բանաք ձեր աչքը։

—Կը բանանք։

—Եւ ուշմութեամբ պիտի վարուիք։ Եթէ համրը Պ. Թոլպիաքի հետ կառքը մտնէ, խաղը կատարուած է. իսկոյն կառք մը կը նստիք, և կուգաք մեզ կը դտնէք Մոն-Թապոր փողոցն։

Եթէ, ընդհակառակն, համրը խուսափէ, և հեռանալով պտքոի ըստ դիպաց, առանց տեսնելու իրեն եղած կոչը, մեղմով կը լրտեսէք զայն։

Այս պարագայի մէջ ձեր պարտքը պիտի լինի աչքէ չվրիպեցնել զայն, և կէս ժամու չափ յետոյ քոմը երթալ,

երբոր տեսնէք թէ ո՛ւր երթալը չգիտեր։

Դուք բաւական լաւ ծպտեալ լինելով չկրնար ճանչել ձեզ. ուստի կը հաճի ձեր հետ գալ եթէ ճարտարութեամբ վարուիք, և քալելով կամ կառքով, ինչպէս որ ընտրէք, ինձ կը բերէք։

Ես չպիտի մեկնիմ Մոն-Թապոր փողոցի տունէն, մինչեւ որ համրը չգայ անդ Պ. Թոլպիաքի կամ ձեզ հետ։

Հասկցա՞ր։

—Հասկցայ, տէ՛ր իմ։

—Նայէ որ անմտութիւն մը չընես. կը վնասուիս։

Այս սպառնալից պատուէրէն յետոյ, ապահովութեան պետը Թոլպիաքի ձեռքէն բռնելով դէպի կապոյտ կառքը գնաց։

Բիէտուշ տեսաւ որ երկուքն ալ այն թեթեւ կառքը նստելով հեռացան Լիոնի փողոցէն։

—Կարծես թէ մեր պետը մեզ համբակ զօրականներու տեղ դրած է, ը-

սաւ ուսերը թոթվելով։ Ժամէ մ'ի վեր պատուէրներ կուտայ մեզ։ Եւ սակայն դժուարին բան մը չէ մեր ընելիք գործը, և . . .

Նոյն միջոցին ձեռք մը դրուեցաւ իւր թեւին վրայ, և ձայն մ'ըսաւ իրեն.

—Առանց հրամայելու ձեզ, ընկե՛ր, կը ճանչէ՞ք այն երկու մարդիկն որ կառքը նստելով մեկնեցան։

Բիէտուշ մէկէն ետին դառնալով տեսաւ որ Օրլէանի երկաթուղւոյն գործաւորն էր, որուն հետ բարեկամացած էին գինետան մը դրամասեղանին առջեւ։

Զարմանալով զայն իւր ետին կեցած տեսնելուն վրայ, առաւել եւս զարմանալով ըրած հարցման վրայ, Բիէտուշ պատասխանեց խոհեմութեամբ.

—Գնացող երկու քաղաքացիներ՞ն։ Երբէք տեսած մարդիկս չէին։ Ես այնպիսի շքեղ կառքեր ունեցող անձանց հետ գործ չունիմ։ Տեղեկութիւն կը հարցնէին ինձ այն նոր գծին վրայ՝ որ

բացուեցաւ դէպի Պուրկոյն . . . որպէս թէ չէին կրնար երթալ կայարանին մէջ կախուած ծանուցումն ընթեռնուլ . . . բայց այդ հարուստներն ամենն ալ նոյն են. հոգ չեն քներ անհանգիստ ընել խեղճ պաշտօնեայ մը, որ մէկ ժամ արձակուրդ ունի։

—Ներողամիտ եղիք, ըսաւ մարդն. որովհետեւ կը խօսակցիք անոնց հետ, կարծեր էի . . .

—Կը ճանչէք ուրեմն զանոնք։

—Մին կը ճանչեմ։

—Ո՞րը։

—Մեծը. մօրուք չունեցողը։

—Կառքին տէրը պիտի լինի, ըսաւ Բիէտուշ խորամանդ դէմքով մը, վասն զի երբոր կառքը պիտի մոնէին, նախ միւսը մոցուց։ Դուք կը տեսակցիք ուրեմն այդ անձի հետ։

—Ո՛չ, չեմ տեսակցիր. բայց անունն ու հասցէն գիտեմ։

—Ի՞նչ է անունը։

—Պ. Թոլպիաք տը . . . չեմ գիտեր ինչ, և Կոտոյ-տը-Մօրուա փողոցը կը բնակի։

—Մաղլէնի թաղին մէջ։

—Այո՛, Օբիթալի պողոտայէն հեռի, ուր ես կը բնակիմ. դեռ ժամանակ չունեցայ երթալու զինքը տեսնելու, բայց վաղն աղատ եմ, պիտի երթամ տեսնեմ։

—Գո՞րծ ունիք ուրեմն անոր հետ, հարցուց Բիէտուշ, որ արհեստական սովորութեամբ առիթ չէր փախցներ տեսած մարդիկը խօսեցնելու։

Անշուշտ պիտի խնդրէք իրմէ որ ձեր մեծերուն յանձնարարէ ձեզ։

—Ո՛չ, այդ չէ զինքը տեսնել ուզելուս պատճառը։ Կորուսած դրամը գտած եմ... իւր այցետոմսին հետ... և կ'ուզեմ տանիլ իրեն յանձնել։

—Լաւ առիթ մ'ունէիք աստ եղած միջոցին։

—Այո՛, բայց դրամը վրաս չէ։ Աստկէ դատ կ'ուզեմ քիչ մը խօսակցիլ անոր հետ։

—Իրաւունք ունիք... ձեր ստանալիք վարձատրութեան վրայ...

—Հերն անիծեմ վարձատրութեան. զինքը շողոմելու համար չէ որ պիտի երթամ տեսնել։

—Ի՞նչ բրաւ ուրեմն ձեզ։

—Անցեալ շաբթու կայարանն եկաւ զիս դտաւ աքծանիս քով, ժառանգութեան մը վրայ խօսելու համար, որ, իւր խօսքին նայելով, աղջկանս կ'ինայ եղեր, և քիչ մնաց որ աղջիկս այդ մարդուն թափած ոսկիները ճանբուն վրայէն ժողված միջոցին պիտի ջախջախուէր կառախմբէ մը։ Մեկնեցաւ գընաց առանց իւր ոսկիներն ուզելու, և որովհետեւ յոռի կատակող մը թուեցաւ ինձ, իւր դրամներն իրեն տանելու առթիւ պիտի հարցնեմ իրեն թէ ի՞նչու համար եկաւ խել մ'առասպելներ պատմեց ինձ։

—Աւասիկ նորանշան պատմութիւն մը, դոչեց Բիէտուշ, որ մեծ ուշադրութեամբ մտիկ ըրած էր աքծանողին ըրած պատմութիւնը. բայց հոդ չէ. եթէ ես լինիմ ձեր տեղ, չեմ աւրուիր այդ մարդու հետ, վասն զի կ'երևի որ ձեռքն երկայն է։

Սակայն, ներողամիտ եղիք ինձ, ընկե՛ր, կինս ինձ կ'սպասէ, և սա բարեկամն ալ հրաւիրած եմ որ ապուրն ինձ հետ ուտէ։

—Ինձ կ'ինայ ներում խնդրել ձեզ՝ ըրած երկար շաղակրատութեանս համար։ Գիշեր բարի և առանց մնաք բարեաւի։ Երբոր Օրլէանի կայարանը գործ ունենաք, Բիէր Քամպրըմէր հարցուցէք։ Ամեն մարդ կը ցուցնէ ձեզ իմ տեղս, և գինին ի միասին կը խըմենք։

—Չեմ մերժեր ձեր հրաւէրն, բսաւ երկաթուղւոյ սուտ սպասաւորն՝ հեռանալով իւր բարեկամ սուտ բեռնակրին հետ։

Երբոր Շարպոնիէ փողոցին անկիւնն հասան, որ Մաղասի բանտէն յիսուն մեթրոյ միայն հեռի է, Բիէտուշ կանգ առաւ ստուգելու համար թէ աքծանողն իրենց ետեւէն եկած չէր։

Յետոյ հասկնալով որ Քամպրըմէր կայարանը մոտ էր, վասն զի չէր տեսնուեր, սկսաւ ծիծաղիլ և բսաւ Բիկաշի.

—Աւասիկ մարդ մը, որ բնաւ չը կասկածիր թէ ոստիկանութեան բարձր լրտեսի մը հետ գործ ունեցած է։ Եւ որովհետեւ այնպիսի պահու մը մէջ կը հանդիպի Թոլպիաքի, յորում սա ծէրպան համար կ'աշխատի, սաստիկ պիտի նեղացնէր զայն՝ եթէ հետը խօսէր։ Ապացոյց մ'է այս թէ մեր արհեստին մէջ անակնկալն ի հաշիւ պէտք է առնուլ միշտ։

—Աստուած տայ որ Նորէն չդայ մեզ ձանձրացնէ երբոր համը դուրս ելնէ, մինուռաց Բիկաշ։

—Վտանգ չկայ, մեք զայն կը տեսնենք ի հեռուստ, իսկ Նա չտեսներ մեզ, որովհետեւ պատին պիտի կրթընին։

Գիտե՞ս, ծերո՛ւկ, թէ Թոլպիաք պատուական սահմոս մ'է, որ մեր պետին քիթէն կը բռնէ պարծելով թէ մինչեւ մէկ ամիս պիտի պարզէ Արպալէթ փողոցի գործը։ Սատանան տանի զիս եթէ երբէք զբաղած է այդ խընդրով։ Իւր բոլոր ժամանակը ժառան-

գուրեան մը պատմութիւններով կ'անցունէ, որոյ մէջ պարարտ շահեր կը տեսնէ . . . ինչպէս որ ա.ջանողին մեզ պատմած իրողութենէն ալ կը հասկըցուի ։

—Ինչ որ ալ լինի, այդ տեսակ ոստիկանական գործակալ մ'իմ գործիս չգար ։

—Լսեցի՞ր քիչ մ'առաջ երբոր հաղարնոց պանքտոմնին խօսքն ըրի ձեւով մը ։ Աղուեսութիւն չէ՞ ըրածն, երբոր կ'ըսէ ինձ թէ երեսումէն յետոյ պիտի տայ, պատճառելով թէ տակաւին յայտնի չէ ոճրագործին բռնուած լինիլն ։ Ա՛, կ'ուզէի այնչափ աներկբայ լինիլ այդ ստակըն ստանալուս վրայ որչափ աներկբայ եմ թէ Լը.քո.քի որդին սպաննած է Արպալէթ փողոցի կինն ու վաճառականն ։

Եւ նորէն իւր սովորական ծայրայանգը կրկնեց Բիէտուշ.

—Խե՛ղճ հայր Լը.քո.ք, ո՛րչափ պիտի վշտակրի ։ Ահա այս է տղայոց շատ երես տալուն և անոնց ամեն ուզածը

կատարելուն պտուղն ։ Եթէ մեր գործին մէջ դնէր իւր որդին, այս փորձութիւն չէր գար գլխուն ։

—Ադով հանդերձ լաւ մարդ է հայր Լը.քո.ք ։ Ես անոր քով ալ ծառայած եմ ժամանակաւ ։ Զէր ճոխանար, մեծ մեծ չէր ջարդեր. բայց տուած խօսքը կը բռնէր ։

—Եւ անոր մեթոտն անհամեմատ լաւագոյն էր Թոլպիաքի մեթոտէն ։ Հայր Լը.քո.ք այսպէս կառ.քերու և տանը մէջ երեսելու հնարողութիւններ չէր ըներ ։ Ասոնք պարզապէս արուեստակութիւնք են ինքզինք և իւր անգլիական մեթոտները պանծացնելու համար։ Բայց դոն մէջ ամենն ալ բռնուած են անոր ։ Կը հարցնեմ քեզ քիչ մը թէ համրն արգելարանին մէջ ալ չէ՞ր կրնար ճանչել ամբաստանեալն ։

—Առանց հաշուելու թէ այդ հընարիմացութիւնք շատ անգամ ձախող ելք կ'ունենան ։ Եթէ դժուարութիւն կամ արգելք մը պատահի, բոլոր ծանրութիւնը մեր վրայ կ'իյնայ, մեք կը տուժենք ։

—Ճշմարիտ է, բայց ի՞նչ պիտի ըներս, ըսաւ Բիէտուշ փիլիսոփայաբար. ամեն մարդ չկրնար զօրավար լինիլ, ո՛չ ալ սպայ, և հարուածներն իրաւամբ զօրականներուն վրայ կ'իյնան։

Բաւական խօսեցանք, ծերո՛ւկս, կէսը զարկաւ, և մեր պահակերութեան ժամանակն եկաւ։

Բիկաշ ոչ եւս խօսեցաւ, և երկու գործակալք մեղմաբար բանտին մօտենալով՝ պատին տակէն գնացին, և իրենց տրուած հրահանգին համեմատ դռնէն տասն քայլ հեռի կանգ առին։

Անդ բարձր պատին կրթնելով և անոր ձգած ստուերին մէջ զիրենք ծածկելով՝ կեցան լռիկ և ուշադիր։

Սաստիկ ցուրտ կար, մինչեւ իսկ կը ձիւներ քիչ մը։ Մաղասի դրան քով սպասող պահակն իւր խղիկին մէջ ապաստանած էր, և ձմրան իրիկուններն անցորդք յոյժ քիչ են Մաղասի պողոտային վրայ։

Ընդհակառակն Լիոնի փողոցին մէջ անցուդարձը կը շատնար քանի որ ե-

ռեկոյեան կառախմբոց հասնելուն ժամը կը մօտենար։

Կարասի բեռցած հասարակ կառքերը, տնական կառքերն, և հանրակառքերը խումբ խումբ կուգային Պասթիլի կողմէն, և Մաղասը ձախ կողմ թողլով՝ կայարանը հանող զառիվերը կը մտնէին։

Ուրիշներ ալ իրենց ուղեւորները կայարանին առջեւ հանելէ յետոյ ետ կը դառնային։

Իտալիա և Մոնաքոյ երթալու եղանակը լինելով, կայարանին բակն ու շրջակայ փողոցները խռնեալ էին։

—Ի՞նչ անմիտ մարդ է սա Թոլպիաք, մինչ այս Բիէտուշ՝ նեղուելով իւր հսկողութեան մէջ այն անդուլ երթեւեկէ։ Իբր թէ չէր կրնար ուրիշ ժամ մը գրանել իւր համրը խարելու։

Բիէտուշ և ընկերն արդարեւ նեղութիւն կը կրէին իրենց առջեւէն անցած ամեն տեսակ կառքերը դիտելու։

Սակայն, որովհետեւ այն կառքեր

իրենց կողմը չէին գար, սխալելու վտանգ չունէին, ուստի առանց կասկածի կ'սպասէին որ ծանուցեալ կառքը գար։

Կայարանին ժամացոյցն երեք քառորդ զարկաւ և շարժումն աւելի շատցաւ։ Կառախումբը մեկնելու վրայ էր, և ուշ մնացողք խումբ խումբ կայարան կը հասնէին։

Տասն վայրկեան ալ անցաւ, և երբ ժամացուցին մեծ սլաքը տասն և մէկին վրայ կուգար, կառք մը դարձաւ Լիոնի փողոցին անկիւնէն և եկաւ պատին տակ կեցաւ դռնէն տասն քայլ և երկու պահակներէն քսան քայլ հեռի։

—Ինքն է, մրմռաց Բիէտուշ։ Կառքին գոյնը չեմ կրնար որոշել, բայց ձին կը ճանչեմ... սակայն կը թուի ինձ թէ կառապանն իւր մուշտակը չէ հագած...։ Աւանակն իւր լապտերներն ալ չէ յարդարած, վասն զի լուսաւոր չեն վառիր։

—Ո՞վ կրնայ լինիլ, եթէ Թոլպիաք չէ, ըսաւ Բիկաշ ցած ձայնիւ։ Մինթէ

ուրիշ մէկը կուգայ կը կենա՞յ բանտին պատին տակ։

Բիէտուշ ալ անշուշտ իւր ընկերին կարծիքն ունէր, վասն զի լռեց։

Ժամ ուրթ զարկաւ, Մաղասի փոքր դուռը բացուեցաւ և գրեթէ խկոյն գոցուեցաւ։

Դռնապան մը դուրս հրած էր համբը։

Հսկող գործակալք չշարժեցան իրենց տեղէն։

Պետը պարզապէս կրաւորական դեր մը տուած էր անոնց։ Համրին շարժումները միայն դիտելու, և եթէ կառքը մտնել չուզէր, ետեւէն երթալու և լրտեսելու պաշտօն միայն ունէին։

Մնացեալը Գ. Թոլպիաքի կը վերաբերէր։ և, որովհետև կապոյտ կառքն հինգ վայրկենէ ի վեր իւր որոշեալ տեղն էր, իրենց վրայ պատասխանատուութիւն չէր մնար, գոնէ նոյն պահուն։

Ուստի բաւականացան դիտելով, և

աչքէ չվրիպեցուցին համրն, որ երեք քայլ յառաջ երթալէ յետոյ յանկարծ կանգ առաւ՝ շլանալով կայարանին լուսերէն, դղրդելով կառքերուն թաւալումէն։

Ուղղակի իւր դէմը կը նայէր՝ առանց գլուխն ալ կամ ձախ դարձուցնելու։

Կը թուէր թէ իւր ճանբան գտնել կ'ուզէր։

—Մեզ շատ չպիտի յոգնեցնէ, մըրմռաց Բիէտուշ. վաղելու միտք չունի։

Ցանկարծ սև ձիով կառք մը, որ մուշտակաւոր թիկնոցակով կառապան մ'ունէր, դէպի կայարանն ելնող կառաց շարէն յամրաբար բաժնուելով եկաւ նշանաւոր ճշդութեամբ մը կեցաւ մեծ դռնէն չորս մեթրոյ հեռի, ծածկելով հսկող գործակալաց աչքէն հինգ վայրկեան առաջ եկող կառքը, զոր Թոլպիաքի կառքը կարծած էին։

Ոչ ևս հնար էր սխալիլ։ Ետքէն եկող կառքն ստուգիւ Թոլպիաքինն էր։

Երկու պայծառ լապտերներու լուսով կատարելապէս կը ճանչուէր կառքին դոյնը, ձիուն վրայի ծածկոցն, և կառապանին ուսոց վրայի աղուիսենին։

Իսկոյն դռնակը բացուեցաւ և լայն կրկնոցի մը մէջ փաթթուած մարդ մը վար իջաւ՝ նոյն վայրկենին, ուր համրը, յոգնելով կաղի կտուցները դիտելէ, աչքն ալ կողմ կը դարձուներ։

Կառքին տէրը ձեռքով և գլխով կոչեց զայն՝ առանց թող տալու դրռնակը, զոր միւս ձեռքով բռնած էր։ Համրն՝ առանց վարանելու՝ գնաց Թոլպիաքի քով, որ բարեկամական նշաններ կ'ուղղէր անոր։

—Կարծես թէ անուակներու վրայ դրուած է, ըսաւ կամացուկ մը Բիէտուշ։ Այդ ապուշ համրն որ կողմ քաշեն, կ'երթայ։

Տեսնենք սակայն թէ պիտի մտնէ՞ կառքն...։ Այո՛, մտաւ։

Համրը լայն կրկնոցով պարոնին մոտենալով՝ առանց բնաւ դժկամակելու կառքին մէջ մտեր էր, պարոնն ալ ա-

նոր եռեւէն մտնելով իսկոյն փակեր էր դռնակը։

—Թոլպիաք իրաւունք ունի եղեր, ըսաւ Բիէտուշ. ես չէի յուսար որ համրն այսչափ դիւրութեամբ պիտի քալէր։

Ինչ և իցէ, աւելցուց ցած ձայնիւ, Թոլպիաք ուշ եկաւ. կրնար ինք ալ սխալիլ, մեզ ալ սխալեցնել... վասն զի, վերջապէս, եթէ միւս կառքն ա-նորը կարծէինք...։

Կառապանն որ ձիուն երասանակը բռնած էր, թեթեւ մը շչեցուց իւր խարազանը, կառքն անմիջապէս ճանբայ ելաւ նետի պէս, և գրեթէ երկու գործակալներուն քսուելով սրացաւ դէպ ի Թրոնի հրապարակը, Մաղասի պողոտայէն անցնելով։

—Մեր կոռը լմնցաւ, գոչեց Բիկաշ։ Կը մնայ մեզ այժմ երթալ պեսը գտնել, և որովհետեւ հրամայեց մեզ կառք մը վարձել վարչութեան ծախքով և այնպէս երթալ, մեր կօշիկները չենք մաշեցներ։

—Լռէ՛, ըսաւ մէկէն Բիէտուշ անոր թեւէն բռնելով։

—Ա՜հ, չար սատանայ, ի՞նչ կայ, մրմռաց 33 թիւն։

Համրը տանող կառքին մեկնելովը միւս կառքն երեւան ելաւ, և հանդարտաքայլ կը յառաջանար։

Գլուխ մը կը տեսնուէր կիսաբաց դռնակին մէջ, գլուխ մը, որ Պ. Թոլպիաքի գլխուն կը նմանէր։

Բիէտուշ կը հարցնէր ինքնիրեն թէ արդեօք աչքի պատրա՞նք մ'էր տեսածն, երբոր ձին — սեւ ձի մը — կանգառաւ։

Կառքէն դուրս նայող մարդը վար իջաւ կառքէն և սկսաւ դիտել։

Բանտին դրան կը նայէր ուշադրութեամբ։

Կերպարանքէն, ձեւէն, շարժմունքէն և մանաւանդ հետախուզական դիրքէն երկու գործակալք ճանչցին զՊ. Թոլպիաք, որուն օժանդակելու պաշտօն ունէին, և յոյժ մեծ եղաւ իրենց զարմանքը։

Բիկաշ չէր կրնար տակաւին հասկընալ գործը, բայց Բիէտուշ, որ աւելի սթափ հասկցողութիւն ունէր, կասկածիլ սկսեր էր թէ ծանրապէս խաբուած էին։

Սակայն աներկբայ լինելու համար, կառքէն դուրս ելնող պարոնին քով գնաց ուղղակի։

Արդարեւ Թոլպիաք էր, որ սա կարճ և կցկտուր խօսքն ուղղեց գործակալաց.

—Ես արգիլած էի ձեզ մեկնիլ ձեր տեղէն. շուտով հոն վերադարձէք։ ժամ ութ զարկաւ. համրը դուրս պիտի ելնէ. պէտք չէ որ զիս ձեզ հետ տեսնէ։

Օ՛ն, հեռացէք քովէս։ Ինչո՞ւ կ՚սպասէք։

—Համրը՛, մրմռաց Բիէտուշ. բայց . . . գնաց։

—Ի՛նչ, գնա՛ց, խե՞նդ ես։

—Ամենեւին։ Նա հեռացող կառքը նստաւ գնաց։

—Եւ թողուցի՛ր որ գնաց, թշուառակա՛ն, գոչեց Պ. Թոլպիաք խեղճ գործակալին օձիքէն բռնելով և ուժգնապէս ցնցելով։

—Թող տուէք զիս, ըսաւ Բիէտուշ, որ տրամադիր չէր երեւեր իւր անձը բռնաբարել տալու։

—Թող չպիտի տամ մինչև որ չբացատրես ինձ քու վարմունքդ. անզգա՛մ։

—Օ՛, թշնամանք պէտք չէ, պատասխանեց 29 թիւն ինքզինք կորզելով անոր ձեռքէն։ Անտանելի է ձեր այդ ըրածն։ Եթէ համրը փախաւ, յանցանքը ձերն է և ոչ իմն։

—Կը յանդգնի՞ս ըսել։

—Կ՚ըսեմ թէ ձեր ամեն հնարիմացութիւններով հանդերձ դուք էք սըխալողը։ Պէտք էր որ դրան մօտ կենայիք, որպէս զի միւս կառքը ձեր առջեւ չանցնէր։

—Բայց դու տեսեր էիր իմ կառքս, և ճանչեր էիր . . .։

—Ոչ այնչափ։ Նախ՝ ձեր լապտերները լուսաւոր չէին. երկրորդ՝ ձեր կառապանն իւր մուշտակէ թիկնոցն հա-

նած էր . . . ճշմարիտ է որ այժմ հա-
գած է, բայց եկած ժամանակ հա-
գած չէր։

—Սուտ կը խօսիս։

—Ո՛չ, սուտ չեմ խօսիր, և չէի
կրնար գուշակել թէ ձերինին նման
կառք մը պիտի գար ձեր ոտքն առ-
նուր . . . ճիշդ այն վայրկենին յորում
ժամ ութ կը զարնէր։

—Ես ազդարարած էի ձեզ թէ ժամ
ութին հինգ ճնալով ասա պիտի գըտ-
նուիմ, և արդարեւ գտնուեցայ։

—Ճշմարիտ է, բայց՝ եթէ ուզէի
իսկ՝ չպիտի կրնայի արգելուլ համբը
միւս կառքը մտնելէ, վասն զի արգիլ-
ուած էր ինձ անոր վրայ երթալ և բրա-
նուիթիւն գործածել։

—Գիտէիր որ ես վար պիտի իջնէի
կառքէս . . . ձեռքս պիտի կոչէի համ-
բը . . . ։

—Պարոն մը, որ ձեր կերպարան-
քը, ձեր կրկնոցն ունէր, այդ ամենն
ըրաւ։ Ընկերս ալ ինձ հետ տեսաւ։

Զարմանալի բան է, բայց այսպէս է։

—Այնչափ զարմանալի է, ըսաւ Պ.
Թոլպիաք խստութեամբ, որ անպատ-
ճառ բացատրութիւն կը պահանջեմ
քեզնէ։

—Ի՞նչ բացատրութիւն։

—Աւանակութիւն մի՛ կեղծեր։ Քալ
կը հասկնաս իմ խօսքս։ Դրամ առիր,
և փախուցիր համբն։

—Աւասիկ նոր գի՛տ մը։

—Ի՞նչ տուաւ քեզ հայր Լը-քոք
այդ խաղը խաղալու համար։

—Պ. Լը-քո՛ք, տեսած չեմ առաւ-
օտէն ի վեր։

—Ապացուցանել պէտք է զայդ։
Ես կը պնդեմ թէ դուք համաձայնած
էիք անոր հետ, և կը յայտնեմ քեզ
թէ այս բան չկրնար այսպէս անցնիլ։

Մոն-Թապոր փողոցը մեզ կ'սպա-
սեն։ Դուք երկուքդ ալ հոն պիտի դաք
ինձ հետ, և տեսնենք թէ ձեր պետն
ի՛նչ պիտի ըսէ այս գործին համար։

—Այո՛, պիտի երթանք տեսնենք
զայն, գոչեց Բիէտուշ. եթէ խարդա-
ւանք մը կայ գործին մէջ, կա՛մ դուք

ըրած էք, կա՛մ ես. և պէտք է որ ե-
ղեւան ելնէ ընողը։ Պետք կրնայ որոշել։

Եւ անցնող կառք մը կոչելով՝ Բիէ-
տուշ անյողդողդ ձայնիւ մ'ըսաւ Պ.
Թոլպիաքի.

—Ա.հա այս կառքը պիտի նստինք
ու երթանք Բիկաշի հետ։ Եթէ կը
վախնաք որ կը վախչինք, կրնաք ձեր
կառքով մեր ետեւէն գալ։ Բայց ան-
հոգ եղիք, չեմ խաբեր ձեզ, վասն զի
ես ալ ձեզ չափ կը փափաքիմ որ այս
գործ հասկցուի։

Թոլպիաք զգաց անշուշտ թէ ա-
ռաջարկն ընդունելէ զատ ուրիշ բան
չէր կրնար ընել։

—Լա՛ւ, ձեր ետեւէն կուգամ, ը-
սաւ. և որովհետեւ իմ ձիս այդ կառ-
քին ձիէն արագ կը քալէ, ձեզ փախ-
ցընելու երկիւղ չունիմ։ Միայն կ'իմա-
ցընեմ ձեզ, որ եթէ ձեր պետն իմ
խորհրդիս հետեւի, ձեզ այս իրիկուն
բանտ պիտի ղրկէ իբրև համախոհ ոճ-
րագործութեամբ ամբաստանեալ Լը-
քոքի։

—Կը տեսնենք, պատասխանեց
Բիէտուշ ուսերը թոթվելով։ Բայց, ը-
սէք ինձ քիչ մը. որովհետեւ ձեր ձին
այնչափ լաւ կը քալէ, պարտէիք հրա-
մայել ձեր կառապանին որ համրը տա-
նող կառքին ետեւէն վազէր։ Չէք կըր-
նար ըսել թէ զայդ ալ ես թող չտուի,
և կրնաք աներկբայ լինիլ որ պիտի
պատմեմ զայս մեր պետին։

Եւ ցատկեց կառքը մտաւ իւր ըն-
կերին հետ՝ երբոր Պ. Թոլպիաք ալ
իւր կառքը կ'ելնէր։

—Ա՛ռ նոր փորձանք մ'ալ մեր գլխուն, ըսաւ Բիկաշ։

—Կ'արհամարհեմ, պատասխանեց
Բիէտուշ, որ սաստիկ զայրացած կ'ե-
ղեւէր։ Բաւական է ինչ որ աշխատե-
ցայ այդ հաւկթի հետ, որ հաղարնոց
տոմսակ մը կը խոստանայ ինձ և այժմ
կ'ուզէ վճռել տալ զիս՝ իւր տխմա-
րութիւններն իմ վրայ բեռցնել ուզե-
լով։ Տեսնենք թէ պետը զիս յանցա-
ւոր պիտի դատէ՞։

Բիկաշ փիլիսոփայութիւն ունէր, և
շատախօս չէր։

Երկու գործակալք ոչ ևս խօսակցեցան մինչեւ այն վայրկեան, յորում երկու կառքն ալ Մոն-Թապոր փողոցն հասան։

Հայր Լ.քոք համբերութիւն ունեցած չէր սպասելու մինչև պայմանեալ ժամանակը ղոր տուած էր իրեն ապահովութեան պետն, և եկած կեցած էր այն տան առջեւ, ուր իւր որդւոյն բաղդը պիտի որոշուէր։

Ապահովութեան պետն այս ծանր փորձին ձեռնարկելու համար՝ հարկաւոր չէր դատած, և ոչ առանց պատճառի, դատական քննութեանց սովորական ձեւերը տալ գործին։

Այս պատճառաւ, միայն հարցաքննիչ դատաւորին և ամբաստանելոյն հետ կառք մը նստելով Մոն-Թապոր փողոցն եկած էր՝ առանց ուրիշ պաշտօնական մարդիկ և պահակներ հետ բերելու։

Քաղաքացիի կերպարանքով գործակալ մ'և երկու պահակ կ'սպասէին զայն տանը դրան առջեւ։

Գործակալն ամբաստանելոյն բնակարանն եկած էր իւր պետին հետ։ Երկու պահակներուն ալ հրաման եղած էր փողոցին մէջ սպասել՝ պատրաստ ի կոչ։

Պ. Թոլպիաքի առաջարկած ծրագիրը կէտ առ կէտ գործադրուած էր։

Միայն հայր Լ.քոք, իւր մասին, փոփոխութիւն մ'ըրած էր։

Փոխանակ ժամը տասնին, ինչպէս որ պայմանեալ էր, ապահովութեան պետին սենեակն երթալու, ժամ ութին եկեր կ'սպասէր իւր որդւոյն բնակարանին դիմացն անցեւելի խորշի մը մէջ։

Զայն բերող կառքին անցնիլը տեսած էր, ինչպէս նաեւ տանը միջնայարկի պատուհաններուն լուսաւորիլն, և անհամբերութեամբ համբին գալուն կ'սպասէր, որպէս զի երբոր երեսուելէն յետոյ դուրս ելնէր, ինքն ալ ապահովութեան պետին ներկայանար։

Կը յուսար որ իւր բարեկամը չէր մեղադրեր զինք որոշեալ կարգադրու-

թենէն խոտորելուն համար, և չէր դժկամակեր տեսակցութեան արդիւնքը իրեն ծանուցանելու։

Կը յուսար իսկ, խեղճ հայրը, թէ այս տեսակցութեամբ Լուիի անմեղութիւնն յայտնուելով, իրեն պիտի յանձնուէր որդին։

Ուստի սիրան աւելի ուժգնապէս տրոփել սկսաւ երբոր Պ. Թոլպիաքի կառքն եկաւ կեցաւ 72 թուին առջև, հասարակ կառքի մ'ետին, որ երկու կամ երեք ձիու երկայնութեամբ ա-նորմէ առաջ կուգար։

Ծերունին հեռուէն տեսաւ երկու գործակալներուն և գէնէլին կառքերէն իջնելը։ Նմանապէս լսեց տանը դրան փակուիլն և կարծեց թէ համին ալ ա-նոնց հետ մտած էր, վասն զի յոյժ թերի կերպիւ տեսած էր կառքերէն իջնողներն։

Երկու կառքերը գնացին քիչ մը հեռին կեցան մայթին եզրն, այն կառքին քով, որ ամբաստանեալը բերած էր ապահովութեան պետին և քննիչ դատաւորին հետ։

Պ. Լեքոք աչերը վերցուց դէպի պատուհաններն այն բնակարանին, ուր իւր որդւոյն բաղդը պիտի վճռուէր, և շատ չանցած՝ տեսաւ որ ստուերներ կ'անցնէին վարագոյրներուն ետեւէն։

Քաջածանօթ էր յարկին ամեն կողմերուն, զոր վայելչապէս կահաւորած էր իւր սիրելի Լուիին համար, և ըստուերաց շարժումներէն կրնար գուշակել երեսման սրտայոյզ տեսարանին դարձուածներն։

—Հոն է, կ'ըսէր ինքնիրեն՝ մէջաեղի պատուհանին նայելով։ Դահլճին մէջ թողած են զայն... իրենք ալ ննջասենեկին մէջ նստած են... կը դիտեն զայն... գործակալք և Թոլպիաք աշխատութեան սենեակը մնան... իրենց ստուերներուն տատանումը կը տեսնեմ... համրը դահլճին մէջ պիտի մղեն... երանի թէ այդ թշուառականը չընէ այնպիսի նշաններ, յորոց կարենան խաբուիլ...։ Երբ կը խորհիմ որ զաւկիս կեանքը ձեռքի կամ գլխու շարժումէ մը, դէմքի խաղէ մը կախեալ է... կը դողամ։

Եւ կ'սկսէր անիծել զԹոլպիաք, որ այս վտանգաւոր փորձին գաղափարը թելադրած էր։

—Զարմանալի բան, ըսաւ ինքնիրեն. աշխատութեան սենեկին մէջ կեցած են . . . ննջասենեկին մէջ եղողներն ալ՝ դահլիճէն անցնելով՝ կուգան անոնց քով . . . կարծես թէ ի մի վայր կը ժողովին խօսակցելու համար . . . սակայն այսպէս չէին կարգադրած տեսարանն . . . ի՞նչ պատահած է ուրեմն։

Ա՛, լոյսն ալ կը նուազի աշխատութեան խուցին մէջ . . . դահլիճին դուռը գոցեցին . . . մէջի մութերուն ամենն ալ վառեցին, որպէս զի աւելի լաւ դիտեն այն ազդեցութիւնն՝ որ Լուիի հետ հանդիպումը պիտի ընէ համրին դէմքին վրայ . . . և չեն աճապարեր այդ փորձն ընելու . . . ։

Լուին մինակ թողուցին . . . բարի նշան մ'է այս։ Եթէ յանցաւոր համարէին զնա, մինակ չէին թողուր։

Պ. Լէքոք, խրախուսեալ այս քիչ մը կեղակարծ խորհրդածութեամբ,

ձեռքը ճակտին տարաւ, յորմէ արտասուաց խոշոր կաթիլներ կը վիժէին, թէև օդը սաստիկ ցուրտ էր։

—Ա՛, տէ՛ր Աստուած, մրմնջեց յանկարծ, ինքն է . . . պատուհանին քով եկաւ . . . վարագոյրը մէկ կողմ ըրաւ . . . փողոցը կը նայի . . . չգիտեր թէ հայրն հոն է, խե՛ղճ սիրելի տըղայ . . . ։ Ի՞նչ կը խորհի արդեօք իմ վրայ, նշանածին վրայ . . . Աստուած չթողուր որ առնուն զայն մեր ձեռքէն . . . և վաղը, գուցէ այս իրիկուն կրնամ համբուրել զայն և տանիլ նշանածին, որ անոր կ'սպասէ սոսկալի սրտատանջութեամբ . . . իմինէս աւելի սոսկալի անձկութեամբ, վասն զի չգիտեր անցածն, իսկ ես կը յուսամ . . . անարկբայ եմ որ այս զարհուրելի ամբաստանութիւն ինքնին պիտի ցրի՝ երբ որ համրն . . .

Ա՛, ինչո՞ւ դորձի չեն սկսիր, ըսաւ ծերունին կուրծին զարնելով։

Զարմանքը դեռ անցած չէր, որդւոյն ստուերն հեռացաւ պատուհանէն,

և լայն յանկարծ մարեցաւ այն սենեկին մէջ, ուր խորհրդակցութիւն մ'եղած էր, որոյ նպատակը չէր կրնար դուշակել Գ. Լբքոք։

Վայրկեան մը յետոյ տանը փոքր դուռը բացուելով՝ մարդ մը դուրս ելաւ և քանի մը խօսք ըսաւ երկու պահակներուն, որոց մին գնաց անմիջապէս յառաջ քշել տուաւ այն կառքն որ ամբաստանեալը բերած էր։

Երբոր կառքը՝ տանը դրանն առջև գնաց, Գ. Լբքոք լսեց որ դռնակը կը բանային, և մտուկին ցնցուելէն հասկըցաւ որ քանի մ'անձինք կը մտնէին անոր մէջ։

Այս զանազան գործողութիւնք նշանաւոր արագութեամբ կատարեցան, վասն զի մինչեւ որ ծերուկը ժամանակ ունեցաւ փողոցն անցնելու, կառքն, որ վեց մարդ առնլու չափ մեծ էր, հեռացաւ գնաց դէպի ոստիկանական պաշտօնատուն։

Գ. Լբքոք ոչ եւս տեսաւ պահակներն, ոչ ալ անոնց հետ խօսող մարդը։

Մինչ կը հարցնէր ինքն իրեն թէ արդեօք տունէն նե՞րս մտած էին թէ բոլորովին մեկնած, յարկին երկու պատուհանները տակաւին լուսաւորող ճրագն ալ մարեցաւ։

Ցարակոյս չէր ճնար որ տեսանը փակուած էր։

Գրեթէ իսկոյն երեք անձինք տեսնուեցան տանը դրան առջևի մայթին վրայ, և Գ. Լբքոք տառանց դժուարութեան ճանչեց ապահովութեան պետը, քննիչ դատաւորն և Գ. Թոլպիաք։

Կարճ խօսակցութենէ մ'ղկնի բաժնուեցան իրարմէ. քննիչ դատաւորը մտաւ այն կառք, զոր Բիէտուշ և Բիկաշ ժամով բռնած էին, Թոլպիաք ալ իւր միանստարան կառքն։

Երկու կառքերն հեռացան միանգամայն, և ապահովութեան պետը, մինակ ճանալով, յամրաբար ճանբայ ելաւ դէպի Բասթիլիոն փողոց։

Գ. Լբքոք չէր կրնար աւելի յարմար առթի մը բաղձալ իւր վաղեմի բարեկամին հետ խօսակցելու համար։

Վաղեց քովը գնաց և սա միակ խօսքն ըսաւ.

—Էյ։

—Ա՛, դո՞ւք էք, պատասխանեց պաղութեամբ ապահովութեան պետն։ Ի՞նչ գործ ունիք աստ։

—Չկրցի համբերութիւն ունենալ սպասելու որ ոստիկանութեան պաշտօնատունը վերադառնաք... կը հասկընաք... կեանքս կեանք չէր... ո՞ւր է որդիս... ի՞նչ անցք անցաւ։

—Ձե՞ք գիտեր։

—Ո՛չ, կակազեց ծերունին զարմանալով այս չոր և դրեթէ հեգնիչ հարցման վրայ։ Տեսայ Թոլպիաքի... գործակալաց... համբին գալը, բայց...

— Ոչ, չտեսաք համբին գալը, վասն զի չեկաւ։ Փախաւ... կամ մանաւանդ փախուցին։

—Փախուցի՞ն, ո՞վ փախուց։

— Շնորհապարտ կ'ընէք զիս եթէ իմացնէք. բայց ես կրնամ ըսել ձեզ թէ մեծ կասկած ունիմ Բիէտուշի վրայ, թէ օգնած է այդ փախստեան։

—Բիէտո՛ւշ, կը ճանչեմ զայն... անկարող է պարտաղանցութիւն ընելու։

—Պիտի հասկնանք զայդ մինչև քանի մ'օր, վասն զի արդեւլարանը ղրկեցի իւր Բիկաշ ընկերին հետ, և այդ երկու չարաճճիները բանտարկեալ պիտի մնան, մինչև որ բացատրեն իրենց ընթացքն։

—Եւ որդի՞ս, հարցուց Պ. Լը.քոք դողալով։

—Ձեր որդի՛ն, կը յորդորեմ ձեզ որ մոռնաք անոր հայրը լինելնիդ, վասն զի ոչ ևս պիտի տեսնէք զայն։

Եւ չեմ ծածկեր ձեզնէ թէ դուք իսկ պիտի պարտաւորիք թերևս համար տալ ձեր գործոց։

—Բացատրեցէք... չեմ հասկնար։

—Ըսածս յոյժ յստակ է սակայն։ Համբին հետ երեսուելով՝ ձեր որդին պիտի ըմբերանէր. այժմ բնաւ երկբայութիւն չէ մնացած այս մասին, վասն զի նոր ապացոյց մ'ալ գտանք անոր դէմ։

—Ի՞նչ ապացոյց։

—Կարծեմ դուք ալ պատշաճ չէք դատեր որ քննութեան գաղտնիքն հաղորդեմ ձեզ։ Ձեր որդին սպաննած է Ս.Պալէթ փողոցի կինն, այս մասին բացարձակապէս աներկբայ ենք։ Բայց համրը պիտի ճանչէր զայն, և աներեւոյթ եղաւ։ Ո՞վ կրնար շահ ունենալ զայն անհետացնելու գործին մէջ։ Դուք։

—Ե՛ս, գոչեց Պ. Լը.քոք ցասմամբ։ Ես որ իմ բոլոր յոյսս այդ տեսակցութեան վրայ դրած էի զաւկիս անմեղութիւնն ապացուցանելու համար։ Բայց կը մոռնաք ուրեմն թէ ամենէն առաջ ես խնդրեցի ձեզնէ երեսել համրին հետ։

—Դուք գիտէիք, Թերեւս, թէ զայդ խնդրելով բան մը չունէիք վտանգելու։ Երբոր մարդ մը հարուստ և հանճարեղ է ձեզ պէս, երբոր մարդ մ'իրեն անձնուէր ոստիկանական գործակալներ ունի, ինչպէս դուք, փախուստ մը կազմաւորելու համար դժուարութիւն չկրեր։

—Ուրեմն կ'ամբաստանէք զիս, ըսաւ տարաբաղդ հայրը կսկծագին սրրտիւ, և կը դատապարտէք որդիս։

—Չեմ ամբաստաներ ձեզ, և մարդ դատապարտելու պաշտօն չունիմ. բայց պարտականութիւն ունիմ անաչառութեամբ վարուիլ ոճրագործաց դէմ... ինչպէս նաեւ այն մարդոց, որք արդարութեան գործին արդելք կը լինին։

Ուրիշ բան մը չունիմ ըսելիք։ Ձեր բարեկամն էի, և այդ բարեկամութիւն շատ ծանրագնի եղաւ ինձ։ Մեր յարաբերութիւնք դադարեալ են այսուհետեւ։

Մնաք բարեաւ։

Ս.յս խիստ եղրակացութենէ յետոյ՝ ապահովութեան պետն հեռացաւ փութանակի։

Պ. Լը.քոք, գետնահար եղած, փորձ չբրաւ զայն կեցնելու, ինչպէս նաեւ փորձ չէր բրած ինքզինք արդարացնելու։

Իւր ամբաստանուիլն հոգ չէր ըներ։ Իւր որդին կ'ուզէր պաշտպանել, և տակաւին կը յուսար աղատել զայն։

ԺԱ.

Ութ օր զկնի այն տխուր երեկոյին որ Թէրէզի դժբաղդ նշանածին վերջին յոյսը տարած էր, հայր Լը.քոք Թիլլերիի պարտիզին նստարաններէն միոյն վրայ նստած էր, և մեծ կառուզիէն անցնող սակաւաթիւ ճեմողք կը զարմանային տեսնելով այս ծերունին, որ փետրվարի սառնաշունչ առաւօտ մը նստած էր այնպիսի տեղ մը, զոր ցուրտ քամին կ'աւլէր։

Հիւսիսային հովէն կորզեալ վերջին տերեւներն անոր մերկ գլխուն վրայ կը տեղային. դառնահոտ մրրիկն ուժգնութեամբ անոր վերարկուին մէջ մըտնելով կը թռցնէր. իսկ ինքն անշարժ կը կենար ձեռնամած, աչքն անթարթ, առանց տեսնելու անցորդներն որք կարեկից հայեացք մը կը նետէին անոր վրայ, և առանց ցուրտէն սարսռելու։

Ճնճղուկներն, որոց հաց կը փշրէր միշտ, կը թռչտէին իւր շուրջն, և իրենց լեզուով կ'ըսէին իրարու. «Ի՞նչ

ունի արդեօք մեր բարեկամն. ինչո՞ւ համար կը մոռնայ մեզ։»

Աւա՜ղ, Ղ. Լը.քոք ամեն բան մոռցած էր, բաց յիւր որդւոյն. մոքին անդադար զայն կը տեսնէր, անոր ետեւէն կը պտըտէր բանտային սոսկալի կենաց ամեն ժամերուն մէջ։

Նոյն պահուն իսկ կը խորհէր թէ Լուի Թերեւս քննիչ դատաւորին կը ներկայանար, որ ճարտար հարցաքննութեան մը կապերուն մէջ կը պրկէր զայն։

— Իրենց ձեռաց մէջ բռնած են զայն, չպիտի թողուն, կ'ըսէր ինքնիրեն, և խեղճ տղան ոչ ևս պաշտպան ունի զիս։

Բանտին դուռը փակեցին իմ առջեւ, ոստիկանութեան վերատեսչին աչքն իմ վրայ է։ Եթէ ապահովութեան պետը չդիմար իմ վրայ, ես ալ պիտի բանտարկուէի։ Բիէտուշ արդէն բա՜նտն է։

Ամենն ալ կը կարծեն թէ թշուառ համրը փախցնելու համար դրամով կաշառեր եմ չեմ գիտեր զո՛վ։ Այս կը

նմանի ամբաստանելու դիս թէ սպաննել ուզած եմ որդիս։

Եւ եթէ ձեռնարկ մը կամ քայլափոխ մ'ընեմ անոր օգնելու համար, եթէ ուզեմ գործը բննել, նշաններ հաւքել, վկայութիւններ ժողվել... զայն աղատել փորձելով՝ անոր կոբբստեան պատճառ պիտի լինիմ։

Կը հսկեն իմ վրայ։ Դեռ երէկ տեսայ որ իմ վաղեմի գործակալներէն մին դիս կը լրտեսէր դետափին վրայ։

Եւ ոչ ոք գիտէ թէ ի՞նչ կ'ընեն։ Դատավարութիւնը ծածուկ կը պահուի։ Լրագրաց պատուէր եղած է ոչ ևս խօսիլ Արպալէթ փողոցի գործին վրայ։ Ծանուցին թէ ոճրագործը բռնուած է... հարուստ երիտասարդ մը, որ աղնուականութեան անուն առած է, բայց պարզապէս Լեքոք կը կոչուի... և այժմ կը լռեն։ Միայն կը պատմեն ամեն օր թէ յանցաւորութեան նոր ապացոյցներ երեւան եկած են ամբաստանելոյն դէմ... և հասարակութիւնը կ'ուրախանայ, եղեռ-

նագատ ատենին գումարման կ'սպասէ։ Արդէն տոմսակները կը խնդրուին... անտի ալ Ռոքէթի հրապարակ։

Մերունին ցնցուեցաւ և գլուխը խոնարհեցուց մրմռալով.

—Պիտի դատապարտեն զայն... և ես չեմ կրնար բան մ'ընել... ո՜հ, չեմ կրնար...

—Ողջո՛յն, պարոն Լեքոք, ըսաւ կերկերեալ ձայն մը վեհերոտ կերպիւ։

Հայր Լեքոք խսկոյն գլուխը վեր առնլով՝ իւր առջեւ կանգնած տեսաւ զբիէտուշ։

Խեղճն ստուգիւ բանտէ ելած մարդու մը դէմք ունէր, և հանդերձներն ալ բաւական ճարտասանօրէն կը ծանուցանէին անոր դրամական վիճակն։

—Այո՛, վարպետս, ես եմ, յարեց տեսնելով որ Պ. Լեքոք կը վարանէր զինքը ճանչել։

Կրնամ ձեզ վարպետս կոչել, որովհետեւ ժամանակաւ ձեր ձեռքին տակ ծառայած եմ։

Եւ այս վակագիծ խոր հառաչով

մը շեշտելով՝ շարունակեց Բիէտուշ.

—Միւս կողմէ, ձեզնէ զատ ոչ ոք ունիմ այժմ, վասն զի վանտուեցայ ոստիկանութեան գործակալութենէ, շաբաթ մ'արդելարանին բանտը կենալէ և օրն երկու անգամ հարցաքննուելէ յետոյ, որպէս զի խոստովանիմ ինչ որ չէի գիտեր։

Երբոր տեսան որ բան մը չէին կրնար քաղել ինձմէ, զիս դռնէն դուրս ըրին... երէկ առաւօտ... հաց մը թեւիս տակ և տասն և մէկ սու գրպանիս մէջ...։ Հացը լաճերուս տուի, տասն և մէկ սուերն ալ հացագործին տուի առ հաշիւ այն հացերուն զորս իմ բանտարկութեան միջոցին տուած էր...։ Յետոյ գնացի ոստիկանութեան պաշտօնատունէն ամսականս վար դրրուած դումարը խնդրեցի, և... օ՜հ, ջնջուած գտայ։ Ամսականս վար դրրուած էր պաշտօնիս մէջ կանոնաւորութիւն ըրած լինելու պատճառաւ։ Յայնժամ զգեստս տարի դրաւի դրի... և ահա այս պատճառաւ է որ կտաւէ զգեստ հագած եմ։

Պ. Լբքոք՝ առանց խօսք մ'արտասանելու՝ մտիկ կ'ընէր այս քիչ մը կրցկտուր ճառը, բայց Բիէտուշի կը նայէր այնպիսի աչերով, որ.ք կը թուէր թէ մինչև անոր սրտին խորերը կարդալ կ'ուզէին։

—Դուք ցաւած էք ինձ դէմ, բսաւ նախորդ 29 թիւն յուզեալ ձայնիւ. այո՛, ցաւած էք, վասն զի ես ձերբակալեցի ձեր որդին։ Ա՛հ, եթէ կարելի լինէր դարմանել, եթէ գիտնայի միայն թէ ձեր որդի՛ն էր։

—Ինչո՞ւ պիտի ցաւիմ ձեզ դէմ, մրմնջեց ծերունին։

—Ճշմարիտ է, կը ներէ՞ք ինձ։ Ուրեմն կատարելապէս կը մխիթարէ զիս այդ. վասն զի ամենէն աւելի զիս տրտմեցնողն այն մտածութիւնն էր թէ վիշտ պատճառեցի ձեզ առանց ուզելու։ Դժբաղդաբար, չեմ կրնար դարմանել չարիքն որ իմ անմտութեամբս գործուեցաւ։

—Թերևս կրնաք։

—Ա՛հ, եթէ հաւատայի աղոր...։

Տեսէ.ք, վարպետ, մոքիս մէջ եղածը խոստովանիմ քանի որ ասա եմ։ Կը խորհիք անշուշտ, թէ Պ. Լուիի համար ես ալ այլոց հետ խաբուեցայ և պատրաստ էի ձեռքս կրակը խոթելու թէ նա ըրած էր Արպալէթ փողոցի սպանութիւնը. բայց այժմ գլուխս կառավնատի դանակին տակ դնելով կ'երդնում թէ ձիւնի պէս ճերմակ է։

—Կ'ուզե՞ս օգնել ինձ ապացուցանելու համար թէ անմեղ է։

—Կ'ուզե՛մ, անշուշտ։ Միայն պարտիմ ըսել ձեզ թէ պետը զիս վճռած ժամանակ սպառնացաւ ինձ, որ եթէ լրտեսութեան, հետախուզութեան և այս տեսակ որ և իցէ բանի մը խառնուիմ, զիս շղթայակապ բանտարկութեան պիտի ղրկէ առանց դատաստանի։ Այս պատճառաւ կը մտածեմ թէ ի՛նչ ծառայութիւն կրնամ ընել ձեզ։

—Ես կրնամ գործածել քեզ առանց վտանգի մէջ ձգելու։ Դիտե՞ս ի՛նչ վիճակի մէջ է որդւոյս գործը։

—Բիկաշ երէկ երկու խօսքով հաս-

կըցուց ինձ արգելարանի բակին մէջ... Նա ինձմէ աւելի բաղդաւոր եղաւ... տասն եւ հինգ աւուր թոշակը միայն տուժելով պաշտօնին մէջ մնաց... և ինձ բարեկամ լինելէ չդադրեցաւ։ Ըսաւ ինձ թէ քննութիւնը մեծ փութով յառաջ կը տարուէր... և թէ շատ մ'ապացոյցներ գտնուած էին։

—Ի՞նչ ապացոյցներ։

—Ա՛հ, վարպետ, չեմ ուզեր ձեր սիրտը վշտացնել։

—Մի՛ վախնար, ես կրնամ ամէն բան լսել, ըսաւ ծերունին դառնութեամբ։

—Զրոյց կը պտըտի թէ Պ. Լուիի բնակարանին մէջ կապարածոյը ցուպ մը գտնուեր է, որոյ վրայ արեան բիծեր կան եղեր... և պորմին ճաշարանին մէջ գտնուած ծերունին սպաննելու գործածուած է...։

Ասկէ զատ, Պ. Լուիի մէկ նամակը գտնուեր է... սպանեալ կնոջ ուղղեալ, և այն նամակին մէջ սպառնալիք կայ եղեր...։

Այս ամենուն հետ համրը կը վնտռեն և չեն կրնար գտնել։ Ֆրանսայի ամեն դատարաններուն գրած են։

Բայց կ'ըսեն թէ համրը չգտնուելով ալ Պ. Լուի կրնայ տասն անգամ դատապարտուիլ... և կ'ուզեն որ գործը մինչեւ երկու ամիս եղեռնադատ ատենին առջեւ ելնէ։

—Մինչեւ երկո՛ւ ամիս, կրկնեց Պ. Լը.քոք։ Պէտք եղածէն աւելի ժամանակ է։

Ցետոյ թողլով զայս գաղափար.

—Հոն էիր դու, ըսաւ, երբոր համբը փախուցին, և գիտես հարկաւ թէ ես բնաւ մասն չունիմ այդ գործի մէջ։ Կասկած ունի՞ս մէկէ մը։

—Ոչ ճշդիւ։ Սակայն մեծ եղաւ զարմանքս Թոլպիա.քի այնպէս տխմարաբար խաբուելուն վրայ, և եթէ պետն ուզէր մտիկ ընել դիս, ձեր կողմը պէտք չէր վնտռեր։ Բայց բռնուած է այն կենդանիէն, որ խորամանդ չարաճճի մ'է, և որ իւր բոլոր ժամանակը ժառանգական յաջորդութիւններ գտնելու

և մեքենայութիւններ նիւթելու կը գործածէ փոխանակ գործ համար աշխատելու։ Համրին առեւանդման իրիկունը, Մաղասի առջեւ, մարդ մը, որ դաւաթ մը գինի խմցուցած էր ինձ, զարմանալի բան մը պատմեց ինձ անոր վրայ։

—Բիէտո՛ւշ, ըսաւ մէկէն Պ. Լը.քոք, ես առաջարկեցի քեզ ինձ հետ առնուլ. կ'ուզե՞ս դալ անպայման անկեղծութեամբ։ Քաջութիւն կ'ղգա՞ս ամեն բան ղոհելու մեր կետադրած նպատակին համար։

—Ի բոլոր սրտէ, վարպե՛տ... մանաւանդ եթէ անկասկած լինիմ թէ լաճերու առանց հացի չպիտի մնան։

—Ես իմ վրայ կ'առնում զանոնք բարի կնոջ մը քով դնել, որ իւր բուն զաւակաց պէս խնամէ։

—Օ՛, յայնժամ բոլորովին ձերն եմ, վարպե՛տ, հոգւով մարմնով։ Եթէ ոստիկանութեան կողմէ արգելք կամ դժուարութիւն մը հանել ուզուի ինձ դէմ, Բիկաշ կ'իմացնէ ինձ։ Եւ հոգ

չեմ ըներ. ես այսուհետեւ պարզ քա-
ղաքացի մ'եմ. ոստիկանութիւնն իրա-
ւունք չունի զիս նեղելու, երբոր չա-
րութիւն մը չեմ ըներ։

—Մի՛ վախնար այն կողմէ։ Պիտի
չունենք։

—Երկա՞ր ժամանակի համար։

—Չեմ գիտեր։

—Ո՞ւր պիտի երթանք։

—Դու ըսիր ինձ հիմա թէ պատ-
բաստ ես ծառայել ինձ. պէտք է կա՛մ
ծառայել ինձ կուրաբար, կա՛մ բնաւ չը
ծառայել։

—Իրաւունք ունիք, վարպե՛տ,
բերնէս փախաւ, բայց այսուհետեւ
չեմ սխալիր... մինչեւ Չինաստան
կ'երթամ ձեզ հետ, եթէ հաճոյ լինի
ձեզ։

—Մտիկ ըրէ՛, ըսաւ Պ. Լբքոք ոտ-
քի վրայ ելնելով նստարանէն, ուր Բիէ-
տուշ ալ նստած էր իւր քով, դեռ
չեմ գիտեր ի՛նչ պիտի ընեմ։ Դեռ չեմ
գիտեր թէ Գերմանիա՞ պիտի երթամ,
Անգլիա՞ պիտի երթամ, ամեն տեղ,

ուր կարենամ ապացոյցներ հաւաքել
ցրելու համար այդ անհեթեթ ամբաս-
տանութիւն։ Չեմ գիտեր թէ Փարիզի
մէջ թաքչելով՝ գիրկընդխառն և ոտն
առ ոտն պիտի մարտնչի՞մ։ Բայց գի-
տեմ թէ որդիս յանցաւոր չէ և պիտի
կորզեմ ադոնց ձեռքէն։

Առ այժմ, բաժնուինք իրարմէ.
պէտք չէ որ մեզ ի միասին տեսնեն։

Իրիկուան ժամը տասնին տունս
ե՛կ, և ըսեմ քեզ ինչ որ կ'սպասեմ
քեզմէ։

Այս խօսքի վրայ, գլուխն ու ղօրա-
կանը բաժնուեցան իրարմէ. բայց նոյն
վայրկենէն պատերազմը բացուած էր։

ԺԲ.

Երեք ամիս անցաւ։

Երեք ամիս Փարիզի մէջ, դար մ'է։
Երեք ամսոյ մէջ ամեն բան կը մոռցուի
անդ, մինչև իսկ յեղափոխութիւնք։

Արպալէթ փողոցի գործն, որ յուն-
վարի մէջ տասն և հինգ օրէն աւելի

յուզած էր մեծ քաղաքն, արդէն հը-
նախօսութեան կարգ անցած էր մինչև
գարուն։

Ոճիրներն իրար կը հալածեն, և
Փարիզի մէջ ոճրագործք պարապ չեն
կենար շատ։ Զմրան միջոցին իրենց
ձեռները ծոցերնին դրած չէին, և
բուռն սրտայուզութեանց սիրահար-
ներն հասած էին իրենց բաղձանաց։

Լրաբերք չէին գիտեր ո՛ր մար-
դասպանի ունկն դնել, և լրագրաց է-
ջերը չէին բաւեր պարունակել այն
սրտաճմլիկ պատմութիւնները, զոր
դատական լուրեր վնասողներն ամեն
օր կը տանէին անոնց։

Արդարև Արպալէթ փողոցի գաղտ-
նեաց չափ հետաքրքրաշարժ բան մը
չէին գտած, բայց Փարիզի պէս քա-
ղաք մը չկրնար ամբողջ եռամիս մ'ապ-
րիլ մի միայն գեղանի կնոջ մ'և ծեր
վաճառականի մը եղերական մահուան
վրայ, թէև այդ կին Սլաքի տիկնոջ մը
վրայէ դաշունահար եղած լինի։

Դիակնարանի ցոյցը վերջացած էր՝

առանց զոհը դրապէս ճանչուելու։
Գիտէին թէ ոճրագործը բռնուած էր.
և հասարակութիւնն իւր հետաքրքրու-
թիւնը կը պահէր այն մեծ աւուր, յո-
րում յանցաւորն երդուեալ դատաւո-
րաց առջև պիտի ելներ։

Միւս կողմէ, ոստիկանութիւնը մի-
ջոցներ ձեռք առած էր, որպէս զի
լուութիւն տիրէ այս դատի վրայ։

Ոստիկանութեան պետերն, որք միշտ
հաճոյակատար են լրագրութեան հա-
մար, տարտամ տեղեկութիւններ միայն
կուտային այս գործի վրայ. բաւական
կը համարէին ըսել թէ քննութիւնն ա-
բագապէս կը յառաջանար, և թէ գործն
եղեռնադատ ատենին առջև չելած,
ամեն ինչ պիտի պարզուէր։

Խառն լրոց խմբագիրք, «Դարպան
եշխանութիւնը կը տնէ» սովորական բա-
նաձևը կրկնելու միայն հարկադրեալ,
ընդարձակօրէն գրելու համար ոճրա-
դատ ատենին առջև ելնելուն կ'սպա-
սէին, և համեստաբար ուրիշ աւելի
հասարակ եղերերգութեանց առաջին

արարուածով կ'զբաղէին։ Ընկերային անձինք առաւել գործին դէմ զգածուած էին, քան թէ գործողներուն։

Իսկզբան համրին վրայ հետաքրքրեալ էին, այն տարօրինակ անձնաւորութեան, որ միայն կրնար յայտնել զառեղծուածն եթէ կարող լինէր խօսիլ· բայց համր մը միշտ երեւակ մ'է անխօս, եթէ, ինչպէս Խաշնարած Լաղարի թատերգին մէջ, յանկարծ լեզուն բացուելով չխոյտառակէ դաւաճանն։

Եւ զրոյց ելնելով թէ համրն անարեւոյթ եղած էր, հասարակութիւնն հաւատացեր էր վերջապէս թէ երկրորդական դեր մը միայն խաղցած էր, և ոչ ևս կը խորհէր անոր վրայ։

Ոստիկանութեան և բանտերու պաշտօնէից պատուէր տրուած էր լռել այն պարագայից վրայ, որոց մէջ կատարուած էր այդ զարմանալի փախուստ, և ոստիկանութեան պաշտօնատուն էն դուրս քիչ մարդիկ գիտէին թէ գլխաւոր վկայն կը պակսէր քննութեան մէջ։

Իսկ ամբաստանեալն, ինչ ինչ նըկատմամբ, ամեն պէտք եղածն ունէր ուշադրութիւն դրաւելու համար։

Իւր կրթութեամբն և ընկերային դիրքով, Լուի Լաքոք Տը Ժանթիլեի արդարեւ նախասահմանեալ չէր ոճրագործաց նստարանին վրայ նստելու, և կարելի չէր չփոթել զայն արհեստիւ ոճրագործաց հետ, որք կողոպտելու համար կ'սպաննեն։

Բայց Լուի բաղմածանօթ չէր· դահլիճներն և մանաւանդ զբօսավայրերը չէր յաճախեր։ Իւր անունը չէր տեսնուեր առաջին ներկայացմանց յաճախորդներուն ցանկին մէջ։ Ոչ մի ակմբի անդամ էր, և չէր ընկերակցեր այն երիտասարդաց հետ, որք իրեն պէս նօտարութեան կը պատրաստուէին։

Միով բանիւ, անակնկալ դժբաղդութեամբ մը յանկարծ ընկերութեան մէջէն վերնալով, դատարկ չէր թողուր ո՛չ լուրջ և ո՛չ զբօսասէր աշխարհի մէջ։

Այս պատճառաւ ոչ ոք կը հարցընէր կը փնտռէր զայն։

Տիկին և օրիորդ Լբքոնթ ալ այն դերքը չունէին, որպէս զի անոնց վրայ ալ զբաղողներ գտնուէին։

Մայրն յոյժ հարուստ էր և աղջիկը չքնաղագեղ. բայց հարստութիւն և գեղ կատարելապէս անծանօթ կը մնան՝ եթէ չցուցնեն զիրենք։

Փարիզի մէջ կը վխտան անծանօթ միլիոնատէրք և ծածկեալ հրաշալիք։

Հարիւր հազար ֆրանք հասոյթ ունեցող անձինք կան, որք դաւառական քաղաքի մը մէջ բնակածի պէս քաշուած կ'ապրին։

Նմանապէս բնութենէն և իրենցմէ զատ մէջ լաւագոյն կերպով օժտեալ գեղաշուք օրիորդներ յաճախ զուրկ կը մնան յարաբերութիւններէ այն անհուն մայրաքաղաքի մէջ, ուր ամերիկացի և ռուս օրիորդք մեծ ազդեցութիւն կ'ընեն, քիչ մը սիրուն դէմք և հարստութեան երեւոյթ ունենալով։

Թէրէզ մին էր այն մանիշակներէն, որք կ'սպասեն որ փնտռուելով յայտնուին։

Կը ծածկէր ինքզինք, մայրենի ամարանոցին հովանիներուն տակ, այն փայլուն տօներէն զորս կը հռչակեն արդի ժամանակագիրք։

Իւր ամուսնութիւնն առանց ձայնի որոշուած էր. իւր ընտանեաց քանի մը հին բարեկամք միայն իմացած էին, վասն զի սեղանաւորին այրին կատարեալ առանձնութեան մէջ ապրած էր ամուսնոյն մահուանէն յետոյ։

Ուստի օրիորդ Լբքոնթի անունը չէր արտասանուած իւր դժբաղդ նշանածին ձերբակալման առթիւ, և գայթակղութեան հրապոյրը կը պակսէր այն հռչակաւոր դատին, որուն դիւցազնը պիտի լինէր Լուի Տը Ժանթիլի։

Գալով հայր Լբքոքի, արդարև արժանի էր դատական կալէր պէ Թրէպէնոլրադրին ընթերցողաց հետաքրքրութիւնը գրգռելու։

Եղեռնական դատի մը մէջ յաճախ չտեսնուիր ոստիկանութեան գործակալ մը, որ քիչ մնաց իւր որդին կառափնարան ղրկելու պաշտօնը պիտի ստանձ-

նէր, և այս նորօրինակ կացութիւն յոյժ յարմար էր թատերգակի մը սիրտը բերկրեցնելու։

Բայց Պ. Լը.քոք, հին և ճշմարիտ Պ. Լը.քոք, ա՛նպիսի անձանց միայն ծանօթ էր, որք սովորութիւն չունին իրենց բարեկամութեանց դաղտնիքն հասարակութեան հաղորդել։

Վաղեմի հետախուզին համբաւը տարածուած չէր հասարակութեան մէջ, և ամենէն աւելի լաւ տեղեկութիւն ստացող լրագրապետք իսկ կը կարծէին թէ Լուի Տը ժանթիյեի աննշան քաղաքացւոյ մ՚որդին էր։

Քոնթի դեռատիին բնակիչներն ալ ճիշդ տեղեկութիւն մը չունէին այն բարի ծերունւոյն վրայ, որ բաղում տարիներէ ի վեր իրենց խաղաղ թաղին մէջ կը բնակէր։

Գիտէին միայն թէ բանտարկուած էր այն երիտասարդ, որ ամեն կիրակի իրենց առջևէն կ՚անցնէր թևը Պ. Լը.քոքի տուած, և որ կրկին սպանութեան յանցանքով ամբաստանեալ էր։

Լը.քոք յոյժ սիրելի էր իւր դրացեաց։ Կը ցաւէին իւր վրայ, և շատ չէին հաւատար որդւոյն յանցապարտութեան. բայց կ՚սկսէին խորհիլ թէ ետ կեցած էր զայն պաշտպանելէ, վասն զի, դէպքէն քիչ օր յետոյ չուեր էր՝ ծանուցանելով թէ երկար ուղեւորութիւն մը պիտի ընէր, և վերադարձած չէր։

Ոստիկանութեան պաշտօնատունն ալ յուզուեր էր անոր տարակայութենէն։

Ապահովութեան պետն ալ չէր կրնար մեկնութիւն մը տալ, վասն զի քաջ կը ճանչէր զԼը.քոք, և չէր հասկընար թէ ի՛նչպէս կը լքանէր խաղ մը, որոյ դրաւն իւր որդւոյն գլուխն էր։

Իսկ Պ. Թոլպիա.ք իւր ուղածին պէս կը մեկնէր։ Կ՚ըսէր թէ ծերուկն համրին քով գնացած էր, զոր երեսուելէ արգիլելու համար փախցունել տուած էր, և անոր այս յանկարծական հեռացումէն ամբաստանելոյն անպատեղրակացութիւններ կը հանէր։

Իւր այս կարծիքն յաղթելով, հայը Լը-քոք փնտռուեր էր փութոյ պնդութեամբ, բայց ի զուր։ Ամենաճարտար լրտեսաց հետախուզութիւններն ի դերեւ ելած էին։ Ծերուկն անգտանելի եղած էր։

Կ'ենթադրէին թէ իւր կսկիծն ու ամօթն հեռաւոր երկրի մը մէջ երթալ ծածկելու համար մեկներ էր Ֆրանսայէն։

Տիկին Լը-քոնթի ալ հարցում եղած էր այն անձին վրայ, որ իւր աղջկան սկեսրայրը պիտի լինէր, բայց նա ալ պատասխաներ էր թէ տեղեկութիւն չունէր։

Ճշմարիտ կ'ըսէր։ Ապահովութեան պետը կ'երկբայէր։ Բայց չէր կրնար ստիպել զայն. հետեւաբար քննութիւնն անկէ անդին չէր կրցած անցնիլ։

Սակայն, դատական քննութիւնը պնդապէս յառաջ կը տարուէր, և Պ. Թոլպիաքի կորովամտութեան օգնութեամբ բաւական ջրաւոր ապացոյցներու խուրձ մը հաւաքուած էր համ-

ին ամենակարեւոր վկայութեան տեղը բռնելու և սպանելոյն վրայ ճիշդ տեղեկութեանց թերին լցնելու համար։

Պարութեան ամբաստանութեան ատենին ներկայացած, նա ալ ոճրագործ ատենին յղելու վճիռ տուած էր։

Եւ ապրիլի մէջ օր մը լուր եկաւ թէ Արպալէթ փողոցի կինն սպաննող ոճրագործը պիտի դատուէր այս գեղեցիկ ամսոյ երկրորդ հնգեւանեկին վերջն, ուր եղրեւանիները ծաղկիլ կ'ըսկսին։

Փարիզցիք, քաղաքական դիպաց օգնութեամբ, գրեթէ կորուսած էին այս սարսափելի ոճրագործութեան յիշատակը. բայց առաւօտեան ու երեկոյեան լրաթերթք սկսան յիշեցնել անոր սրտայոյզ պարագայներն և հետաքրքրութեան երկրորդ հունձք մը քաղել՝ տարօրինակ պատմութիւններ շերջաբերութեան հանելով Լուի Լը-քոքի վրայ։

Տոն Ժուան և Օթելլոյ մը, Ֆրա-Տիավոլոյ մը, Լովէյս մ'ըրին զայն,

գեղեցիկ, խրոխտ, տխուր և նախանձոտ։ Ամենեսի արկածներ վերադրեցին անոր, որ դիւրաւ կրնային կէս երկոտասանեակ թերթօն—վէպերու նիւթ մատակարարել։

Շատ չանցած, Ֆրանսայի մէջ կին մը չճնաց որ չերազէր ներկայ գտնուիլ այս բանաստեղծական ոճրագործի հոգեվարքին։

Անգլիայէն երեք կանայք գիր գրրեցին անոր և ամուսնանալ առաջարկեցին։

Թէրէզ և մայրը պէտք չունէին, աւա՜ղ, մուտք խնդրելու դատական առենասրահն, ուր պիտի դատուէր Լուի։

Արդէն հրաւիրուած էին ընդհանուր դատախազէն, որ անոնց վկայութիւնն յառաջ կը կոչէր հաստատելու համար թէ ոճրին գործուած ժամուն ամբաստանեալն իրենց տունը չէր։

Արդ, ապրիլի վերջին օրը, գարնան քաղցրիկ առաւօտ մը, մեծ բազմութիւն խռնեալ էր եղեռնադատ առենի սրահին մէջ. առանձնաշնորհեալ բազմութիւն մը, վասն զի երբէք թատերական նոր հեղինակի մ'առաջին ներկայացում մ'այսչափ ընտիր հանդիսատեսներ ունեցած չէր։

Համայն Փարիզ հոն էր, ձիարշաւներու, ակումբներու, դահլիճներու Փարիզը։ Բարձր ազնուականութիւնն ու բարձր սեղանաւորութիւնն իրար կը խթէին անդ։ Ակադեմիան իւր ներկայիչներն ունէր, և աշխարհավարական անձինք ալ պակաս չէին։

Աւելորդ է ըսել թէ լրաբերաց բանակն ամբողջապէս հոն էր, յաւելուած ունենալով բազմաթիւ լրագրաց տնօրէններ և նշանաւոր հրատարակիչներ, առանց հաշուելու հռչակաւոր թատրերգակներն և յաջողակ վիպագիրներն։

Ամենէն գեղեցիկ դերասանուհիք ջանահնար եղեր էին փոքրիկ տեղ մը ձեռք բերել, և դատաւորաց աթոռներուն ետին ալ, յատուկ շնորհիւ, նշանաւոր օտարազգիք նստած էին, որոց մէջ կը տեսնուէր հնդիկ նապաստ

մը, փառաւոր ծերունի մը, արևելեան ճոխութեամբ հագուած։

Ա.յս տարաշխարհեայ մեծատունն երկայն մօրուք մ'ունէր սպիտակ, որ իւր ցորենագոյն երեսին երեք չորրորդը ծածկած էր։ Սեւամորթ ծառայ մ'անկէ երեք քայլ հեռի կանգուն կեցած էր, և դրեթէ իւր տիրոջ չափ իւր վրայ կը հրաւիրէր հետաքրքիր բազմութեան հայեացքը։

Բնան վայրկենի չափ սպասումէ յետոյ, դատաւորաց համար պատրաստեալ աթոռներուն դիմացի կողմէն փոքրիկ դուռ մը բացուելով, սարսուռ մ'անցաւ ներկայ դատուողներուն վրայէն։

Լուի Լ.քոք ներս մտաւ երկու պահակներու հետ և նստաւ՝ առանց նայելու բազմութեան, որ զինքը տեսնելու համար կը յուզուէր։

Բոլորովին սև հագած էր, և բաւական հանդարտ դէմք մ'ունէր, թէ և յոյժ տժգոյն։

Նստելէն յետոյ՝ ծռեցաւ քանի մը

խօսք ըսաւ իւր փաստաբանին—ակնաւոր մը որ հետամուտ եղած և զայն պաշտպանելու շնորհը ձեռք բերած էր — . յետոյ արմուկովն իւր առջեւի անկրպետին կրթնեցաւ, գլուխն երկու ձեռներուն վրայ, և արձանի պէս անշարժ կեցաւ։

Դեղուհիներն, որք ամբաստանելոյն դէմքին վրայ սրտայուզութեան նշաններ տեսնել կը յուսային, բացարձակապէս խաբուեցան։

Պ. Լ.քոք կը թուէր թէ բնաւ չէր կասկածեր թէ իւր գլուխը վտանգի մէջ էր։ Ա.յցելութեան գնացող և դահլիճի մը մէջ սպասող բարեկիրթ մարդու մը կեցուածք ունէր։

Իւր համարձակ և քիչ մ'ալ սեղ ձեւերը չար մտօք մեկնուեցան։

Եղեռնական դատերու ներկայ գտնուող հասարակութիւնն՝ ամբաստանելոյն անձկութիւնը կը սիրէ տեսնել, և գոհ կը լինի չփոթեալ տեսնելով զայն։ Ա.յս պատճառաւ, ամբաստանելոյն սաղարիւնութիւնն անամօթութիւն կը հա-

մարի, և համբերատարութիւնն անընդ-
դայութիւն։

Ըստ իրենց դատողութեան՝ այդ
գեղեցիկ երիտասարդ չէր խոնարհեր
ըստ բաւականի։ Կ'ուզէին որ լար։

Բայց զայն մեղադրողները թէ իւր
վիճակին սարսափելի ծանրութիւնը չէր
զգար, եթէ կարենային անոր սրտին
մէջ կարդալ, աւելի ներողամտութիւն
կ'ունենային։

Տարաբաղդ երիտասարդը նոյն մի-
ջոցին իսկ սոսկալի տանջանք կը կրէր,
և գերմարդկային ճիգեր կ'ընէր իւր
տագնապը ծածկելու։

Ոչ թէ կառավարանէ կը վախնար,
այլ այն չարչարանքէ՝ զոր դատավարա-
կան սովորութիւնք պիտի տային իրեն
վատանունութեան նստարանին վրայ։

Գիտէր որ Թէրէզ վկայութեան կոչ-
ուած էր, գիտէր որ զինքը կորացած
պիտի տեսնէր ցասուցեալ ամբաստանչի
մ'անագորուն խօսքերուն ներքև, և
իւր պատասխանները պիտի լսէր դա-
տաւորի մը հարցմանց, որ մարդաս-

պանի մը հետ ակնածութեամբ վար-
ուելու պէտք չպիտի զգար։

Կը գուշակէր մանաւանդ թէ դա-
տաւորն իրենց սիրոյն վրայ, սոսկալի
չարաբաստութեամբ խղճուած ամուս-
նութեան վրայ պիտի խօսէր, իւր բեր-
նէն խոստովանութիւն մը քաղելու հա-
մար իւր փղձկեալ նշանածը պիտի ցուց-
նէր իրեն, և սիրտը կը մորմոքէր
խորհելով թէ յակամայից դառն տան-
ջանք պիտի պատճառէր այն դժբաղդ
աղջկան, զոր տակաւին կը սիրէր նոյն
բուռն սիրովն որով սիրած էր այն օրն
ուր միմիանց հետ ի սպառ միանալ
ուխտած էին փոխադարձաբար։

Մաղասի ցուրտ խցիկներէն միոյն
մէջ կրած երկար բանտարկութեան մի-
ջոցին՝ Թէրէզի պատկերը չէր դադրած
իւր մտքին առջեւ ներկայ գտնուելէ։
Հանապազ զայն կ'երազէր, և անդառ-
նալի կերպիւ թռած երջանկութեան
դառն յիշատակը գիշեր ցերեկ կը խոշ-
տանգէր զայն։

Քանի՛ քանի անգամ մեռնելու փա-

փաքեր էր դատաստանի ծանականքը չկրելու համար։ Քանի՛ քանի անգամ ըսեր էր ինքնիրեն թէ իւր նշանածը սոսկում և արհամարհանք միայն կրնար ղդալ իւր վրայ։

Երեք ամսէ ի վեր բացարձակ ա-ռանձնութեան մէջ կ'ապրէր։ Մարդ տեսնելու արդելքն ոճրադատ ատենին դումարումէն ութ օր առաջ վերցած էր։

Համլին փախստեան վրայ զայն հարցաքննած ժամանակ՝ քննիչ դատաւորը պարտաւորուեր էր իմացնել անոր թէ հայը Լըքոք աներեւոյթ եղած էր, և թէ կասկած կար թէ նա նպաստած էր համլին փախստեան։

Բայց երբոր Լուի լուր հարցուցեր էր օրիորդ Լըքոնթի վրայ, երբոր թոյլտուութիւն խնդրեր էր նամակ մ'անոր գրելու, պատասխան տրուեր էր թէ անհնարին էր, վասն զի վկայութեան կոչուած էր. հետեւաբար բնաւ լուր չունէր անոր վրայ։

Ամեն բան կրեր էր անտրտունջ։ Ցուսահատութիւնն առաւել կը գրգռէր անոր կորովը. ամեն բան աչքն առած էր, ամեն բանի պատրաստ էր. և եթէ կ'ուզէր մինչեւ ցվերջ մաքառիլ, պատճառն այս էր որ, համոզմամբ մը զօրացեալ, պատուոյ խնդիր կը համարէր պարտութիւն չխոստովանիլ՝ մինչեւ իսկ մահուան դատակնիքը լսելէ յետոյ։

Ուստի իւր դատաստանին մէջ՝ բերդի մը վրայ յարձակող և մեռնելուն վրայ աներկբայ եղող զօրականի մը համբերատար քաջասրտութիւնը կը բերէր։

Հետեւաբար՝ դէմքին վրայ տեսնուած խրոխտութիւնն, որ այդ քաջասրտութեան արդիւնքն էր, զարմանք և դժգոհութիւն կը պատճառէր ներկայ գտնուողներուն։

Սակայն կանայք թշնամի չէին իրեն։ Կ'ենթադրէին թէ բուռն կիրքեր այդ ոճրին առաջնորդած էին զայն, և սիրած լինելն ի հաշիւ կ'առնուին։

Թերեւս նուազ ներողամիտ կը լինէին եթէ տգեղ լինէր. բայց Լուի Լըքոք իւր ֆիզիքական առաւելութիւն-

ներէն բան մը չէր կորուսած բանտին մէջ։ Տժգնութիւնն առաւել կը փայլեցնէր դէմքին բնական աղնուութիւնն, և այն կապուտակ ակօս, զոր վշտակրութիւնը պեղած էր աչքին կոպերուն տակ, առաւել ևս կը ցայտեցընէր սև խոշոր աչերուն դեղեցկութիւնն։

Երդուեալ դատաւորաց և ատենակալաց ներս մտնելէն առաջ քանի մը վայրկեան անցան, որոց միջոցին բաղմութիւնը չդանդաղեցաւ իւր զգայած տպաւորութիւնն յայտնել հծծելով, որոյ շչունչը բնաւ չչփոթեց զամբաստանեալն, որ անզգած էր միշտ։

Դէմքն ոչ ևս կը տեսնէին, բայց ատենասրահին մէջ տեղը մեծ սեղանի մը վրայ դրուած ապացուցական նիւթերը կը ցուցնէին միմեանց։ Այն նիւթոց մէջ կային արդարեւ բաներ, որք տեսնելու արժանի էին։

Սեւցած կլոր պողովատէ ծայրով դաւաղանի մը քով, որ ամբաստանութեան խօսքին նայելով՝ Պ. Լէօրէոյի սպանման ծառայած էր, դաճէ կաղապարներ կը տեսնուէին, որք ոճրագործութեան գիշերը պորմին ձիւնէրուն վրայէն քալող ոտքերուն ճիշդ ձևն հանած էին։

Քիչ մ'անդին կը տեսնուէին փղոսկրէ երախակալով դաշոյնն և Սլաքի տիկինը՝ զոր ոճրագործը զոհին սրտին վրայ դամած էր, փոքրիկ սեղանն՝ որոյ վրայ բացուած էր ամբաստանելոյն տան մէջ գտնուած հաբերուն, արեան բիծեր ունեցող ժանեկազարդ սենեկազգեստը, վարդագոյն մուճակներն և թառամեալ կամելիան։

Բայց ամենէն աւելի ուշադրութիւն գրաւողն էր մեղրամոմէ կիսարձանն այն տարաբաղդ կնոջ, զոր անդ գտնուողներէն շատեր դիակնարանին մէջ տեսած լինելնին կը յիշէին։

Կիսարձանն ոքանչելի նմանութիւն մ'ունէր, և ա՛ինչափ ճարտարութեամբ կաղապարուած էր, որ կարծես թէ այն վաղեմի մահագործ վարպետներուն միոյն ձեռքէն ելած էր, որոց արհեստն,

յոյժ ծաղկեալ եօթեւտաններորդ դարու մէջ, այժմ բոլորովին լքեալ է։

Արդիւնքն հիանալի էր, բայց դատական իշխանութիւնն հետաքրքիր գեղուհեաց սիրտը շարժելու համար չէր որ այն հրաշակերտն ի ցոյց դրած էր, այլ կը յուսար որ սպանելոյն անձնաւորութիւնը ճանչելու կրնար ծառայել, որովհետեւ տակաւին չէր ճանչուած։

Դիպուածը կրնար ունկնդրութեան բերել օտարազգի մը, անգլիացի մը. և որովհետեր անգլիուհի լինելն ստուգուած էր, կը յուսացուէր որ կրնար պատահիլ այն միջադէպերէն մին, որ՝ ինչպէս կ'ըսեն՝ թատրոնի մը սրահը կը յափշտակեն։

Եւ իրօք, հասարակութեան մեծ մասին համար, եղեռնադատ ատեան մը թատրոնէ տարբերութիւն չունի։

Միայն թէ, այս պարագայի մէջ, հանգուցին լուծումն ուրիշ ներկայացման մը կը յղուի, այսինքն երդուեալ դատաւորաց մէկ ուրիշ մօտաւոր նստին.

և կային մարդիկ որք յատկապէս եկած էին ջահերով արտասանուած մահուան դատակնքոյ մ'աղդեցութիւնը տեսնելու։

Ասոնք կը մաղթէին որ Լուի Լրքոք նոյն նստին մէջ ի մահ դատապարտուէր։

Ամեն օր առիթ չներկայանար գեղեցիկ և վայելչաշուք երիտասարդի մ'այլագունիլն ու դողդողելը տեսնելու, երբոր դատաւոր մը, յուզեալ սրտիւ, ինչպէս որ կը վայլէ, պատժական օրինաց 302 ՐԴ. սարսափելի յօդուածը կարդայ։

Գլխաւորապէս կանայք կը փափաքէին որ այս հաճոյական տեսարանէն բան մը չկորսնցնէին։

Երկար չսպասեցին վարագուրին բացման։

Բարապան մը ծանոյց. Ատենակա՛լք։

Եւ ահա ներս մտան ատենակալք։

Երդուեալ դատաւորք նստան. լռութիւն տիրեց, խոր լռութիւն մը, որ տեսարանին ահարկութիւնը կ'աւելցնէր։

—Ամբաստանեա՛լ, ոտքի վրայ ելէք, ըսաւ նախագահն։

Ամբաստանեալն արդէն ոտքի վրայ էր, ուղղաբերձ և բարձրաձայն կանգնած։

—Ի՞նչ է ձեր անուն։

—Լուի-Ալպէր Լը.քոք։

—Դուք շատ անգամ ուրիշ անուն մ'ալ առած է.ք, զոր իրաւունք չունէի.ք գործածելու։

—Հայրս այն անունով ճանչուած էր։

—Ինչպէս թող լինի, անցնի՛նք։ Ձեր տարի՞քը։

—Քսանեւութ։

—Ո՞ւր ծնած է.ք։

—Փարիզ։

—Ձեր արհե՞ստը։

—Տոքթոր իրաւաբանութեան։

—Ձեր վրայ ամբաստանութիւն կայ թէ վերջին յունուար ամսոյ մէջ երկու սպանութիւն գործած է.ք։

Նստէ՛.ք և ուշադրութեամբ ունկն դրէ.ք ամբաստանագրին ընթերցման։

Լուի Լը.քոք հնազանդեցաւ, և ատենադպիրն սկսաւ յստակ ձայնիւ կարդալ խեղճ Թէրէզի նշանածին վրայ

ծանրացած սարսափելի ամբաստանութեանց հետեւեալ տեղեկագիրը։

«Վերջին յունվար ամսոյ 13 էն 14 լուսցած գիշերը, ժամ երեքին միջոցները, Փարիզի տասներեքերորդ շրջանակին պահակախմբերէն միոյն վերաբերեալ երկու պահակ, Քորվիզար փողոցին և Շան-տը-Լ'Ալուէթ փողոցին անկիւնը մարդ մը բռնեցին, որ մեծ արկղ մը շալկած կը տանէր։

Կասկածելով թէ գողցած էր, բռնեցին պահականոցը տարին՝ առանց զբաղելու ուրիշ երիտասարդ և գեղանի մարդու մը վրայ, որ արկղաբարձէն քանի մը քայլ առաջ կ'երթար, և հեռացաւ գնաց դէպի Պուլվար տ'Ի-թալի պողոտային կողմն։

Արկղը բացուեցաւ պահակապետին հրամանաւ։ Մէջը դեռատի և գեղեցիկ կնոջ մը դիակ կար, որ սրտէն զարնուած էր դաշոյնով։

Զէնքը վերքին մէջ մնացած էր, և խաղի թուղթ մը ծակած, զոր ոճրագործն իւր զոհին կուրծքին վրայ թո-

ղած էր, իբր թէ իւր դարշելի գործն ստորագրել ուզելով։

Բռնուած մարդն անմիջապէս հարցաքննուելով հասկցուց նշանացի թէ խուլ-համր էր և ստուգուեցաւ որ ճըշմարիտ էր։

Դատական իշխանութիւնը չէր կըրնար անկէ բացատրութիւններ սպասել՝ մանաւանդ սա պատճառաւ որ այդ մարդ պարզապէս կրաւորական դեր մ'ունեցած կ'երևի գործին մէջ, և գուցէ անգիտակից գործակատար մը միայն եղած է։

Հետևեալ օրը, դատական իշխանութեան տրամադրութեանը ներքև գտնուող ապահովութեան տեսչին հաղուադիւտ ճարտարմտութեամբ կատարած հետախուզութեանց շնորհիւ գըտնուեցաւ որ ոճիրն Արպալէթ փողոցը տան մը մէջ գործուած էր, ուր քանի մ'ամսէ ի վեր կը բնակէր սպանեալ կինը։

Մինչեւ իսկ կրցին որոշել թէ տանը ո՛ր սենեկին մէջ զարնուած էր կինն,

որուն ո՛վ լինիլը դեռ չէ կրցած ստուգուիլ, բայց անգլիուհի լինիլ կը թուի։

Միանգամայն տանը ճաշարանին կից մառանի մը մէջ Պ. Լէօրէօ անուն վաճառականի մը մարմինը կը գտնուէր, թոպամահ սպաննուած։

Այդ երկու ոճիրք միակ անձէ մը գործուած կրնային լինիլ. անշուշտ մին հետևանք էր միւսոյն, և ոճրագործը կ'ուզէր մի և նոյն եղանակաւ անհետացընել երկու դիակներն։

Սպանութեանց նպատակը գողութիւն եղած չէր, վասն զի որ և է թանկագին նիւթ վերցած չէր։

Դուռ կամ պատուհան կոտրելով ներս մտնելու նշան մը չկար, և ոճրագործը պարտէր յարաբերութիւն ունենալ տան վարձակալուհւոյն հետ, որոյ դուռը կամովին բացուած էր։

Այդ կին, ըստ ամենայն երևութի, յարաբերութիւններ ունէր սպանեալ վաճառականին հետ այնպիսի պատճառաց վրայ հիմնեալ, զորս բարոյականը կը դատապարտէ. և եթէ այդ յարա-

բերութիւնք չեն կրցած յստակապէս ստուգուիլ, պատճառն այն է որ երկու զոհերն ալ հաւասարապէս շահ ունէին գաղտնի պահելու։

Վաճառականն ամուսնացեալ էր և ընտանեաց հայր։ Անգլիուհին ալ տարփածու մ'ունէր, զոր կը խաբէր։

Այդ տարփածուն, կոխելով զայն՝ երբոր հակատուփող հոմանիին հետ կը ճաշէր, վրէժ առաւ երկուքն ալ ըսպաննելով։

Ամբաստանութիւնն ի սկզբան ուրիշ ենթադրութիւն մ'ըրած էր։ Խորհած էր թէ պարոն Լէօրէոյի սպանութիւնը տարփաւորին և տարփուհւոյն համախոհութեամբ կատարուած էր, և ապա տարփուհին ալ սպաննուած էր իւր մեղսակցէն։

Բայց վաճառականն իւր վրայ կարեւոր արժէքներ ունէր, որոց ձեռք դպած չէր։

Ուրեմն շատ հաւանական է որ այդ ոճիրք նախանձէ ու վրիժառութենէ զատ ուրիշ շարժառիթ չեն ունեցած։

Եւ, ինչպէս որ ալ լինի, ապացուցուած է թէ ամբաստանեալը միայնակ գործած է զանոնք։

Անգլիսի հայր մ'ունենալով, որ գեղեցիկ հարստութիւն մը դիզած է թաքուն՝ եթէ ոչ անխոստովանելի արհեստի մը շնորհիւ, Լուի Լբքոք փայլուն կրթութիւն մ'ստացած է նախ Անգլիոյ մէջ, ուր քանի մը տարի անցուցած է, յետոյ Գերմանիոյ մէջ, և վերջապէս ի Ֆրանսա, ուր իրաւագիտութեան երկաստիճան տոքթորութիւն ստացած է։

Նստարութիւնն իրեն ասպարէզ ընտրած լինելով, գրասենեակ մը գնելու և յոյժ պատուաւոր ընտանիքէ աղջիկ մ'ամուսնութեան առնլու վրայ էր, երբոր ձերբակալեցաւ այնպիսի դիպուածով մը, որ արդարեւ կրնայ նախախնամական կոչուիլ։

Իւր յանցապարտութեան ապացոյցներն առատ են։

Սպանեալ կնոջ լուսանկար պատկերը գտնուեցաւ իւր քով, պատկեր մը,

որ հոմբերոնեան կոչուած խաղի մ'զբաղեալ կը ներկայացնէ զայն։

Այդ պատկերին կրայ, որ մէկ օրինակ միայն հանուած է փարիզցի լուսանկարչէ մը՝ որ ճանչեց զայն և վերկայեց իրողութեան, ուղերձ մը գրուած է սպանելոյն ձեռքը, որ բնաւ տարակոյս չթողուր։

Կինը Լուի Լբքոքի տուած էր զայն, սիրային տեսարան մը յիշեցնելու համար, ուր հոմբերոնեան խաղն ալ մասն ունէր։

Նոյն խաղը գտնուեցաւ նաեւ ամբաստանելոյն բնակարանին մէկ ծածուկ սենեկին մէջ։ Թուղթերը սեղանի մը վրայ բացուած էին՝ ինչպէս լուսանկարին մէջ, և հատ մը կը պակսէր, ճշդիւ այն՝ զոր դաշոյնը ծակած էր, – Սլաքի տիկինն։

Ամբաստանեալը փորձ փորձեց մեկնել այդ զուգադիպութիւն այնպիսի բաներ ըսելով, որոց ստութիւնն հասկըցուած է։

Այդ իրողութիւն բաւական էր ծանր

կասկած մը կաղմելու իւր դէմ. բայց ուրիշ նիւթական ապացոյցներ ալ գտնուած են, որք անժխտելի կերպիւ կը հաստատեն Լբքոքի մեղապարտութիւնն։

Հաստատուած է թէ յունվար 14էն 15ի գիշերն, որ ոճրին հետեւեալ օրն է, Արպալէթ փողոցի պորմը մտած է։

Անդ չէր կրցած բռնուիլ, վասն զի յաջողեր էր պրծիլ տանը վրայ հսկող պահակաց ձեռքէն, որք յետոյ ճանչեցին զայն, ո՛չ թէ դէմքէն, զոր խնամով ծածկած էր, այլ ձայնէն և զգեստներուն ինչ ինչ պարագայներէն։

Միւս կողմէ, այն գիշերն ոստիկանութեան գործակալի տոմսակ մը ցոյց տուած էր, որպէս զի թող տան զինքն, և կը հասկցուի իւր իսկ խոստովանութիւններէն թէ իւր ձեռքն անցած էր իւր հօր ժամանակաւ ոստիկանութեան ծածուկ օժանդակի պաշտօն վարելուն առթիւ ստացած տոմսակը։

Նմանապէս կապարածայր դաւազան մը գտնուած է ամբաստանելոյն

բնակարանէն, գունտին վրայ արեան բիծերով, և ապացուցական նիւթերէ մին է։

Այդ գաւազանով տրուած է անշուշտ այն հարուածն, որ պարոն Լէօրէոյի գանկը ջախջախած է։

Արպալէթ փողոցի տան մէջ գտնուած է նամակի պատեան մը, որոյ վրայ սպանեալ կնոջ անունը գրուած է, Մարի Ֆասիթ, և Թէաթր-Ֆրանսէի հրապարակի թղթատարական գրասենեկին դրոշմը կը կրէ։ Հասցէն ամբաստանելոյն ձեռագիրն է, որ Ռիվոլի փողոցը նօտարական գրասենեկի մը մէջ կ'աշխատէր յիշեալ թղթատարական գրասենեկէն քիչ հեռի։

Վերջապէս, չկրցաւ արդարացնել յունվար 13 էն 14 և 14-15ի գիշերներն իւր ժամանակն ի՛նչպէս անցուցած լինիլն. և այս ծանր գործը քննող դատաւորը Լէքոքի դրչէն ելած նամակ մ'ստացած է այնպիսի անձէ մը, որ չէ ուզած ինքզինք յայտնել. նամակ մը, որոյ պարունակութիւնն համաձայն է խոստովանութեան։

Արպալէթ փողոցի կրկին ոճիրը ծանուցուած է անոր մէջ, սպառնալեաց ձեւով, Մարի Ֆասիթի, ամենայստակ և ամենաբացորոշ կերպիւ։

Այս ընկճող ապացոյցներուն դէմ ամբաստանեալը չոր ժխտումներ միայն կ'առարկէ, որք սուտ կ'ելնեն իրողութեամբք և վկայութեամբք։

Լռութեան մէջ կ'ապաստանի, որ կը դատապարտէ զինքն, և երբոր խօսի, դանդատելու համար է միայն թէ զինքը չերեսեցին խուլ-համրին հետ, որ սպանեալ կնոջ դիակն արկղի մը մէջ տարած միջոցին բռնուած է։

Իւր այնչափ թախանձանօք խընդրած երեսումը չկրցաւ կատարուիլ յոյժ ցաւալի միջադէպի մը պատճառաւ։

Խուլ-համրը փախաւ այն պահուն՝ յորում Մաղասի բանտէն դուրս հանուած էր Լէքոքի հետ երեսուելու համար։

Ո՛չ անունը գիտէին, ո՛չ բնակավայրն, և՝ հակառակ ամենէն փութաջան հետախուզմանց՝ չկրցաւ դեռ գտնուիլ։

Հայր Լը.քոք դիւրացուցած է այդ փախուստ՝ անհաւատարիմ գործակալի մ'օգնութեամբ, և ինքն օտար երկիր չուած է հրապուրած գործակալին հետ։ Այս փախուստ յորդառատապէս կը հաստատէ ամբաստանելոյն յանցաւորութիւնն։

Արդարեւ, հայր Լը.քոք իւր որդւոյն անմեղութիւնն ապացուցանելու ձեռնարկած էր։ Ի սկզբան կրցաւ հաւատալ անոր անմեղութեան, բայց յետոյ, ոչ եւս հաւատալով և գիտնալով որ համբը պիտի ճանչէր իւր որդին, անհետացնել տուաւ այդ վտանգաւոր վկայն։

Դատական իշխանութիւնը չէր կրնար զինաթափ լինիլ այնպիսի յանդուգն խաղով մը, որոյ նպատակն էր ճշմարտութեան յայտնութիւնն արգելուլ։

Արպալէթ փողոցի սպանութեանց հեղինակը պէտք չէ օգտի իւր հօր մեղապարտ հնարիմացութիւններէն։

Ընկերութեան համար կարեւոր է որ եղեռնագործին պատիժը չյապաղի, և այդ սոսկալի ոճրին զոհերուն վրէժն արագապէս լուծուի։

Այս մարդասպան, որ չվախցաւ անդէն ծերունի մը հարուածել և վատաբար տարփուհի մը դաշունել, զոր Թերեւս սիրած էր, Լուի Լը.քոքն է։

Իրողութիւնք ցոյց տրուեցան. այժմ կը մնայ մարդը ճանչցնել։

Իւր վարքը կանոնաւոր էր. յոռի նախընթացներ չունի, կամ գոնէ չերեւիր որ, Ֆրանսա վերադառնալէն ի վեր, եպերելի գործ մ'ըրած լինի։

Իւր արհեստին պարտականութիւնները ճշդիւ կը կատարէր. իւր դրամական վիճակը լաւ էր և յոյժ շահաւէտ ամուսնութիւն մը կնքելու վրայ էր։

Կրնայ իսկ հարցուիլ թէ իւր սպանած կնոջ հետ ունեցած յարաբերութեանց յայտնուելէն անմերկբայաբար յառաջ գալիք խղման մ'երկիւղը չէ՞ մղած զինք այդ սպանութիւն ընելու։ Դատաւորաց կը մնայ գնահատել։

Բայց եթէ Լը.քոք ցոփ չէր, անառակ չէր, յայտնի եղած է թէ բարե-

կամեր ալ չունէր, ընկերութեանց մէջ չէր յաճախեր, իւր հասակին նեբելի եղած զուարճութեանց բնաւ հետամուտ չէր. միով բանիւ, առանձնասէր և գրեթէ ծածուկ կեանք մը կը վարէր։

Վերջապէս, բուռն և ծածկամիտ բնաւորութիւն մը ցոյց տուած է միշտ։

Այսպիսի մարդ մը կարող էր պատրաստել և ի գործ դնել Արպալէթ փողոցի կրկին ոճիրներն։

Հետեւաբար Լը-քոք (Լուի-Ալպէր) ամբաստանեալ է, այլն, այլն։»

Այն ամբաստանագրին ընթերցումն երկիւղած ուշադրութեամբ լսուեցաւ երդուեալ դատաւորներէն և ներկայ հասարակութենէն։

Նապոլեոն ալ անոր մէ՛կ բառը չկորսընցուց, վասն զի կատարելապէս կը հասկնար ֆրանսերէն լեզուն։

Լուի Լը-քոք ալ մտիկ ըրաւ անհոգ դէմքով մը, որ եղեռնադատ ատենին ամենէն հին յաճախորդներն իսկ կը զարմացնէր։

Կրնար երդնուլ մարդ թէ խնդիրն անոր վրայ չէր։

Նորէն ոտքի վրայ ելաւ նախագահին հրաւիրանօքն, որ ըսաւ իրեն.

—Ձեր վրայ եղած ամբաստանութիւնք յոյժ ծանր են։ Ձեզ լինելիք հարցմանց միջոցին պիտի պատասխանէք անոնց։

Բայց նախ պարտիմ հարցնել ձեզ թէ տակաւին կ'ուրանա՞ք ձեր մանակցութիւնն այն եղեռանց՝ որովք ամբաստանեալ է։

—Բացարձակապէս, պատասխանեց Լուի Լը-քոք անյողդողդ ձայնիւ։

—Ուրեմն իմ պարտականութիւնս է դիտել տալ ձեզ թէ ձախող ճանբու մը մէջ կը մտնէք։

Եւ հասկցնեմ ձեզ։

Ամբաստանութիւնը կը հաստատէ թէ դուք է.ք հեղինակն երկու անիծապարտ սպանութեանց, բայց չճշդեր շարժառիթն որ ձեզ մղած է գործել։

Դուք բաւական ուշմութիւն ունիք քաջ զգալու համար թէ ձեր

յանցանքը կը ծանրանայ կամ կը թեթևնայ այս կամ այն պատճառաւ՝ զոր ունեցած է ձեր գործն։

Օրինակի համար, եթէ հաստատուի թէ ձեր զայրացած միջոցին զարկած էք Պ. Լէօրէօ և Մարի Ֆասիթ, յայնժամ ձեր յանցանքն առաւել թեթև կը լինի քան եթէ կանխամտածութեամբ սպանած լինէիք։

—Ես բնաւ չքմեղանք չունիմ յառաջ կոչելիք. ես անմեղ եմ։

Այս պարզ պատասխան խոր տպաւորութիւն մ'ըրաւ համայն ունկնդրաց վրայ։

—Ձեր օգտին համար էր որ կը յորդորէի ձեզ փոխել այդ դրութիւն, ըսաւ նախագահը։ Թերևս պիտի սորջանաք իմ խորհրդիս չանսալնուդ վրայ։

Կը հրաւիրեմ ձեզ այժմ պարզ և մեկին կերպիւ պատասխանել ձեզ ուղղելիք հարցմանցս։

Հարկաւ չպիտի շփոթեցնեն ձեզ՝ քանի որ անմեղ էք։

Ե՞րբ վերադարձաք ի Ֆրանսա։

—Ութ տարի կայ։

—Գերմանիայէ՞ն կուգայիք։

—Այո՛, պարոն, Հայտելպերկէն, ուր համալսարանին ուսմանց կը հետեւէի։

—Հոն աստուածաբանական տոքթորի մը տունը չէի՞ք յաճախեր։

—Այո՛, ամուսնութեան խնդրած էի անոր աղջիկն և հաճութիւնն ստացած, բայց հայրս դէմ կեցաւ։

—Այդ կէտի վրայ կը վերադառնանք մէկ պահէն։ Դուք Գերմանիա երթալէ առաջ Անգլիա բնակա՞ծ էք։

—Այո՛, քանի մը տարիներ։

—Ուրեմն անգլիերէն կը խօսիք։

—Կատարելապէս։

—Ի՞նչ յարաբերութիւններ ունէիք Անգլիոյ մէջ։

—Ինչ որ կրնայ ունենալ վեշտասանամեայ տղայ մը, աշակերտ գիշերօթիկ վարժարանի, ուր առաւել ազատութիւն կայ քան Ֆրանսայի վարժարանաց մէջ։ Անդ շրջակայ հարուստ երկրագործներէ ոմանց տունը կ'երթեւեկէի։

—Մինչեւ իսկ անոնցմէ մէյն աղջիկն առեւանգել փորձեցիք։

—Ճշմարիտ է, պարո՛ն։

—Անունն ի՞նչ էր։

—Ճորճինա Սմիթ։

—Ճիշդ է։ Բայց նոյն ժամանակները Լոնտրայի մէջ կամ շրջակայները ծանօթութիւն չունեցա՞ք Մարի Ֆասիթ անուն կնոջ մը հետ։

—Ո՛չ, պարոն։

—Անցնինք, ըսաւ նախագահը։

Պատերազմին սկիզբէն զինուոր դրրուեցաք յառաջխաղաց գունդի մը մէջ, և գովելի վարմունք ունեցաք պատերազմին ժամանակ։

Յետոյ ձեր իրաւաբանական ուսմունքն աւարտելով տոքթորութեան աստիճան ստացաք, նօտարի մը դրասենեակը մտաք, և մտադիր էիք նօտարական պաշտօն մը գտնել։ Ձեր հօր հարստութիւնը կարող կ'ընէր ձեզ առ այդ։

Վերջապէս յոյժ պատուաւոր ընտանիքէ աղջկան մը հետ ամուսնանալու վրայ էիք։

Լուի Էրքոք գլուխը խոնարհեցուց ի նշան հաւանութեան, բայց պատասխան չտուաւ, և հետաքրքիր դեղուհիներն որք ուշադրութեամբ զայն կը դիտէին, կարծեցին տեսնել թէ կը ժժգունէր։

—Ի՞նչպէս կեանք կ'անցունէիք Փարիզի մէջ։

—Բաւական քաշուած կեանք մը։ Ես չեմ ախորժիր ընկերութիւններէ։ ուստի յոյժ քիչ անգամ կ'երթայի։ Միւս կողմէ շատ զբաղեալ էի, և աղատ վայրկեաններս ալ հօրս կը նուիրէի։

—Ներեցէք, արդարև ձեր ամեն կիրակիները ձեր հօր հետ կ'անցունէիք։ բայց շաբթուն մէջ իրիկուններն ի՞նչ կ'ընէիք։

—Շատ անգամ դրասենեակս կը վերադառնայի ճաշէս յետոյ։ Երբոր հարկադրեալ չլինէի, տուն կը վերադառնայի և անդ կ'աշխատէի։

—Ձեր հասակին մէջ քիչ հաւանական է այդ։ Ձեր դէնպանը վկայեց թէ ամառուան վերջէն ի վեր յաճախ

կէս գիշերէն յետոյ տուն կը վերադառնայիք։

—Թատրոն կ'երթայի մերթ ընդ մերթ։

—Կ'ընդունիմ զայդ։ բայց պարտիք խոստովանիլ թէ զարմանալի բան է որ ձեր երեկոյեան պարապ ժամերն ուրիշ կերպիւ գործածած չլինիք երբէք։

Ամբաստանութիւնը կը հաստատէ թէ Արպալէթ փողոցը կ'անցունէիք։

—Ամբաստանութիւնը կը սխալի։ Վերջին ժամանակներս Պուլոյն կ'անցունէի։

—Տիկին Լը.քոնթի տունը։ Ժխտող չկայ զայդ։ բայց ժամը տասնին (կէս գիշերէն երկու ժամ առաջ) կը մեկնէիք, երբեմն աւելի կանուխ։

Այսպէս, յունվար 13 ին իրիկունը ժամ ինն ուկէսին մեկնեցաք անտի։

—Կարելի է։

—Ի՞նչ ըրիք յետոյ։

—Թրամուայը նստայ, և Քոնքորտի հրապարակն իջնելով տունս գնացի։

—Դժուարին է ապացուցանել թէ

ճշմարիտ չէք խօսիր։ Ձեր դռնապանին յիշողութիւնն ալ բաւական ճիշդ չէ, որպէս զի ձեր ըսածին հակառակն հաստատէ։ Բայց կը յիշէ կատարելապէս թէ հետեւեալ կիրակի օրն, յունվար 14, գիշերը շատ ուշ տուն մտեր էք։

—Ճշմարիտ է։ Հայրս ինձ հետ ճաշած էր Տիկին Լը.քոնթի տունը։ Զինքը Քոնթի գետափը տարի, իւր բնակարանն, և անտի բալելով վերադարձայ ի Մոն-Թապոր փողոց, Մոնմարթը փողոցէն, Պուլվարներէն և Տը լա Բէ փողոցէն անցնելով։

—Անյարմար ժամանակ կ'ընտրէիք շրջագայութեան համար։ Օդը սաստիկ ցուրտ էր այն գիշեր։

—Գլուխս կը ցաւէր և օդ առնլու պէտք կ'զգայի

Այս պատասխան թեթեւ շշունջ մը գրգռեց ունկնդրաց մէջ, և նախագահը շարունակեց յամրութեամբ։

—Ամբաստանութիւնը կը պնդէ թէ Արպալէթ փողոցը գնացիք, պորմը մնաք կէս գիշերին, և հսկողութեան

դրուած ոստիկանական գործակալնե-
բէն բռնուելով, ծածուկ ոստիկանի
տոմսակ մը ցոյց տուիք, և ձեր օձիքն
աղատեցիք անոնց ձեռքէն։

Արդ, դուք խոստովանեցաք քննիչ
դատաւորին առջեւ թէ ժամանակաւ
այն պաշտօնը վարող ձեր հօր տոմսակը
ձեր ձեռքն անցած էր։

—Արդարեւ գտայ այն տոմսակն
հօրս թուղթերուն մէջէն, բայց այրե-
ցի։ Աւելորդ է հասկցնել ձեզ թէ ին-
չո՛ւ փութացի ջնջել զայն։

—Ստոյգ է որ Լրքոնթի ընտանիքն,
որուն պիտի փեսայանայիք, չէր գի-
տեր թէ դուք վաղեմի ծածուկ ոստի-
կանի մ՚որդին էիք։ Ուստի ձեր շահը
կը պահանջէր անհետացնել այն տոմ-
սակն որ ձեր հօր անցեալը կը յիշէր։

Կրնայ սակայն առարկուիլ թէ ան-
հնար էր որ այդ տոմսակ Տիկին Լը-
քոնթի կամ անոր աղջկան ձեռքն ընկ-
նէր երբէք։

Մնաց որ, պորտին մէջ հսկող գոր-
ծակալք կատարելապէս ճանչեցին զձեզ։

Անոնցմէ մին ներկայ չէ հոս, վասն
զի խուլ—համրին փախստեան օգնած
լինելով, ինքն ալ փախած անհետ ե-
ղած է։

Բայց անոր պետին վկայութիւնը
պիտի լսուի, և ուրիշ վկայք ալ պիտի
հաստատեն թէ դուք քանիցս ան-
գամ գնացած էք սպանեալ կնոջ
տունն։

Ուրիշ նիւթական ապացոյց մ՚ալ
կայ, զոր դատաւոր տեարց գնահատ-
ման ներկայացնելու ժամանակն եկած
կը համարիմ։

Բարապա՛ն, բերէք սա գաճէ կա-
ղապարներն և գետինը գրէք, աւել-
ցուց նախագահն։

Ապա, երդուեալ դատաւորաց դառ-
նալով.

—Տեա՛ք, ըսաւ, այս կաղապար-
ներ պորտին բակը ծածկող թարմ ձիւ-
նին վրայի ոտից տիպերէն առնուած են։

Առաջին երկուքը խուլ—համրինն են
որ արկղը կը տանէր, և անոր ընկե-
ցողը մարդուն։

Երրորդն՝ ոճրին հետեւեալ օրը կէս գիշերին Արպալէթ փողոցի տունը մըտնող մարդունն է։

Առաջին գիշերը թողուած հետքերն ի սկզբան անբացատրելի կ'երեւին, վասն զի ամենն ալ դուրսէն դէպ ի պորմը կ'երթային։ Կը թուէր թէ ներս մտած և ոչ ևս դուրս ելած էին։ Բայց այսօր յայտնի եղած է թէ դուրս ելնելու համար՝ ոճրագործն և մեղսակից խուլ-համին ետ ետ գնացած են։

Այդ զգուշութիւն ըրած չէ ոճրագործն հետեւեալ գիշերը, փախչելու հարկադրեալ լինելով։

Ամբաստանեա՛լ Լըքոք, յառաջ եկէք և ձեր աջ ոտքը խոթեցէք երկու գաճէ կաղապարներուն մէջ՝ զորս բարապանը պիտի ցուցնէ ձեզ։

Լուի Լըքոք, առանց վարանելու, դուրս ելաւ ամբաստանելոց վերապահեալ խորշէն և յառաջ գնաց ատենապահին մէջ։

Ուղղութեան մէջ հետաքրքրութեան յոյժ զգալի շարժում մ'եղաւ։

Կանայք միահաղոյն ոտքի վրայ ելան։ Կ'ուզէին տեսնել թէ ոճրագործը բարեձեւ ոտք ունէ՞ր։

Նապոլեոն, որ անդուլ ուշադրութեամբ մտիկ կ'ընէր վիճաբանութիւնները, նա ալ ոտքի վրայ ելաւ՝ փորձը ճշդիւ դատելու համար։

—Սա լայն տիպը, դատաւոր տեա՛ր, ըսաւ նախագահը, խուլ-համին ոտքերունն է։

Միւսն, որ աւելի փոքր է, անոր ընկերացող մարդունն է։

Լը՛քո՛ք, փորձեցէք զայն։

Թէրէզի նշանածն իւր ոտքը գաճէ կաղապարին մէջ խոթեց, նեղ, կոր, և նուրբ կոշիկներ հագած ոտք մը, որ դիւրութեամբ մէջը մտաւ և յոյժ հանգիստ կերպով կը շարժէր։

Ունկնդրաց մէջ մրմունջ մ'ելաւ ի նպաստ ամբաստանելոյն, և դատաւորք ալ նոյն մտօք տպաւորեալ երևցան։

—Միւսը փորձեցէք այժմ, ըսաւ նախագահն։

Այս անգամ երիտասարդին ոտքը

բաւական ճշդութեամբ յարմարեցաւ կաղապարեալ տիպին։

—Պարտիմ դիտել տալ դատաւոր տեարց, ըսաւ ընդհանուր փաստաբանը, թէ տիպերուն ձևը կրնայ տարբերիլ՝ աւելի կամ պակաս ծանրութեամբ, աւելի կամ պակաս արագութեամբ քալելով։

Առաջին դիշերն ոճրագործը ժամանակ ունէր ծանր քալելու. երկրորդ դիշերը կը փոխէր։

—Ես ալ կը հաստատեմ, պատասխանեց ամբաստանելոյն պաշտպան փաստաբանը, թէ յոյժ զգալի տարբերութիւն կայ երկու տիպերուն մէջ։ Միևնոյն մարդու ոտից հետքեր չեն։

—Դատաւորք կը գնահատեն անշուշտ, եզրակացուց նախագահն երբոր ամբաստանեալն իւր տեղը կը վերադառնար։

Անցնինք ուրիշ տեսակ ապացոյցներու։

Կը պնդէք թէ սպանեալ կնոջ լուսանկարը ձերը չէր, թէ դիակնարանին մէջ բռնուած գողը, որ ձեր թղթապանակը գողցած էր, զայն մէջը դրած է։

Ի՞նչպէս կը բացատրէք լուսանկարին ետևը գրուած Ֆորկէր դ նոր բառերը։ Դատաւոր տեարք գիտեն թէ «Մէ՛ ռոնոտ ղէ» ըսել են։

Դատաւորաց մի քանին իրենց գլուխը շարժեցին հասկցնելու համար հասարակութեան թէ գիտէին անգլերէն։

—Այդ խօսք ինձ ուղղեալ չէր, պատասխանեց ամբաստանեալն առանց յուզուելու։

—Շատ զարմանալի է որ կինն իւր լուսանկարին մէջ ինքզինք ներկայացընէ հոմբերոնէն կոչուած թղթախաղը խաղալու զբաղած, և ձեր բնակարանին մէջ ալ ճշդիւ անոր նման հոմբերոնէն մը դտնուի ծածուկ խուցի մը մէջ, սեղանի մը վրայ բացուած։

Եւ ամենն այս չէ։ Կինք Սլաքի տիկին մը բռնած է ձեռքն, իսկ ձեր այնչափ խնամով պահած թղթապանակին

մէջ Սլաքի տիկինը պակաս է, որ զո-
հին սրտին վրայ գամուած գտնուե-
ցաւ։

—Ես բացատրած եմ այդ զուգա-
դիպութիւնները քննիչ դատաւորին
առջեւ։

—Ա.յո՛, ըսեր էք թէ ձեր Գեր-
մանիա բնակած ժամանակ հոմբերոՒՆ-
կը բանայիք աղջկան մը հետ, որուն
սիրահարեալ էիք, և թէ՝ ի յիշատակ
այդ սիրոյ՝ որ մոռցուած է բոլորովին,
վասն զի օրիորդ Լքքոնթի հետ ամուս-
նանալու վրայ էիք, յատուկ կարգով
մը շարուած թուղթեր պահած էք։

Անհաւանելի և նոյնչափ տղայական
չքմեղանք մ'է այդ։

—Նուազ տղայական քան զամբաս-
տանութիւն մը; որ այդպիսի անկա-
րեւոր իրողութեան մը կը յենու, ըսաւ
Լուի Լքքոք խստաբար։

—Ցաւալի է ձեզ համար, որ գըր-
ուեցաւ ի Հայտէլպերկ, և ձեր սիրած
աղջկան հայրը սուտ հանեց ձեր ը-
սածները։

—Աղջիկը պատերազմէն յետոյ բը-
ռուսիացի սպայի մը հետ ամուսնացած
է։ Բնական է որ չուզէ այժմ յիշել ոիս։

Ա.յս պատասխան, յոյժ բնական ձայ-
նիւ մը տրուելով, լաւագոյն տպաւո-
րութիւն մ'ըրաւ։

Նախագահն ետ կեցաւ պնդելէ,
և թուղթեր խառնելէ յետոյ ըսաւ.

—Ձեր բնակարանին մէջ գտնուած
գաւազանին գունտին վրայ արեան բի-
ծեր կան։ Ցայտնի է որ անով զարկած
էք զՊ. Լէօրէօ։ Վէրքը քննող բժիշկ-
ները կը հաստատեն զայս։

—Ես երբէք տեսած չեմ զՊ. Լէօ-
րէօ։

—Թերեւս երբէք տեսած չէիք զայն
արդարեւ ձեր տարիուհւոյն տան մէջ
անոր հանդիպելէ առաջ։ Եւ իրաւունք
կայ ենթադրելու թէ ձեր սիրուհւոյն
հետ ճաշ ըրած միջոցին յանկարծ վրայ
երթալով՝ սաստիկ զայրացած էք։ Հե-
տեւանքը դիւրաւ կը դուշակուի։

Մարդուն վրայ յարձակեր էք, նա
ալ պաշտպաներ է ինքզինք . . . կա-

տաղի կռուոյ մը հետքեր տեսնուած են . . . : Դուք անկէ աւելի երիտասարդ և կորովի լինելով, մինչեւ մառանին դուռը քշեր էք զայն ; և ազատելով զձեզ անոր ձեռքէն , հարուած մը տբ-ուեր էք անոր գլխուն, միակ հարուած մը:

Լուի Լբքոք պատասխան չտուաւ : Հարցաքննութեան սկիզբէն ի վեր ա-ռաջին անգամ էր որ կը կասէր իւր անզգաձութենէն :

—Խօսեցէ՛ք , ըսաւ նախագահն , որ նշմարած էր անոր շփոթումն : Այսպէս չեղա՞ւ :

Լբքոք դարձեալ լուռ կեցաւ :

—Թերեւս ամբաստանութեան կար-ծաձին չափ մեղաւոր չէք դուք : Ձեր հակառակորդը կրնայ ծանրապէս թշ-նամանած լինիլ ձեզ . . . ապտակ զար-կած լինիլ ձեր երեսին . . . : Դուք ալ արդէն կրակոտ , ցասկոտ . . . թշնա-մանքը բոլորովին զայրացուցած է ձեզ ... կռիւ ծագեր . . . կռիւ մը , զոր դուք չէք գրգռած . . . և վերջապէս չկըր-նալով ձեր զայրոյցը զսպել , ձեր դա-

ւաղանը գլխուն իջուցեր և սպաններ էք զայն առանց ուզելու . . . :

Ամենուն աչքն ամբաստանելոյն վը-րայ սեւեռած էր , որ գլխահակ կը կենար , և երբոր վեր վերցուց , պահ մը կարծուեցաւ թէ պիտի խոստո-վանէր :

—Կրկին կ'ըսեմ ձեզ , պարո՛ն , ը-սաւ ինքզինք սեղմելով , թէ երբէք տեսած չեմ զՊ. Լէօրէօ :

Սարսուռ մը շրջեցաւ ունկնդրաց մէջ , և նախագահն ըսաւ իւր լուրջ և յամր ձայնիւ .

—Կը յարատեւէք ձեր բռնած ող-բալի դրութեան մէջ : Կ'ազդարարեմ ձեզ անգամ մ'ալ թէ կը ջնասէք ձեր դատին , վասն զի տակաւին ձեռքս ունցած ապացոյցները , զորս դատա-ւոր տեարց պիտի ներկայացնեմ , ջախ-ջախիչ են , և դուք ճշմարիտը խոսե-լով , կրնայիք անոնց ներողամտութիւնն հրաւիրել ձեր վրայ :

Աւասիկ Մարի Ֆասիթի ուղղեալ նամակի պատեան մը , որոյ վրայի հաս-ցէն ձեր գիրն է :

—Ո՛չ, պարոն։

—Բարապա՛ն, դատաւորաց ներկայացուցէք սա պատեանն և սա բաղդատական թուղթն՝ որ ամբողջապէս ամբաստանելոյն ձեռագիրն է։

Մինչ այս թուղթեր երդուեալ դատաւորաց ձեռքը կը պտըտէին, հասարակութիւնը կը հծծէր. դատողութիւնք կը փոխանակուէին որք նպաստաւոր չէին Թէրէզի նշանածին։

Իւր երիտասարդութիւնը, կեցուածքը, լեզուն, ի սկզբան համակրութիւն հրաւիրած էին իւր վրայ, զոր կաղաչպարաց փորձն առաւել աճեցուցած էր։

Բայց նախագահին սրտայոյզ յորդորանաց դէմ պահած յամառ լռութիւնն իբրեւ կէս խոստովանութիւն նկատուելով, հասարակաց կարծիքն այժմ անոր դէմ վճիռ կուտար։

—Բայց գրի վարպետներուն վկայութիւնն ալ պիտի լսուի, ըսաւ նախագահն՝ երբոր բարապանն իրեն վերադարձուց երդուեալ դատաւորաց քննած թուղթերն։

Եւ աւելցուց ամբաստանելոյն դառնալով և թուղթ մը ցոյց տալով, զոր պարուրթային մէջէն առած էր.

—Աւասիկ նամակ մը, որոյ ձեր գրածը լինիլը կը ճանչէք։

—Այո՛, կը ճանչեմ, ըսաւ Լուի Լը-քոք, բայց...

—Կարդալէս յետոյ կրնաք տալ ձեր բացատրութիւնները։ Կ՚աղաչեմ զձեզ, դատաւոր տեա՛ր, որ ուշադրութիւն նուիրէք, որովհետև դատաստանին հոգին ասոր մէջ է։

Եւ կարդալ սկսաւ նախագահը.

«Սիրելի՛ Մարիս,»

—Նամակը, տեա՛ր, ըսաւ, ֆըրանսերէն է, բայց Մարի անունն անգլիական ուղղագրութեամբ Մէրի գրուած է, որ սպանեալ կնոջ անունն է, և տարակոյս չկայ թէ այն կնոջ գրած է ամբաստանեալն ինչ որ պիտի լսէք այժմ.

«Սիրելի՛ Մարիս,

«Կը սիրեմ զքեզ յամենայն զօրութենէ հոգւոյս։ Ապացուցած եմ քեզ

զայս, և կ'երդնում տակաւին թէ պիտի սիրեմ զքեզ միշտ։ Ինչո՞ւ կը չարչարես զիս այդպէս. ինչո՞ւ չես ուզեր փախչիլ ինձ հետ։ Միթէ իմն չե՞ս ամբողջովին, և սիրտդ բաժնա՞ծ ես։ Ի զուր կը յեղ-յեղես ինձ թէ աղատ չես, պարտականութիւններ ունիս կատարելիք։ Ի՞նչ են պարտականութիւնք սիրոյ առջեւ։ Ես ալ ունիմ պարտականութիւններ, բայց կը մոռնամ քեզ համար։ Կը կարծե՞ս որ հայրս հաւանութիւն տայ երբ իմանայ թէ ես իմ կեանքս քեզ նուիրել որոշած եմ։

«Բայց այդ մարդ՝ որ կը ծանրանայ քու կենացդ վրայ, այդ մարդ՝ յորմէ դու կը վախնաս և զոր ես կ'ատեմ, ի՞նչ իրաւունք ունի քու վրայ. ո՞վ կը հարկադրէ քեզ որ զիս ադոր զոհես։

«Համբերութիւնս և արիութիւնս սպառած է. դիտա՛ իմ վրայ, հաճութիւն տուր փախչելու. քանի մ'ամսէ ի վեր կեանքս անտանելի ըրած ես։ Վերջ տուր չարչարանացս, կ'աղաչեմ, կը պաղատիմ քեզ յանուն մեր սիրոյն։

«Եթէ չլսես աղաչանացս, Մարի՛, եթէ չուզես ազատել քեզ այդ թշուառականին բռնութենէն, ոճիր մը գործելու պիտի մղես զիս։

«Ա՜հ, լաւ ըրիր որ չթողուցիր ինձ հանդիպիլ անոր ձեր տան մէջ, վասն զի եթէ ճանբուս վրայ գտնէի, կ'սպաննէի, և պիտի սպաննեմ եթէ անոր իշխանութեան ներքև մնաս։

«Բայց ոչ, պիտի թօթափես անոր լուծն, և պիտի փախչինք քեզ հետ։ Ի՞նչ բանէ կը վախնաս։ Եթէ համարձակի ետևէդ գալ, ես հետդ չե՞մ քեզ պաշտպանելու համար։ Քաջ գիտես թէ չկրնար թողուլ իւր երկիրն ու գործերը։

«Կ'ուզե՞ս որ չուենք երեք օրէն։ Կ'ուզե՞ս որ իրիկուան գամ քեզ առնում անոր բացակայութեան ժամուն։ Այո՛ ըսէ, և երեք օրէն միանք միմեանց հետ՝ առանց այլ ևս բաժնուելու։ Պատասխանդ, որում կ'սպասեմ անձկութեամբ, պիտի որոշէ մեր բաղդն։

«Աւելի կ'ընտրեմ հարիւր անգամ մեռնիլ, աւելի կ'ընտրեմ մեռած տեսնել քեզ իմ ոտից տակ, քան հրաժարիլ քեզնէ։»

—Այդ նամակ իմն է արդարեւ, պատասխանեց Լուի Լը-քոք, բայց շատ տարիներ առաջ գրած եմ։

—Որո՞ւ։

—Կնոջ մը, զոր կը սիրէի այն ժամանակ։

—Ըսէք անունը։

—Չեմ կրնար։

—Ինչո՞ւ։

—Վասն զի վտանգի մէջ կ'ելնայ։

Բացագանչութիւնք և ծիծաղք արձակուեցան ատենասրահին այլ եւ այլ կողմերէն։

Բարապանը վերահաստատեց լռութիւնն, և նախագահը նորէն խօսիլ սկսաւ եւս քան զեւս շեշտեալ խըստութեամբ։

—Ձէք յուսար, կարծեմ, թէ ատեանն և երդուեալ դատաւորք՝ այս ընթերցումը լսելէ յետոյ՝ կ'ընդունին այդպիսի մեկնութիւն։

Այս նամակ կէտ առ կէտ կը պատշաճի Արպալէթ փողոցի կրկին սպանութեանց։ Կը ծանուցանէ, դրեթէ կը նըկարագրէ զայն։

Մարի, այն տարաբաղդ կինն է զոր սպաննեցիք։ Մարդն ալ, որոյ իշխանութիւնը կը կրէր, Պ. Լէօրէօ է, զոր նոյնպէս սպաննեցիք, վասն զի կ'ատէիք զայն իբրեւ հակառափող, վասն զի կոխեցիք զայն ձեր տարփուհուոյն քով, որում գրած էիք թէ «պիտի սպաննեմ երբոր տանը մէջ հանդիպիմ անոր։»

Դատաւոր տեարք չպիտի մոռնան ձեր նամակին այդ պարբերութիւն։

Փախուստի առաջարկը Մարի պիտի գործադրէր։ Արկղերը պատրաստուած էին, իւր սենեկապանուհին մեկնած էր արդէն։ Բայց Մարի ձեր ձեռքէն կ'ուզէր փախչիլ։

Որոշած էր Անգլիա վերադառնալ՝ ազատելու համար ձեր ժանքէն, ձեր անդլաբար սպառնացած բռնութիւններէն։

Իւր երկիւղն յայտներ էր զինքը պաշտպանող մարդուն, ծանուցեր էր անոր իւր չուն, նա ալ եկած էր այն վերջին երեկոյթն անոր հետ անցունելու։

Տոմսակ մ'ելաւ վրայէն, որոյ մէջ Մարի կ'ըսէր անոր թէ ժամը տասնին կ'սպասէր իրեն։

Նախանձէ մղեալ՝ հոն գնացիք. Պ. Էէօրէօ կ'ընթրէր Մարիի հետ. վէճ մը ծագեցաւ, և սպանութեամբ վերջացաւ։

Եւ յայնժամ, արբեալ մոլեգնութեամբ և քինով, դժբաղդ կինն ալ ձեր մօտ քաշեցիք և դաշունահար ըսպաննեցիք։

Այս խաղի թուղթ, զոր անոր կուրծքին վրայ դամեցիք, ժամանակաւ ըրած երդումներուն յիշատակ մ'էր։ Առիք զայն ներքնասենեկի սեղանին վրայէն, Մարիի ցոյց տուիք կշտամբելով անոր երդմնադրժութիւնն՝, ամբաստանելով զայն թէ ձեր հակառակորդին վրայ մտածելով շարած էր այն թուղթերն, որոց մէջ երջանկութեան

դուշակութիւններ կը կարդար, և ձեր կատաղութիւնն առաւել եւս բորբոքելով՝ թուղթն և սիրտը մէկ հարուածով ծակեցիք։

Այս կերպիւ կատարուեցան այդ երկու ոճիրք, այնպէս չէ՞։

Լուի Լէքրոք յոյժ գունատ էր. բայց չխոնարհեցուց աչերն և ըսաւ անսասան ձայնիւ.

—Կ'երդնում առաջի Աստուծոյ թէ ես չսպաննեցի զՄարի Ֆասիթ։

Սառնային լռութիւն մը տիրեց այս պատասխանի վրայ։ Հասարակութիւնն ոչ եւս կը շնչէր։ Համոզումը կաղմըւած էր։

Երդուեալ դատաւորաց վճիռը կրնար ուշանալ։ Ամբաստանեալն արդէն դատապարտուած էր։

Այս տեսարանին տպաւորութիւնը քիչ մը թեթեւցնելու համար՝ պաշտպան փաստաբանն ոտքի վրայ ելնելով խնդրեց նախագահէն որ հաճի յայտնել թէ այս նամակ անծանօթ անձի մը ձեռօք եկած է ի դատարան։

Եւ աւելցուց.

—Կ'աղաչեմ զտէր դատաւորները դիտել, թէ իրենց ներկայացած ենթադրութեան մէջ անհնարին է մեկնել թէ ամբաստանեալն ի՛նչպէս կրցաւ արկղ մը պատրաստ ունենալ դիակը վերցնել տանելու համար, որովհետեւ չէր նախատեսեր այն տեսարանն որ Պ. Լէօրէոյի հանդիպելուն հետեւանքն եղած է։

Նմանապէս չկրնար ընդունուիլ թէ խուլ-համին ալ հետը տարած էր...

—Այդ փաստերը ձեր պաշտպանողական ճառին ժամանակ կրնաք գործածել, բոլոր նախագահն ընդմիջելով։

Պարտիմ սակայն յիշեցնել ձեզ թէ արկղը Մարի Ֆասիթին էր, և ըսել ձեզ թէ Լըքոք, ոճիրը գործելէ յետոյ, կրնար երթալ և խուլ-համը բերել։

Ամբաստանեա՛լ, բան մ'ունի՞ք աւելցնելու։

—Չունիմ, պարո՛ն։

—Կրնաք նստիլ։ Այժմ վկայները պիտի լսենք։

Բարապանը կոչեց զանոնք։ Շատ-ւոր չէին։ Ամբաստանութիւնը զանոնք միայն կոչած էր, որք անհրաժեշտ էին։ Ամբաստանեալը վկայ կոչած չէր բնաւ։

Միակ վկայն զոր ինքզինք պաշտպանելու համար պիտի կրնար կոչել, խուլ-համն, անհետ եղած էր։

Նախ ապահովութեան պետը լսուեցաւ, որ՝ մեծ չափաւորութեամբ՝ բայց և յոյժ հաստատողաբար վկայեց ամենակարեւոր կէտի մը վրայ։ Ցայտնեց թէ ինքն և իւր գործակալք, մասնաւորապէս այն որ այժմ փախած էր, կատարելապէս ճանչած էին զԼուի Լը-քոք, որ ոճրին հետեւեալ օրն Արպալէթ փողոցի պորտն եկած էր։

Ածխավաճառն և կինն այնչափ որոշապէս չվկայեցին։ Տեսած էին որ ամբաստանելոյն նման լաւ հագուած պարոն մը քանիցս անգամ հոն եկած էր, բայց չէին կրնար ապահովապէս հաստատել թէ նոյն իսկ ամբաստանեալն էր։

Անգլիացի գրպանախոյզն ալ ըսաւ

թէ բնաւ չէր ճանչեր զՄարի Ֆասիթ, և թէ ինք բան մը դրած չէր թղթապանակին մէջ, յայտարարութիւն մը, որոյ վրայ արդէն կասկածող չկար։

Յետոյ ներկայացան ուրիշ անկարեւոր վկայք. սպանեալ կնոջ հետ առուտուր ընողներն, որք մեծ բան մը չէին գիտեր անոր սովորութեանց վրայ. Պ. Լէօրէոյի երկու բարեկամք, պարկեշտ վաճառականք, որ անոր առեւտրական ուղղութիւնը ներբողելով՝ յայտարարեցին թէ ամենափոքր կասկած մ՝ունեցած չէին Մարի Ֆասիթի հետ ունեցած յարաբերութեան վրայ. լուսանկարիչն, որ կնոջ պատկերն հանած էր. հարկահաւաքն, որ տանք տուրքերուն գումարն ստացած էր Անգլիայէն. Մոն-Թապոր փողոցի դռնապանն, որ հաւաստեց թէ իւր վարձակալն ոճրին հետեւեալ գիշերը ժամ երկուքին (կէս գիշերն երկու ժամ անցած) տուն վերադարձած էր, և թէ երբէք կին ընդունած չէր յիւր բնակարան։

Ապա եկան փորձագէտ բժիշկներն, որք գիտնական բացատրութիւններ տուին սպանելոց վերքերուն և անոնց վերջին ճաշին և մահուան միջեւ անցած ժամանակին վրայ. դրի վարժապետներ, որ հասին ու բարակին վրայ ճառելով հաստատեցին վճռաբար թէ Մարի Ֆասիթի բնակարանին մէջ դըտնուած նամակի հասցէն Լըքոքի ձեռագիրն էր։

Յետոյ նամակ մը կարդացուեցաւ գրեալ ի տնօրէնէ անգլիական գիշերօթիկ վարժարանին, ուր ամբաստանեալն իւր առաջին ուսումն առած էր։ Կ՝ըսէր թէ Լըքոք պատանին՝ իւր վարժարանը բնակած ժամանակ՝ բազմիցս կանոնազանցութիւն ըրած և քանի մը պատուաւոր դրացեաց աղջիկներն հրապուրել փորձած էր։

Կարդացուեցաւ նաեւ Հայտէլպէրկի վարժապետին պատասխանն որ ցասմամբ կը հերքէր ամբաստանելոյն յայտարարութիւններն և բացարձակապէս կ՝ուրանար իւր Պէթինա դստեր երբէք

համբերութեան բացած և ամբաստանելոյն հետ ուխտադրութիւն ըրած լինելը։

Վերջապէս կոչուեցաւ օրիորդ Լը-քոնթ։

Մայրն, հիւանդ լինելով, չէր կրցած գալ ի դատական պաշտօնատուն, և խեղճ աղջիկն հարկադրուեր էր միայնակ կրել դատարանին ներկայանալու վիշտն, յորմէ կրնային խնայել զինքն եթէ չյուսային թէ իւր ներկայութիւնը կրնար ամբաստանելոյն վրայ ազդեցութիւն ընել և բռնած դրութիւնը փոխել տալ։

Թէրէզ յառաջ եկաւ միայնակ, սեւեր հագած, իբր թէ արդէն իւր նշանածին սուգը կը բռնէր, և երեսն հաստ քողով մը ծածկած։

Ներս մտնելը տպաւորութիւն ըրաւ ունկնդրաց վրայ։

Ամեն աչերն անոր վրայ դարձան, ի բաց առեալ Լուի Լըքոք որ ծռելով քանի մը խօսք փոխանակեց իւր փաստաբանին հետ։

Թերեւս կը յուսար որ Թէրէզ չպի-

տի տեսնէր զինքն և ատեանն ալ չը պիտի ստիպէր զինք որ իւր պաշտած օրիորդին խօսք ուղղելու դառն կրտանքը կրէր։

Կը սխալէր։

Նախագահը մեծ ակնածութեամբ վարուեցաւ օրիորդ Լըքոնթի հետ։ Աթոռ մը բերել տուաւ անոր, ժամանակ թողուց սրտայուզութիւնն հանդարտելու, և ծայրագոյն քաղցրութեամբ հրաւիրեց երդում ընելէ առաջ բանալ երեսին քողն և հանել ձեռնոցներն։

—Օրիո՛րդ, ըսաւ յետոյ, հաճեցէք ըսել մեզ թէ յունվար 13ին իրիկունը Պ. Լըքոք ժամը քանի՞ն մեկնեցաւ ձեր տիկին մօր դահլիճէն։

—Ժամ իններուկէսին, կարծեմ, պատասխանեց մանկամարդուհին հազիւ լսելի եղող ձայնիւ։

—Եւ հետեւեալ յունվար 14ին իրիկո՞ւնը։

—Ժամ տասնին։

—Ճշմարիտ է ձեր ըսածն, օրիո՛րդ,

և ատեանը շնորհակալութիւն կը յայտնէ ձեզ՝ հասկնալով այն տխուր վիճակ յորում կը գտնուիք։

Բայց աւելի բան մը կ'սպասէ ձեզ։ Կը յուսայ որ կը հաճիք լուսաւորել զինք Պ. Լըքոքի զգացմանց վրայ։

Թէրէզ ժպտունեցաւ և չպատասխանեց։

—Բացատրեմ ըսածս, յարեց նախագահը։ Մեր առջեւ մարդ մը կայ, որոյ կեանքն անսադիւտ եղած կ'երեւի մինչեւ օրն այն ոճրին որով ամբաստանեալ է։ Ոչ ոք կայ հոս որ ուրախ չլինի անոր արդարացումը լսելով. բայց նա չուզեր ընել, և միայն կ'ուրանայ, մինչեւ իսկ ակներեւ ճշմարտութիւնն։

Իրաւունք չունի՞նք հարցնելու թէ անհասկանալի զգացում մը կը տիրէ անոր վրայ. թերեւս կը վախնայ խոստովանիլ սխալ մը, հարիւրապատիկ թեթեւ քան զայն սպանութիւններն որով ամբաստանեալ է, բայց գուցէ ծանր կուգայ իրեն խոստովանիլ։

Եթէ ճշմարտութիւնը խոստովանի, անշուշտ նուազ մեղապարտ պիտի երեւի։ Իսկ եթէ յամառի ուրանալ, յայնժամ պէտք է հաւատալ թէ բնաւ մեղմացուցիչ պարագայ չունի ընդունելու։

—Ես անկրկնայ եմ թէ երբէք սուտ խօսած չէ, մրմնջեց օրիորդ Լըքոնթ։

—Իցի՛ւ թէ դատաւոր տեարք բաժանորդ լինէին ձեր այդ համոզման, օրիո՛րդ։ Եւ այժմ կ'աղաչեմ զձեզ պատասխանել հարցման մը, և սխալ չը հասկնալ նպատակս որոյ համար կ'ուղղեմ ձեզ։

Կը հաւատա՞ք թէ Լուի Լըքոք անկեղծաբար կը սիրէ զձեզ։

—Կը հաւատամ, պատասխանեց օրիորդն հեղձեալ ձայնիւ։

—Լսեցի՛ք, ըսաւ պատուարժան նախագահն ամբաստանելոյն դառնալով։ Պիտի դժկամակի՞ք տակաւին փորձել արդարացում մը, զոր ձեր նշանածին պատասխանը կը դիւրացնէ ձեզ։

Այս հարցապնդումէն Լուի Լըքոք

ցնցուելով կէս մ'ոտքի վրայ ելաւ։

Վայրկեան մը կարծուեցաւ թէ պի-տի խօսէր, բայց նորէն իւր նստարանին վրայ ընկաւ և մնաց։

—Չէ՞ք հասկնար ուրեմն թէ լուռ կենալով դուք ինքնին կը դատապարտէք ձեզ։ Չէ՞ք մեղքնար ուրեմն աղնիւ օրիորդ մը, որ տակաւին հաւատք ունի ձեր վրայ։ Եթէ կը սիրէք զայն, ո՞րպիսի տխուր քաջութեամբ կը յամառիք չխոստովանիլ սխալ մը, զոր ա-ներկբայ եմ որ կը ներէ ձեզ։

Լռութիւն տիրեց։ Դատաւորք և հասարակութիւն կը հեւային սրտայուզութենէ։ Նապոլեոն արտասուքը կը սրբէր։

—Բարի շարժում մ'ունեցիք, Լը-քո՛ք։ Ըսէք մեզ թէ ժամանակաւ ճանչեցիք զՄարի Ֆասիթ, թէ չարաբաղդութիւնը ձեզ Արպալէթ փողոցի պորմքն առաջնորդեց, բուռն զայրույթի մը տեղի տուիք, թէ կանխաւ խորհած չէիք ոճիրը։ Վստահ եղիք թէ դատաւորք և ատեանն ի հաշիւ կ'առնուն ձեր անկեղծութիւնը։

Բայց մի՛ յամառիք պնդել ստախօսութիւն մը որ ի կորուստ կը տանի զձեզ։

Խօսեցէ՛ք, ձեր նշանածն է որ կը պաղատի ձեզ իմ բերնով։

Այս անգամ եւս ամբաստանեալը բերանը բացաւ իբր թէ խոստովանութիւն մը դուրս փախցնելու համար։

Բայց իւր աչերը թէրեզի արտասուաթոր աչերուն հանդիպելով, մէկէն եռեւուն վրայ ինկաւ և թոթովեց.

—Ո՛չ . . . ո՛չ . . . չեմ կրնար . . . չեմ կրնար . . . :

Օրիորդ Լը-քոնթ դողդողեց։ Բարապան մը զայն թեւերուն մէջ առնելով բռնեց և սասանեալ բազմութեան մէջէն անցուցանելով դուրս տարաւ։

Նախագահն սպասեց որ օրիորդը դուրս ելնէ ատենարարէն, և ըսաւ խստիւ.

—Ամբաստանեա՛լ, բան մ'ունի՞ք աւելցնելիք ձեր պաշտպանութեան համար։

—Ո՛չ, պատասխանեց Լուի Լը-քոք։

—Վիճաբանութիւնք փակուած են։ Խօսքն ընդհանուր դատախազինն է։

Այս խօսք մահագոյժ զանգակի պէս հնչեց։

Այժեն ոք կը հասկնար թէ ամբաստանեալը կորսուած էր։

Արհամարհելով նախագահին ընծայած փրկութեան միջոցն, ինքնին կը վճռէր իւր դատակնիքն։

Ընդհանուր դատախազին գործը դիւրացած էր, և կատարեց ճարտար չափաւորութեամբ։

Ամբաստանելոյն բարի նախընթացներն յիշեց, դատին մի քանի աղօտ կէտերէն ծագելիք երկբայութեանց վրայ խօսեցաւ, և յայտարարեց թէ ինք առաջին պիտի լինէր պատժոյ մեղմացում մը խնդրելու՝ եթէ Լքքոք խոստովանութիւն ընէր։

Այս անկողմնակալ նախաբանէն յետոյ մի առ մի քննեց այն ապացոյցներն որք կը յորդէին Լքքոքի դէմ. համակարգեց զանոնք, և սեղմ հետեւութեամբք ժամանեց ապացուցանելու

թէ Լքքոք միայն կրնար լինիլ հեղինակ Արպալէթ փողոցի կրկին սպանութեանց։

—Անշուշտ, տեա՛ք, քսաւ եզրակացնելով, ցաւալի է որ այդ սպանութեանց շարժառիթը չէ կրցած ճշդուիլ։ Բայց ինչ որ ալ լինի այդ շարժառիթ, վրէժխնդրութիւնը, նախանձը կամ հարուստ ամուսնութեան մ'օգուտներէն զրկուելու երկիւղը զինած լինի Լուի Լքքոքի բազուկը, կնոջ մ'և ծերունւոյ մ'սպանիչն արժանի չէ ձեր դթութեան։

Եւ եթէ պաշտպանող փաստաբանութիւնը գայ յիշեցնել մեզ թէ ինչ ինչ տարերք կը պակսին ամբաստանութեան, թէ զոհերէն միոյն յատկանշնութիւնը չէ հաստատուած բաւականապէս, թէ խուլ-համրը, զովող անգիտակից կամ կամաւոր, չկրցաւ երեսուիլ գլխաւոր հեղինակին հետ, չը պիտի կապուիք այս առարկութեամբք, որք չեն կրնար դատին հիմք խախտել։ Ձեր խղճին հետ միայն պիտի խորհիք։

դակցիք և մտածէք ինձ պէս թէ ընկերութիւնը վանդի մէջ կ'ընկնի եթէ յանցապարտք յաջողին պրծիլ օրինաց ձեռքէն, վասն զի ցաւալի պարագայներ զրկեցին դատական արդարութիւնէն ամբաստանող վկայէ մ'և տեղեկութենէ։

Զպիտի կամիք անպատիժ թողուլ մեծ ոճիր մը, որոյ նմանը շատ տարիներէ ի վեր չէր զարհուրեցուցած զՓարիզ, և ընաւ ներողամտութիւն չպիտի շնորհէք այս մարդու։

Սարսուռ մը պտրտեցաւ բաղմութեան մէջ։ Ցանցաւորին գլուխը կը խնդրէր ընդհանուր դատախազն երդուեալ դատաւորներէն։

Միայն Լուի Լբքոք անզգած մնաց. միայն նա չցնցուեցաւ այս վրէժխնդրական խօսքէն։

Կը հասկնար որ իւր գործը լմնցած էր, և կանխաւ կ'ընդունէր գիւր դատապարտութիւն։

Ցուղումը դեռ հանդարտած չէր, ամբաստանելոյն փաստաբանն ոտքի վերայ ելաւ։

Նախ գովեստ ընծայեց ընդհանուր դատախազին արդարասիրութեան և նախագահին անկողմնակալութեան. յետոյ, իրողութիւններն յիշելով, ամբաստանութեան պակասներն և անհաւանելի կէտերը ցոյց տուաւ։

Հարցուց թէ Լուի Լբքոքի վիճակին մէջ գտնուող մարդ մ'ի՞նչ շահ կրնար ունենալ ինքզինք մահուան պատժոյ ենթարկելու, մինչեւ իսկ տարփուհիէ մ'և հակատռփողէ մ'ինքզինք աղատելու համար։

Ցիշեցուց թէ ոչ ոք կրցաւ հաստատել թէ ամբաստանեալը կը ճանչէր զՊ. Լէօրէօ և զՄարի Ֆասիթ։

Ցոյց տուաւ ամբաստանութեանց անկապակցութիւնն ու հակասութիւններն, որովհետև մէկ կողմէ կը պընդէին թէ Լբքոք երկու զոհերն ի միասին կոխելով սպաննած էր, միւս կողմէ կ'ըսէին թէ դիակներն անհետացնելու միջոցներ պատրաստած էր։

Տարաբաղդ Մարիի դիակն ո՞ւր կը յուսար տանիլ ամայի թաղի մը փողոցներէն անցունելով։

Եւ համրն, ուստի՞ կուգար, ո՞վ տեսած էր զայն Լբ.քոքի հետ։ Եւ սակայն անշուշտ ոճրին գիշերը չէր որ առաջին անգամ հանդիպած կրնար լինիլ ոճրագործին։ Եթէ փախաւ անհետ եղաւ այդ խուլ-համր, յանցանքն ամբաստանելոյն չէ, որ իւր հարցաքննութեան սկիզբէն ի վեր չէր դադրած խնդրկէ որ երեսուի անոր հետ։

Եւ ընդունելով իսկ թէ Լբ.քոք ոճրին հետևեալ օրն համարձակած լինի Արպալէթ փողոցն երթալ, ի՞նչպէս կը լինէր որ իւր Մարի անուամբ կը կոչէր զայն կին, որ առջի օրը դաշունահար սպաննուած էր սրիկայէ մը։

Եթէ Լբ.քոք ինք սպաննած լինէր, անշուշտ պիտի գիտնար թէ ոչ ևս էր անդ, և չէր կրնար պատասխանել իրեն։

Ի՞նչ ապացոյցք յառաջ բերուեցան իրեն դէմ։

Մինչև իսկ չկրցաւ հաստատուիլ թէ իւր ոտքը կը յարմարէր ոճրագործին թողուցած ոտից տիպերուն։

—Ըսուեցաւ ձեզ, տեա՛ր.ք դատաւորք, գոչեց փաստաբանն իւր խօսքն աւարտած ժամանակ, ըսուեցաւ ձեզ թէ ընկերութեան համար կարեւոր է որ անպատիժ չմնան երկու նողկալի ոճիր.ք։ Ես ալ կ'ըսեմ ձեզ թէ առաւել ևս կարեւոր է ընկերութեան, որ անմեղի մը գլուխը կառափնարանի վրայ չելնէ։

Չէ.ք կրնար մարդ մը դատապարտել կասկածներով, և կասկածներ միայն կան Լբ.քոքի դէմ։ Թո՛ղ գտնեն բերեն անգիւտ համրը, թո՛ղ ճանչէ զամբաստանեալն, և յայնժամ անողոք եղի.ք։

Լբքոքի գլուխը կը խնդրուի ձեզնէ։ Ես ձեր դատավճռին թեթեւացումը չեմ հայցեր ձեր գթութենէն. եթէ յանցաւոր է, արժանի է մահուան։ Բայց չապացուցուեցաւ յանցաւորութիւնն, և անտարակոյս եմ որ պիտի արձակէ.ք։

Հասարակութիւնն զգածուեցաւ։ Երդուեալ դատաւորներէն ոմանք արտ-

տատուեցին։ Բայց կրնայ մարդ արտասուել և չհամոզուիլ։

Կ'ըսէին իրարու ցած ձայնիւ թէ փաստաբանն օրիորդ Լը-քոնթի վրայ չխօսեցաւ և խոհեմութիւն էր ըրածնոչ ալ ամբաստանելոյն գրած նամակն յիշեց։

Ա.յն ձախող նամակ ազիտարեր էր ամբաստանելոյն, վասն զի գործելիք ոճիրները կանխաւ ծանուցանել կը թուէր, և սարսափելի ծանրութեամբ պիտի կշռէր դատաւորաց վճռոյն վրայ։

Հանրային դատախազը չպատասխանեց բնաւ, և նախագահը կատարեալ արդարութեամբ համառօտեց վիճաբանութիւններն, զգացնելով սակայն թէ ամբաստանեալն յանցաւոր կը համարէր։

Լուի Լը-քոք դուրս տարուեցաւ։

Երդուեալ դատաւորաց խորհրդակցութիւնն երկու ժամ տեւեց, և երբոր ատենասրահը վերադարձան, տրուելիք վճիռը կրնար կարդացուիլ անոնց տխուր երեսին վրայ։

Քանի մ'երկվայրկեան սրտաճմլիկ լռութիւն մը տիրեց երբոր երդուեալ դատաւորաց գլուխն արտասանեց այս խօսք. «Այո՛, ամբաստանեալն յանցաւոր է»։

Ի զուր սպասեցին ունկնդիրք. մեղմացուցիչ պարագայ չկար։ Մահ էր դատակնիքը։

Նորէն ներս բերուեցաւ ամբաստանեալն։ Աչքն իւր փաստաբանը փնտռեց. իսկ նա զգուշացաւ անոր նայուածքէն։

Երիտասարդն հասկցաւ։ Եւ երբոր նախագահը, դատավճիռը կարդալով, հարցուց անոր թէ պատժոյն գործադրութեան վրայ բան մ'ունէ՞ր ըսելիք, պատասխանեց պաղութեամբ.

—Ցունիմ, պարո՛ն, և կը հրաժարիմ վճռաբեկ ատենին դիմելէ։

—Երեք օր ժամանակ ունիք դիմելու համար, ըսաւ նախագահը՝ դատապարտեալէն աւելի յուզեալ։

Լուի Լը-քոք պիտի գլխատուէր։

Ողջունելով դուրս ելաւ այն փոք-

րիկ դռնէն որ կառաւինաբեմի ճանբաուն վրայ կը բացուի։

Բաղմութիւնն հետզհետէ դուրս ելաւ մոախոհ, գրեթէ լռին և խորապէս յուզեալ։ Ոչ ոք կ'երկմտէր վճռոյն արդարութեան վրայ. և սակայն ամէն մարդ կը խորհէր թէ կը պակսէր մեղապարտութեան այն բացարձակ ըստուգութիւնն որ դատաւորաց խիղճը կ'ապահովէ։

Նապաստն ամենէն առաջ դուրս ելնողներէն մին էր իւր սեւամորթին առջեւէն, համոզեալ անշուշտ թէ եւրոպական դատաստանը կը գերազանցէր իւր երկրին համառօտ դատաստանն։

Երբոր Լուի Լը.քոք մութ նրբանցքէն կ'անցնէր, հետը գնացող պահակներէն մին սա խօսքը մրմնջեց անոր ականջն ի վար.

—Ձեր հայրը կ'աղաչէ ձեզ որ այս երիկուն ստորագրէք ձեր բողոքն առվճռաբեկ ատեան։

Նոյն վայրկենին, օրիորդ Թէրէզ Լը.քոնթ, որ վկայից սենեկէն դուրս

կ'ելնէր, զգաց որ տոմսակ մը կը դնէին իւր ձեռքին մէջ։

Լապտերի մը քով երթալով կարդաց.

«—Մի՛ յուսահատիք. կ'երդնում ձեզ թէ պիտի ազատեմ։»

Տոմսակն ստորագրեալ էր «Լը.քոք»։

ՎԵՐՋ ԵՐԿՐՈՐԴ ՀԱՏՈՐԱՅ

Ի ՅԻՇԱՏԱԿ
ԹԻՂԱԹԵՐ
ՍԵՐՈԲԵԱՆ - ԻՆՃԻԿԵԱՆԻ
23 ՅՈՒՆՈՒԱՐԻ 1929 ԹՈՒԻ

ՎՐԻՊԱԿԻ

Եր.	Տող	Սխալ	Ուղիղ
2	22	բուաթուցի	Բուաթուցի
15	4	այնպէս	այսպէս
79	1	զոր և	զոր ես
108	15	դնացած էր	բացած էր
109	10	արտասանուելու	արտասանելու
111	8	բացադարակներն	բացաւ դարակներն
149	15	Թիակնարան	Թիարան
150	12	Կրնան	Կրնայ
152	5	դեռ գործը պարզուած չէ	դեռ պարզուած չէ
185	10	իրենց	իրեն
290	1	եօթեւտասներորդ	եօթնեւտասներորդ
298	3	կրայ	վրայ
317	24	Թղթապանակին	Թղթախաղին

[illegible]

[illegible]

[illegible]

[illegible]

Գին 5 դուրուշ

1772

2013